² Փայտակարան աշխարհով Հայաստանն իր արևելքով հարում էր Կասպից ծովին: Հայոց բնաշխարհի այդ տարածքի տեղաբնիկները հայերն էին: Դարեր շարունակ այնտեղ են գտնվել Արտաշեսյանների ու Արշակունիների ձմեռանոցները, նաև տեղակայված էին հայկական սահմանապահ զինվորական կայազորները (Հակոբյան 251): Փայտակարանի էթնիկ կազմը խաթարվեց թյուրքալեզու քոչվոր ցեղերի՝ տարածաշրջան ներխուժելու հետևանքով: Տեղացի բնիկ բնակիչներից շատերը դուրս մղվեցին իրենց բնօրրանից, իսկ մի մասը հարթավայրերից բաշտվեց լեռնային շրջաններ (Березин 108): Աղետաբեր ասպատակությունների հետևանքով կործանվեց նաև երկրամասի երկրագործական ու այգեգործական մշակույթը՝ զգալի չափով իր տեղը զիջելով քոչվորական անասնապահությանը, ինչի հետևանքով արգավանդ դաշտերի մեծ մասը վերածվեց կիսանապատի: «Հայաստան» օրաթերթի դիպուկ բնորոշմամբ՝ «Մուղանի անապատը, որ հայկական տիրապետութեան ժամանակ ծաղկած վիճակի մեջ էր գտնուում, մահմեդական տիրապետութեան, մանաևանդ թաթարական իշխանութեան օրով, «հեռու-հեռու քեցին բնիկ ազգը մեր Հայկեան...» (Դեպքերը Մուղանի անապատում): Սանկտ Պետերբուրգի կայսերական ակադեմիայի կազմակերպած գիտական արշավախմբի ղեկավար, ծագումով գերմանացի Սամուիլ Գոտլիբ (Գեորգ) Գմելինը, որ 1770 և 1773 թթ.-ին ճանապարհորդել է Դերբենդ-Ղուբա-Բաքու-Շամախի-Սալիան երթուղով, գրում է, որ Սայանի բնակչության հիմնական մասը թաթարներ, իրանցիներ և փոքրաթիվ հայեր էին (Гмелин 113). Սարգիս արքեպ. Ջալալյանցը, 1850 թ.-ի իր

Մուղանի կամ Սայանի հարթության մեծ մասը (հետագայի՝ Չավատի (սակ՝ Չեվադ) գավառը) և Կասպից ծովի առափնյա Լենթորանի դաշտավայրը (հետագայի՝ Լենթորանի գավառը):

Ցարական կառավարության 1840 թ.-ի ղեկոտեմբերի 14-ի վարչական բաժանման արդյունքում Կասպիական մարզը բաժանվեց երկու սահանգի՝ Շամախիի և Դերբենդի (Евангулов 10): 1867 թ.-ի ղեկոտեմբերի 9-ի վարչատարածքային հերթական բաժանման արդյունքում կրկին վերածնվեց Այսրկովկասի վարչական բարտեզը. ձևավորվեցին Քուբայիսի, Թիֆլիսի, Բաքվի, Գանձակ-Ելիզավետպոլի և Երևանի սահանգները: Գանձակ-Ելիզավետպոլի սահանգը, որ պետք է կազմավորվեր հարևան Թիֆլիսի, Բաքվի և Երևանի սահանգների տարածքների հաշվին, գործողության մեջ դրվեց 1868 թ.-ի փետրվարի 19-ին: Վարչական այս նոր բաժանման հետևանքով Բաքվի սահանգի կազմից դուրս մնացին և նորաստեղծ Գանձակ-Ելիզավետպոլի սահանգին կցվեցին Կուրի ձախափնյակում ընկած Նուխիի (31 հայկական գյուղ)¹ և Արեշի (21 հայկական գյուղ) գավառները (Ստեփանյան, *Նուխի եւ Արեշ գավառների հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանությունը*, 249-252): Այսպիսով՝ վերջնականորեն ձևավորված Բաքվի սահանգն ընդգրկում էր Գյոքչայի, Շամախիի, Ղուբայի, Բաքվի, Չավատի (սակ՝ Չեվադ) և Լենթորանի գավառները (Отчет 49-50): Բաքվի սահանգի ստվար հայության մի խոշոր հատված Բաքու քաղաքից զատ կենտրոնացած էր Գյոքչայի գավառում (21 հայկական գյուղ), Շամախի քաղաքում և համանուն գավառում (24 հայկական գյուղ), Լենթորան քաղաքում, Ղուբա քաղաքում և համանուն գավառում (2 հայկական գյուղ) (Ստեփանյան, *Բաքվի սահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)*; *Armenians of Baku Province in the Second Half of the 19th Century (Historical-Demographic Study)*; «Գանձակ-Ելիզավետպոլի սահանգի Նուխի և Արեշ գավառների ու Բաքվի սահանգի հայ բնակչության պատմաժողովրդագրական համառոտ ակնարկ» 218-268):

Նահանգի հայաբնակ գոտին տարածվում էր Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի հարավահայաց՝ դեպի Կուր գետի դաշտավայրերն ուղղված լանջերին և դասավորված է եղել երկու խմբով՝ Շամախի-Ջյուրդամիր-խնուղու երկարությամբ՝ լեռնային այն բարձրության վրա, որ ընկած էր Աղսու գետի ավազանի կամ հոսանքի ձախ կողմում, և երկրորդ խումբը, որն ընկած էր հիշյալ գետի աջափնյա բարձրության վրա (Բարխուտարեանց 48-83):

Տեղին է նշել, որ նահանգի հայկական գյուղերը ազգային-քաղաքական տեսակետից աննյաստ կերպով են դասավորված եղել՝ շրջապատված լինելով մեծ թվով թաթարական գյուղերով (Зейдлин, *Этнографический очерк Бакинской губернии* 92): Բացի դրանից, նահանգի բերրի հողերը հիմնականում զբաղեցնում էին կովկասյան թաթարները: «Թաթար քոչվորները,- գրում է կովկասագետ Մ. Շապշովիչը,- գալով և գավթելով այդ տարածքները, զբաղեցրին ամենահարուստ, բերքատու հարթավայրերը, լեռնային արոտավայրերը, իսկ հայերի, թաթերի և թալիշների համար մեծամասամբ մնացին այն տարածքները, որտեղ նրանք զբաղվում էին միայն հողագործությամբ» (Шаповович 23): Այսրկովկասի վարչական վերաբաժանումներն ուսումնասիրող Ա. Շահխաթունյանը ևս, անդրադառնալով

ճանապարհորդության ընթացքում լինելով նաև Փայտակարանում, երբեմնի հայրենի շեն երկրամասի կորուստով դառնացած գրել է. «Զգտանին արդեն ի նմին ընդարձակ տարածութեան գիւղօրայք Յայոց, քանգի ի վարուց անտի ի բռնակալութենէ Պարսից ընկալեալ են զօրենս Մահմետի, և կան նովին կրօնիւք վայելելով զբարութիւնս երկրին: Ողջ ի բերան առեալ անմխիթար հառաչէ աշխարհն Փայտակարանի զկորուստ փառաց իւրոց և վայելչութեանց...» (Չալալեանց 266):

¹ Նշենք, որ գավառի ճալթ, Միրզաբեկյու, Ջոռլու, Նիժ, Վարդաշեն գյուղերը եղել են նաև ուղիաբնակ: Ընդ որում, նրանց առաքելադրական հատվածն անվանվել է «հայ ուղի», իսկ ուղղափառ-վրաց եկեղեցու կողմնակիցները՝ «գյուրջի ուղի» (մանրամասն տե՛ս Յովսեփեան; Լալայան; Առաքելյան (Խառատյան) 12-16):

վարչական փոփոխությունների հետևանքով հայ բնակչության համար ստեղծված անբարենպաստ պայմաններին, իրավացիորեն գրում է. «Երկու նահանգներն էլ (իմա՝ Բաբվի և Ելիզավետպոլի – Գ. Ս.) բարդ էին և՛ աշխարհագրական, և՛ ազգագրական տեսանկյուններից: Երկու նահանգներում էլ մտնում էին և՛ լեռնային, և՛ դաշտային մասեր: Դրանք բնակեցնում էին և՛ հայ, և՛ թաթար ազգություններ՝ հայերի համար ամենաանբարենպաստ համամասնությամբ» (Шахатунян 93):

XIX դար թևակոխած Կուրի ծախսափնյակի հայ բնակչությունն ապրում էր հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային և հոգևոր վերելքի ժամանակաշրջան: Որպես երկրամասի տեղաբնիկ ու մշակութակերտ ժողովուրդ՝ հայերն ակտիվորեն մասնակցել են երկրամասի հասարակական-քաղաքական կյանքի առաջընթացին: Նշանակալի էր հայերի դերը գյուղատնտեսության, առևտրի, արհեստագործության և արդյունաբերության, մասնավորապես՝ Բաբվի նավթարդյունաբերության սկզբնավորման ու զարգացման բնագավառում: Հայկական գրեթե բոլոր գյուղերում, ինչպես Նուխի, Շամախի, Ղուբա և Բաբու քաղաքներում կառուցվել են եկեղեցիներ, հիմնադրվել և արգասավոր գործունեություն են ծավալել եկեղեցական-ծխական բազմաթիվ դպրոցներ (Ստեփանյան, «Գանձակ-Ելիզավետպոլ նահանգի Նուխի և Արեշ գավառների ու Բաբվի նահանգի հայ բնակչության պատմաժողովրդագրական համառոտ ակնարկ» 218-268): Երկրամասում հայ բնակչության աճին զուգընթաց՝ աստիճանաբար հայաշատ խոշոր կենտրոններ էին դարձել Շամախի, Ղուբա, Նուխի և հատկապես Բաբու քաղաքները (Ստեփանյան, «Նուխի և Արեշ գավառների հայերի պատմական անցյալից» 28-34; Բաբու քաղաքի հայության պատմությունը; Շամախի քաղաքի հայության պատմությունը):

Հատկապես մեծ է Բաբվի հայության դերը մինչև XIX դարի կեսերը խիստ հետամնաց Բաբու քաղաքի սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային կյանքի վերելքն ապահովելու գործում: Հայ բնակչությունն առաջնակարգ դիրքեր էր գրավում տնտեսության և առաջին հերթին նավթարդյունաբերության ու առևտրի տարբեր ոլորտներում՝ դառնալով Բաբվի քաղաքակրթության զարգացման առաջամարտիկներից մեկը: Երկրի մասշտաբով խոշոր ձեռնարկատերեր էին մեծահամբավ Լիանոսյան, Միրզոյան, Ղուկասյան, Կրասիլնիկյան, Բեգլարյան, Սուբաֆյան, Ադամյան, Լալայան, Բունիաթյան, Թումայան, Առաֆեյան, Փիլիպոսյան, Խատիսյան, Բուդաղյան, Զալանթարյան, Կաճկաճյան, Ճատուրյան, Ունանյան, Փիթոյան և այլ ընտանիքները: Հայ նավթարդյունաբերողներ ու գործարարներ Հ. Միրզոյանի, Ա. Ճատուրյանի, Մ. Արամյանցի, Ա. Մանթաշյանցի, Գ. Լիանոսյանի, Ս. Բաղիրյանի, Ղուկասյան եղբայրների (Պողոս, Հակոբ, Աբրահամ, Արշակ), Կրասիլնիկյան եղբայրների (Արսեն, Ներսես, Սերգեյ, Կոնստանտին) և շատ ուրիշների միջոցներով XIX-X-X դարերում Բաբվում կառուցվեցին ոչ միայն արդյունաբերական ու բնակելի շինություններ, այլև հասարակական խոշոր շենքեր: Այս առումով նշանակալից են մասնագիտական մեծ վարպետությամբ ճարտարապետներ Գ. Տեր-Միքեյանի, Ն. Բակի, Ս. Սարկիսյանի, Ֆ. Աղայանի նախագծերով նեոկլասիցիզմի ոճով կառուցված բնակելի ու հասարակական շինությունները, որոնք կանգուն են ցարդ և զարդարում են ներկայիս Բաբուն (Ստեփանյան, Բաբու քաղաքի հայության պատմությունը 171-187):



XI-XVIII դարերի ընթացքում օտար նվաճողների պարբերական արշավանքների, վաչկատուն ցեղերի աղետաբեր ասպատակությունների, հատկապես թուրք-պարսկական երկարատև պատերազմների և արևելյան բռնատիրությունների անվերջանալի չարիքներից հետո XIX դարի 30-ական թվականներից հետզհետե ոտքի կանգած երկրամասի հայության սոցիալ-տնտեսական համընդհանուր զարգացումը կրկին խաթարվեց, երբ ցարական կառավարության կողմից 1905-1906 թթ.-ին հրահրվեցին հայ-թաթարական ընդհարումները: Պատմության քառուղիներում բազում արհավիրքներ հաղթահարած Արևելյան Այսրկովկասի հայության համար սկսվեց նոր մարտահրավերների ու բարդ փորձությունների ժամանակաշրջան:

Հայ պատմաբանների կողմից հանգամանորեն ուսումնասիրվել է հայ-թաթարական ընդհարումների պատմությունը: Ա-Դոն (Հովհաննես Տեր-Հարությունյան) - իրավագիտորեն նշում է, որ ընդհարումները հրահրվել են ցարական կառավարության կողմից՝ նպատակ ունենալով ազգամիջյան բախումներով Կովկասը հեռու պահել Ռուսաստանում հասունացող հեղափոխությունից (Ա-Դո 5): Այն նախօրոք մտածված ու կշռադատված քայլ էր: Կիրառելով «բաժանի՛ր, որ տիրես» սկզբունքը՝ ցարական կառավարությունը մշտապես թշնամություն էր սերմանում իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդների միջև (Խոնդկարեան 82): Ցարիզմը շատ լավ գիտեր, որ Կովկասում ամենից կազմակերպված, տնտեսապես հզոր ու առաջադիմական, հեղափոխականորեն և նորովի տրամադրված ժողովուրդը հայությունն է: Ուստի անհրաժեշտ էր ամենից առաջ մեկուսացնել այդ գործոնը, սանձահարել ու զսպել հայության առաջադիմական ձգտումները և ազատագրական-հեղափոխական հակումները: Առաջավորի ու նորի կրող քաղաքակիրթ հայ ժողովրդի դեմ որպես ազգային ու ռասայական թշնամանք բորբոքող, ջարդ ու կոտորածներ սփռող ուժ, ցարիզմի կարծիքով, կարող էին լինել Կովկասի թուրք-թաթարներն¹ իրենց հետամնացությամբ, տգիտությամբ ու կրոնական մոլեռանդությամբ, որոնց բնագրի մեջ արմատացած էր թալանն ու կողոպուտը, մահն ու սպանությունը: Այս հատկանիշների շնորհիվ նա հեշտությամբ դարձավ բուժ գործիք ցարական Ռուսաստանի ձեռքին (Старцев; Յովհաննիսեան; Новиков; Գիւլխանդանեան, *Հայ-թաթարական ընդհարումները*, Ա²; Սիմոնյան 39-153; Թարխանյան): Իտալացի դիվանագետ, պատմաբան ու հրապարակախոս Լուիջի Վիլլարին, որ 1905 թ.-ի ամռանը հայ-թաթարական ընդհարումների շրջանում այցելել էր Բաբու, Լոնդոնում լույս տեսնող «Fortnightly Review» հեղինակավոր հանդեսի 1906 թ.-ի փետրվարի համարում «Կովկասյան անիշխանությունը և Հայոց հարցի նոր շրջանը» վերտառությամբ հոդվածում գրում էր. «Ոչ մի կասկած չը կայ, որ նրանք (թուրքերը – Միք. Յովհաննիսեան) նիւթել էին կանոնաւոր մի դաւադրութիւն և որոշել էին օգտւել կառավարութեան

¹ Սանկտ Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի՝ 1768-1774 թթ.-ին կազմակերպած գիտական արշավախմբերը (ղեկավարներ՝ Ի. Գիլդենշտեդտ, Ս. Գմելին), հետազոտելով Սև ծովից մինչև Կասպից ծովն ընկած տարածքը, անդրալայայան տափաստաններից Այսրկովկաս ներխուժած թուրք-օղուզական վայկատան ցեղերի նկատմամբ օգտագործում են *թաթար* տերմինը (*Описание всех в Российском государстве обитающих народов* 49): Արդեն XIX դարի երկրորդ կեսի ռուսական աղբյուրներում թուրք-թաթար տերմիններից առավել գործածական է դառնում *թաթար* (Гаремейстер 12; Зейдлиц, *Списки населенных мест Российской империи* 47), որն աստիճանաբար դառնում է Այսրկովկասի կիսաթաթարական թուրքալեզու ցեղերի համար մեկ ընդհանուր հավաքական անվանում (Кавказский край, *Энциклопедический словарь*, т. XIII^А, 836; Шопен 537): Միաժամանակ Կազանի, Աստրախանի և Դրիմի թաթարներին տարբերելու համար Արևելյան Այսրկովկասի թուրքալեզու բնակչությունը հանրագիտական բառարաններում ու պաշտոնական վիճակագրական տեղեկագրերում սկսեցին կոչվել կովկասյան կամ այսրկովկասյան թաթարներ (*Описание всех в Российском государстве обитающих народов* 49; Анисимов 459; Статистическое бюро Бакинской городской управы 102): Արդրեջանական ԽՍՀ-ում 1930-ական թվականներին տեղի ունեցած անձնագրավորման ժամանակ, երբ համատարած «աղրբեջանականացվեց» թուրքալեզու բնակչությունը, 1939 թ.-ի հունվարի 17-ի մարդահամարի պաշտոնական նյութերում նոր միայն արհեստածին «Աղրբեջան» վարչաքաղաքական երկրանունը որպես էթնոնիմ սեփականելու հնարքով ի հայտ եկավ «աղրբեջանցի» (ինքնանվանումը՝ ազրբայջանը) տերմինը (“Всесоюзная перепись”, 71), որը ոչ մի աղբյուրով էթնոիմաստ չի ունեցել: Մանրամասն տե՛ս Ստեփանյան, *«Արևելյան Այսրկովկասում «աղրբեջանցի» էթնանվան գործառնման հարցի շուրջ»* 137-144; Айвазян 104-119; Լահապետյան 61-88; Бабаян 156-224:

² Ցավոք, աշխատության 2-րդ հատորը չի տպագրվել: Երկրորդ աշխարհամարտի ավարտին, երբ Փարիզն ազատագրվում է գերմանացիներից, ֆրանսիացի կոմունիստների պահանջով որդու հետ ձերբակալվում ու բանտարկվում է Ա. Գուլխանդանյանը (1944 թ. հոկտեմբեր-1945 թ. սեպտեմբեր): Խուզարկության ժամանակ մի շարք այլ ձեռագրերի հետ միասին բռնագրավվել է նաև անտիպ վիճակում գտնվող աշխատությունը (Բեևո 92):

հակահայ քաղաքականությանից ու նրա ժամանակաւոր թուլութիւնից՝ իրանց ոտխնէրին դուրս բշելու, կոտորելու և կողոպտելու նպատակով...» (Յովհաննիսեան 71):

Հարկ է նշել, որ այդ ընդհարումների սանձազերծման գործում որոշակի դեր է խաղացել նաև այդ տարիներին Օսմանյան կայսրության կողմից Այսրկովկասում տարվող համաթուրքական (պանթուրքիզմ)¹ և համախլամական² քարոզչությունը: Ըստ համաթուրքականության գաղափարախոսների՝ «Մեծ Թուրանի» ստեղծմանը հավասարապես «խոչընդոտ էին համարվում» թե՛ արևմտահայերը, թե՛ արևելահայերը: Թուրքերը ծրագրել էին ոչնչացնել Օսմանյան կայսրության և Բաքվի միջև գտնվող Հայաստանն ու հայ ժողովրդին՝ ֆիզիկապես բնաջնջելու ճանապարհով (հուրշուրյան 35): Ինչպես աներկբա վկայում է դեպքերի ժամանակակից և իրողություններին քաջատեղյակ հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ պատմաբան, հրապարակախոս Մ. Վարանդյանը (Հովհաննիսյան). «Ոչ մի կասկած՝ որ նոյն աշխատանքը առաջ է մղում և Կովկասում... Կան, եղել են բազմաթիւ փաստեր հէնց թուրք-հայկական ընդհարումների միջոցին, որոնք հաստատում են համախլամական պրօպագանդի գոյութիւնը Անդրկովկասում. եղել են խորհրդաւոր սօֆտայական³ քարոզիչներ, հաւանականօրէն Թիւրքիայից եկած որոշ հրահանգներով, եղել են «ղազաւաթի», սրբազան պատերազմի մարտակոչներ, եղել են կանաչ դրօշակներ, զանազան գաղթակղեցուցիչ մակագրութիւններով...» (Յովհաննիսեան 87):

Նշենք, որ թեև համաթուրքականության և համախլամականության հիմնական դրոյթների միջև կան որոշ տարբերություններ, այսուհանդերձ այդ երկու գաղափարախոսությունները սերտորեն միահյուսված են և չեն հակադրվում մեկը մյուսին: Համախլամականությունն օգտագործվում էր որպէս գործիք՝ մահմեդականների շրջանում համաթուրքական գաղափարախոսության տարածման համար (Քեզա 43-44; Չորանյան 89):

Հայաստան գործողություններ ձեռնարկելու նպատակով Կ. Պոլսից Բաբու եկած համախլամական գործակալների միջոցով դեռևս 1904 թ.-ին ստեղծվել էր համախլամական գաղտնի կազմակերպություն, որի ղեկավարները գերազանցապես «Касний»⁴ լրագրի շուրջ խմբված կովկասյան թաթար գործիչներն էին (Ալի Մարդան Թոփչիբաշև, Ահմեդ-բեկ Աղաև, Իսրաֆիլ Հաջիև, Հաջի Ասլան Աշուրով, Հասան Մամեդ Հաջիևսկի և ուրիշներ) (Գիլխանդանեան, «Հայ-թաթարական ընդհարումները Բազուի մէջ», 8:111-112): «...Բազուն է հանդիսանում այն որջը, որտեղից համախլամական եւ

¹ Համաթուրքականության (որ խանձարուրվել էր տակավին XIX դարի 70-80-ական թվականներին Ռուսաստանի մահմեդական ժողովուրդների մէջ) գաղափարական որջերն էին Ուֆա և Կազան քաղաքներում հիմնադրված «Թուրք Եուրտու» և «Թուրք օջախ» կազմակերպությունները (հիմնադիրներ՝ Իսմայիլ-բեկ Գասպրիևսկի, Ալի Հուսեյնի Չաղե, Ահմեդ-բեկ Աղաև, Յուսուֆ Աբչուրա, Ֆուադ Զոյփոյուլու և ուրիշներ, որոնք հետագայում տեղափոխվեցին Կ. Պոլիս (Зареванд, 7, 42-43, 50; Չարեւանդ 16, 18, 20): Օսմանյան կայսրությունում համաթուրքականության ամենից աչքի ընկնող ներկայացուցիչներից էր Չիյա Գոթալիը՝ թուրք ազգայնականության պարագլուխը: Մանրամասն տե՛ս Սաֆարյան):

² Համախլամականությունը, որպէս կրոնա-քաղաքական շարժում, ձևավորվել է XIX դարի երկրորդ կեսին: Նրա առաջին քարոզիչը եղել է Ջամոլ Էդտին ալ-Աֆղանին (1839-1896), որը ձգտում էր աշխարհի բոլոր մահմեդականներին հավատի կապերով միացնել և խալիֆին հավատարիմ դարձնել:

³ Սոֆթա-Օսմանյան կայսրությունում մեդրեսեի (բարձրագույն իսլամական դպրոց) ուսանող, մոլեռանդ անձ (Պոհճալեան 426):

⁴ Հայտնի նավթարդյունաբերող, մեծահարուստ Հաջի Չեյնալարբիև Թադիևը 1895 թ.-ի վերջերին 57.000 ռուբլով ռուսներից գնել էր «Касний» ռուսալեզու պարբերականը, որն իր էջերում առավել շատ սկսեց անդրադառնալ թուրքախոս բնակչության տարաբնույթ հարցերին (Swietochowski 35):

ոճրագործ տարրեր ստանում էին իրենց սնունդը»,- գրել է դեպքերին քաջատեղյալ Աբրահամ Գյուլխանդանյանը («Չայ-թաթարական ընդհարումները Բագուի մեջ», 8:114):

Համախլամական գաղտնի մարմնի նպատակը ազդեցիկ հայերի ահաբեկումներն էին¹: Թիֆլիսում 1906 թ.-ի փետրվարին տեղի ունեցած ՅՅԴ զինական գործերի վարիչների խորհրդակցությունում, որին մասնակցում էր նաև Բաքվի ներկայացուցիչ Ա. Գյուլխանդանյանը, վկայել է հետևյալը. «Թաթար ժողովրդի ղեկավարութիւնը գտնուում էր համախլամական տարրերի ձեռքին, որոնք իրենց ազդեցութիւնը յարատու դարձնելու միակ միջոցը համարում էին այդ ազգամիջեան կռիւները եւ կարծում էին, որքան այդ կռիւները շարունակուէն, այնքան իրենց ազդեցութիւնը պիտի ուժեղանայ թաթարական զանգուածների վրայ» (Տասնապետեան 251):

Չիրավի, առկա փաստերն արձանագրում են, որ Օսմանյան կայսրության կողմից Բաքու ուղարկված համախլամական գործակալներն իրենց ծրագրերն էին փոխանցում մահմեդական զանգվածներին, այն է՝ «...Այսրկովկասի լիակատար իսլամացմամբ՝ այնտեղից քրիստոնյաներին դուրս մղելու միջոցով...» (Սիմոնյան 347): Ավներն է, որ այդ ծրագիրը պետք է իրականացվեր քրիստոնյա ազգաբնակչության, մասնավորապես հայերի ֆիզիկական բնաջնջման ճանապարհով:

Փաստերը վկայում են, որ Բաքու և Այսրկովկասի այլ քաղաքներ թափանցած թուրքական գործակալների առջև դրվել էր նաև հետևյալ խնդիրը՝ բորբոքել մահմեդականներին և հայերի ջարդերը կազմակերպելու նպատակով կովկասյան թաթարներին հրահրել նրանց դեմ, միաժամանակ ազգամիջյան հակասությունները դարձնել «Մեծ Թուրանի» իրականացմանը խոչընդոտող ռուսական կայսրության թուլացման կարևորագույն միջոց (Чалхушян 63; Амфиатов 53): «Յառաջ» լրագիրը, վկայակոչելով որոշ փաստեր Նախիջևանի գավառում համախլամականների ծավալած գործունեությունից, գտնում էր. «Ընդհարումների պատճառներից մեկն էլ պանիսլամիզմն էր, որը գլխավորապես արտայայտեց Նախիջևանի գաւառում: Այնտեղի խաները գաղտնի յարաբերութիւնների մեջ էին զանազան խորհրդաւոր տարրերի հետ, այնտեղ էր, որ սկսեցին երևալ «Ղազաւաթի» սիմբոլները՝ մարգարէի դրօշակը և կանաչ չալմաները. մօլլաները առանց բաշտելու ճառում էին, որ բոլոր քրիստոնէաները պիտի ջնջուէն, որ հասել է ռուս տիրապետութեան վերջը Կովկասում, և մօտ է խալիֆի (թրքաց սուլթանի) թագաւորութիւնը» (Չայկական հարցը Ռուսաստանում եւ Կովկասեան խռովութիւնը): 1905 թ.-ի օգոստոսի 16-ին Շուշիի հայկական ջարդերի ականատեսը պատմել է հետևյալը. «Կայրենացած մահմեդականները ներս էին խուժում հայոց Ագուլեցոց եկեղեցին, Ղուրանը դնում սեղանին և երգվում «համախլամական պատերազմ» սկսել հայերի դեմ» (Բալայան 62):

Օսմանյան կայսրության հայաջինջ ծրագրերի և ժամանակի ռուսական իշխանությունների՝ Չայկական հարցում երկակի քաղաքականության մասին է վկայում ժնեկից ՅՅԴ Արևմտյան Բյուրոյի 1905 թ.-ի հուլիսի 9-ին ՅՅԴ Կ. Պոլսի «Վիշապ» Ցուցական մարմնին ուղարկած ծածկագիր նամակ-հրահանգը, որում ասվում էր. «Կովկասում ռուս կառավարութիւնը սկսել է տատանուել: Բացուել է տաճիկ կառավարութեան մի ծրագիր, որով հայերին կոտորելով, պիտի աշխատեն Անդրկովկասը գրաւել: Մի մասը (իմա՝ ռուսական իշխանութիւնը - Գ. Ս.) այն կարծիքին է, որ պետք է այս պարագային հայերին զինել. միւս մասը աւելի նպատակայարմար է գտնում թոյլ տալ հայերին կոտորել. վստահ, որ վերջումը միեւնոյնն է, ռուսները կարողանալու են յետ նուաճել Անդրկովկասը» (Փամպուքեան 135): Ակադեմիկոս Յ. Սիմոնյանը, իրեն հատուկ խորքային դիտարկումներով քննարկելով հայ-թաթարական ընդհարումների

¹ Համախլամական կազմակերպության առաջին սև գործը եղավ այն, որ Ե. Փիթոյանի նավթահանքում դավադրորեն կազմակերպեց ՅՅԴ անդամ Համազասպ Թոփչյանի (հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ, ՅՅԴ անդամ Եղիշե Թոփչյանի եղբայրը) և «Կասպիական ընկ.» կառավարիչներից ինժեներ Լևոն Տեր-Սարգսյանի սպանությունը (Գիւլխանդանեան, «Չայ-թաթարական ընդհարումները Բագուի մեջ», 8:114):

պատճառներն ու հայաջինջ քաղաքականության ծայքերը, իրավամբ գրում էր. «Եվ հայատյաց ցարիզմը գուրգուրում էր այդ շարժման (իմա՛ հակահայկական – Գ. Ս.) մասնակիցներին, նրանց խրախուսում և ուղղում էր հայերի դեմ՝ իբրև հեղափոխականների: Ստեղծվել էր սրտառուչ համերաշխություն ռուս միապետության ներկայացուցիչների և համիլամական երազներով տարված թուրք գործիչների միջև» (Սիմոնյան 350):

Կովկասյան թաթար գործիչների շրջանում այն մտայնությունն էր իշխում, որ հայ-թաթարական հակամարտությունը նպաստելու է իրենց «Էթնիկ համաթուրքական գիտակցության» բարձրացմանը (Быков 14): Այս տեսակետին էին համաթուրքական գործիչներից շատերը: Չորօրինակ՝ «Իրշար» («Ուղղորդող») լրագրի խմբագիր, Այսրկովկասում 1905-1906 թթ.-ին թաթար-հայկական արյունահեղության գլխավոր կազմակերպիչներից մեկը, համաթուրքականության խոշոր գաղափարախոս ու քարոզիչ, հայտնի հայատյաց Ա. Աղանը նշում էր. «Ընդհարումների շնորհիվ է, որ Անդրկովկասի բոլոր թաթարները սկսել են հասկանալ, թե իրենք պատկանում են մի ցեղի եւ կապած են միմեանց հետ սերտ կապերով, թե ոչ մի տարբերութիւն չկայ բոլոր թաթարների միջեւ, լինեն նրանք Նախիջեւանում կամ Բագում» (Գիւլխանդանեան, *Յայ-թաթարական ընդհարումները*, Ա:176): Նման հռետորաբանությունն ինքնին գայթակղիչ էր էթնիկ ինքնության փնտրտուկի մեջ գտնվող և քաղաքականապես թույլ զարգացած կովկասյան թաթար խառնամբոխի համար: Ահա թե ինչու հենց ընդհարումների շրջանում լայն ծավալ ստացան էթնիկ ինքնության ձևավորման գործընթացները: Այդ նպատակով համախլամական գաղափարների մոլի քարոզիչ Մահմեդ-աղա Շահթախտինսկին կառավարության թույլտվությամբ Թիֆլիսից Բաքու էր տեղափոխել «Շարքի-ռուս» լրագրի հրատարակությունը (Չաւեն, Ի՞նչ են ասում), որի երկրորդ խմբագիրը դարձավ Ա. Աղանը (Գիւլխանդանեան, «Յայ-թաթարական ընդհարումները *Բագուի մէջ*», 10:128; Տիգրան 161-162):

Այսպիսով՝ քաղաքակրթության նախնական աստիճանի ընթացքի մեջ մնացած, էթնիկ ինքնության ու հայրենիք որոնող կովկասյան թաթարների մեջ աստիճանաբար ձևավորվում էր էթնիկ տարածքային կենտրոնացման գաղափարը: Չորօրինակ՝ կովկասյան թաթարների սոցիալ-Ֆեդերալիստների «Յեյրաթ» («Պատիվ») կուսակցության (ստեղծվել է 1905 թ.-ի ամռանը) համաթուրքական գաղափարախոսության ոգով շաղախված քաղաքական ծրագրում առաջնային հարցերից էր՝ Կովկասն անջատել Ռուսաստանից և մահմեդականներին տալ ինքնավարություն (Багиров 6, 163), որի սահմաններում Բաքվի նահանգից բացի պետք է ներառվեր Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի 2/3-ը, Երևանի նահանգի կեսը և Թիֆլիսի նահանգի մի մասը, որը սահմանակից էր Գանձակ-Ելիզավետպոլի նահանգին, Չաքաթալայի շրջանի մի մասը (Վարդանեան, *Ազգամիջյան հակամարտությունը* 75): «Թաթարները,- գրում է Ա. Գիւլխանդանյանը,- որ մինչեւ տասնիններորդ դարի վերջերը անկազմակերպ մի կրօնական համայնք էին, քսաներորդ դարի շեմքին սկսում են ազգայնօրեն կազմակերպւել...» (Գիւլխանդանեան, *Յայ-թաթարական ընդհարումները*, Ա:6): Ահա քաղաքական մտածողության այս համակարգն ու միտումներն էին ուղղություն տալիս համաթուրքական ու համախլամական կառավարող շրջանների գործողություններին: Ինչպես իրավացիորեն նկատել է Թ. Վարդանեանը, «...թաթարական ազգայնականութեան իրական պատճառները ընկերային-տնտեսական գործօնները չէին: Յայ-թաթարական հակամարտութեան իրական պատճառները քաղաքական բնոյթ էին կրում...» (Վարդանեան, «*Այսրկովկասում թաթարական ազգայնականութեան դրսեւորման արմատները 20-րդ դարասկզբին*», 92):

Նկատենք նաև, որ կովկասյան թաթարների հակահայկական ընթացքը խարսխվում էր ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական դրդապատճառների վրա: Իրողությունն այն էր, որ տնտեսական, պաշտոնական և այլ գործառույթներով իր մրցակիցներից բավական հետ էր մնում տակավին սաղմնային վիճակում գտնվող կովկասյան

թաթարների բուրժուազիան (Սարգսյան 65): Վերջինիս ֆինանսական կապիտալը չէր վերածվում արդյունաբերական կապիտալի, ինչը վաղուց առկա էր հայ և եվրոպացի առևտրաարդյունաբերողների շրջանում: Փաստ էր, որ Արևելյան Այսրկովկասի տնտեսական ու կրթամշակութային հարաբերություններում հայերի ունեցած լուրջ դիրքը հիմնականում պայմանավորված էր նրանց զարգացման բարձր մակարդակով (Тигранян 37): Հայերը, որպես պատմականորեն կայացած ազգ, իրենց քաղաքակրթվածության մակարդակով անհամեմատ բարձր դիրքի վրա գտնվելով՝ ունեին հին մշակույթ, կազմակերպություններ, առաջադրում էին ազգային խնդիրներ և այլն (Swietochowski 39): Ռուս պատմաբան Վ. Ստարոսելսկու դիտարկմամբ՝ «Կոմերցիոն գործունեություն ծավալելու ընդունակությունները և երկրամասին քաջատեղյակ լինելը հայերին մղեցին հասարակական գործունեության լայն ասպարեզ՝ իբրև բարձրակ վաճառականներ և արհեստավորներ» (Старосельский 5): Այս իմաստով շատ այժմեական է հնչում Դավիթ Անանունի (Տեր-Դանիելյան) արտահայտած հետևյալ միտքը. «Մեզ՝ հայերիս, որպես արդի իմաստով բարդ կազմ ունեցող մի ազգութեան, վիճակուել է կողք-կողք ապրել մի ազգի հետ, որն առանց շերտաւորումների չէ, բայց և միապաղաղ մի զանգուած է, միապաղաղ այն պատճառով, որ նրա տարբեր խաւերը դեռ չեն ապրում իրենց առանձին հասարակական ձգտումներով: Մեր դժբախտութիւնն է, որ պատմութիւնը իր սայլին լծել է եզանն ու թովռան եղևիկին» (Անանուն):

Կովկասյան թաթար գործիչները ռուսական կառավարությունից բացի իրենց հետադիմության ու տգիտության պատճառ էին համարում հայերին¹: Կովկասյան թաթարները քաջատեղյակ էին, որ ռուսական կառավարությունն ամենևին էլ հանդուրժող չէր հայերի ազգային շարժումների նկատմամբ: Նրանց աչքի առաջ ոչ վաղ անցյալում փակվել էին հայկական դպրոցները, բռնագրավվել հայ եկեղեցու ունեցվածքը և այլն, իսկ Բաբվի առևտրաարդյունաբերության մեջ հայերից բացի իրենց որոշակի դիրքերն ունեին նաև ռուս և եվրոպացի դրամատերերը: Այսուհանդերձ, կովկասյան թաթար գործիչներից Ա. Աղաևը բացեիբաց հայտարարում էր, որ հայերը «...չափազանց յառաջադիմելով, վազում են արագօրէն եւ երբեք չեն մտածում իրենց հարեւան թաթարների մասին: Այդ հանգամանքը պէտք է գիտակցեն իրենք՝ հայերը եւ աշխատեն բարշ տալ իրենց հետ թաթարներին եւ կամ թաթարները պիտի կանգնեցնեն հայերի առաջխաղացումը այնքան ժամանակ, մինչեւ որ իրենք եւս կը հասնեն հայերին» (Գիւլխանդանեան, *Հայ-թաթարական ընդհարումները*, Ա: 175):

Ի դեպ, Բաբվի նահանգում և հատկապես Բաբու քաղաքում իրենց քաղաքական, տնտեսական ու քաղաքակրթական զարգացման մակարդակով թեև կովկասյան թաթարները հետ էին մնում գրեթե բոլոր տեղաբնիկ ժողովուրդներից, սակայն նրանք օգտվում էին բազմաթանկ տարրի բոլոր արտոնություններից (Ճատուրյան 196): Այս հողի վրա ծնունդ էր առել վերջիններիս գերադասելիության մտայնությունը, որը չէր կարող անտարբեր մնալ հատկապես անվիճելի գերազանցության մտադրական, ֆինանսական ու ձեռնարկատիրական եկամտաբեր պաշտոններ վարող հայերի տնտեսական իրողությունների ակտիվության և շահեկանորեն առանձնացող առևտրի ծավալների նկատմամբ:

¹ 1897 թ.-ի հունվարի 28-ի համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով՝ Բաբվի նահանգում հայ բնակչության գրագիտության մակարդակը կազմում էր 24,4%, ռուսներինը՝ 37,6%, կովկասյան թաթարներինը՝ 2,5%, թաթերինը՝ 1,9%, թալիշներինը՝ 1,2%: Այսպիսով՝ ինչպես երևում է բերված ցուցանիշներից, կովկասյան թաթարների հետամնացությունն ակնառու էր նաև կրթության բնագավառում: Այն ավելի ցայտուն և դառնում ամբողջ բնակչության թվի հետ նրանց տվյալների համադրման դեպքում: Ականավոր արևելագետ և գրող Ազաֆանգել Կրիմսկու դիտարկմամբ՝ «Կովկասում նույնպես թյուրքական ռասսան այնքան էլ առաջադեմ չէր» (Крымский 16):

Այսպիսով՝ կովկասյան թաթարները, տանուլ տալով տնտեսական զարգացման, հատկապես առևտրաարդյունաբերության առաջատար ճյուղի՝ նավթարդյունաբերության բնագավառում ծայր առած մրցակցության մեջ, տուրք տալով իրենց զազանային բնազդներին, նպատակադրվել էին բռնի ուժով կանխելու և ի չիք դարձնելու ամուր դիրքեր ունեցող հայերի բացահայտ առավելություններն ու առաջադիմությունը: Ահա թե ինչ է գրում Բաբվի առաջին ընդհարման (1905 թ.-ի օգոստոս) մասնակից, ՅՅԴ անդամ¹ Վահան Մինախորյանը. «...Բազում ծնունդ առան հայ-թաթարական ընդհարումները: Տնտեսապես նրանք արդիւնք էին թուրք նորաբոյս բուրժուազիայի եւ աւատապետութեան պայքարի՝ ուղղուած հայ բուրժուազիայի եւ տնատիրութեան դէմ, որոնք դրութեան տերն էին Բազում: Քաղաքականապես այդ ընդհարումները արգասիք էին ռուս միապետութեան սադրանքների եւ նպատակ ունէին հեռու պահել յեղափոխութիւնից Անդրկովկասը, տեղական ազգամիջեան պատերազմների միջոցով, ինչպէս նաեւ հայ ըմբոստ ժողովրդի ղևաշարը կտորել: Թուրք եւ թաթար խաւար ամբոխի համար շարժման բարոյական աղբիւրն էր Յամիտի քաղաքականութիւնը: Այս հիմքերով նախապատրաստական աշխատանքները սկսուել էին դեռ մօտ մէկ ու կէս տարի առաջ, եկեղեցական կալուածների գրաւման շրջանում» (Մինախորեան 16):

Հիրավի, կովկասյան թաթարների սկսած շարժումը անթաքույց ընդունել էր հակահայկական բնույթ²: Լ. Վիլլարին, որ 1905 թ.-ի ամռանը Բաբու այցի ընթացքում հանդիպել էր Ա. Աղաւին, «Յուր և սուր Կովկասում» աշխատության մեջ վկայում է, որ հենց նա էր կոչ անում կովկասյան թաթարներին զինվել ընդդեմ հայերի (Villari 165): Վիլլարին նաև վկայում է, որ կովկասյան թաթարներին ոգևորում էր կայսրության հայատոյաց քաղաքականությունը (Villari 170):

Իրենց նպատակադրած խնդիրների լուծման ճանապարհին, որպես միակ միջոց, կովկասյան թաթարները համարում էին հայերի ֆիզիկական ոչնչացումն ու նրանց ստեղծած կյուրթական արժեքներին տիրանալը: Թաթար գործիչներն ակնհայտորեն չէին թաքցնում իրենց հակահայկական քաղաքականությունը: Ուստի Այսրկովկաս թափանցած երիտթուրքերի գործակալների առջև դրվել էր մի խնդիր՝ ուղղորդել մահմեդականների գիտակցությունը, հրահրել կրոնական անհանդուրժողականություն հայերի նկատմամբ, այդ հորի վրա սրել ազգամիջյան հակադրությունները: Նույն Ա. Աղաւը այս կապակցությամբ հայտարարում էր. «...ազգային գիտակցութիւնը պահելու համար պետք է զարթեցնել թաթար ժողովրդի մէջ ատելութեան զգացում դէպի հայերը»

¹ Վահան Մինախորյանն այդ տարիներին եղել է ՅՅԴ անդամ: Հետագայում միացել է Սոցիալիստ հեղափոխական (Էսեռ) կուսակցությանը:

² Հարկ է նշել, որ հայ բնակչության նկատմամբ ատելությունը կովկասյան թաթարների շրջանում սերմանվում էր տակավին վաղ տարիքից: Այսպես՝ ֆրանսագիր, ծագումով կովկասյան թաթար գրող, Բաբվի նավթարդյունաբերողներ Շամսի Ասադուլաևի և Մուսա Նադիևի թոռնուհի Ում-Էլ-Պանինը, որի մանկությունն անցել է Բաբվում, 1905-1906 թթ.-ի հայ-թաթարական ընդհարումների անմիջական տպավորությունների տակ «Կովկասյան օրեր» հուշագրատում-գրքում գրում է. «Տոնական օրերին մենք խաղում էին հայկական ջարդեր, մի խաղ, որ գերադասում էինք մյուս բոլորից: Ցեղապաշտ կրթերով արբած՝ մենք զոհաբերում էինք Թամարային (մոր կողմից հայ) նախնայաց ատելության խարանի վրա: Նախ ուզածին պես մեղադրում էինք նրան մահմեդականների սպանության մեջ և բազում անգամներ իրար ետևից տեղն ու տեղը գնդակահարում շարունակ նորոգելու համար մեր հաճույքը: Այնուհետև, երբ արդեն լավ գիտված էինք նրա արյան տեսքից, Թամարային հարություն էինք տալիս՝ ի պետս մեր դատի, որպեսզի այս անգամ նրան սպանենք համաձայն արվեստի բոլոր կանոնների: Նրա ձեռն ու ոտը կապում էինք և շարունակ գետնին, հետո կտրում էինք նրա մարմնի մասերը, լեզուն, գլուխը, պոկում սիրտն ու փորոտիքը և նետում շներին, որպեսզի ավելի ընդգծենք մեր արհամարհանքը նրա հայկական մարմնի հանդեպ: Երբ վերջապես բավականաչափ հագեցնում էինք մեր վայրագությունը և այլևս ոչինչ չէր մնում թշվառ աղքատից, սկսում էինք պարել նրա դիակի շուրջ՝ ճոճելով մեր փայտե հրացանները՝ զազանային ոռնոցներ արձակելով» (Banine 66):

(Գիւլիանդանեան, *Հայ-թաթարական ընդհարումները*, Ա:176): Ա. Գիւլիանդանյանի՝ խարդախամիտ ու սադրիչ Աղանին տված դիպուկ բնորոշմամբ՝ «Հասարակական կարծիքը նրան էր վերագրում հայ-թաթարական ընդհարումները եւ առհասարակ նա համարում էր հայ-թաթարական յարաբերութիւնների **չար ոգին**» (Գիւլիանդանեան, *Հայ-թաթարական ընդհարումները*, Ա:172): Հակահայ գործողությունները ղեկավարելու նպատակով Աղանի նախաձեռնությամբ 1906 թ.-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին (Յագրօս 37) երիտթուրք գործակալների ուղղորդմամբ Գանձակում ու Բաքվում ստեղծվել էր հակահայկական «Կովկասյան համամուսուլմանական «Դիֆայի»» («Պաշտպան») միությունը, որն ահաբեկչություններ է իրականացրել, ահաբեկող թուլցիկներ տարածել՝ լուսնի վրա խաչվող 2 դաշույնի պատկերով:

Շարունակելի

Օգտագործված գրականություն

1. Աբելեան, Ներսես. «Արքունական հայ գիւղացին Անդրկովկասում (IV), Ելիսաւետաօյի նահանգ». *«Արծազանք»*, № 10, Թիֆլիս, 20.03.1888, էջ 126-127:
2. Աբրահամյան, Աշոտ. *Համառոտ ուրվագիծ հայ զաղթականության պատմության*, հ. Բ, Երևան, 1967:
3. Աճառեան, Հրայր. *Հայ զաղթականության պատմություն*, «Չանգակ-97», Երևան, 2002:
4. Անանուն, Դավիթ. «Հայ-թուրքական հակամարտութիւնը». *«Բագուի ծայն»*, № 67, 28.03.1913:
5. Առաքելյան (Խառատյան), Հրանուշ. *Ուղիներ (Աղվանների առասպելը)*. «Իրան-Նամե», N 2, Երևան, 1994, սեպտեմբեր:
6. Արամայիս. *Մի քանի գլուխ հայ-թաթարական ընդհարումներից: Ա մաս*. Թիֆլիզ, 1907:
7. Բալայան, Վահրամ. *Դրվագներ արցախահայության պատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007 թթ.)*. Երևան, 2012:
8. Բարխուտարեանց, Մակար. *Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան)*. Թիֆլիս, 1893:
9. Բեւո. «Յուշեր Աբր. Գիւլիանդանեանի մասին». *«Հայրենիք»*, Պոսթըն, 1946, ԻԴ տարի, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 5, էջ 83-92:
10. Գիւլիանդանեան, Աբրահամ. «Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ». *«Հայրենիք»*, Պոսթըն, 1934, Ժ տարի, յունիս, № 8, էջ 107-116:
11. ---. «Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ». *«Հայրենիք»*, Պոսթըն, 1934, Ժ տարի, օգոստոս, № 10, էջ 137-132:
12. ---. *Կովկաս երկիրը, ժողովուրդը, պատմութիւնը, քարտեզ եւ բազմաթիւ վիճակագրական տուեալներ: Ա մաս*. Փարիզ, 1943:
13. ---. *Հայ-թաթարական ընդհարումները*. հ. Ա (Բագուի առաջին ընդհարումները), Փարիզ, 1933:
14. Գորոյեան, Նազար. *Պարսկաստանի հայերը (պատմական, տեղագրական եւ վիճակագրական համառոտ տեղեկութիւններ Պարսկաստանի հայերի մասին՝ ասենահին ժամանակներէ մինչեւ 1898 թ.)*. Թեհրան, տպ. «Սողերն»:
15. Դիլոյան, Վալտեր. *Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները*. Երևան, 1989:
16. Եղգարեան, Ավագ քին. *Իրանի Չհարմըհալ գաւառը*. Թեհրան, 1963:
17. Երեմեան, Արամ. *Սպահանի Փերիա գաւառը (պզգագրութիւն)*. Նոր-Ջուղա, 1919:
18. Չարեանդ. *Միացեալ անկախ Թուրանիա կամ ի՞նչ կը ծրագրեն թուրքերը*. Աթենք, 1987:
19. Չաւեն. «Ի՞նչ են ասում». *«Մշակ»*, Թիֆլիս, 1906, փետրվարի 28, № 44:

20. Թարխանյան, Գրիգոր. *1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների պատճառները և ընթացքը*: Պատմ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2002:
21. Լալայան, Երվանդ. *Նիժի և Վարդաշենի ուսիները ազգագրական տեսակետից*. Երևան, 1926:
22. Խոնդկարեան, Արշավիր. «Ցարական Ռուսաստանը եւ կովկասահայությունը». «*Հայրենիք*», Պոսթըն, 1930, Ը տարի, մարտ, № 5, էջ 80-91:
23. Խուրշուդյան, Լենդրուշ. *Հայկական հարցը*. Երևան, 1995:
24. Ծատուրյան, Ալեքսանդր (Ռուբենի Ալ.). ««Հայ-թիւրքական ջարդերի» տնտեսական-քաղաքական պատճառները». «*Մուրճ*», Թիֆլիս, 1905, № 11-12:
25. Հակոբյան, Թաթուլ. *Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր)*. Երևան, 1968:
26. *Հայ ժողովրդի պատմություն*, հ. V. ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975:
27. Հայաստանի Ազգային արխիվ. *Ֆ. 56, ց. 1, գ. 309, թ. 8*.
28. ---. *Ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 63*:
29. «Հայկական հարցը Ռուսաստանում եւ Կովկասեան խռովությունը». «*Յառաջ*», Երևան, 1906, փետրվարի 8, № 20:
30. *Հայոց պատմություն*, հ. III: *Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.): Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ)*. Երևան, 2010:
31. Ղազարյան, Գրիգոր. «Մատրասա (Շամախու գաւառ)». «*Նոր-Դար*», Թիֆլիս, 1898, մայիսի 6, № 76:
32. Մարտիրոսեան, Գրիգոր. «Ամրուան գիւղ». «*Նոր-Դար*», Թիֆլիս, 1891, մարտի 14, № 41:
33. Մարտիրոսյան, Ջմայակ. *Իրանահայ գաղութի պատմություն*. Երևան, 2007:
34. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ծեռագրերի ինստիտուտ-Մատենադարան. *Կաթողիկոսական դիվան, թղթ. 32, վավ. 219, թ. 4*:
35. Մինախորեան, Վահան. «Հայ-թաթարական կռիվները Բագուում». «*Հայրենիք*», Պոսթըն, 1948, ԻՉ տարի, յուլիս, № 7:
36. Յովհաննիսեան [Վարանդեան], Միքայել. *Կովկասեան Վանդեան (թուրք-հայկական ընդհարումները, նրանց պատճառները)*. Թիֆլիս, 1907:
37. Յովսեփեան, Ղազար. *Ակնարկներ ուստիացի և մահմեդական հայերի մասին*. Թիֆլիս, 1904:
38. Չոբանյան, Գայանե. «Իսլամի դերն «ադրբեջանական» ազգային ինքնության կերտման գործընթացում». *21-րդ դար*, Երևան, 2018, № 3 (79), էջ 79-95:
39. Պօհնալեան, Արիստակես. *Թրքերեն-հայերեն առձեռն բառարան*. Իսթանպուլ, 1981:
40. Ջալալեանց, Սարգիս. *Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան*. մասն Բ, Տիֆլիս, 1858:
41. Սարգսյան, Տաթևիկ. «Հայ-թաթարական բախումները ռուսական կայսրության ազգային քաղաքականության համատեքստում». «*Բանբեր Երևանի համալսարանի*», Երևան, 2019, № 3, էջ 64-73:
42. Սաֆարյան, Ալեքսանդր. *Չիյա Գոյթալիք և «Թյուրքականության հիմունքները*». Երևան, 2012:
43. Սիմոնյան, Հրաչիկ. *Ապստագրական պայթյալի ուղիներում: Գիրք Ա*. Երևան, 2003:
44. Ստեփանյան, Գևորգ. «Արևելյան Այրկովկասում «ադրբեջանցի» էթնանվան գործառնման հարցի շուրջ». «*Մերձավոր Արևելք*», հ. V, Երևան, 2008, էջ 137-145:
45. ---. *Բաբու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)*. Երևան, 2011:

46. ---. *Բաբվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմա-ժողովրդագրական ուսումնասիրություն)*. Երևան, 2010:
47. ---. «Գանձակ-Ելիագավետպոլ նահանգի Նուխի և Արեշ գավառների ու Բաբվի նահանգի հայ բնակչության պատմաժողովրդագրական համառոտ ակնարկ (XIX-դարի երկրորդ կես-XX դարասկիզբ)». «*Արևելագիտության հարցեր*» (Գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, 2015, № 9, էջ 218-268:
48. ---. *Նուխի եւ Արեշ գավառների հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանությունը 1918-1920 թթ.* Պատմ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1996:
49. ---. «Նուխի և Արեշ գավառների հայերի պատմական անցյալից». «*Իրան-Նամե*», Երևան, 1997, № 4-5-6, էջ 28-34:
50. ---. *Շամահի քաղաքի հայության պատմությունից*. Երևան, 2013:
51. Վարանդեան, Միքայել. *Յ.Յ. Դաշնակցության պատմություն*. Երևան, 1992:
52. Վարդանեան, Թամարա. «Այսրկովկասում թաթարական ազգայնականութեան դրսեւորման արմատները 20-րդ դարասկզբին». «*Դրօշակ*», հոկտեմբեր, Երևան, 2002, № 4, էջ 82-98:
53. ---. *Ազգամիջյան հակամարտությունը որպես էթնիկ ինքնության ձևավորման գործոն (1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների օրինակով)*. ԼՅԳ, Երևան, 2001, № 1, էջ 72-78:
54. Տասնապետեան, Հրաչ. *Նիւթեր Յ.Յ. Դաշնակցության պատմության համար*. Յ. Բ, Բ տպագրութիւն (յաւելումով), Պէրյուք, 1973:
55. Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի. *Ճարկաբաղ աշխարհացոյց*. Տպագրության պատրաստեց՝ Քյուրտյան Յ., Բանբեր Սատենադարանի, Երևան, 1969, № 9:
56. Տեր-Մարտիրոսյան, Հովհաննես (Ա-Դօ). *Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թթ.): Փաստագրական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով*. Երևան, 1907:
57. Տեր-Յովհաննեսնց, Յարութիւն. *Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱպահան*. Կ. Ա, Նոր Զուղա, ի տպարանի Ամենափրկչեան Ս. Վանաց, 1880:
58. Տիգրան. «Կովկասի թուրք մամուլը». «*Մուրճ*», Թիֆլիս, 1905, № 2-3, էջ 155-168:
59. Փամպուբեան, Երուանդ. «Ինչպե՞ս կանխվեց արևելահայության բնաջնջումը 1905-1906 թթ.: Ռոստոմի ծածկագիր նամակ-հրահանգները». «*Վես*», Երևան, 2009, Ա տարի, հուլիս-սեպտեմբեր, № 2 (27), էջ 125-143:
60. Փարսանտ, Արսեն. *Արեան ճանապարհով: Կովկ. Հայ-թաթ. Արիւնահեղ ընդհարումները*. Կ. Պոլիս, 1910:
61. Айвазян, Григори. «О термине «азербайджанцы», судьбах коренного населения Азербайджана и подлинных предках современных». *ՊԲՀ*, Երևան, 2013, № 1, с. 104—119.
62. Акопян, Алексан и др. «К изучению истории Кавказской Албании (По поводу книги Ф. Мамедовой «Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э.- VIII в. н. э.)». *ՊԲՀ*, Երևան, 1987, № 3, էջ 166-189:
63. Амфитеатров, Александр. *Армянский вопрос*. СПб., 1906.
64. Анисимов. «Бакинская губерния». *Энциклопедический словарь русского bibliографического института Гранат*, Т. 4, изд. 7-ое, Москва, 1911.
65. Арасханианц, Аветик. «Экономический быт государственных крестьян Арешского уезда Елисаветпольской губерниию». «*Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края*», Т. VII, Тифлис, 1887.
66. Бабалян, Давид. «Формирование азербайджанского народа от татаризации до азербайджанизации) в контексте административно-территориальной и этнонациональной геополитики в Закавказье в XIX-XX в.», *Нораванк*, 13.11.2018.

http://www.noravank.am/rus/issues/detail.php?ELEMENT_ID=17800.
20.06.2021.

Доступно:

67. Багирова, Ирада Саид кызы. *Политические партии и организации Азербайджана в начале XX века (1900-1917)*. Баку, 1997.
68. Березин, Илья. *Путешествие по Дагестану и Закавказью*. Казань, 1850.
69. Быков, Федор. *Национальный вопрос на Кавказе*. Баку, 1906.
70. *Всесоюзная перепись населения 1939 г.: основные итоги*. Москва, 1992.
71. Гагемейстер, Юлий. *Закавказские очерки*. СПб., 1845.
72. Гасымова. «Албания или Атропатена? Как «сочиняют» древнюю историю Кавказа». «Эхо» Баку, 2006, 29 Апреля, № 76 (1316). <http://web.archive.org/web/20160308061000/http://www.peep.us/b1bed665>.
73. Гмелин, Самуил Готлиб. *Путешествие по России для исследования трех царств естества*. ч. III, половина I, СПб., 1785.
74. Евангулов, Григорий. *Местная реформа на Кавказе*. СПб., 1914.
75. Зареванд. *Турция и пантуранизм*. Париж, 1930.
76. Зейдлиц, Николай. «Этнографический очерк Бакинской губернии». *Кавказский календарь на 1871 г.* Тифлис, 1870, стр. 46-67.
77. ---. *Списки населенных мест Российской империи по Кавказскому краю. LXV-Бакинская губерния*. Список населенных мест по сведениям 1859 по 1864 г., Тифлис, 1870.
78. Иваненко, Виктор. *Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Великого Князя Михаила Николаевича (исторический очерк)*. Тифлис, 1901.
79. Крымский, Агафангел. *Школа, образованность и литература у российский мусульмань (культурно-этнографический очерк)*. Москва, 1905.
80. Мамедова, Фарид. *Политическая история историческая география Кавказской Албании (III в. до н.э.-VIII в.н.э.)*. Баку, 1986.
81. Новиков, Александр. *Резня в Баку 1905 г.* Таганрог, 2015.
82. *Описание всех в Российском государстве обитающих народов, так же их житейских обрядов, вер, обыкновений, жилия, одежды, и прочих достопамятностей*. ч. 2-ая. О народах татарского племени, перев. с немец., СПб., 1779.
83. *Отчет по главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем его императорским высочеством великим князем Михаилом Николаевичем*. 6 декабря 1862-6 декабря 1872 гг., Тифлис, 1873.
84. *Полное Собрание Законов Российской Империи*. Т. XV, собрание II, отд-ие I, СПб., 1841, № 13368.
85. Реза, Энаят-олла. *Азербайджан и Арран (Атурпатакан и Кавказская Албания)*. Москва, 2012.
86. Старосельский, Владимир. *Кавказская драма*. СПб., 1906.
87. Старцев. *Кровавые дни на Кавказе*. С.-Петербург, 1907.
88. Статистическое бюро Бакинской городской управы. *Пособия при разработке материала переписи г. Баку 22-го октября 1903 года*. Баку, 1904.
89. Тигранян, Сиракан. *Армяне*. Ереван, 1992.
90. Тунян, Валерий. *Административно-экономическая политика самодержавия России в Закавказье I пол. XIX в.* Ереван, 2003.
91. Чалхушян, Григорий. *Армянский вопрос и армянские погромы в России*. Ростов-на-Дону, 1905.
92. Шашшович. *Весь Кавказ. Промышленность торговля и сельское хозяйство Северного Кавказа и Закавказья*. Баку, 1914.

93. Шахатуниан, Аветик. *Административный передел Закавказского края*. Тифлис, 1918.
94. Шопен, Иван. *Исторический памятник Армянской области в эпоху присоединения ее к Российской империи*. СПб., 1852.
95. *Энциклопедический словарь. т. XIII^А*, издатели Брокгауз, Фридрих; Ефрон, Илья. СПб., 1894.
96. Ketibian, Ara. *Azeri Aggression Against Armenians in Transcaucasia (1905-1921)*. Reports From the U.S. Press, Yerevan, 2020.
97. Mckenzie, Fredrick Arthur. *From Tokyo to Tiflis, uncensored letters from the war*. London, 1905.
98. Swietochowski, Tadeusz. *Russian Azerbaijan, 1905-1920. The Shaping of National Identity in a Muslim Community*. Cambridge, 1985.
99. Stepanyan, Gevorg. *Armenians of Baku Province in the Second Half of the 19th Century (Historical-Demographic Study)*. Yerevan, 2013.
100. Umm-El-Banine. *Jours Caucasiens*. Gris-Banal, Paris, 1985.
101. Villari, Luigi. *Fire and Sword in the Caucasus*. London, T. F. Unwin, 1906.

Works Cited

1. Abe'lean, Nerse's. «Arqunakan hay giwghacin Andrkovkasum (IV), Elisawe'tpo'li nahang». «Ard'aganq», № 10, T'iflis, 20.03.1888, e'j 126-127 ("The royal Armenian peasant in Transcaucasia (IV), Elisavetpol region". "Arzagank", No. 10, Tiflis, 20.03.1888, pp. 126-127).
2. Abrahamyan, Ashot. Hamar'ot urvagic' hay gaght'akanut'yan patmut'yan, h. B, Erevan, 1967 (A brief sketch of the history of Armenian refugees, G. B., Yerevan, 1967)
3. Atwar'ean, Hrachya. Hay gaght'akanut'yan patmut'yun, «Zangak-97», Erevan, 2002 (The History of Armenian refugees, "Zangak-97", Yerevan, 2002).
4. Ananun, Davit'. «Hay-t'urqakan hakamartut'iwny». «Bagui d'ayn», № 67, 28.03.1913 ("The Armenian-Turkish conflict". "The Voice of Bagui", No. 67, 28.03.1913).
5. Ar'aqelyan (Xar'atyan), Hranush. Udiner (Aghvanneri ar'aspely'). «Iran-Name'», N 2, Erevan, 1994, September (Udins (the myth of the Albanians). "Iran-Name", N 2, Yerevan, 1994, September).
6. Aramayis. Mi qani glux hay-t'at'arakan y'ndharumneric: A mas. T'iflitz, 1907 (Several chapters of the Armenian-Tatar clashes. Part 1. Tiflitz, 1907).
7. Balayan, Vahram. Drvagner arcaxahayut'yan azatagrakan payqari ev petakanakertman patmut'yan (1813-2007 t't.). Erevan, 2012 (Fragments of the history of the liberation struggle and state-building of the Armenians of Artsakh (1813-2007)). Yerevan, 2012).
8. Barxutareanc, Makar. Aghuanic erkir ew draciq (Mijin Daghsan). T'iflis, 1893 (Fragments of the history of the liberation struggle and state-building of the Armenians of Artsakh (1813-2007)). Yerevan, 2012).
9. Be'no'. «Yusher Abr. Giwlxandaneani masin». «Hayreniq», Po'st'y'n, 1946, ID tari, september-hoktember, № 5, e'j 83-92 (The Memories of Abr.Gulkhandanean, Hayreniq, Posten, 1946, September-October, No. 5, pp. 83-92).
10. Giwlxandanean, Abraham. «Hay-t'at'arakan y'ndharumneriy' Bagui me'j». «Hayreniq», Po'st'y'n, 1934, JhB tari, yunis, № 8, e'j 107-116 ("The Armenian-Tatar clashes Bug": "Rodina", Posten, 1934, 14, June, No. 8, pp. 107-116).
11. ---. «Hay-t'at'arakan y'ndharumneriy' Bagui me'j». «Hayreniq», Po'st'y'n, 1934, JhB tari, o'gostos, № 10, e'j 137-132 ("The Armenian-Tatar clashes in Baku". "Irenik", Boston, 1934, 12B year, August, No. 10, pp. 137-132).
12. ---. Kovkas erkiry', jhoghovurdy', patmut'iwny', qarte'z ew bazmat'iw vitwakagrakan tvealner: A mas. P'ariz, 1943 (The country of the Caucasus, people, history, maps and numerous statistics. Part 1. Paris, 1943).

13. ---. Hay-t'at'arakan y'ndharumneri'. h. A (Bagui ar'ajin y'ndharumneri'), P'ariz, 1933 (Armenian-Tatar clashes. Answer: A (the first collisions of Baku), Paris, 1933).
14. Goroyean, Nazar. Parskastani hayery' (patmakan, teghagrakan ew vitwakagrakan hamar'o't teghecut'iwnner Parskastani hayeri masin` amenahin jhamanaknere' minchew 1898 t'.). T'ebran, tp. «Modern» (Armenians from Persia (historical, topographical and statistical information about the Armenians of Persia-the most ancient times before 1898). Tehran, p.h. "Modern").
15. Diloyan, Valter. Arevlyan Hayastany' XIX dari ar'ajin eresnamyakin & hay-r'usakan haraberut'yunnery'. Erevan, 1989 (Eastern Armenia in the first half of the XIX century and Armenian-Russian relations. Yerevan, 1989).
16. Edgarean, Avag qhn. Irani Chharmy'hal gawar'y'. T'ebran, 1963 (The Iranian environment of Chkharmkhal. Tehran, 1963).
17. Eremeian, Aram. Spahani P'e'ria gawar'y' (azgagrut'iwn). Nor-Jugha, 1919 (The province of Peria in Isfahan (ethnography). New Julfa, 1919).
18. Zarewand. Miaceal ankax T'urania kam i'nch ky' c'ragren t'urqery'. At'e'nq, 1987 (United independent Turania or what are the Turks planning? Athens, 1987.).
19. Zawe'n. «Inch en asum?». «Mshak», T'iflis, 1906, p'etrvari 28, № 44 ("What do they say?", "Mshak", Tiflis, 1906, February 28, No. 44).
20. T'arxanyan, Grigor. 1905–1906 t't'. hay–t'at'arakan kr'ivneri pattwar'nery' ev y'nt'acqy': Patm. git. t'eknac'ui gitakan astitwan , Erevan, 2002 (The Causes and Course of the Armenian-Tatar Battles in 1905-1906. History. sciences. Candidate's degree defence, Yerevan, 2002.).
21. Lalayan, Ervand. Nijhi & Vardasheni utinery' azgagrakan tesaketik. Erevan, i haycman atenaxosut'yun, Erevan, 1926 (The Utins of Nizhi and Vardashen from an ethnographic point of view: Yerevan, 1926).
22. Xondkarean, Arshavir. «Carakan R'usastany' ev kovkasahayut'iwny'». «Hayreniq», Po'st'y'n, 1930, Y' tari, mart, № 5, e'j 80-91 ("Tsarist Russia and Caucasian Armenians": "Motherland", Boston, 1930, March, No. 5, pp. 80-91).
23. Xurshudyan, Lendrush. Haykakan harcy'. Erevan, 1995 (The Armenian Question, Yerevan, 1995.).
24. C'aturyan, Aleqsandr (R'ubeni Al.). ««Hay-t'iwrqakan jarderi» tnte-sakan-qaghaqakan pattwar'nery'». «Murtw», T'iflis, 1905, № 11-12 ("Economic and Political Reasons for the "Armenian-Turkish pogroms": "Murch", Tiflis, 1905, No. 11-12).
25. Hakobyan, T'at'ul. Hayastani patmakan ashxarhagrut'yun (urvag'er). Erevan, 1968 (Historical Geography of Armenia (contours), Yerevan, 1968).
26. Hay jhoghovrdi patmut'yun, h. V. HSSH GA hrat., Erevan, 1975 (The History of the Armenian People, v.V, ASSR AS publishing, Yerevan, 1975).
27. Hayastani Azgayin arxiv. f. 56, c. 1, g. 309, t'. 8 (The National Archive of Armenia. F.56, l. 1, c.309, p.8).
28. ---. f. 56, c. 1, g. 305, t'. 63 (f.56, l.1, c.305, p.63)
29. «Haykakan harcy' R'usastanum ew Kovkasean xr'ovut'iwny'». «Yar'aj», Erewan, 1906, p'etrvari 8, № 20 ("The Armenian question in Russia and the Caucasian revolt". "Yaraj", Yerevan, 1906, February 8, No. 20).
30. Hayoc patmut'yun, h. III: Nor jhamanakashrjan (XVII dari erkrord kes-1918 t'.): Girq ar'ajin (XVII dari erkrord kes-XIX dari verj). Erevan, 2010 (History of Armenia, art. III. The New Era (the second half of the XVII century-1918) Книга Book one (the second half of the XVII century-the end of the XIX century). Yerevan, 2010).
31. Ghazaryan, Grigor. «Matrasa (Shamaxu gawar')». «Nor-Dar», T'iflis, 1898, mayisi 6, № 76 ("Matrasa (Shamaku province)". "Nor-dar", Tiflis, 1898, May 6, No. 76).
32. Martirosean, Grigor. «Amruan giwgh». «Nor-Dar», T'iflis, 1891, marti 14, № 41 ("In the village of Amruan". "Nor-dar", Tiflis, 1891, March 14, No. 41).

33. Martirosyan, Hmayak. Iranahay gaghut'i patmut'yun. Erevan, 2007 (The History of the Armenian colony of Iran. Yerevan, 2007).
34. Mesrop Mashtoci anvan hin d'er'ageri institut-Matenadaran. Kat'oghikosakan divan, t'ght'. 32, vav. 219, t'. 4 (Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts-Matenadaran. St. Gregory the Illuminator Church, p.32, 219).
35. Minaxorean, Vahan. «Hay-t'at'arakan kr'iwnery' Bagwum». «Hayreniq», Po'st'y'n, 1948, IZ tari, yulis, № 7 ("The Armenian-Tatar wars in Baku". "Ayrenik", Boston, 1948, July, No. 7).
36. Yovhannisean [Varandean], Miqaye'l. Kovkasean Vande'an (t'urq-haykakan y'ndharumnery', nranc pattwar'nery'). T'iflis, 1907 (Caucasian Vendee (Turkish-Armenian clashes, their causes). Tiflis, 1907).
37. Yovse'p'ean, Ghazar. Aknarkner utiaci ev mahmedakan hayeri masin. T'iflis, 1904 (Allusions to the Utik and Muslim Armenians. Tiflis, 1904).
38. Chobanyan, Gayane. «Islami dern «adrbejanakan» azgayin inqnut'yan kertman gorc'y'nt'acum». 21-RD DAR, Erevan, 2018, № 3 (79), e'j 79-95 ("The role of Islam in the creation of the "Azerbaijani" national identity". 21st Century, Yerevan, 2018, No. 3 (79), pp. 79-95).
39. Po'htwalean, Aristake's. T'rqere'ne'-hayere'n ar'd'er'n bar'aran. Ist'anpul, 1981 (Turkish-Armenian dictionary of the hand, Stambul, 1981).
40. Jalaleanc, Sargis. Twanaparhordut'iwn i Mec'n Hayastan. masn B, Tp'xis, 1858 (A trip to Great Armenia, part B, Tpkhis, 1858).
41. Sargsyan, Tat'evik. «Hay-t'at'arakan baxumnery' r'usakan kaysrut'yan azgayin qaghaqakanut'yan hamateqstum». «Banber Erevani hamalsarani», Erevan, 2019, № 3, e'j 64-73 ("Armenian-Tatar clashes in the context of the national policy of the Russian Empire". "Bulletin of the Yerevan University", Yerevan, 2019, No. 3, pp. 64-73).
42. Safaryan, Aleqsandr. Ziya Goyqalp'y' ev «T'yurqakanut'yan himunqneri». Erevan, 2012 ("Fundamentals of Turkism". Yerevan, 2012).
43. Simonyan, Hrachik. Azatagrakan payqari ughinerum: Girq A. Erevan, 2003 (On the paths of the liberation struggle. Book A. Yerevan, 2003).
44. Step'anyan, Gevorg. «Arevelyan Aysrkovkasum «adrbejanci» e't'nanvan gor-c'ar'man harci shurj». «Merd'avor Arevelq», h. V, Erevan, 2008, e'j 137-145 ("On the issue of the functioning of the "Azerbaijani" ethnan "in the Eastern Transcaucasia". "The Middle East", v. V, Yerevan, 2008, pp. 137-145).
г) Другая сторона вопроса заключается в следующем. Для России контекст отношений с Азербайджаном и Турцией связан с более глубокими геополитическими процессами, которые осложняются исторической памятью о происшедшем геноциде армянского народа, о войне за независимость Арцаха. Здесь присутствует и сложный букет отношений России и Турции в рамках войны в Сирийской Арабской Республике, значение Турции в глобальном противостоянии России с ЕС и России с США, учитывая сложные и конфликтные ситуации, которые у ЕС и США регулярно возникают с Турцией. Эти противоречия осложняются еще и тем, что Турция является членом НАТО, и сами отношения Турции и России нельзя назвать ни стабильными, ни безоблачными. Ещё недавно, после уничтожения боевого российского самолёта турецкими ВВС, достаточно серьезно обсуждались возможности прямого военного столкновения между Россией и Турцией, периодически возникают экономические противоречия, а также осложнения в отношениях между Россией и Турцией по вопросу присоединения к России Крыма и положения крымско-татарского населения.

В России также понимают, что определённые сложности и напряженные ситуации, возникающие у турецкой стороны во взаимоотношениях с НАТО и США, не меняют главного: в критический момент НАТО, безусловно, поддержит Турцию, в сирийском вопросе НАТО дистанцировалась от конфликта России и Турции. Но когда в ходе ноябрьской войны 2020 г. Россия напомнила о союзнических отношениях с Арменией, это произошло в связи с тем, что российская сторона увидела появление реальной военной угрозы для Еревана, в НАТО напомнили России о том, что Турция – член этого альянса и важный для НАТО и США союзник.

Попытки России выстраивать многовекторную политику, в принципе, неизбежны, учитывая многозначность интересов, но вызывают у армянской стороны недоверие и, в свою очередь, заставляют искать новые источники политической поддержки, даже если они вызывают подозрения и неодобрение со стороны России. В регионе с таким трагическим грузом истории и существующими неразрешимыми на основе компромисса противоречиями между различными странами российская политика просто обречена

испытывать недоверие со всех сторон. В идеальном варианте нужно поддерживать только одну из сторон конфликта, но, учитывая роль России в глобальной политике, это невозможно. Россия сотрудничает по различной проблематике с Азербайджаном и Турцией, но при этом подчеркивает свои союзнические отношения с Арменией. Но, учитывая все вышеизложенное, положение полудоверия по отношению к России от всех заинтересованных сторон будет неизбежно, как и невозможность жестко придерживаться одной стратегической линии (Fischer 21). С точки зрения же российской стороны часто отмечается ожидание формирования в Армении более чёткой политики и завершение в той или иной форме политического кризиса.

В контекст этого четырёхугольника укладываются все основные стереотипы и опасные моменты во взаимоотношениях Армении и России. Если для взаимоотношений Армении с Турцией и Азербайджаном речь не идет о взаимности интересов и сотрудничестве, в принципе, уже великолепным достижением было отсутствие крупномасштабной «горячей» войны. Но в 2020 году даже это хрупкое равновесие было нарушено агрессией со стороны Азербайджана против Арцаха, повлёкшая оккупацию ряда его территорий. Для России ситуация гораздо сложнее в плане как региональной политики, так и геополитики.

Для более системного понимания этой комбинации политических интересов нужно учитывать еще и внутрироссийские и внутриармянские политические факторы. В Армении и в России есть силы, которые заинтересованы в значительном сокращении и даже в полном разрыве союзнических отношений. Антироссийское лобби есть в Армении, и антиармянское – в России. Более того, в России есть достаточно влиятельные политические силы, которые готовы, в ущерб интересам Армении и в долгосрочном плане и интересам собственно России, поддерживать вектор сотрудничества, выгодный Азербайджану и Турции. Странники такого подхода есть в военной, политической и научной элите России. Пока эти силы не являются доминирующими и не имеют опасного уровня политического влияния на принимаемые решения, но они есть, и можно говорить об определённом росте их влияния и медиа активности. Также, как в Армении, есть те, кто выступают за вывод российской военной базы и за полную переориентацию внешней политики Армении в сторону США и ЕС по формуле «или с ними, или с Россией».

Смена власти в Армении и приход Н. Пашиняна вызывал опасения в российской политической элите относительно того, что будет реализован именно такой сценарий, который мог стать калькой с событий, происходивших на Украине с 2013 г. Справедливости ради необходимо отметить, что на данном этапе действия Н. Пашиняна выстроены в отношении России стратегически грамотно и направлены на сохранение и развитие сотрудничества между Россией и Арменией с учетом изменившихся внутриполитических условий в Армении. Не избегаются накопившиеся спорные вопросы, но сохраняются основные приоритеты политики Армении, связанные с сотрудничеством с Россией. Фактор, связанный с необходимостью для России проводить многовекторную политику, наличие общих интересов с Турцией и Азербайджаном, неразрешимость их конфликтов с Арменией будут осложнять взаимоотношения России и Армении, и эта объективная ситуация будет требовать повышенного внимания и особой деликатности.

При этом нужно чётко понимать существующую, по мнению автора статьи, безальтернативность для Армении отношений с Россией как с единственным возможным на текущем историческом этапе союзником. Все остальные варианты в виде Ирана, США, Франции, арабского мира – это утопии в силу целой системы причин. Хотя потенциально можно рассматривать возможность привлечь для обеспечения безопасности дополнительно миротворческие силы других стран, входящих в ту же минскую группу. Но здесь есть ряд проблем. Например, участие Турции в блоке НАТО и полная зависимость Азербайджана от турецких интересов и политики, уязвимость той же Франции перед Турцией и возможность

для Турции повторить миграционный кризис и т.д.. Россия в отношении возможности оказать на неё давление менее уязвима.

Главная проблема Армении связана со сложнейшим и абсолютно невыгодным для неё геостратегическим положением. Поддержка возможна только со стоны союзника, не заинтересованного в чрезмерном усилении Турции, и это, безусловно, Россия. Но над укреплением отношений нужно работать и не забывать о желании турецко-азербайджанской стороны максимально осложнить и ослабить союзнические отношения Армении и России.

Соседи не просто враждебны: Турция, Азербайджан и Грузия; все они, кроме Грузии, обладают критическим превосходством в населении, вооруженных силах и экономических ресурсах. Иран в данном случае проводит крайне двусмысленную политику, и, сам по себе, он является находящейся под международными санкциями страной с большими, чем у Армении, но всё равно очень ограниченными военными и экономическими ресурсами. Армения уязвима и в стратегическом вопросе коммуникаций с внешним миром и военно-экономической логистики.

Это серьёзно осложняет положение, но не лишает возможности защищать свои интересы, при условии защиты и поддержки со стороны достаточно сильного и способного оказать влияние на политическую ситуацию союзника. Ключевым вопросом является то, насколько Республика Армения сможет проявить себя таким союзным государством, ради интересов которого нужно пойти на осложнения в отношениях с Турцией и Азербайджаном.

Союзнические отношения в данном случае означают готовность предпринять определённые силовые действия, которые будут достаточны для того, чтобы остановить агрессивные действия Турции и Азербайджана. Россия предприняла такие действия в 2020 году, но только увидев угрозу полного уничтожения Арцаха и захвата азербайджанской армией Степанакерта, что было для России недопустимо. Укрепление союзнических отношений – это политика взаимности. Политическим элитам Армении и Арцаха нужно принять стратегическое решение о том, как эта взаимность представляется с их стороны в изменившихся условиях.

2. Россия-Армения-США. Вопрос внешнеполитических отношений, к сожалению, нужно рассматривать в контексте глобального противостояния между Россией и США. Для отношений Армении и России господствующий в политической элите США подход является достаточно опасным. Главная задача переориентировать Армению от союза с Россией на партнёрские отношения с США и показать, что правящий в России политический режим неспособен больше удерживать даже, казалось бы, самых близких союзников. При этом США в силу геополитических причин не могут предоставить Армении ни серьёзной экономической поддержки, ни гарантий безопасности. Турция является страной НАТО, которая при желании может снова актуализировать миграционные кризис в близком по всем основным политическим аспектам к США Европейском Союзе (Neumann 131). В силу близости Турции с Азербайджаном нет реального желания усиливать конфронтации уже с двумя этими странами в пользу интересов Армении. Однако со стороны США прослеживается четкая политика на усиление скептических по отношению России настроений в Армении, используя для этого сеть НКО и подконтрольные информационные ресурсы. В этом отношении российская политическая элита с крайней настороженностью восприняла события, связанные с приходом к власти Н. Пашиняна, тем более что они четко накладывались на существующие в России фобии относительно «уличной политики» и революционной смены власти. Примеров недавней истории, когда страны, в которых такие революции происходили и начинали занимать откровенно русофобские позиции, огромное множество, вследствие этого появляется недоверие к любым революционным вождям, которые становятся главами государств. Однако в ходе политического кризиса в Армении после подписания договора о

прекращении огня в 2020 г. действия руководства России по отношению к Н. Пашиняну были лояльными.

В Армении речь идет о диверсификации политических контактов и экономических связей, чтобы повысить уровень жизни в Армении и создать конкурентную рыночную среду там, где раньше условия игры диктовали российские монополии. Однако усилившаяся после войны 2020 г. роль России для обеспечения безопасности Армении может внести свои коррективы в эту политику. На настоящем этапе, со стороны Армении, подтверждено участие во всех созданных Россией геополитических и внешнеэкономических союзах и проектах.

Уже обращалось внимание на тот факт, что для США Армения в современных политических условиях не сможет стать страной более ценной, чем Турция, но в плане символических действий, которые будут положительно восприняты в Армении, у американской стороны есть возможность набрать политический капитал. В частности, использовать для продвижения своей мягкой силы такой важный и эмоциональный момент для всего армянского народа, как Геноцид армян в Османской империи. Президент США Дж. Байден в своей речи 24 апреля 2021 г. использовал именно формулировку «геноцид», чем вызвал ряд резких высказываний со стороны турецкой политической элиты. В Армении наоборот, его выступление было воспринято со значительным эмоциональным подъёмом, достаточно большое количество людей посчитали это выступление актом признания Геноцида армян со стороны США как государства, чем выступление Дж. Байдена не было. В США есть разработанная процедура юридического оформления таких вопросов. В отношении данной тематики есть решения Конгресса и Сената США о признании факта Геноцида армян, но нет подписанного президентом США итогового акта, который получил бы одобрение и со стороны Верховного Суда США. Эти процессуальные моменты Дж. Байден не довёл до логического завершения.

Для американской стороны Армения и общая опасная и нестабильная ситуация в регионе – это возможность в противостоянии России, оторвать от неё, при благоприятных обстоятельствах, одного из последних союзников.

3. Россия – Армения - Европейский Союз. Данная комбинация также имеет со стороны Европейского Союза направленность на противодействие российским интересам и подрыв российско-армянского сотрудничества. Причины примерно те же, что и у США, но для ЕС еще интересен и армянский рынок, проще возможность с меньшими издержками получать неплохую, по их меркам, прибыль, слабость собственно армянского бизнеса и представленных на рынке Армении российских компаний. К тому же, политику евроинтеграции Армении может облегчить ряд факторов. Наличие армянских общин, например, мощная армянская община во Франции, и политика Армении на сближение с Французской республикой, активно проводившаяся еще С. Саргсяном. Фактор мощной и уважаемой армянской диаспоры, имеющей внутривнутриполитическое влияние на уровне отдельных штатов, играет важную, но всё-таки недостаточную для принятия радикально проармянских решений роль и в политике США.

4. Россия–Армения–Грузия–Южная Осетия. Зависимость Армении от транзита в Россию через Грузию актуализирует фактор, связанный с политикой России в отношении Грузии, которая продолжает оставаться в контексте последствий агрессии Грузии против Южной Осетии и Абхазии и операции России по принуждению Грузии к миру. Транзит остается для Грузии рычагом давления на Россию и одновременно Армению. Вопрос о строительстве новых транзитных маршрутов из Армении через территорию Абхазии и Южной Осетии находится в центре политико-экономических дискуссий, и есть ряд сомнений относительно его реалистичности, по крайней мере, в обозримой перспективе. Тем более, что в отношениях Армении и Грузии есть свои противоречия, которые накладываются на контекст отношений России – союзнический с Арменией и конфронтационный с Грузией. В ходе войны 2020 года грузинская сторона, по сути,

нарушив декларированный нейтралитет, оказывала логистическую поддержку действиям Азербайджана, в частности, транзиту военных грузов в зону военных действий, закрыв при этом возможность доставлять военные грузы в Армению для российской стороны.

Если говорить о взаимоотношениях указанных стран, то для российской и армянской стороны может представлять интерес побудить Грузию реализовать проект дополнительной железной дороги из Ирана через Армению, Грузию, Абхазию (которую признаёт Россия, но не Грузия) на российскую территорию. Такой проект может представлять интерес как альтернативный маршрут тому, который должен быть открыт через территорию Азербайджана. Абхазская территория представляет собой наиболее экономически выгодный путь как в плане логистики, он самый короткий, опирается на уже существующую железнодорожную сеть, которая нуждается в ремонте, но не в строительстве с нуля. Абхазская территория примыкает к крупнейшему логистическому и железнодорожному узлу Адлер–Сочи с удобным выходом на регионы центральной России и далее на другие страны. Важным является и тот факт, что именно в Адлере – Сочи, далее в Ростовской области находятся одни из самых многочисленных армянских общин, которые, в случае появления прямого железнодорожного сообщения, могут стать важным участником экономического развития Армении.

5. Россия–Армения–Иран. Из всех перечисленных выше систем геополитических интересов партнерские и доброжелательные отношения есть только здесь. Иран является для России в принципе дружественным государством и важным партнером, особенно в контексте сирийского конфликта. Пока Иран находится в режиме международных санкций, а Армения и Россия поддерживают и развивают с ним отношения это является фактором, положительно сказывающимся на собственно армяно-российских отношениях. Ситуация может измениться и перевести фактор Ирана в разряд негативных в случае снятия санкций с Ирана и превращения его из партнера России в конкурента. В ходе войны 2020 г. позиция Ирана не была стабильной.

Иран не заинтересован в усилении турецкого влияния в Азербайджане и в ослаблении Армении, но этой незаинтересованности весьма трудно материализоваться в определенных военно-политических шагах. Это связано с тем сложным геополитическим положением, в котором сейчас находится Иран. Недостаток сил для по-настоящему активной внешней политики при наличии нескольких стратегических направлений, где Ирану необходимо защитить свои позиции, определяет отношение с Турцией и необходимость сохранять с ней приемлемые отношения, даже если это в чём-то повредит отношениям Армении и Ирана. К таким стратегическим направлениям относится Сирия, а также необходимость для Ирана противостоять давлению со стороны США, с которыми у Турции достаточно сложные отношения, Израилем, арабскими государствами региона.

В интервью в период боевых действий в Арцахе посол Ирана в России Казем Джалали отметил принципиально важную роль Турции в обеспечении безопасности в регионе, хотя уже было доказано участие турецких вооружённых сил непосредственно в боевых действиях на стороне Азербайджана. Не говоря уже о поставках вооружений, на которые Турция пошла, даже нарушая определённые нормы НАТО.

Если рассмотреть вопрос иранской региональной политики, то нужно взять более глубокий контекст. Иран – страна с выдающейся историей и культурно-цивилизационной основой. При этом в Иране всегда сохранялись актуальные для текущей политики воспоминания об имперском прошлом и определённые политические амбиции. Однако такое самосознание накладывается на реальность, которая связана с ограниченностью ресурсов, санкционным давлением и военной угрозой, наиболее серьёзной со стороны США и периодически – со стороны Израиля. По мнению автора статьи, у Ирана достаточно сил и военных средств, что бы сделать прямое вооруженное вторжение на его территорию опасным с точки зрения прогнозируемых неприемлемо больших потерь и возможности массированного удара по тем странам, которые будут союзниками любой страны,

решившейся напасть на Иран. Однако у Ирана нет достаточных экономических и военных сил, чтобы самостоятельно определять в регионе политическую повестку.

**Итоги анализа политических процессов:
актуализация глобальных угроз и формирование
положения сверхтурбулентности или стабилизация политических отношений**

Рассматривая характер участия в региональных политических процессах отдельных стран, нельзя не отметить роль Израиля. Израильская сторона пытается, с одной стороны, показать достаточно благоприятное отношение к Армении, но есть и решающий для Израиля иранский фактор. Израиль считает, что Иран представляет для него непосредственную военную угрозу, следовательно, Армения как страна, построившая с Ираном вполне добрососедские отношения, не может быть для израильтян по-настоящему дружественным государством. Напротив, для израильской стороны важно оказать поддержку тем государствам, которые могут быть полезны для Израиля в вопросе противодействия Ирану. Для Израиля наиболее логичное направление – это военно-технологическое сотрудничество, что происходило и происходит в отношении Турции и Азербайджана.

Проведенный анализ показывает, что отношения Армении и России находятся в сложной системе зависимости от других стран. Они осложняются противоречиями в мировой и региональной политике и осложняют использование потенциала российско-армянского сотрудничества.

Взаимоотношения Армении и России опираются на столетия дружбы, сотрудничества, которые создали огромное количество связей, начиная с уровня отдельных семей, до уровня межгосударственных отношений. При всех известных и частично рассмотренных в данной статье сложных политических аспектах интересы российской стороны в наибольшей степени соответствуют друг другу, что не исключает возникновения различных сложностей при сохранении общей стратегической линии при союзнических отношениях. Это ценный политический капитал в системе межгосударственных отношений, и он создаёт достаточно значимый уровень стабильности, который показывает устойчивость к периодически возникающим осложнениям. Но этот потенциал нужно не просто тратить, его нужно поддерживать и усиливать, понимая интересы и ценности наших стран и относясь к ним с уважением. Укрепление отношений Армении и России, несмотря на целый ряд неблагоприятных факторов, обеспечит в перспективе приемлемый уровень стабильности. Осложнение этих отношений повысит уровень угроз до критических значений.

Присутствие российских миротворцев, с одной стороны, является фактором стабильности и позволяет купировать локальные обострения ситуации, но это только пока азербайджано-турецкая сторона не утвердила стратегическое решение о новой эскалации конфликта, поскольку неоднократно азербайджанская сторона на официальном уровне озвучивала свои претензии не только на Арцах, но и на территорию собственно Армении. Если такое решение будет принято, удар по российским миротворцам и ответ России, с учётом позиции НАТО и США в поддержку Турции, будет означать запуск Третьей мировой войны. Ситуация в данном случае кардинально отличается от той, которая была в 2008 году в отношении агрессии Грузии против Южной Осетии и реализации российской военной операции по принуждению Грузии к миру и защита осетинского народа от очередной попытки его геноцида с грузинской стороны. В отношении Армении и Арцаха, после размещения в нём российских миротворцев, речь идёт о возможности непосредственного столкновения России со страной, входящей в блок НАТО.

Также свершившимся фактом стал подрыв доверия к переговорному процессу в рамках Минской группы ОБСЕ, поскольку события показали, что он не может гарантировать Армении и Арцаху защиту от азербайджано-турецкой агрессии. Хотя этот

формат за неимением лучшего сохраняется, но налицо кризис доверия к его возможностям, тем более, что азербайджано-турецкая сторона не пойдёт на уступки по статусу Арцаха, а значит, закладывается основа для новой агрессии.

Мы видим, что внешняя обстановка и существующие системы интересов мировых региональных держав создают вызовы для стабильности и качества отношений между Россией и Арменией. Можно говорить о появлении состояния свертурбулентности в данном регионе и не о снижении рисков, как пытается представить азербайджанская сторона после захвата ею части территорий Арцаха, а наоборот, об их возрастании.

Использованная литература

1. «Посол Ирана в России Казем Джалали рассказал о последствиях конфликта в Нагорном Карабахе». YouTube, загружено пользователем телеканал Звезда, 26 октября 2020, <https://www.youtube.com/watch?v=3ioILBZ9q5w>.
2. Шевченко, Ольга, и др. *Черноморско-каспийский регион: вызовы и угрозы национальной безопасности России в условиях геополитической, георелигиозной и геоэкономической конкуренции*. Ростов-на-Дону. Ростов-на-Дону, 2015.
3. Fischer, Sabine. "Russian Policy in the Unresolved Conflicts." *Not frozen! The Unresolved Conflicts over Transnistria, Abkhazia, South Ossetia and Nagorno-Karabakh in Light of the Crisis over Ukraine*. Stiftung «Wissenschaft und Politik». Berlin: SWP Research Paper. 2016 (September).
4. Neumann, Iver. "Russia as a great power, 1815–2007." *Journal of International Relations and Development* 11.2 (2008): 128-151.

Works Cited

1. «Posol Irana v Rossii Kazem Dzhallali rasskazal o posledstvijah konflikta v Nagornom Karabahe». YouTube, zagruzhenno pol'zovatelem telekanal Zvezda, 26 oktjabrja 2020, ("The Iranian Ambassador to Russia, Kazem Jalali, spoke on the Consequences of the Conflict in Nagorno-Karabakh." YouTube, uploaded by the user Zvezda TV channel, October 26, 2020,) <https://www.youtube.com/watch?v=3ioILBZ9q5w>.
2. Shevchenko, Ol'ga, i dr. Chernomorsko-kaspijskij region: vyzovy i ugrozy nacional'noj bezopasnosti Rossii v uslovijah geopoliticheskoi, georeligioznoj i geoekonomicheskoi konkurencii. Rostov-na-Donu. Rostov-na-Donu, 2015. (Shevchenko, Olga, et al. *The Black Sea-Caspian Region: Challenges and Threats to Russia's National Security in the Context of Geopolitical, Geo-Religious and Geo-Economic Competition*. Rostov-on-Don. Rostov-on-Don, 2015.)
3. Fischer, Sabine. "Russian Policy in the Unresolved Conflicts." *Not frozen! The Unresolved Conflicts over Transnistria, Abkhazia, South Ossetia and Nagorno-Karabakh in Light of the Crisis over Ukraine*. Stiftung «Wissenschaft und Politik». Berlin: SWP Research Paper. 2016 (September).
4. Neumann, Iver. "Russia as a great power, 1815–2007." *Journal of International Relations and Development* 11.2 (2008): 128-151.

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԶԱՂԱԶԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՌԱԶՄԱԶԱՂԱԶԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՄԱՔՍԻՄ ՎԱՍԿՈՎ

*Հարավային դաշնային համալսարանի պատմության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի պրոֆեսոր,
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհրդի անդամ,
սոցիոլոգիական գիտությունների դոկտոր,
պատմական գիտությունների թեկնածու,
Ք. Դոնի Ռոստով, Ռուսաստանի Դաշնություն*

Հոդվածի նպատակն է դիտարկել տարբեր պատմաբաղաբական ասպեկտներ, որոնք կազմում են հայ-ռուսական հարաբերությունների աշխարհաբաղաբական համատեքստը: Հեղինակը փորձել է հաշվի առնել այն հիմնական գործոնները, որոնք ի հայտ են եկել ի հետևանք Ադրբեջանի ագրեսիայի և Արցախյան երրորդ պատերազմի:

Օգտագործելով ֆակտորային ու համակարգային վերլուծության մեթոդները՝ հեղինակն ուսումնասիրում է մի կողմից՝ համաշխարհային խաղացողների, որոնց համար Անդրկովկասում տեղի ունեցող քաղաբական գործընթացները համաշխարհային քաղաբական պրոյեկտների մի մասն են միայն, մյուս կողմից՝ տարածաշրջանային պետությունների միջև փոխազդեցությունների տարբեր զուգակցություններ: Զաղաբական հարաբերությունների առկա համակարգը առանձնանում է անկայունությամբ և ռազմաբաղաբական ռիսկերի նոր համակարգի ձևավորմամբ: Զաղաբական հարաբերությունների բոլոր մասնակիցները հիմքեր ունեն հայ-ռուսական հարաբերություններում դժվարություններ փնտրելու: Նրանց համար կան սպառնալիքներ նաև Ռուսաստանի ու Հայաստանի ներքին քաղաբականության համատեքստում:

Այս բացասական երևույթների հաղթահարումը պետականության պահպանման ու զարգացման պայմաններից է ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում: Բացասական սցենարի զարգացումը կհանգեցնի նոր ռազմական կոնֆլիկտների ու համակարգային ճգնաժամերի ամբողջ Մեծ Կովկասում:

Հիմնաբառեր՝ *Ռուսաստան, Հայաստան, համակարգ, միջազգային հարաբերություններ, քաղաբականություն, ագրեսիա, ուժերի հավասարակշռություն, ճգնաժամ, կառավարում, շահեր:*

A NEW GEOPOLITICAL CONTEXT OF RELATIONS BETWEEN ARMENIA AND RUSSIA IN THE CONTEXT OF A CHANGE IN THE BALANCE OF MILITARY-POLITICAL FORCES OF REGIONAL AND WORLD POWERS IN THE REGION.

MAKSIM VASKOV

*Southern Federal University, Institute of History and International Relations;
«Scientific Artsakh» journal, Member of the Editorial Board;
Doctor of Sociological Sciences, Candidate of Historical Sciences, Professor;
Rostov-on-Don, Russian Federation*

The purpose of the article is to consider various historical and political aspects that form the geopolitical context of Russian-Armenian relations. The author tried to take into account the factors that appeared as the consequences of Azerbaijan's aggression and the results of the Second Artsakh War.

Using the methods of factorial and system analysis the article studies various combinations of interaction between states, both directly located in the region and being global political players for which political processes in the Transcaucasia are only a part of more global political projects. The existing system of political relations is distinguished by instability and the formation of a new system of political and military risks. All participants in political relations have reasons to seek complications in Russian-Armenian relations. There are also threats for them in the context of the domestic policy of Russia and Armenia.

Overcoming these negative phenomena is a condition for the preservation and development of statehood in both Russia and Armenia. The development of a negative scenario will lead to new military conflicts and systemic crises of the entire Greater Caucasus.

Key words: *Russia, Armenia, system, international relations, politics, aggression, balance of power, crisis, management, interests.*

ՇՆՏՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱԿԱՆ*

ՅՏԴ 324

DOI: 10.52063/25792652-2021.2-58

ԳԱՐԻԿ ԲԵՌՅԱՆ

ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ,
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհրդի անդամ,
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
garik_keryan@mail.ru

ՆՎԵՐ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքագիտության բաժնի բակալավր,
գ. Լեռնանիստ, Հայաստանի Հանրապետություն
nkostanyan2000@gmail.com

Հոդվածի նպատակն է ընտրական ինստիտուտների պատմական պարզացման և տարբեր պատմաքաղաքական ժամանակահատվածներում վերջիններիս բնորոշ գծերի ուսումնասիրությունը կոնկրետ պետահասարակական հանրույթների օրինակներով: Ժողովրդավարական կառավարումը և դրա կարևորագույն քաղաքատարրերից համարվող ընտրությունները և ընտրական ինստիտուտները, որոնք կոչված են ապահովելու հասարակության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, մինչ այս տեսքով մեկ հասնելը անցել են պատմական պարզացման երկար ճանապարհ: Հետևաբար ներկայումս դրանցում առկա տարաբնույթ ու բազմաշերտ խնդիրները ուսումնասիրելու և վեր հանելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի վերջիններիս պատմական պարզացմանը անդրադարձ կատարելը:

Ուսումնասիրությունը կատարելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները՝ առանձնացնել տոհմատիրական կարգերից մինչև ներկայիս իրողություններ ընտրական գործընթացներին և ինստիտուտներին բնորոշ գծերը, վեր հանել հնարավոր պատմական օրինակաչափությունները:

Հետազոտությունն իրականացնելիս օգտագործվել են պատմական, համեմատական, համադրության ու վերացարկման մեթոդները:

Ուսումնասիրության վերջնարդյունքում կարող ենք արձանագրել, որ ընտրական ինստիտուտները սաղմնային վիճակում մարդկությանը հայտնի են եղել դեռևս տոհմատիրական ժամանակներից, և վերջիններիս պարզացումը տեղի է ունեցել սոցիալ-քաղաքական մի շարք գործոնների ազդեցությամբ պայմանավորված:

Հիմնաբառեր՝ ընտրություններ, ընտրական ինստիտուտներ, քվեարկություն, հանրային մասնակցություն, պատմական Էվոլյուցիա, ժողովրդավարություն, քաղաքական համակարգ, համընդհանուր ընտրական իրավունք:

* Հոդվածը ներկայացվել է 02.03.2021թ., գրախոսվել՝ 08.03.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:

Ներածություն: Ժամանակակից աշխարհում ժողովրդավարական կառավարման համակարգ ունեցող պետությունների թվաքանակի աճին զուգահեռ բարձրանում է պետությունների քաղաքական համակարգում ընտրական գործընթացների՝ որպես օրինակարգ իշխանության ձևավորման եզակի միջոցի դերակատարումը: Ժողովրդավարական կառավարման մոդելը ենթադրում է հասարակության բոլոր շերտերի ակտիվ մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին (ուղղակի կամ անուղղակի), ինչը անհնար է պատկերացնել առանց տվյալ պետությունում կայացած ընտրական ինստիտուտների, համընդհանուր ընտրական իրավունքի և այլ օժանդակ գործոնների առկայության: Ընտրությունները առանցքային դեր ունեն ոչ միայն պետության քաղաքական համակարգում, այլև մեծ ազդեցություն ունեն այս կամ այն երկրի կուսակցական համակարգի առանձնահատկությունների, դրանց գործունակության վրա: Ընտրությունները, ընտրական ինստիտուտներն ու գործընթացները ուսումնասիրման առարկա են ոչ միայն քաղաքագիտության, այլև սոցիալական այլ գիտությունների՝ իրավագիտության, պատմագիտության, սոցիոլոգիայի, հոգեբանության, մարդաբանության, աստվածաբանության համար և յուրաքանչյուր գիտություն ձգտում է վեր հանել սեփական դիսցիպլինին հուզող խնդիրները՝ երևույթն ուսումնասիրելով սեփական դիտանկյունից: Մեր կարծիքով, սակայն, «ընտրություն» հասկացության ամենալայն սահմանումները կարող ենք գտնել քաղաքագիտական գրականության մեջ և սահմանադրաիրավական փաստաթղթերում: Ըստ այդմ, քաղաքական ընտրությունը այն գործընթացն է, որին մասնակցելով՝ քաղաքացիները ընտրում ու պատվիրակում են իրենց ներկայացուցչին պետական պաշտոնում նրան լիազորելով որոշակի իրավունքներ ու պարտականություններ, ինչպես նաև հաստատում կամ մերժում են այս կամ այն քաղաքական հոսանքը, գաղափարախոսությունը կամ առաջարկը: Ընտրություններում քաղաքացիները հնարավորություն ունեն արտահայտելու իրենց հավաքական կամքը քաղաքական ուժի կամ քաղաքական գործչի վերաբերյալ (Labato and Ernst 123-124):

Զանի որ ընտրությունները ի սկզբանե մարդկությանը հայտնի չեն եղել ժամանակակից տեսքով, հողվածում փորձ ենք արել անդրադառնալ ընտրությունների, ընտրական գործընթացների և ինստիտուտների պատմական էվոյուցիային:

Ընտրական ինստիտուտների էվոյուցիան: Ընտրական ինստիտուտների էվոյուցիան տեղի է ունեցել հասարակությունների կառուցվածքային բարդացմանն ու նրանցում ժողովրդավարության էլեմենտների ի հայտ գալուն զուգընթաց: Այս առումով ընտրական ինստիտուտների կայացումը պետք է դիտարկել հասարակություններում սոցիալ-տնտեսական զարգացումների, ժողովրդավարացման գործընթացների, միջին խավի սաղմնավորման և հարակից այլ սոցիալ-քաղաքական գործընթացների համատեքստում, այլ ոչ թե որպես առանձին երևույթ: «Ընտրություն» եզրի նախասաղմերը և քաղաքական ընտրություն կատարելու գործընթացի որոշ բաղադրատարրեր են եղել դեռևս մի շարք տոհմատիրական ու ցեղապետական կարգ ունեցող հասարակություններում, որոնցում սակայն ընտրությունները չեն ունեցել գլխավորապես իշխանության ձևավորման գործառույթ, ինչպիսին ունեն այսօր, այլ պարզապես եղել են այս կամ այն՝ հիմնականում անկարևոր հարցերի քննարկումների համար նախատեսված հարթակ: Հնդկաստանի պատմության Վեդայական դարաշրջանում (մ.թ.ա. 1500-500 թվականներ)¹ Գանայի² Ռաջան³ ըստ երևույթին ընտրվել է Գանայի ղեկավար ազդեցիկ շրջանակի կողմից: Ռաջան պատկանում էր ազնվական Զշատրիյա վառնային (ռազմիկների դաս) և, որպես կանոն, նախորդ Ռաջայի

¹ Համընկնում է ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթեդարյան ժամանակաշրջանների հետ:

² Ցեղային կազմակերպություն:

³ Ցեղային կազմակերպության առաջնորդ:

որդին էր: Այնուամենայնիվ, վերջինիս ընտրություններում Գանայի վերնախավի անդամներին վերապահված էր վերջին խոսքի իրավունք (Robinson 22-23):

Ասիական տարածաշրջանում, մասնավորապես ներկայիս Հնդկաստանի հարավային և Շրի Լանկայի տարածքներում ընտրություններ տեղի են ունեցել նաև այսպես կոչված Սանգամյան դարաշրջանում (մ.թ.ա. 300- մ.թ. 300 թթ.): Այս ընտրություններում գույքային ու տարիքային որոշակի ցենզին համապատասխանող տղամարդիկ ընտրում էին իրենց ներկայացուցիչներին՝ կապարակնված կաթսայի մեջ գցելով իրենց «բվեաթերթիկները», որոնք այդ ժամանակ միատեսակ, բայց տարբեր ձև ունեցող առարկաներ էին՝ հիմնականում քարեր: Վերոնշյալ օրինակները, ինչպես նշվեց, ունեին ժամանակակից ընտրություններին բնորոշ որոշակի բաղադրատարրեր, սակայն չեն կարող համարվել պատմությանը հայտնի առաջին համընդհանուր ընտրությունները, քանի որ վերջիններս կրել են ոչ համակարգված բնույթ, անցկացվել են տարբերայնորեն և կախված են եղել ոչ թե առկա իրավակարգավորումներից, այլ միայն տվյալ պահին իշխած քաղաքական վերնախավի ցանկություններից: Հանրային պաշտոնյաների՝ քիչ թե շատ ներկայանալի և համընդհանուր ընտրության ամենավաղ պատմական տվյալը գրանցվել է մ.թ.ա. 754 թվականին Հին Հունական քաղաք-պետություններից Սպարտայում: Ըստ Սպարտայի օրենքների՝ այստեղ գործում էր խառը կառավարման մի համակարգ, որտեղ թագավորը կիսում էր իր իշխանությունը հինգ ընտրված պաշտոնյաներից՝ Էֆորներից (հուն.՝ ἔφορος-վերահսկող) կազմված խորհրդի՝ Էֆորատի հետ ("Ephor, Spartan magistrate"): Էֆորները ընտրվում էին ամեն տարի Սպարտայի բոլոր քաղաքացիների կողմից, և պաշտոնը ստանձնելիս երդվում էին քաղաքի անունից, մինչդեռ թագավորները երդվում էին իրենց անունից: Հասարակությունների քաղաքական համակարգում ընտրական ինստիտուտների զարգացման կարևոր փուլ է համարվում հին հունական մեկ այլ քաղաք-պետությունում՝ Աթենքում կիրառված մոդելը: Մ.թ.ա վեցերորդ դարի աթենական ընտրությունները շատ նման էին հունական այլ քաղաք-պետություններում անցկացվող ընտրություններին: Ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին գույքային որոշակի ցենզ ունեցող ազատ տղամարդիկ միայն, քանի որ հենց նրանք էին համարվում Աթենքի քաղաքացի: Ընտրությունները անցկացվում էին ժողովներում, խորհուրդներում ու դատարաններում (Larsen 164–181): Նշանակումները պաշտոններին կատարվում էին ընտրության կամ վիճակահանության միջոցով, սակայն հաճախ նաև այս երկուսի համատեղ օգտագործմամբ: Ընտրված պաշտոնյաները պաշտոնավարումից հետո ենթակա էին վերահսկողության, նրանք նաև կարող էին ժամակալից շուտ լքել իրենց պաշտոնը, եթե քաղաքացիների խորհուրդը այդպես ցանկանար: Ոչ պատշաճ պաշտոնավարման համար նախատեսված էր ընդհուպ մահապատիժ: Ընտրությունները կատարվում էին հիմնականում պարզունակ թվացող մեթոդներով. ձեռք բարձրացնել, քարերի վրա նշումներ կատարել: Հանրային պաշտոններում ընտրություն կատարելուն զուգահեռ՝ Աթենքում տեղի էր ունենում նաև մեկ այլ՝ այսպես կոչված «բացասական» ընտրություն: Այդ ընտրությունները ևս կայանում էին ամեն տարի: Դրանց ելությունն այն էր, որ ժողովրդական ժողովում ներգրավված քաղաքացիներին ամեն տարի հնարավորություն էր տրվում որոշել, թե քաղաքական գործիչներից ով է ենթակա Աթենքից տասը տարով աքսորման: Աթենքի քաղաքացիները կատարում էին իրենց ընտրությունը անցանկալի թեկնածուի անունը գրելով կավե ծեփակտորների՝ օստրականների վրա¹ (հուն.՝ ὀστρακισμός, τὸ ὄστρακον - խեցի, կեղև), և եթե գործիչը հավաքում էր 6000-ից ավելի ձայն, աքսորվում էր Աթենքից (Sinclair 114–119): Թեև աթենական ժողովրդավարությունը ընդունված է համարել մարդկությանը հայտնի առաջին ուղիղ ժողովրդավարությունը, այսօրվա չափանիշներով դրանք չեն կարող համարվել ժողովրդավարական ընտրություններ, քանի որ կային

¹ Այստեղից է առաջացել Օստրակիզմ, «ostrakismos» եզրույթը:

բազմաթիվ սահմանափակող ցենզեր՝ գույքային, սեռային, հաճախ նաև տարիքային, ինչը թույլ չէր տալիս բնակչության ճնշող մեծամասնությանը մասնակցել ընտրությունների գործընթացին:

Ավելի ուշ՝ մ.թ.ա. երկրորդ դարում, ընտրական ինստիտուտները սկսեցին կայանալ Հռոմեական Հանրապետությունում: Հին Հռոմում բոլոր չափահաս տղամարդիկ՝ քաղաքացիները, իրավունք ունեին ընտրել տարեկան մագիստրատ¹, ընդունել օրենքներ, հայտարարել պատերազմ և կնքել խաղաղություն: Սակայն Հին Հռոմում ընտրական համակարգի առանձնահատկությունն այն էր, որ որոշումները երբեմն չէին ընդունվում պարզ մեծամասնությամբ. քվեարկության մասնակիցները բաժանվում էին երեք հատուկ խմբերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր անվանումը: Առաջին փուլում ընտրությունը տեղի էր ունենում յուրաքանչյուր խմբի ներսում, և դրանից հետո միայն վերջնական որոշումն ընդունվում էր թվով ամենաշատ խմբերի հավանությանը արժանացած կողմի կամ որոշման օգտին (Staveley 172-175): Հին դարերում ընտրական ինստիտուտները հիմնականում կայացած էին այս երկու հասարակություններում, իսկ Հռոմի կայսերացումից ու հունական քաղաք-պետությունների՝ ինքնիշխանությունից զրկվելուց հետո՝ միջին դարերում, ժողովրդավարությունը, որը դեռ կայացման նախնական փուլերում էր, հայտնվեց ճգնաժամի մեջ, հետևաբար թուլացան ու տեղ-տեղ իմաստագրկվեցին ու ձևական բնույթ սկսեցին կրել ընտրական մեխանիզմներն ու ինստիտուտները: Մինչև բուրժուազիայի զարգացման շրջանը թագավորական ու ֆեոդալական փուլերում ընտրական մեխանիզմի առանձին դրսևորումներ կային գերմանական ցեղերում, իտալական քաղաք պետություններում, ինչպես նաև հիշատակման են արժանի Կաթոլիկ եկեղեցու ղեկավարի՝ Հռոմի Պապի ընտրությունները և որոշ կայսրերի ընտրություններ, որոնք, սակայն, ի տարբերություն վերոնշյալ երկու դեպքերի՝ չէին ներառում հասարակության համեմատաբար լայն շերտեր և հետևաբար քաղաքագիտական կարևոր նշանակություն, մեր կարծիքով, չեն կարող ունենալ:

Ընտրությունները, ընտրական իրավունքն ու ընտրական ինստիտուտները առանձնահատուկ տարածում գտան կապիտալիստական կարգերի առաջացման ու զարգացման ժամանակաշրջանում: Ժամանակակից ներկայացուցչական ժողովրդավարության ապահովման մեխանիզմ հանդիսացող քաղաքական ընտրությունների արմատները հասնում են մինչև 17-րդ դարի Արևմտյան Եվրոպա և Հյուսիսային Ամերիկա, ինչը մեծապես պայմանավորված էր միջնադարյան խավարից հետո հասարակության քաղաքական համակարգի վրա լուսավորության ժամանակաշրջանի ունեցած հսկայական դրական ազդեցությամբ: Անցումը համընդհանուր ընտրական իրավունքին, սակայն, տեղի ունեցավ ավելի ուշ: Նույնիսկ այսօր ամենաժողովրդավարական երկրներից համարվող ԱՄՆ Սահմանադրության մեջ (գրված 1787 թվականին), որը իր մասշտաբայնությամբ առաջինն էր մարդկության պատմության մեջ, ի սկզբանե նախատեսված չէր համընդհանուր ընտրական իրավունքի կիրարկումը, և ընտրություններին մասնակցելու իրավունք էր վերապահված միայն սպիտակամորթ տղամարդկանց՝ այն էլ գույքային որոշակի ցենզի առկայությամբ², իսկ երկրի ղեկավարը՝ նախագահը, ընտրվում էր ոչ թե ուղիղ քվեարկությամբ, այլ ընտրիչների կոլեգիայի կողմից, համակարգ, որը մինչև օրս գործում է ԱՄՆ-ում: Ժամանակակից ժողովրդավարություններում ընտրության իրավունք ունեցողների թիվը

¹ Մագիստրատ-քաղաքացիական պաշտոնյա կամ դատավոր Հին Հռոմում, որը իրականացնում էր հատկապես փոքր նշանակություն ունեցող գործերի դատաքննությունը:

² Երևույթն այս տրամագծորեն հակասում է ժողովրդավարական, ազատ և արդար ընտրությունների հիմնարար սկզբունքներից մեկին՝ համընդհանուրության սկզբունքին: Այս համատեքստում հարկ ենք համարում պարզաբանել, որ համընդհանուր ընտրական իրավունքը բոլոր չափահաս քաղաքացիներին ակտիվ ընտրական իրավունքով օժտելն է՝ անկախ այդ քաղաքացու տնտեսական կարգավիճակից, սեռից և այլ սոցիալական գործոններից:

աճել է ժամանակի ընթացքում, ինչը նաև շատ հաճախ հետևանքն է եղել ընտրական իրավունքի հանընդհանրության պահանջով տեղի ունեցած հասարակական-քաղաքական շարժումների, ինչպիսիք են՝ կանանց, ինչպես նաև սևամորթների ընտրական իրավունքների համար տեղի ունեցած պայքարները և այլն: Արևմտյան Եվրոպայում ընտրական ինստիտուտների զարգացման համար կարևոր դերակատարում ունեցավ լուսավորության դարաշրջանը: Լուսավորչական գաղափարները փոխեցին հասարակության, պետության մասին ամբողջական պատկերացումները, որոնք հատուկ էին միջնադարին: Լայն տարածում գտան անհատապաշտական գաղափարները, որոնք ներկայացնում էին անհատին, մարդուն՝ որպես կյանքի տարբեր ոլորտներում կարևորագույն գործոնի: Ինչ վերաբերում է այս շրջանի քաղաքական հետևանքներին, ապա օրինակ՝ Բրիտանական խորհրդարանը այլևս չէր ընկալվում որպես լոկ կալվածքների, կորպորացիաների շահեր սպասարկող մարմին, այլ որպես անհատների շահերի ներկայացման ու պաշտպանության իրական հարթակ: Մեծ Բրիտանիայում այսպես կոչված փտած կամ գրպանային ընտրատարածքների վերացումը ("Rotten borough"), որոնք սովորաբար գտնվում էին մեկ կամ մի քանի ազդեցիկ ընտանիքների տիրապետության տակ և որոշում էին խորհրդարանի պատկերը, ոչ այլ ինչ էին, քան լուսավորության դարաշրջանի բերած անհատապաշտական մոտեցումների արդյունք ու հետևանք:

Թեև այս ժամանակահատվածում ժողովրդավարության կարևորագույն մեխանիզմ համարվող ընտրությունների ու ընտրական ինստիտուտների զարգացումը որակապես Նոր փուլ թևակոխեց և ժողովրդավարության ուղին բռնած պետությունների թվի աճին զուգահեռ վերջիններս կարծես ընդունեցին այն իրողությունը, որ իշխանությունը բխում է ժողովրդից և այն իրականացնելու համար պետք է պարբերաբար ստանալ հանրության վստահության քվե, այնուամենայնիվ բավականին երկար ժամանակ հենց իշխող վերնախավն էր որոշում, թե ովքեր են մտնում ժողովրդի այն հատվածի մեջ, որի կարծիքը պետք է հաշվի առնել ընտրությունների ժամանակ: Լիակատար ժողովրդավարության կողմնակիցներն ու քարոզիչները պնդում էին, որ ընտրությունների ներկայանալիության ու ժողովրդավարության լիարժեք իրականացման համար անհրաժեշտություն է չափահաս բոլոր քաղաքացիների համընդհանուր ընտրական իրավունքի ճանաչումը և դրա անխափան իրականացումը: Մինչև 1920-ական թվականները տղամարդկանց համընդհանուր ընտրական իրավունքը գործում էր Արևմտյան Եվրոպայի և Յուսիսային Ամերիկայի գրեթե բոլոր երկրներում, մինչդեռ կանանց համընդհանուր ընտրական իրավունքի հաստատումը տեղի ունեցավ ավելի ուշ:

Ֆրանսիայի Առաջին Հանրապետությունը ընդունեց տղամարդկանց համընդհանուր ընտրական իրավունքը 1792 թվականին՝ դառնալով առաջին պետական համակարգերից մեկը, որը վերացրեց գույքային ցենզը: Հունաստանը տղամարդկանց համընդհանուր ընտրական իրավունքը ճանաչեց 1830, Իսպանիան՝ 1869, Գերմանիան՝ 1871 թվականներին: ԱՄՆ-ն 1870 թվականին բարեփոխում մտցրեց իր սահմանադրության մեջ, որի արդյունքում ԱՄՆ-ում ևս անցում կատարվեց տղամարդկանց համընդհանուր ընտրական իրավունքի: Հարավային Նահանգներում, սակայն, այս բարեփոխումը ազդեցություն չունեցավ, և հարավի պաշտոնյաները երկար տարիներ անօրինական միջոցներով զրկում էին սևամորթներին իրենց ընտրական իրավունքը իրացնելու հնարավորությունից: Այս իրավիճակը շարունակվեց մինչև 1965 թվականին Ընտրական իրավունքի գործադրման մասին օրենքի ընդունումը, որը Նախատեսված էր ապահովել 1870 բարեփոխման անխափան իրականացումը ԱՄՆ բոլոր Նահանգներում: 1902 թվականին Ավստրալիան դարձավ առաջին երկիրը, որը կանանց շնորհեց ոչ միայն ընտրելու, այլև հանրային պաշտոններում ընտրվելու իրավունք, ինչը մեծ ազդեցություն ունեցավ հետագայում ողջ աշխարհում ևս համընդհանուր ընտրական իրավունքի տարածման գործում: Կանանց ընտրելու

իրավունք հետագայում շնորհեցին Մեծ Բրիտանիան՝ 1928-ին, Ֆրանսիան՝ 1944-ին, Բելգիան՝ 1949-ին, Շվեյցարիան՝ 1971-ին և այլ երկրներ:

Ընտրական ինստիտուտների զարգացումը յուրօրինակ օրինաչափություններ է ունեցել նաև Հայաստանի պարագայում: Հաշվի առնելով այն իրողությունը, որ Հայաստանը մինչև 1918 թվականի Առաջին Հանրապետության անկախության հռչակումը անկախ պետության կարգավիճակում մշտապես ունեցել է բացարձակ միապետական կառավարման համակարգ, ուստի ընտրություններն ու ընտրական ինստիտուտները պետության քաղաքական կյանքում չեն ունեցել առանցքային նշանակություն: այդ շրջանի ընտրական ինստիտուտների կայացվածության մասին դժվար է խոսել: Ընտրական ինստիտուտների զարգացման տեսանկյունից հետաքրքրական է Հայաստանի պատմության Նորագույն շրջանը: Այս առումով իրավիճակը փոխվում է 1918 թվականի մայիսի 28-ին, երբ Անդրկովկասյան Ֆեդերացիայի լուծարմամբ Հայոց Ազգային Խորհուրդը հռչակում է Հայաստանի անկախությունը (Hovannisian 186-201): Այսպիսով սկսվում է Հայաստանի պատմության մի փուլ, որում ժողովրդավարական ինստիտուտների և մասնավորապես ընտրությունների դերը կտրուկ մեծանում է: Հաշվի առնելով այն, որ Հայաստանի առաջին Հանրապետությունը խորհրդարանական պետություն էր, միակ համապետական ընտրությունները եղել են խորհրդարանական ընտրությունները: Հայաստանի առաջին Հանրապետության երկամյա պատմության մեջ դրանք անցկացվել են մեկ անգամ՝ 1919 թվականի հունիսի 21-23-ին: Համամասնական (կուսակցական) ընտրակարգով անցկացված ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին 20 տարին լրացած բոլոր քաղաքացիները՝ առանց սեռի, ազգության կամ կրոնական խտրականության: Այս առումով հարկ է հատուկ ընդգծել այն, որ կանայք ունեին ոչ միայն ընտրելու, այլև ընտրվելու իրավունք: Հայաստանի առաջին Հանրապետության միակ ընտրված պառլամենտում ներկայացված էին երեք կին (Badalyan): Այս ժամանակահատվածում, ինչպես նկատել ենք վերևում, սա բացառիկ իրողություն էր ոչ միայն տարածաշրջանի, այլև ամբողջ աշխարհի համար: Բացի համապետական ընտրություններից Առաջին Հանրապետությունում անցկացվել են նաև համայնքային ինքնավարությունների՝ զեմստվոների ընտրություններ: Ժողովրդավարական ազատությունների ու ընտրական ինստիտուտների զարգացման տեսանկյունից անկումային տարիներ էին Հայաստանի երկրորդ Հանրապետության կամ Խորհրդային Հայաստանի տարիները (1920-1991): Այս շրջանում ընտրությունները թեև հանրության անբակտեյի իրավունքն էին համարվում սահմանադրաիրավական ամրագրումներով, սակայն դրանք կրում էին ձևական բնույթ, քանի որ երկրում հաստատված էր Կոմունիստական կուսակցության մենիշխանությունը, և ընտրություններում չկար գործող կուսակցությանը իրական այլընտրանք: Երրորդ Հանրապետության անկախության հռչակումը 1991 թվականին ընտրական ինստիտուտների զարգացման տեսանկյունից շրջադարձային եղավ: Հաստատված բազմակուսակցական համակարգը, ժողովրդավարական ազատությունները իրավունք ու հնարավորություն տվեցին հանրության լայն շրջանակներին մասնակցություն ունենալ պետության քաղաքական կյանքին և ինքնուրույն կայացնել քաղաքական որոշումներ: 1991-ից ի վեր ՀՀ-ում տեղի են ունեցել մի շարք համապետական ընտրություններ՝ նախագահական, խորհրդարանական, ինչպես նաև հանրաքվեներ ու ՏԻՄ ընտրություններ: Թեև ոչ բոլոր ընտրություններն են միանշանակ ընկալվել հանրության և միջազգային դիտորդական առաքելությունների կողմից, սակայն վստահաբար կարելի է պնդել, որ Հայաստանը գնում է ընտրական ինստիտուտների շարունակական զարգացման ճանապարհով:

Ժամանակակից աշխարհում ժողովրդավարական կամ ժողովրդավարացման ճանապարհով շարժվող բոլոր պետությունները իրենց սահմանադրաիրավական փաստաթղթերում ամրագրել են ազատ, արդար ընտրությունների, ընտրական ինստիտուտների կայացվածության անհրաժեշտությունը: Չնայած ընդունված է

ներկայացուցչական կառավարման, ընտրությունների անցկացման և ժողովրդավարության միջև հավասարության Նշան դնել և դրանք նույնացնել և չնայած, որ ընտրական ինստիտուտների կայացվածությունն ու համընդհանուր ընտրական իրավունքի գոյությունը ազատ ու արդար ընտրությունների կարևորագույն նախապայմաններից են, այնուամենայնիվ սրանք բավարար գործոններ չեն մրցակցային ընտրությունների ապահովման տեսանկյունից: Պետք է նկատի ունենալ, որ թեև ընտրությունների համար կարևորագույն պայման են այդ պահին գործող սահմանադրաիրավական կարգավորումները, սակայն ընտրությունների ելության, դրանց արդյունքի վրա ազդող գործոնները միայն իրավական բնույթ չեն կրում և ավելի լայն դաշտում են գտնվում: Դրանք կապված են մի շարք՝ տնտեսական, սոցիալական, մշակութային, արժեքանական գործոնների հետ:

Օրինակները շատ են, երբ կայացած ընտրական ինստիտուտներ ունեցող բազմաթիվ երկրներում (ԱՄՆ, Շվեյցարիա) ընտրողների մեծ մասը պարզապես չի մասնակցում ընտրություններին: Սրա պատճառները բազմաթիվ են: Պատճառներից մեկն էլ թերևս այն է, որ ընտրողները, գոհ լինելով սեփական կյանքի որակից, պարզապես չեն տեսնում ո՛չ հետաքրքրություն, ո՛չ անհրաժեշտություն մասնակցելու ընտրական գործընթացներին: Հնարավոր պատճառներից են նաև իրական այլընտրանքի բացակայությունը, եղանակային պայմանները, ինչպես նաև բոյկոտը. ի վերջո չմոռանանք, որ գիտակցված չմասնակցությունը ևս քաղաքական մասնակցության ձև է:

Օգտագործված գրականություն | Works Cited

1. "Ephor, Spartan magistrate". *Encyclopedia Britannica* <https://www.britannica.com/topic/ephor>, Accessed 15.02.2021.
2. "Rotten borough". *Encyclopedia Britannica* <https://www.britannica.com/topic/rotten-borough>. Accessed 15.02.21.
3. Badalyan Lena, "Women's Suffrage: The Armenian Formula", <https://web.archive.org/web/20181201005054/https://chaikhana.org/en/womens-suffrage-the-armenian-formula>, Accessed 14.03.2021.
4. Hovannisian, Richard. *Armenia on the Road to Independence*, University of California Press, 1967.
5. Larsen, Jakob. *Classical Philology*. The University of Chicago Press, 1949.
6. Robinson, Eric. *The first democracies: early popular government outside Athens*. No. 107. Franz Steiner Verlag, 1997.
7. Sabato, Larry and Ernst, Howard. *Encyclopedia Of American Political Parties And Elections (Facts on File Library of American History, upd. ed.)*. New York: Facts On File, 2007.
8. Sinclair, Robert. *Democracy and Participation in Athens*, Cambridge University Press, 1988.
9. Staveley, Eastland. *Greek and Roman Voting and Elections*. Cornell University Press 1972.

THE HISTORICAL EVOLUTION OF THE DEVELOPMENT OF ELECTORAL INSTITUTIONS

GARIK KERYAN

*Yerevan State Univeristy, Faculty of International Relations,
Chair of Political Institutions and Processes, Head,
«Scientific Artsakh» journal, Member of the Editorial Board;
Doctor of Political Sciences, Professor,
Yerevan, Republic of Armenia*

NVER KOSTANYAN

*Yerevan State Univeristy, Faculty of International Relations,
Department of Political Science, Bachelor,
Lernanist, Republic of Armenia*

The purpose of the article is to highlight the historical development of electoral institutions and their characteristic features in different historical and political periods with the examples of specific state and social communities. Democratic governance and one of its most important components: elections and electoral institutions, which are designed to ensure the active public participation in the decision-making process, have come a long way of historical development before reaching us in this form. Therefore, to address the various and multi-layered issues encountered nowadays it is important to explore the historical developments of elections and electoral institutions.

In order to carry out the study, the following tasks were set: to specify the features characteristic of electoral processes and institutions from the tribal order to the current realities and to identify possible historical patterns.

Historical, comparative, combination and abstract methods were used in the research.

To conclude the study, we can state that electoral institutions have been known to mankind in their embryonic states since time immemorial and their development occurred due to the influence of a number of socio-political factors.

Key words: *Elections, electoral institutions, voting, public participation, historical evolution, democracy, political system, universal suffrage*

ИСТОРИЧЕСКАЯ ЭВОЛЮЦИЯ РАЗВИТИЯ ИЗБИРАТЕЛЬНЫХ ИНСТИТУТОВ

ГАРИК КЕРЯН

*заведующий кафедрой политических институтов и процессов
факультета международных отношений ЕГУ,
член редакционного совета журнала «Научный Арцах»,
доктор политических наук, профессор
г. Ереван, Республика Армения*

НВЕР КОСТАНИЯН

*бакалавр факультета международных отношений ЕГУ
с. Лернанист, Республика Армения*

Цель статьи – осветить историческое развитие избирательных институтов и их характерные особенности в разные исторические и политические периоды на примерах конкретных государственных и социальных общностей. Демократическое управление и один из его наиболее важных компонентов – выборы и избирательные институты, которые призваны обеспечивать активное участие общественности в процессе принятия решений, – прошли долгий путь исторического развития, прежде чем дошли до нас в этой форме. Следовательно, для выдвижения и изучения актуальных разных и многоуровневых проблем важно обратиться к процессам их исторического развития.

Для проведения исследования были поставлены следующие задачи: уточнить особенности, характерные для избирательных процессов и институтов, от родоплеменного строя до современных реалий, и выявить возможные исторические закономерности.

В исследовании использовались исторический, сравнительный, комбинированный и абстрактный методы.

В заключение исследования можно констатировать, что избирательные институты известны человечеству в зачаточном состоянии с незапамятных времен и их развитие происходило под влиянием ряда социально-политических факторов.

Ключевые слова: *выборы, избирательные институты, голосование, участие общественности, историческая эволюция, демократия, политическая система, всеобщее избирательное право.*

**ՄԱԿ-Ի, ԵԱՅԿ-Ի ԵՎ ԵՄ-Ի ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԱԲԽԱՉԻԱՅԻ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԻԱՅԻ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ***

ՀՏԴ 327: 94

DOI: 10.52063/25792652-2021.2-67

ԽԱՉԻԿ ԱԲԱՉՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքական ինստիտուտների և
գործընթացների ամբիոնի ասպիրանտ,
թ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
abajyan.xachik@gmail.com*

Հոդվածի նպատակն է վերհանել ՄԱԿ-ի, ԵԱՅԿ-ի և ԵՄ-ի ներգրավվածության առանձնահատկությունները Աբխազիայի ու Հարավային Օսիայի հակամարտությունների կարգավորման գործընթացում՝ իրականացնելով համեմատական վերլուծություն:

Մեր խնդիրն է պարզել երկու հակամարտությունների հիմնական տարբերություններն ու առանձնահատկությունները, ուսումնասիրել ԵԱՅԿ-ի, ՄԱԿ-ի, ԵՄ-ի դերը հակամարտությունների կարգավորման գործընթացում, վերհանել ԵԱՅԿ-ի, ՄԱԿ-ի և ԵՄ-ի՝ երկու հակամարտություններում ներգրավվածության ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները:

Հետապոտության իրականացման ընթացքում կիրառվել են վերլուծության, սինթեզի, համադրման մեթոդները: Հատկապես կարևոր է ընդգծել համեմատական վերլուծության մեթոդի կիրառումը հետապոտության ընթացքում:

Հետապոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ պայմանավորված երկու հակամարտությունների իրավական ու պատմական առանձնահատկություններով՝ դրանցում ընդգրկված կողմերն ու կազմակերպությունները ունեն տարբեր հետաքրքրություններ ու շահեր: Կարող ենք փաստել, որ ԵԱՅԿ-ն զգալի ներդրում է ունեցել Հարավային Օսիայի, իսկ ՄԱԿ-ը՝ Աբխազիայի հակամարտությունների կարգավորման գործընթացում, սակայն երկուսն էլ խնդիրների վերջնական կարգավորման հասնել չեն կարողացել: Հաշվի առնելով, որ հոդվածում հեղինակը ներկայացնում է երեք կազմակերպությունների հիմնական գործիքակազմն ու ներգրավվածությունը հակամարտությունների կարգավորման գործընթացում՝ հեղինակը հիմնավորում է, որ երեք կազմակերպություններից ամենամեծ ռեսուրսներն ու գործիքակազմը ունեցել է ՄԱԿ-ը, սակայն հակամարտության կարգավորման տեսանկյունից ամենաարդյունավետը գործել է ԵԱՅԿ-ն:

Հիմնաբառեր՝ Աբխազիա, Հարավային Օսիա, հակամարտություն, հակամարտության կարգավորում, ՄԱԿ, ԵԱՅԿ, ԵՄ:

** Հոդվածը ներկայացվել է 15.05.2021թ., գրախոսվել՝ 02.06.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:*

Ներածություն

ԽՍՀՄ փլուզումից հետո հարավկովկասյան հանրապետություններում տեղի ունեցող ազգամիջյան բախումները անկայուն իրավիճակ էին ստեղծել տարածաշրջանում: Հարավային Կովկասն ինքնին դարձավ աշխարհաբաղաբալան բախումների հարթակ՝ ընդգրկելով միջազգային հարաբերությունների գրեթե բոլոր խոշոր դերակատարներին: Ակնհայտ է՝ այսօր միջազգային հարաբերություններում առանձին պետություններից բացի մեծ դեր ունեն նաև միջազգային կազմակերպությունները: Այդ կազմակերպություններից հատկապես ՄԱԿ-ը, որպես միջազգային հարաբերություններում բացառիկ լեգիտիմություն ունեցող կազմակերպություն, ԵՄ-ն և ԵԱՀԿ-ն՝ որպես Եվրոպայում և Եվրոպական հարևանության տարածաշրջանում անվտանգության ապահովման հիմնական երաշխավորներ, ներգրավվեցին հարավկովկասյան հակամարտություններում:

Վրաց-աբխազական հակամարտությունը կրում է հստակ էթնիկ բնույթ և սկիզբ է առնում խորհրդային ժամանակաշրջանից (Lynch 18): 1936թ.-ի դեկտեմբերին ընդունված ԽՍՀՄ սահմանադրությունն ամրագրեց, որ իր կազմի մեջ մտնող ՎեսՄ-ի մաս են կազմում Աբխազիայի, Աջարիայի Ինքնավար Հանրապետությունները և Հարավային Օսիայի ինքնավար մարզը (Հայրապետյան 77-82): Այսինքն՝ ՎեսՄ կազմում Աբխազիան ունեցել է ավելի բարձր ինքնուրույնության մակարդակ, քան Հարավային Օսիան, որը միջազգային իրավական հարթությունում առավելություն է տալիս Աբխազիային: 1990թ.-ի օգոստոսի 25-ին Աբխազիայի ԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունում է պետական ինքնիշխանության մասին հռչակագիր, որը սրում է վրաց-աբխազական հարաբերությունները: Իրավական տեսանկյունից ուսումնասիրելով վրաց-աբխազական հակամարտության նախապատմությունը՝ կարող ենք փաստել, որ գործ ունենք էթնոբարոքական հակամարտության հետ (Հայրապետյան 77-82):

Ի տարբերություն վրաց-աբխազական հակամարտության՝ վրաց-հարավօսական հակամարտության մեջ մեծ է ՌԴ-ի դերը: Նախ Հարավային Օսիայի և ՌԴ կազմի մեջ մտնող Յուսիսային Օսիայի էթնոդեմոգրաֆիկ կազմը գրեթե նույնն է, ինչը վերջիններիս միավորման ցանկության հիմնական գործոններից է (Suslu 103-107), ինչպես նաև առկա է 1992թ.-ի հունվարի 19-ին Հարավային Օսիայի հանրապետությունում անցկացված համաժողովրդական հանրաքվեի փաստաթուղթը, որն արտահայտում է դրան մասնակցած 53.441 քաղաքացիների մոտ 99%-ի կողմ դիրքորոշումը ՀՕՀ անկախության ու ՌԴ-ի հետ վերամիավորման առաջնությունը (РИА Новости):

Բացի միջազգային իրավական հարթությունում առկա տարբերություններից, Աբխազիայի ու Հարավային Օսիայի հակամարտություններում կա նաև աշխարհաբաղաբալան շահերի տարբերություն: Հարավային Օսիայի հակամարտության կարգավորման գործում մեծ դեր ունեն միջնորդ պետությունների, կազմակերպությունների և ՌԴ-ի հարաբերությունները, իսկ Աբխազիայի հակամարտությունը պայմանավորված է նաև վերջինիս դեպի Սև ծով ելք ունենալու կարևորությամբ և միջանցիկ գոտու նշանակությամբ, որը պայմանավորում է միջնորդների հետաքրքրվածությունն ու ներգրավվածությունը:

ԵԱՀԿ-ի դերը Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունների կարգավորման գործընթացում

ԵԱՀԿ միջնորդական առաքելությունների իրականացման հիմքում անվտանգության ռազմաբաղաբալան, տնտեսական, բնապահպանական և մարդու իրավունքների ոլորտներն են (Jawad 611-617): ԵԱՀԿ-ն կարող է միջնորդությամբ հանդես գալ միայն այն դեպքում, երբ առկա է տվյալ պետության հրավերը, և ԵԱՀԿ-ն չունի

պետությանը լուծում պարտադրելու լիազորություն, վերջինս կարող է միայն առաջարկություններ ներկայացնել (Mychajlyszyn 194-201):

ԵԱՀԿ երկարաժամկետ առաքելությունը Կրաստանում ստեղծվեց 1992թ.-ի դեկտեմբերին՝ որպես արձագանք Կրաստանի և Յարավային Օսիայի միջև բախումներին: Այն հանդես եկավ որպես միջնորդ և հնարավորություն տվեց երկխոսել Կրաստանի նախագահ Շևարդնաձեին և Յարավային Օսիայի առաջնորդ Չիբիրովին: Զննարկումների արդյունքում ստեղծվեց «միջնորդական փաստաթուղթ», որը երաշխիք էր տարածաշրջանում կայունության ապահովման համար: Տարիներ տևած բանակցությունները Յարավային Օսիայի կարգավիճակի և Յարավային Օսիա-Կրաստան հարաբերությունների կարգավորման վերաբերյալ շոշափելի արդյունքներ չունեցան (Gheballi 280-292):

ԵԱՀԿ մանդատը Կրաստանում ներառում էր զինադադարի ռեժիմի մշտադիտարկում, ռազմական իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, բանակցությունների գործընթացի աջակցում, կապերի հաստատում քաղաքական էլիտայի ու բնակչության հետ, ռազմական միջադեպերի հետաքննություն, համագործակցության մեխանիզմների ստեղծում: ԵԱՀԿ-ն նաև դիտորդ նշանակվեց Յամատեղ վերահսկիչ հանձնաժողովում (Macfarlane 519-525), իսկ 2000թ.-ին ԵԱՀԿ-ն և ներգրավված մյուս կողմերը պայմանավորվեցին ստեղծել Յատուկ համակարգման կենտրոն, որը բաղկացած էր վրացի ոստիկաններից, օսական զինյալներից և ռուս զինծառայողներից (International Group Crisis): Յատուկ համակարգման կենտրոնի գործունեությունը դադարեցվեց 2004թ.-ին: Որպես պատճառ նշվում էր հարաբերությունների կարգավորման քաղաքական կամքի բացակայությունը (International Group Crisis): Հակամարտության սրմանը զուգահեռ՝ ԵԱՀԿ-ն ավելացրեց լարվածությունը նվազեցնելու ջանքերը՝ Կրաստան ուղարկելով առաքելության հատուկ ներկայացուցիչ: ԵԱՀԿ-ն նաև առաջարկներ ներկայացրեց ենթակառուցվածքների վերականգնման և տնտեսական զարգացման համար, որի համար շուրջ 10 միլիոն եվրոյի ներդրումներ կատարեց:

ԵԱՀԿ առաքելությունը Յարավային Օսիայում ընդհանուր առմամբ դրական է գնահատվել: 1992թ. հրադադարի մասին համաձայնագիրը պահպանվել է մինչև 2004թ.-ը, և այդ ընթացքում տարածաշրջանում եղել է հարաբերական կայունություն: Միևնույն ժամանակ ԵԱՀԿ-ն անհաջողություններ է գրանցել հարցի քաղաքական կարգավորման համատեքստում, բանի որ կողմնապահ վերաբերմունք է ունեցել Կրաստանի նկատմամբ (Mychajlyszyn 194-201): Չնայած հակամարտության գոտում ռազմական դիտորդներ ունենալուն, որոնք զեկուցում էին տարածաշրջանում անկայունության սրման մասին, ԵԱՀԿ-ն ոչինչ չձեռնարկեց Ռուսաստանի հետ պատերազմը դադարեցնելու համար (Antonienka 23-36):

ԵԱՀԿ դերը Աբխազիայում, ի տարբերություն Յարավային Օսիայի, չնչին է եղել: ՄԱԿ-ի ակտիվ ներգրավվածությունը Աբխազիայում ստիպում էր ԵԱՀԿ-ին հիմնականում հանդես գալ դիտորդի դերում և քայլերը համաձայնեցնել ՄԱԿ-ի հետ: ԵԱՀԿ-ն մասնակցում էր ժնևում ՄԱԿ-ի հովանավորած բանակցություններին, ներգրավված էր 1993թ. հուլիսի 27-ի հրադադարի համաձայնագրով ստեղծված համատեղ հանձնաժողովում: Երկու կազմակերպությունների միջև կային որոշակի տարածայնություններ՝ կապված համատեղ աշխատանքի սկզբունքների ու քայլերի հստակեցման, լրատվամիջոցների աշխատանքի և միջազգային հանրությանն արձագանքելու հետ (Macfarlane 519-525):

ԵԱՀԿ-ն կարողացավ որոշ ժամանակ ապահովել հարաբերական կայունություն, սակայն պետությունների վրա իրական իշխանություն չունենալով և չբերելով քաղաքական որևէ փոփոխություն՝ չկարողացավ կանխել երկրորդ բախումը 2008թ.-ին: Արդյունքում ԵԱՀԿ դիտորդներին թույլ չտրվեց վերադառնալ Յարավային Օսիա 2008թ.-

ից հետո, քանի որ Հարավային Օսիայի իշխանությունները կարծում էին՝ նրանք չեն կարողացել նախազգուշացնել վերահաս բռնկումների մասին, և ԵԱՀԿ առաքելությունը Վրաստանի մանդատում չթարմացվեց 2009թ.-ից հետո (Merlingen and Ostrauskaitė 9-12):

ՄԱԿ-ի ներգրավվածությունը Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունների կարգավորման գործընթացում

Ի տարբերություն ԵԱՀԿ-ի, որը ներգրավված էր վրաց-հարավօսական հակամարտության կարգավորման գործընթացում, ՄԱԿ-ի դերը զգալի է վրաց-աբխազական հակամարտությունում: Վրաց-աբխազական հակամարտության մեջ ներգրավված են եղել Միավորված ազգերի դիտորդական առաքելությունը Վրաստանում (UNOMIG), որն ուներ կարևորագույն դերակատարում հակամարտության կարգավորման գործում, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնաժողովը (UNHCR), համեմատաբար ավելի քիչ դերակատարում ունեցող ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (UNDP) և ՄԱԿ-ի մարդասիրական հարցերի համակարգման վարչությունը (UNOCHA) (Stewart 11-15):

Վրաստանը, ելնելով երկրում ստեղծված անկայուն իրավիճակից, դիմեց ՄԱԿ-ին՝ խաղաղապահ ուժերի տեղակայման խնդրանքով: ՄԱԿ-ը մերժեց այն՝ հաշվի առնելով խաղաղապահ գործողությունների նախկին բացասական փորձը և այդ ժամանակաշրջանում ունեցած ծանրաբեռնվածությունը:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 1993թ.-ի օգոստոսի 24-ին N858 բանաձևով որոշեց ստեղծել UNOMIG-ը, որի նպատակը 1993թ. հուլիսի 27-ին վրաց-աբխազական հրադադարի մասին պայմանագրի համապատասխանությունը ստուգելն էր (United Nations Security Council): ՄԱԿ-ը բավականին դանդաղ էր մտնում իր միջնորդական դերի մեջ, որը տարածաշրջանում խորացնում էր անկայունությունը: Դա բացատրվում էր նրանով, որ ՌԴ-ն առանձին օրակարգով հանդես էր գալիս միջնորդությամբ՝ առանց հաշվի առնելու ՄԱԿ-ի միջնորդական առաքելությունը (Stewart 11-15):

1996թ.-ին ստեղծված «Վրաստանի ընկերներ» խումբը (ՌԴ, ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա), 1997թ.-ին ստեղծված Համակարգման խորհուրդը, որին անդամակցում էին ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ն և «Վրաստանի ընկերներ»-ը, կենտրոնացած էին ռազմական գործողությունների, անվտանգության խնդիրների մշտական վերսկսման, փախստականների, տեղահանված անձանց, տնտեսական ու սոցիալական խնդիրների վրա, սակայն իրականում չկարողացան ապահովել որևէ իրական լուծում: ՄԱԿ-ը պատշաճ չէր զբաղվում Աբխազիայի և Հարավային Օսիայի խնդիրների ուսումնասիրությամբ, որը հանգեցնում էր ՌԴ-ի դերի մեծացմանը և խորացնում առկա ճգնաժամը:

ՄԱԿ-ի անկարողությունը հակամարտության իրական լուծման գործում ի հայտ եկավ 2008թ.-ի իրադարձությունների ժամանակ: Երբ ՌԴ-ն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի արտահերթ նիստ հրավիրեց Հարավային Օսիայում գործեր տեղակայելուց առաջ, խորհրդի մշտական անդամներից ոչ մեկը չկարողացավ դադարեցնել միջամտությունը կամ սահմանափակել դրա հետևանքները (Antonienka 23-36):

ՄԱԿ-ի դիտորդական առաքելությունը վերջնականապես ավարտվեց 2009թ.-ին, երբ ՌԴ-ն վետո դրեց UNOMIG-ի մանդատը երկարաձգելու բանաձևի ընդունման վրա:

Թեև ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 1993-2008թթ.-ի ընթացքում ընդունել է 40 բանաձև Աբխազիայի վերաբերյալ, հակամարտության վերջնական լուծման հասնել չի կարողացել:

ԵՄ-ի ներգրավվածությունը Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտություններում

Ի տարբերություն Նախորդ երկու կազմակերպությունների՝ ԵՄ-ի դերը Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտություններում հիմնականում սահմանափակվում է մարդասիրական ու ֆինանսական աջակցության ցուցաբերումով: 1992-2004թթ.-ին ԵՄ-ն Վրաստանին տրամադրեց 420 միլիոն եվրո, որի շնորհիվ ԵՄ Հանձնաժողովին առաջարկվեց դիտորդ լինել Հարավային Օսիայում և աջակցել ԵԱՀԿ-ին՝ խաղաղության հասնելու ջանքերում:

ԵՄ-ն Հարավային Կովկասի նկատմամբ հետաքրքրություն էր ցուցաբերում եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում և ցանկանում էր մեծացնել իր դերը տարածաշրջանում՝ նպատակ ունենալով ներգրավվել նաև հակամարտությունների կարգավորման գործընթացում (Coppieters 13-21): ԵՄ-ի դերը Վրաստանում հատկապես ակտիվացավ «Վարդերի հեղափոխություն»-ից հետո, երբ ԵՄ-ն հանդես եկավ միանգամից մի քանի Նախաձեռնություններով: 2003թ.-ին ԵՄ խորհուրդը ֆինլանդացի Թալլիտիեին նշանակեց որպես Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ: 2004թ.-ին ստեղծվեցին Վրաստանում Եվրամիության օրենքի գերակայության առաքելությունը (EU JUST THEMIS) և Համայնքների առողջապահության արդյունքների երկարացման (ECHO) ծրագրերը, որոնք հսկայական օգնություն ցուցաբերեցին նաև Աբխազիայի փախստականներին (Popescu 17-22):

2007թ.-ին ԵՄ հանձնաժողովը և ԵՄ հատուկ ներկայացուցիչը կազմակերպեցին փաստահավաք համատեղ առաքելություն՝ հասկանալու, թե ինչ քայլեր կարող է ձեռնարկել ԵՄ-ն՝ տարածաշրջանում կայունության բարելավման ուղղությամբ: Առաքելության արդյունքում առաջարկվում էր ենթակառուցվածքների վերականգնում, որոնք միացնում էին Վրաստանը, Աբխազիան ու Հարավային Օսիան, սևծովյան երկաթուղու վերականգնում, կրթական, տեղեկատվական Նախագծերի իրականացում և իրավապահների միջև համագործակցություն: Այս միջոցառումներից շատերը կյանքի չկոչվեցին ռուս-վրացական պատերազմի բռնկման պառճառով:

2005թ.-ին ԵՄ անդամներ Էստոնիան, Լատվիան, Լիտվան ու Լեհաստանը, ԵՄ անդամության թեկնածուներ Ռումինիան ու Բուլղարիան ստեղծեցին ոչ պաշտոնական խումբ՝ «Վրաստանի նոր ընկերներ», և հանդես եկան որպես նոր քաղաքականության կողմնակիցներ՝ պաշտպանելով ԵՄ ավելի մեծ դերակատարման անհրաժեշտությունը բանակցություններում: Տարածաշրջանում լարվածության բարձրացումով՝ ԵՄ-ն այլ դերակատարների հետ նշանակալի դեր ունեցավ բանակցություններում (Merlingen and Ostrauskaitė 9-12):

ԵՄ-ն նույնպես չկարողացավ կանխել Ռուսաստանի ու Վրաստանի միջև բախումը, սակայն ակտիվ դեր ունեցավ խնդրի կարգավորման բանակցություններում: 2008թ.-ի օգոստոսի 12-ին ստորագրվեց Սարկոզի-Մեդվեդև կարգավորման ծրագիրը: Այն կոչ էր անում բանակցություններ վարել ինչպես Հարավային Օսիայում, այնպես էլ Աբխազիայում և միջնորդական մանդատ տրամադրել ԵՄ-ին: Հակամարտության կարգավորումից անմիջապես հետո ԵՄ-ն ստեղծեց տարածաշրջանում դիտորդական առաքելություն (EUMM), որը գործում էր որպես խաղաղապահ առաքելություն Եվրոպական անվտանգության ու պաշտպանության քաղաքականության (ESDP) շրջանակներում:

2008թ.-ի բախումից հետո ԵԱՀԿ-ն և ՄԱԿ-ի առաքելությունը տարածաշրջանից հեռացվեցին և արդյունքում ԵՄ-ն դարձավ Հարավային Օսիայի ու Աբխազիայի հակամարտություններում ներգրավված միակ կազմակերպությունը:

ԵԱՅԿ-ի, ՄԱԿ-ի և ԵՄ-ի՝ Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտություններում ներգրավվածության SWOT վերլուծություն

SWOT վերլուծություն	ՄԱԿ	ԵԱՅԿ	ԵՄ
Ուժեղ կողմեր	<p>Միջազգային հարաբերությունների ամենահեղինակավոր կազմակերպություն</p> <p>Հակամարտությունների լուծման հաջող փորձ</p> <p>Ամենաընդգրկուն հարթակի և արձագանքի հնարավորություն</p> <p>Միջամտելու և մանդատի լիազորություն</p>	<p>Տարածաշրջանային անվտանգության կազմակերպություն</p> <p>Ե՛վ Վրաստանը, և՛ ՌԴ-ն հավասար իրավունքներով անդամներ են</p> <p>Հրադադարի ռեժիմի ապահովում</p> <p>Իրավիճակային փոփոխությունների ճկուն մեխանիզմ</p>	<p>Վրաստանի՝ ԵՄ ինտեգրման ցանկություն</p> <p>Ֆինանսական և մարդասիրական օգնության ցուցաբերում</p> <p>Փափուկ ուժի քաղաքականություն</p> <p>2008թ. միջնորդական առաքելության ստեղծում</p>
Թույլ կողմեր	<p>Բարդ կառուցվածք և որոշումների կայացման երկարատև գործընթաց</p> <p>Ախ մշտական անդամների վետոյի իրավունք</p> <p>Իրավիճակի փոփոխությանն արագ արձագանքելու ոչ ճկուն մեխանիզմ</p> <p>Տարբեր գերատեսչությունների աշխատանքների համակարգման մեխանիզմի բացակայություն</p>	<p>Որևէ լուծում/որոշում պարտադրելու անկարողություն</p> <p>Քաղաքական կայունության ապահովման ձախողում</p> <p>ՌԴ-ին դիմակայելու հստակ մեխանիզմների ու քայլերի բացակայություն</p> <p>Ֆինանսական ու ռազմական միջոցների սղություն</p>	<p>Միասնական մոտեցումների բացակայություն անդամ պետությունների շրջանում</p> <p>Միասնական որոշումների կայացման երկար ու բարդ գործընթաց</p> <p>ԵՄ բազմաթիվ մարմինների տարբեր նպատակների առկայություն</p> <p>Անդամ պետություններ-ՌԴ հարաբերությունների տարբերություն</p>
Հնարավորություններ	<p>Աբխազիայի ու Հարավային Օսիայի անկախության կամ</p>	<p>Անվտանգության տարբեր ասպեկտների</p>	<p>Վրաստան-ԵՄ հարաբերությունների շարունակական</p>

	<p>Վրաստանի տարածքային ամբողջականության ճանաչում</p> <p>Հակամարտությունների սրման պարագայում նոր մանդատի ձեռքբերում և միջամտության իրականացում</p>	<p>ընդգրկվածություն</p> <p>Հակամարտությունների կարգավորման նոր մեթոդների ու գործիքակազմի առկայություն</p>	<p>խորացում</p> <p>Ֆինանսական նոր ռեսուրսների ներդրման հնարավորություն</p> <p>Հակամարտություններում ներգրավված ներկայիս միակ կազմակերպության կարգավիճակ</p> <p>Անդամ պետությունների փորձառություն միջնորդական առաքելություններում</p>
<p>Սպառնալիքներ</p>	<p>Համագործակցության դժվարությունն այլ կազմակերպությունների հետ</p> <p>Կողմնակալ վերաբերմունք Վրաստանի նկատմամբ</p> <p>Անդամ պետությունների ինքնավարության բացակայություն</p>	<p>ՄԱԿ-ի հետ համատեղ գործողությունների խնդիրներ</p> <p>Կողմնակալ վերաբերմունք Վրաստանի նկատմամբ</p> <p>Քաղաքական ազդեցության ասպեկտի անտեսում</p>	<p>Անդամ պետություններ-ՌԴ հարաբերությունների մերձեցում</p> <p>Կողմնակալ վերաբերմունք Վրաստանի նկատմամբ</p>

Եզրակացություն

Կարող ենք փաստել, որ Աբխազիայի ու Հարավային Օսիայի հակամարտությունների կարգավորման հարցում երեք կազմակերպություններն էլ ունեցել են որոշակի ազդեցություն:

Իհարկե, տարբերություններ առկա են ոչ միայն հակամարտությունների կարգավորման նկատմամբ ունեցած մեթոդական մոտեցումներում, այլև աշխարհաբաղադրական և մի շարք այլ ոլորտներում:

Կարող ենք եզրակացնել, որ՝

1. Աբխազիայի ու Հարավային Օսիայի հակամարտություններն ունեն զգալի տարբերություններ, որոնք պայմանավորում են դրանցում ընդգրկված կողմերի ու կազմակերպությունների հետաքրքրություններն ու շահերը:
2. ԵԱՀԿ-ն զգալի ներդրում է ունեցել Հարավային Օսիայի, իսկ ՄԱԿ-ը՝ Աբխազիայի հակամարտությունների կարգավորման գործընթացում, սակայն երկուսն էլ խնդիրների վերջնական կարգավորման հասնել չեն կարողացել:
3. ԵՄ-ն, ի տարբերություն ԵԱՀԿ-ի և ՄԱԿ-ի, որոնք միայն մեկ հակամարտության մեջ են զգալի չափով ներգրավվել, մասնակցություն է ունեցել և՛ Աբխազիայի, և՛ Հարավային Օսիայի հակամարտություններում:

4. ՄԱԿ-ը և ԵԱՀԿ-ն կարողացել են որոշակի ժամանակահատվածում կայունացնել լարված իրավիճակը տարածաշրջանում, սակայն խորքային խնդիրներին չանդրադառնալու պատճառով 2009 թվականից հետո դուրս են մղվել հակամարտություններից:
5. ԵՄ-ն, թեև հակամարտությունների կարգավորման գործընթացում զգալի ներդրում չի ունեցել մինչև 2008 թվականը, սակայն դրանից հետո պայմանավորված նաև ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի դուրս մղմամբ՝ զգալիորեն ակտիվացրել է իր ջանքերը հակամարտությունների սառեցման և ստատուս քվոյի պահպանման ուղղությամբ:
6. Երեք կազմակերպություններից ամենամեծ ռեսուրսներն ու գործիքակազմը ունեցել է ՄԱԿ-ը, սակայն հակամարտության կարգավորման տեսանկյունից ամենաարդյունավետը գործել է ԵԱՀԿ-ն:

Օգտագործված գրականություն

1. Հայրապետյան, Արշակ. «Վրաց-աբխազական հակամարտության իրավական տեսանկյունները». *Լրաբեր Հասարակական Գիտությունների*, № 3, Երևան, 2013, էջ 77-82:
2. «Акт провозглашения независимости Южной Осетии». *РИА Новости*, 10 Мая 2017, <https://ria.ru/20170529/1495085320.html>. Досупно: 14.05.2021.
3. Antonenka Oksana. "A War with No Winners". *Global Politics and Strategy* 50(5), 2008, pp. 23-36.
4. Coppieters, Bruno. "The EU and Georgia: time perspectives in conflict resolution". *Occasional Paper n 70*, Paris, 2007, pp. 13-21.
5. International Group Crisis. "Georgia's South Ossetia Conflict: Make Haste Slowly". *Tbilisi/Brussels: ICG Europe Report N183*, 7 June 2007.
6. Jawad, Pamela. "Conflict Resolution through Democracy Promotion? The Role of the OSCE in Georgia". *Democratization* 15 (3), 2008, pp. 611-617.
7. Lynch, Dov. "Why Georgia Matters." *Institute for Security Studies*. Chaillot Paper n°86, Paris, 2006, p. 18.
8. Macfarlane, Neil. "On the Front Lines in the near Abraod: The CIS and the OSCE in Georgia's Civil Wars". *Third World Quarterly* 18 (3), 1997, pp. 519-525
9. Merlingen, Michael and Ostrauskaitė, Rasa. "EU Peacebuilding in Georgia: Limits and achievements". *Leuven Centre for Global Governance Studies*, Belgium, 2009, pp. 9-12
10. Mychajlyszyn, Natalie. "The OSCE and Regional Conflicts in the Former Soviet Union". *Regional and Federal Studies* 11 (3), 2001, pp.194-201.
11. Popescu, Nicu. "The EU and Civil Society in Georgia- Abkhaz Conflict". *MICROCON Policy Working Paper 15*, Brighton, 2010, pp. 17-22.
12. Stewart, Susan. "The Role of the United Nations in the Georgian-Abkhazian Conflict". *Ethnopolitics and Minority Issues in Europe* (2), Germany, 2003, pp. 11-15
13. Suslu, Zafer. "Georgia at a Glance; Abkhazian and South Ossetian Conflict". *IBSU International Refereed Multi-diciplinary Scientific Journal N1*, Tbilisi, 2006, pp.103-107.
14. Victor-Yves, Ghebali. "The OSCE Mission to Georgia (1992-2004): The failing art of half-hearted measures". *Helsinki Monitor*, 2004, pp. 280-292.
15. *United Nations Security Council Resolution N 858*. 1993. <https://digitallibrary.un.org/record/171724?ln=en>. Accessed: 14 May 2021

Works Cited

1. Hayrapetyan Arshak, «Vrac-abxazakan hakamartut'yan iravakan tesankyunnery'».
2. Lraber Hasarakakan Gitut'yunneri, № 3, Yerevan, 2013, e'j 77-82 [Legal aspects of the Georgian-Abkhazian conflict". Bulletin of Social Sciences, No. 3, Yerevan, 2013, pp. 77-82].
3. "Akt provozglasheniya nezavisimosti Juzhnoj Osetii". RIA Novosti, 10 Maja 2017
4. ["The Act of declaring the independence of South Ossetia". May 10, 2017], <https://ria.ru/20170529/1495085320.html>
5. Antonenka, Oksana. "A War with No Winners." Global Politics and Strategy 50(5), 2008, pp. 23-36.
6. Coppeters, Bruno. "The EU and Georgia: time perspectives in conflict resolution." Occasional Paper n 70, Paris, 2007, pp. 13-21.
7. International Group Crisis. "Georgia's South Ossetia Conflict: Make Haste Slowly" Tbilisi/Brussels: ICG Europe Report N183, 7 June 2007.
8. Jawad Pamela. "Conflict Resolution through Democracy Promotion? The Role of the OSCE in Georgia." Democratization 15 (3), 2008, pp. 611-617.
9. Lynch Dov. "Why Georgia Matters." Institute for Security Studies. Chaillot Paper n°86, Paris, 2006, p. 18.
10. Macfarlane, Neil. "On the Front Lines in the near Abraod: The CIS and the OSCE in Georgia's Civil Wars." Third World Quarterly 18 (3), 1997, pp. 519-525
11. Merlingen, Michael and Ostrauskaitè, Rasa. "EU Peacebuilding in Georgia: Limits and achievements." Leuven Centre for Global Governance Studies, Belgium, 2009, pp. 9-12
12. Mychajlyszyn, Natalie. "The OSCE and Regional Conflicts in the Former Soviet Union." Regional and Federal Studies 11 (3), 2001, pp.194-201.
13. Popescu, Nicu. "The EU and Civil Society in Georgia- Abkhaz Conflict." MICROCON Policy Working Paper 15, Brighton, 2010, pp. 17-22.
14. Stewart, Susan. "The Role of the United Nations in the Georgian-Abkhazian Conflict." Ethnopolitics and Minority Issues in Europe (2), Germany, 2003, pp. 11-15
15. Suslu, Zafer. "Georgia at a Glance; Abkhazian and South Ossetian Conflict." IBSU International Refereed Multi-diciplinary Scientific Journal N1, Tbilisi, 2006, pp.103-107.
16. Victor-Yves, Ghebali. "The OSCE Mission to Georgia (1992-2004): The failing art of half-hearted measures." Helsinki Monitor, 2004, pp. 280-292.
17. United Nations Security Council Resolution N 858. 1993. <https://digitallibrary.un.org/record/171724?ln=en>. Accessed: 14 May 2021

**UN, OSCE AND EU INVOLVEMENT IN THE SETTLEMENT
OF ABKHAZIA AND SOUTH OSSETIA CONFLICTS:
COMPARATIVE ANALYSIS**

KHACHIK ABAJYAN

*Yerevan State University, Faculty of International Relations,
Chair of Political Institutions and Processes, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to reveal the peculiarities of the involvement of the UN, the OSCE and the EU in the settlement of the conflicts in Abkhazia and South Ossetia by conducting a comparative analysis. Our task is to find out the main differences and peculiarities of the two conflicts, to study the role of the OSCE, the UN, the EU in the conflict settlement process, to

identify the strengths and weaknesses, opportunities and threats of the OSCE, the UN and the EU in both conflicts.

Both scientific (analysis, synthesis, historical principle) and special (logical-comparative, comparative) methods were used during the research.

As a result of the research, we have come to the conclusion that due to the legal-historical peculiarities of the two conflicts, the parties and organizations involved in them have different interests. We can say that the OSCE and the UN have made a significant contribution to the settlement of the conflicts in South Ossetia and Abkhazia respectively, but both have not been able to reach a final settlement. Given that the author presents the main tools and involvement of the three organizations in the conflict resolution process, the author argues that the UN had the largest resources and tools amongst the three organizations, but the OSCE was the most effective in resolving the conflict.

Keywords: *Abkhazia, South Ossetia, conflict, conflict resolution, UN, OSCE, EU.*

УЧАСТИЕ ООН, ОБСЕ И ЕС В УРЕГУЛИРОВАНИИ КОНФЛИКТОВ В АБХАЗИИ И ЮЖНОЙ ОСЕТИИ: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ

ХАЧИК АБАДЖЯН

*аспирант кафедры политических институтов и процессов
факультета международных отношений
Ереванского государственного университета
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – путем проведения сравнительного анализа выявить особенности участия ООН, ОБСЕ и ЕС в урегулировании конфликтов в Абхазии и Южной Осетии. Наша задача – выяснить основные различия и особенности двух конфликтов, изучить роль ОБСЕ, ООН, ЕС в процессе урегулирования конфликта, выявить сильные и слабые стороны, возможности и угрозы ОБСЕ, ООН и ЕС в этих двух конфликтах.

В ходе исследования использовались как научные (анализ, синтез, исторический принцип), так и специальные (логико-сравнительные, сравнительные) методы.

В результате проведенного исследования мы пришли к выводу о том, что в силу историко-правовых особенностей двух конфликтов вовлеченные в них стороны и организации имеют разные интересы. Можно сказать, что ОБСЕ и ООН внесли значительный вклад в урегулирование конфликтов в Южной Осетии и Абхазии соответственно, но и они не смогли достичь окончательного урегулирования. Учитывая, что автор представляет основные инструменты и участие трех организаций в процессе урегулирования конфликта, утверждается, что ООН располагала самыми большими ресурсами и инструментами среди всех трех организаций, но ОБСЕ была наиболее эффективной в урегулировании конфликта.

Ключевые слова: *Абхазия, Южная Осетия, конфликт, разрешение конфликта, ООН, ОБСЕ, ЕС.*

ՖՐԱՆՍ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԻՆ*

ՉՏԴ 93/94:327

DOI: 10.52063/25792652-2021.2-77

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱԲԳԱՐՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի
թյուրքագիտության ամբիոնի ավագ լաբորանտ և ասպիրանտ,
թ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
marqaritaabgaryan0@gmail.com*

Հոդվածը նպատակ է հետապնդում բացահայտելու երկու երկրի՝ միմյանց նկատմամբ վարած արտաքին քաղաքականության շարժառիթները և խնդիրների կարգավորման վերաբերյալ ապագայի տեսլականը:

Խնդիր է դրվել վերհանել Ֆրանս-թուրքական հարաբերությունների սրման և բարելավման պատճառները, ներկայացնել երկրների դիրքորոշումներն ու քայլերը՝ ցույց տալով իրադարձությունների վարգացման ընթացքը:

Հետապոտությունն իրականացվել է բնութագրական և գրականության վերլուծության մեթոդաբանության հիման վրա: Ուսումնասիրվել է ֆրանս-թուրքական հարաբերությունների պատմական ընթացքը՝ հարաբերությունների խորքային դրդապատճառները վերհանելու համար:

Հետապոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ քաղաքական հարթությունը բացասաբար է ազդում հարաբերությունների վրա, իսկ տնտեսական ու մշակութային հարթությունը՝ դրական: Երկկողմ հարաբերությունների տնտեսական ու մշակութային շփման գծերը, փոխադարձ ներդրումները կարևոր տեղ ունեն երկու երկրների տնտեսական հարաբերությունների վարգացման գործում: Երկու երկրները միշտ ունեցել են ընդհանուր շահեր, որոնք թույլ են տվել նրանց աստիճանաբար վերականգնելու հարաբերությունները:

Հիմնաբառեր՝ Եվրամիության անդամակցում, Հայկական հարց, Զրդական հարց, Արաբական գարուն, ՆԱՏՕ, հեղաշրջման փորձ, «Գորշ գայլեր»:

Ներածություն

Երկու երկրների առաջին դիվանագիտական շփումները սկսվել են XIV դարից՝ Ֆրանցիսկոս I-ի և Սուլեյման I Զանուլիի իշխանության օրոք: Ֆրանսիայի և Թուրքիայի հարաբերությունները սկսել են ինտենսիվորեն զարգանալ հատկապես 19-րդ դարից: Ֆրանս-թուրքական հարաբերությունների փոփոխականության վրա ազդում են ոչ միայն Հինգերորդ Հանրապետության ղեկավարների քաղաքական հայացքները, այլև համաշխարհային քաղաքականության համատեքստի փոփոխությունը: Փաստն այն է, որ ֆրանս-թուրքական հարաբերությունները երբեք հարթ չեն եղել:

Հիմնվելով ֆրանսիական վերջին պատմագրության, մամուլի, Ֆրանսիայի պետական ու հասարակական կազմակերպությունների փաստաթղթերի վրա՝ հոդվածում վերլուծել ենք այն պատճառները, որոնց շնորհիվ Ֆրանսիայի 5-րդ Հանրապետության հետ հարաբերությունները վերջին տարիներին դարձել են Թուրքիայի արտաքին քաղաքականության գերակա ուղղություն: Ֆրանսիան և Թուրքիան,

* Հոդվածը ներկայացվել է 18.05.2021թ., գրախոսվել՝ 31.05.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:

ստեղծելով երկկողմ կապեր, սկսում են առաջնորդվել ոչ միայն օբյեկտիվ տնտեսական կամ քաղաքական իրողություններով, այլև իռացիոնալ գաղափարներով: Աստիճանաբար ի հայտ են գալիս որոշակի քաղաքական կարծրատիպեր, որոնք ազդում են երկրների՝ միմյանց ընկալման վրա:

Սույն թեմայի հետազոտումը հնարավորություն է տալիս ավելի խորը ըմբռնելու մեր օրերում երկու երկրների միջև ծավալվող հարաբերությունների առանձնահատկությունները: Ֆրանս-թուրքական հարաբերությունների գիտական ուսումնասիրությունն ու պատմական քննությունը ներկա աշխարհաքաղաքական իրադարձությունների համատեքստում, մասնավորապես Մերձավորարևելյան տարածաշրջանի բազմաշերտ հակասությունների դաշտում քաղաքական կարևոր նշանակություն ունեն:

Ֆրանս-թուրքական հարաբերությունների վրա ազդող բացասական գործոնները

Ֆրանս-թուրքական հարաբերությունների հիմնախնդիրը Թուրքիայի՝ Եվրամիությանը անդամակցումն է: Մինչև 2004 թվականը Ֆրանսիայի ղեկավարությունը կտրականապես դեմ չէր Թուրքիայի անդամակցմանը Եվրամիությանը, սակայն երբ պարզ դարձավ, որ մեխանիզմը գործարկվել է, սկսեց երկարած գել գործընթացը: Նախևառաջ Ֆրանսիան Թուրքիայի ԵՄ լիիրավ անդամակցումը չի ցանկանում, քանի որ վախենում է, որ իր դիրքերը կարող են վնասվել: Անշուշտ, Եվրամիությանը անդամակցելուց հետո Թուրքիան կկարողանա Եվրախորհրդարանում և Եվրամիության խորհրդում ընդունել իրեն հարմար ցանկացած որոշում: Այդ իսկ պատճառով Ֆրանսիան պնդում է, որ Թուրքիայի տնտեսությունը բավականաչափ զարգացած չէ ԵՄ-ին անդամակցելու համար (Çaylak): Սակայն ըստ Եվրահանձնաժողովի՝ Թուրքիայի տնտեսական ներուժը սատարում է ֆինանսական համակարգի կայունությանը և խստորեն կառուցված պետական քաղաքականությունը: Հարկ է նշել նաև այն փաստը, որ Թուրքիայի տնտեսությունն ավելի զարգացավ և արտահանման, ներմուծման ծավալները գնալով ավելի աճեցին (Бородкина): Այսպիսով՝ կարող ենք ասել, որ ԵՄ-ի շրջանակներում Թուրքիան չի լինի ֆինանսական աջակցության կարիք ունեցող երկիր, այլ կարող է ֆինանսական պատասխանատվության բեռը կիսել ԵՄ այլ անդամների հետ: Իհարկե, Թուրքիային իդեալականացնելը հնարավոր չէ. բարձր գնաճն ու գործազրկությունը, Կիպրոսի ճանաչման հարցը և Հայոց ցեղասպանությունը, երկրում քաղաքատարկյալների թիվը միջազգային ասպարեզում Թուրքիային թուլացնող գործոններ են ("Le long l'Union européenne"): Ինչպես արդեն նշվեց, Ֆրանսիան ներկայացնում է Թուրքիային որպես անդամ չտեսնելու որոշ պատճառներ. 1. Թուրքիան մեծ բնակչություն ունի, 2. Թուրքիան ինքնության ու կրոնի առումով այլ երկիր է, 3. Թուրքիայի անդամակցությունը կարող է մեծացնել գործազրկությունը Եվրոպայում: Այսպիսով՝ Ֆրանսիան ոչ մի կերպ չի օգնում առաջ տանել Թուրքիայի շահերը Կիպրոսի հարցում կամ Մերձավոր Արևելքում, իսկ ՆԱՏՕ-ի գործունեության մեջ նրա ռազմական ներդրումը թուրքականից պակաս է (Çaylak):

Որպես լարվածության կարևոր պատճառ է դիտվում **Կիպրոսի հարցով** Ֆրանսիայի լիակատար աջակցությունը Հունաստանին: Կիպրոսի խնդիրը քննարկելիս չի կարելի անտեսել նաև **Հայկական հարցի** հետևանքները ֆրանս-թուրքական հարաբերություններում:

1970-ականների սկզբին Մարսելում տեղի ունեցած "Heykel Vakasi" հուշարձանի տեղադրումը՝ ի հիշատակ ցեղասպանության գոհ դարձած մեկ ու կես միլիոն հայերի, Ֆրանսիայի և ազատության համար զոհված հայ փրկարարների հիշատակին, լուրջ լարվածություն է ստեղծել ֆրանս-թուրքական հարաբերություններում: Այս իրադարձության հետևանքն այն եղավ, որ Թուրքիայի դեսպան Հասան Էսաթ Ըշըբը վերադարձավ Անկարա: Ֆրանսիայի և Թուրքիայի միջև Հայկական խնդրի պատճառով առաջին ընդհարումը սկիզբ է առել հենց այս դեպքից հետո (Vural 104):

Փաստն այն է, որ 2001 թ.-ին, երբ Ֆրանսիայի խորհրդարանը ընդունեց ցեղասպանությունը ճանաչող օրենսդրություն, Թուրքիան հետ կանչեց իր դեսպանին Փարիզից և սպառնաց սառեցնել ռազմական, քաղաքական ու տնտեսական ոլորտներում համատեղ նախագծերը (Mango): Հետագայում Ֆրանսիայի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի օրինագծի ընդունումից հետո, որի համաձայն՝ Հայոց ցեղասպանությունը չճանաչելու դեպքում սպասվում է մեկ տարվա ազատազրկում և 45 հազար եվրոյի չափով տուգանք, թուրքական կառավարությունը սառեցրել է Ֆրանսիայի հետ երկկողմ հարաբերություններն ու քաղաքական հանդիպումները: Թուրքիան նաև չեղարկել է ֆրանսիական ռազմականության միացման և Թուրքիայում ռազմական ինքնաթիռների վայրէջքի թույլտվությունը (Brown): Դրանից հետո, ինչպես և ակնկալվում էր, 2012 թվականի փետրվարի 28-ին Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը որոշել է, որ Հայոց ցեղասպանության ժխտման մասին օրենքը հակասահմանադրական է և անվավեր է ճանաչել այն (“French public EU membership”):

Ֆրանս-թուրքական հարաբերությունների վրա բացասաբար է ազդում նաև Զրդական հարցը: Այս խնդիրը Ֆրանսիայի ներքին ու արտաքին քաղաքականության կարևոր խնդիրներից մեկն է 1970-ականներից ի վեր: Փաստն այն է, որ 1983 թվականին Փարիզի բրդական ինստիտուտի հիմնադրամամբ քրդերին աջակցությունն աճեց: Չնայած Ֆրանսիան PKK-ին (Զրդական բանվորական կուսակցություն) ընդունում է որպես ահաբեկչական կազմակերպություն, հյուրընկալում է այդ կազմակերպության անդամներին՝ քրդերին աջակցելու անվան տակ: Այն կետը, որը խնդիր է ստեղծում երկկողմ հարաբերություններում, քրդերի ասոցիացիան է PKK-ի հետ: Հարաբերությունների լարվածության օրինակներից մեկը՝ 2013թ.-ին Ֆրանսիայում PKK-ի երեք անդամների սպանությունն ու Ռեջեփ Թայիփ Էրդողանի խիստ արձագանքն է այս իրավիճակի նկատմամբ այն հայտարարությամբ, որ նախագահ Օլանդը ճանաչել է նրանցից մեկին: Հիշեցնենք, որ թուրք ուսանող Սևիլ Սևիմիի ձերբակալությունը, ով իբրև մոտ է PKK- ի հետ, և սոցիոլոգ Փընար Սելեթի վիճելի գործը, ևս օրինակներ են Ֆրանսիայում քննադատված և քրդական հարցի համատեքստում:

Ֆրանս-թուրքական հարաբերություններում մեկ այլ խնդիր է հանդիսանում Արաբական գարնան գործընթացը: Այս գործընթացում Ֆրանսիան վարում էր փոփոխական քաղաքականություն: Թունիսի հեղափոխության ժամանակ Բեն Ալիի ռեժիմին աջակցությունը պատճառ դարձավ, որ տարածաշրջանում վնասվի Ֆրանսիայի իմիջը: Արդյունքում Ֆրանսիան փոխեց իր քաղաքականությունը և փորձեց շտկել այդ իրավիճակը Լիբիական ճգնաժամի պայմաններում: Հիշեցնենք, որ Ֆրանսիան առանցքային դեր խաղաց Լիբիայում սկիզբ առած ապստամբության շարժումները պատերազմի վերածելու հարցում: Ուշագրավ է, որ Ֆրանսիան դատապարտեց Զադաֆիի ռեժիմը և աջակցեց ԵՄ-ին Լիբիայի դեմ պատժամիջոցների որոշման մեջ: Ֆրանս-թուրքական հարաբերություններում Արաբական գարնան բացասական գործոնն այն էր, որ Ֆրանսիան աջակցում էր Բեն Ալիի ռեժիմին, Թուրքիան՝ հակառեժիմային ուժերին, որի արդյունքում էլ Ֆրանսիան աջակցում էր Թուրքիայի տնտեսական համագործակցության և ներդրումային ռեժիմի մեջ գտնվող Լիբիայում ռեժիմը տապալած ուժերին (Çaylak):

Լիբիայի ափերին իրենց ռազմանավերի հետ կապված միջադեպից հետո Թուրքիայի և Ֆրանսիայի միջև վեճերը թեժանում են: 2020 թվականի հունիսի 17-ին Ֆրանսիան Թուրքիային մեղադրել է այն բանում, որ թուրքական ռազմական նավատորմը սկսել է հետապնդել ֆրանսիական ռազմանավը, որը փորձում էր ստուգել թուրքական նավը, որին կասկածում էին Լիբիայում զենքի մաքսանենգության մեջ (Irish): Արդյունքում Փարիզը դադարեցրել է մասնակցությունը ՆԱՏՕ-ի ծովային պաշտպանության առաքելությանը, իսկ Անկարան սպասում է ֆրանսիացիների ներողությանը: Պետք է ընդգծել նաև Փարիզի և Անկարայի միջև առկա

հակամարտության պատճառը. Թուրքիան Միացյալ Նահանգների հաստատմամբ Լիբիայում ռազմական աջակցություն է ցուցաբերում Լիբիայի միջազգայնորեն ճանաչված Ազգային համաձայնության կառավարության ղեկավար Ֆայզ Սարաջին:

Լարվածության ևս մեկ պատճառ է թուրք ակտիվիստների սպանությունը Փարիզում: 2013 թվականին Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպությունը մեղադրել են Փարիզում թուրք ակտիվիստուհիների եռյակի սպանության մեջ (Worley): 2020 թվականի հոկտեմբերի 16-ին Ֆրանսիայի միջնակարգ դպրոցի 47-ամյա ուսուցիչ Սամուել Փաթիի սպանությունը՝ Մուհամեդ մարգարեի ծաղրանկարները դպրոցականներին ցուցադրելու պատճառով, ֆրանսիացի քաղաքական գործիչների, այդ թվում՝ նախագահ Է. Մակրոնի հայտարարությունները՝ սպանված ուսուցչի գործողություններին լիակատար աջակցության և այդպիսի ծաղրանկարների հրատարակումը շարունակելու պատրաստակամության մասին, բուռն արձագանք առաջացրեցին իսլամական աշխարհում, հատկապես Թուրքիայում: Ինչ վերաբերում է Մուհամեդ մարգարեի ծաղրանկարներին, ապա դրանք առաջին անգամ տպագրվել են դեռ 2005թ.-ին դանիական “Jyllands-Posten” թերթում: Դրանից հետո Մուհամեդ մարգարեի ծաղրանկարները բազմիցս տպագրվեցին “Charlie Hebdo” ֆրանսիական ամսագրում, ինչը ի վերջո հանգեցրեց իսլամիստ ահաբեկիչների կողմից 2015 թ.-ին ամսագրի խմբագրության գնդակահարմանը: “Charlie Hebdo”-ի լրագրողների սպանությունը և դրան հաջորդած մասշտաբային ցույցը ամբողջ Ֆրանսիայում՝ ի պաշտպանություն աշխարհիկության և խոսքի ազատության, կարևոր իրադարձություն էր ֆրանսիական մուլտիկուլտուրալիզմի պատմության մեջ և շոշափելի ներդրում իսլամի ընկալման և ֆրանսիական հասարակության մեջ նրա դերի հարցում: Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնը, լիովին տեղյակ լինելով իրադարձությունների բացասական հետևանքների մասին, 2020թ.-ի հոկտեմբերի 31-ին “Al Jazeera” հեռուստատալիքին տված հարցազրույցում շեշտեց, որ ծաղրանկարներ հրատարակել է ոչ թե պետությունը, այլ ազատ և անկախ ամսագրերը: Ֆրանսիայի ղեկավարը նաև արտահայտել է այն միտքը, որ անհրաժեշտ է Ֆրանսիայում իսլամը ազատել արտաքին ազդեցությունից, մզկիթների ֆինանսավորման վերահսկողությունը ուժեղացնել և երկրում «լուսավոր իսլամ» կառուցել: Ի պատասխան՝ Էրդողանն ասել է, որ իր ֆրանսիացի գործընկերը հոգեբույժի կարիք ունի: Էրդողանի խոսքերից հետո Ֆրանսիան Անկարայից հետո կանչեց իր դեսպանին՝ պատճառաբանելով խորհրդակցությունների անհրաժեշտությունը: Թուրքիայի առաջնորդն իր երկրի քաղաքացիներին կոչ արեց հրաժարվել ֆրանսիական ապրանքներ գնելուց՝ երկու երկրների սրված հարաբերությունների ֆոնին (Губеев): Ընդհանուր առմամբ, 2015թ.-ի իրադարձությունները ցույց տվեցին լուրջ պառակտում ֆրանսիական հասարակության մեջ: Ֆրանսիան Էրդողանի համար Եվրոպայում իր ազդեցությունը տարածելու առանցքային երկիր է: Փաստն այն է, որ հենց Ֆրանսիայում է այժմ ապրում Եվրոպայի ամենամեծ մուսուլմանական համայնքը:

Ընդգծենք, որ հակամուսուլմանական հռետորաբանությունն ու գլխաշորի արգելքի օգտագործումը ևս բացասաբար են անդրադարձել երկրորդ հարաբերությունների վրա: Ավելին՝ Ֆրանսիան արդեն ունի բացասական փորձ, երբ 2004թ.-ին ընդունված օրենքը, որն արգելում է դպրոցներում կրոնական խորհրդանիշները, հանգեցրեց իրավիճակի վատթարացմանը և արմատականության նկատելի աճին Ֆրանսիայի մուսուլմանական բնակչության շրջանում (Осипов):

Հիշեցնենք, որ Ֆրանսիան սպառնացել է հասնել ԵՄ պատժամիջոցների կիրառմանը Թուրքիայի նկատմամբ: Այդ ընթացքում Ֆրանսիայի ՆԳՆ-ն արգելք է դրել երկրում «Գորշ գայլեր» թուրքական ազգայնական խմբավորման գործունեության վրա, որը հայտնի է իր ծայրահեղական գործունեությամբ ինչպես Թուրքիայում, այնպես էլ արտերկրում: «Գորշ գայլեր» ծայրահեղ աջ երիտասարդական կազմակերպությունը հիմնադրվել է Թուրքական ազգայնական շարժում կուսակցության կողմից 1960-

ականների և 1970-ականների վերջին: Հիմնական թիրախները ձախ քաղաքական գործիչներն ու լրագրողներն էին: Ինչ վերաբերում է սպառնալիքին, ապա նշենք, որ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան-Իվ Լե Դրիանը Անկարային սպառնացել է պատժամիջոցներով, եթե Թուրքիան չփոխի իր քաղաքականությունը: Ժան-Իվ Լե Դրիանը, ելույթ ունենալով Սենատում, նշել է. «Անկարայի հետ լուրջ տարածայնությունների երկար ցուցակ ունենք, բայց վերջին շաբաթներին մենք տեղափոխվեցինք երկու դաշնակից երկրների հարաբերությունների մակարդակ: Վիրավորանքները, զրպարտությունները, Ֆրանսիայի և Եվրոպայի դեմ ատելություն հրահրելու ցանկությունը բոլորովին այլ բնույթ ունեն: Դրանք սպառնալիքներ են: Ուստի մենք ակնկալում ենք, որ Թուրքիայի նախագահը անհապաղ վերջ կդնի այս պահվածքին»:

Հարկ ենք համարում նշել նաև, որ **Անկարայի դեմ ԵՄ պատժամիջոցների հարց էր բարձրացվել:** ԵՄ դժգոհության թեման էր հետախուզական աշխատանքը, որը Թուրքիան սկսեց Արևելյան Միջերկրական ծովում Հունաստանի ու Կիպրոսի հետ վիճելի ջրերում: Այնուհետև Բրյուսելը Անկարայից տեսավ դրական ազդակներ. Աթենքի հետ բանակցությունների վերսկսում, թուրքական նավերի մեկնում իրենց նավահանգիստներ: Ըստ այդմ, որոշվեց հետաձգել պատժամիջոցների հարցը մինչև դեկտեմբերին կայանալիք ԵՄ գազաթնամաճողովը: Մեկ ամիս չանցած՝ Եվրոպական խորհրդի ղեկավար Չարլզ Միշելը նշեց. «Թուրքիայի կողմից դրական տեղաշարժ տեսնելու մեր ցանկությունը չիրականացավ, ընդհակառակը, Թուրքիան դիմեց սադրանքների և անընդունելի հայտարարությունների: Այս թեմային կանդադառանա՞նք դեկտեմբերին»:

Եվրամիության և Թուրքիայի հարաբերությունները սրվել են նաև այն բանից հետո, երբ 2020 թվականի հոկտեմբերի 26-ին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայյիփ Էրդողանը կոչ արեց բոլոր թուրքերին և իսլամական աշխարհին բոյկոտել ֆրանսիական ապրանքները: Հարկ ենք համարում հիշեցնել, որ դա տեղի է ունեցել Ֆրանսիայում Մուհամեդ մարգարեի ծաղրանկարներից, պատմության ուսուցիչ Սամուել Փաթիի սպանությունից և Ֆրանսիայի առաջնորդ Էմանուել Մակրոնի կողմից արմատական իսլամի դեմ պայքարի մասին հայտարարություններից հետո: «Ի՞նչն այն չէ Մակրոնի մոտ իսլամի և մուսուլմանների հետ կապված: Այն փաստը, որ պետության ղեկավարը այս կերպ վարվում է իր երկրի միլիոնավոր մուսուլմանների հետ, առաջին հերթին մտքի վերահսկողության կորուստ է: Նա կարիք ունի հոգեկան բուժման», -ասել է նախագահ Էրդողանը (Беленькая, Коммерсант 5):

Հարաբերությունների սրմանը նպաստել է նաև **2016 թվականի հուլիսի 15-ի հեղաշրջման փորձը:** Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը անդրադարձ է կատարել ԵՄ-ին անդամակցելու հետ կապված գործընթացի քննադատությանը: Ըստ Օլանդի՝ հեղաշրջման փորձից հետո ձեռնարկված միջոցառումները վնասում են ժողովրդավարությանը, օրենքի գերակայությանը, մարդու իրավունքներին և խոսքի ազատությանը և բացահայտում են ճշունների ժամանակաշրջանը: Արդյունքում մահապատժի բանավեճերի և Օլանդի քննադատությամբ պայմանավորված՝ Թուրքիան հայտարարել է, որ այս պայմաններում չի կարող դառնալ ԵՄ անդամ: Ինչպես հուլիսի 15-ից առաջ, այնպես էլ հուլիսի 15-ից հետո Ֆրանսիան շարունակում է իր բացասական վերաբերմունքը ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության նկատմամբ: Հուլիսի 15-ից հետո Թուրքիայի ու Ֆրանսիայի միջև տնտեսական և մշակութային հարաբերությունները շարունակել են զարգանալ այնպես, ինչպես մինչ այդ էր: Հիշեցնենք, որ 2016 թվականի հուլիսի 15-ի հեղաշրջման փորձը մի նախաձեռնություն է, որն իրականացվել է Թուրքիայի զինված ուժերում Ֆեթուլլահիստական ահաբեկչական կազմակերպության (FETO) մի խումբ զինվորների նախաձեռնությամբ, որը հետ է մղվել հասարակության արձագանքով և ոչ FETO ռազմական կադրերի և ոստիկանության աջակցությամբ: Նախաձեռնությունը չկարողացավ հասնել իր նպատակին: Ֆրանսիան այս գործընթացն

օգտագործել է որպես ԵՄ անդամակցության խոչընդոտների նոր գործիք:

Ֆրանս-թուրքական հարաբերությունների վրա ազդող դրական գործոնները

Բացի բացասական ներգործությունից, հարաբերություններում եղել են նաև դրական տեղաշարժեր: 30 յիսի 15-ից հետո երկկողմ հարաբերություններում շարունակվում են դրական տեղաշարժերը տնտեսական ու մշակութային բնագավառում: Արտաքին գործերի նախարարության 2017թ.-ի ֆինանսական բյուջեի նախագիծը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի Գլխավոր ասամբլեային ներկայացնելու կապակցությամբ պատրաստված գրքույկում նշված է, որ Ֆրանսիայի հետ տնտեսական ու առևտրային հարաբերությունները շարունակվում են կայուն կերպով ընթանալ, իսկ Ֆրանսիան հանդիսանում է արտահանման առաջատար երկրներից մեկը: Տնտեսական հարաբերությունների շրջանակներում 2016 թ.-ի նոյեմբերի 24-25-ը Էկոնոմիկայի նախարար Լիիաթ Չեյրեկչին պաշտոնական այց կատարեց Ֆրանսիա, իսկ հեղաշրջման փորձից հետո Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ջան-Մարկ Էյրոն այցելեց Անկարա և այդ առիթով նշեց. «Մեր երկկողմ օրակարգը միայն ճգնաժամերի և սպառնալիքների մասին չէ: Մենք ապագային նայում ենք կառուցողական նախագծերի հետ միասին»:

30 յիսի 15-ից հետո մշակութային կապերի տեսանկյունից կարևոր է Փարիզում Թուրքիայի դեսպանության Ֆրանսիայի Institut Français-ի հետ «Ֆրանսիայի և Թուրքիայի միջև մշակութային կապերը զարգացնելու նպատակով համագործակցության համաձայնագիրը» ստորագրելու փաստը: Այս համատեքստում Թուրքիան պետք է ապահովի նորարարական ու ժամանակակից ֆրանսիական կրթություն, ամրապնդի մշակութային կապերն ու փոխանակումները երկու երկրների միջև, ինչպես նաև կրթությունը, կրթաթոշակն ու մշակույթը, աջակցի գեղարվեստական գործունեությամբ երիտասարդների ապագայի պատրաստմանը:

Ընդգծենք, որ սույն հոդվածում ուսումնասիրվել է վերջին տասնամյակի թուրք - ֆրանսիական բաղաբանական, տնտեսական ու մշակութային հարաբերությունները: Այս տասնամյակի ժամանակահատվածը համապատասխանում է ԱԶԿ-ի (Արդարություն և զարգացում կուսակցություն) կառավարմանը Թուրքիայում և Լիկոլա Սարկոզիի (2007-2012), Ֆրանսուա Օլանդի (2012-2017) և Էմանուել Մակրոնի (2017-ից) կառավարմանը Ֆրանսիայում: Փաստն այն է, որ Լիկոլա Սարկոզիի նախագահության տարիներին են երկկողմ հարաբերությունները լարվել: Այս ժամանակահատվածի հիմնական անհամաձայնությունն այն էր, որ Ֆրանսիան կտրականապես դեմ էր Թուրքիայի լիիրավ անդամակցությանը ԵՄ-ին, և դրա հակադրման որոշ պատճառներ բացատրում էր հետևյալ կերպ. «Թուրքիան Եվրոպական չէ, և Թուրքիան չունի Եվրոպական մշակույթ և արժեքներ» (Çaylak): Հիշեցնենք նաև այն, որ 2007 թվականին Ֆրանսիայի նախագահ Լիկոլա Սարկոզին հայտարարել է, որ «Թուրքիան տեղ չունի Եվրամիության ներսում» և շարունակել. «Ես ուզում եմ ասել, որ Եվրոպան պետք է իր սահմանները պահպանի, և որ ոչ բոլոր երկրներն ունեն անդամ դառնալու հնարավորություն՝ սկսած Թուրքիայից, որը տեղ չունի Եվրամիության կազմում» (Dogancay- Aktuna 24-39):

Ըստ Տնտեսական զարգացման հիմնադրամի՝ 2015 թ.-ին ֆրանսիական ներդրումներ են եղել Թուրքիայում՝ ավտոմոբիլային, ցեմենտի, էլեկտրոնիկայի, դեղագործության ու ծառայությունների ոլորտներում: Ֆրանսիայում թուրքական ծագմամբ ընկերությունները գործում են կահույքի, տեքստիլի, հագուստի, փոխադրումների, պահեստավորման, նյութատեխնիկական ապահովման, գյուղատնտեսության և պարենային ապրանքների ոլորտում: Երկկողմ առևտրային հարաբերություններում կարևոր դեր ունի նաև Ֆրանսիայի տրանսպորտի ու տեքստիլ ոլորտը Թուրքիայում: Ավիացիայի և ավտոմոբիլային արդյունաբերությունը առաջին պլան է մղվել միլիոնավոր դոլարներով: 1980-2000 թվականներին Ֆրանսիան ընդհանուր

ամամբ դարձել է առաջին օտարերկրյա ներդրողը Թուրքիայի տնտեսության մեջ՝ ներդնելով 5,6 միլիարդ ԱՄՆ դոլար: 2003 թվականին Թուրքիայի Ֆինանսների նախարարության տվյալներով՝ երկրում եղել է 270 ֆրանսիական ձեռնարկություն, որոնք համապատասխանել են ավտոմոբիլային ու շինարարական ոլորտներին:

ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն՝ արտակարգ ու ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, բացառությամբ 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում (Պողոսյան և Սարգսյան 81):

Սահմանադրությունն առաջին անգամ ուղղակիորեն ամրագրում է հիմնական իրավունքների պաշտպանության համար հիմնարար նշանակություն ունեցող համաչափության սկզբունքը:

Այստեղից կարող ենք պնդել՝ ինչպիսին էլ որ լինեն պետության կողմից իրավունքների ու ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները, դրանք իրենց բնույթով ու նպատակային նշանակությամբ պետք է լինեն պիտանի, արդարացված ու համարժեք, հակառակ դեպքում տեղի կունենա իրավունքների ու ազատությունների խախտում և ինչու չէ՝ նաև ոտնահարում:

Արտակարգ դրության պայմաններում վարչական ակտի իրավաչափության և դրանց բողոքարկման հիմնախնդիրները

Արտակարգ դրությունը ՀՀ ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության իրավական հատուկ ռեժիմ է («Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, *հոդված 1*): Այն հայտարարվում է ՀՀ սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում՝ ներառյալ ՀՀ սահմանադրական

կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու, իշխանությունը զավթելու փորձերը, նաև արտակարգ իրավիճակները: Անհրաժեշտ է նշել, որ արտակարգ դրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում արտակարգ դրության ընթացքում արտակարգ դրության տարածքում կարող են կիրառվել մի շարք միջոցառումներ և իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումներ («Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, *հոդված 7*): 2020 թվականի մարտ ամսից մինչև սեպտեմբեր (ՀՀ Կառավարություն, *N1161-Ն որոշում*), իրականացվել են հետևյալ սահմանափակումները՝

- Անձանց տեղաշարժման ազատության սահմանափակում,
- Տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմի սահմանում,
- Հավաքներ կամ հանրային միջոցառումներ իրականացնելու սահմանափակում,
- Տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակում և դրանց զննման իրականացում,
- Անձը հաստատող փաստաթղթերի ստուգում,
- Անձնական առարկաների զննում և այլն:

Այսպիսով՝ վերը նշած կետերը իրենց բնույթով ու առանձնահատկություններով հստակորեն նախատեսում են արտակարգ դրության ժամանակ իրագործվելիք գործողություններ, որոնք իրականացվում են բացառապես օրենսդրության շրջանակներում, և անգամ անձանց իրավունքների ու ազատությունների սահմանափակման դեպքում օրենքով նախատեսված կարգով երաշխավորվում է դրանց անխախտելիությունն ու ոտնահարումներից զերծ է պահվում: Այսինքն՝ մեր համոզմամբ իրավունքների ու ազատությունների նկատմամբ թույլատրվող սահմանափակումները պետք է կիրառվեն բացառապես այն նպատակներով, որոնց համար նախատեսվել են և դրանից զատ, պետք է լինեն համաչափ ու նպատակային: Այս առումով հարկ է նշել, որ արտակարգ դրության պայմաններում գործադիր իշխանության մարմինների գործողությունները պետք է համարժեք լինեն արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներով պայմանավորված իրավիճակին: Սահմանադրական իրավունքներ և ազատություններ սահմանելիս հարկ է ղեկավարվել արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորություններով: Այսինքն՝ արտակարգ դրության իրավական ռեժիմի վերաբերյալ օրենքներում ամրագրված բոլոր հնարավոր սահմանափակումները պետք է բխեն բացառապես արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորություններից, բացի դրանից, օրենքների ու միջազգային պայմանագրերի միջև հակասության դեպքում, ինչը բխում է Սահմանադրության 5-րդ հոդվածի դրույթներից, հարկ է անմիջականորեն ղեկավարվել վավերացված միջազգային պայմանագրերով: Միջազգային պարտավորությունների շրջանակներում գործելու պահանջից անմիջականորեն բխում է նաև այլ կարևոր հիմնադրույթ, մասնավորապես իրավունքներ ու ազատություններ սահմանափակելիս կարող են օրենքով սահմանված սահմանափակումները կիրառվել միայն այն դեպքում, երբ դրանցից կոնկրետ յուրաքանչյուրի համար առկա են բավարար հիմքեր, հանգամանքներ (Պողոսյան և Սարգսյան 523):

2020 թվականին մեր երկրում հայտարարված արտակարգ դրությունը (ՀՀ Կառավարություն, *N298-Ն որոշում*) և մասնավորապես իրավունքներ ու ազատություններ սահմանափակելիս պատկան մարմինների ընտրած միջոցները մեր

կարծիքով իրենց բնույթով ու նպատակային նշանակությամբ պիտանի չէին, արդարացված և, իհարկե, համարժեք չէին, և շատ դեպքերում հասարակության մեջ դժգոհության, բողոքի և նաև բազմաթիվ գործերով դատական վեճերի առարկա են դարձել, որոնք ավարտվել են դատարանի այնպիսի վճիռներով, որոնցով հաստատվել են վարչական մարմինների կողմից ոչ իրավաչափ գործողությունները:

Սակայն եթե համավարակի սկզբնական շրջանում կարելի է ասել, որ մարդու իրավունքները ժամանակավորապես զոհաբերվեցին օպերատիվ որոշումներ ընդունելուն, ապա նման պրակտիկայի շարունակականությունը լուրջ մարտահրավեր էր նետել մարդու իրավունքների ողջ հայեցակարգին: Խնդիրն առավել էր սրվում հաշվի առնելով, որ արտակարգ իրավիճակի պայմաններում իշխանությունը կենտրոնանում է կառավարության, շատ հաճախ՝ նույնիսկ մեկ անձի ձեռքում: Չէին կիրառվում հանրության լայն շերտերի ներգրավմամբ խորհրդակցություններ, հասարակական կարծիքը լսելու հնարավորություն տվող այլ մեխանիզմներ: Գործում էր միայն տուգանելու ինստիտուտը, որը շատ դեպքերում ոչ մի կապ չուներ համավարակի կանխարգելման հետ, քանի որ հստակ էր, որ «հաց ուտելու» կամ «ջուր խմելու» ընթացքում դիմակ չկրելը կարող էր համավարակի բռնկման վտանգ ստեղծել: Շատ դեպքերում հենց այդ իրավիճակներում էին քաղաքացիներին ենթարկում վարչական պատասխանատվության և շատ դեպքերում դա իրականացվում էր բռնության միջոցով, որը ոչ իրավաչափ է և հիվանդության կանխարգելման հետ ոչ մի առնչություն չունի: Դա է պատճառը, որ վարչական մարմինների սույն գործողությունները դատարանի կողմից վերացվում էին: Ցանկացած քաղաքակիրթ և իրավական պետության մեջ մարդը բարձրագույն արժեք է, իսկ մարդու իրավունքները հարգելի ու պաշտպանելի՝ պետության գոյության առանցքային նպատակն ու պարտականությունն է (ՀՀ Սահմանադրություն, *հոդված 3, մաս 1*), հանրային իշխանության բոլոր մարմինները կաշկանդված են մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով (ՀՀ Սահմանադրություն, *հոդված 3, մաս 3*), ուստի նույնիսկ արտակարգ դրության պայմաններում հիմնական իրավունքների սահմանափակմանը պետք է վերաբերել ծայրաստիճան զգուշությամբ: Այս է պատճառը, որ տարբեր երկրների իրավագիտական հանրության շրջանակներում լուրջ քննարկման առարկա են դարձել այն հարցերը, թե որքանով էին անհրաժեշտ վարակով պայմանավորված՝ մարդու հիմնական իրավունքների սահմանափակումները, եթե անգամ անհրաժեշտ էին, ապա ի՞նչ ժամանակով և ի՞նչ ծավալներով: Զննարկման թեման նախ և առաջ հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության և որոշակիության հարցն է: Սահմանափակումների իրավաչափության գնահատումը մի շարք երկրներում, ինչպես նաև ՀՀ-ում դարձել է նաև դատարանների գնահատման առարկան:

Սահմանադրության 76-րդ հոդվածը, իհարկե, արտակարգ դրության ժամանակ տալիս է հնարավորություն մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները ժամանակավորապես կասեցնելու կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկելու: Սահմանադրական նույն նորմը միաժամանակ պետությանը ներկայացնում է շատ կարևոր պահանջ, այն է՝ հիմնական իրավունքներն ու ազատությունները պետք է սահմանափակվեն միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը: Սահմանադրական այս պահանջին համահունչ՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ իրավունքների և ազատությունների թույլատրվող սահմանափակումները պետք է կիրառվեն բացառապես այն նպատակներով, որոնց համար նախատեսվել են և լինեն համաչափ հիշյալ նպատակների համեմատությամբ («Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, *հոդված 10*):

Համաչափության սկզբունքի տեսանկյունից մեր կարծիքով չափազանց կարևոր է, որ Կառավարության կողմից ընդունվեն որոշումներ, որոնք լինեն ճկուն և թույլ տան յուրաքանչյուր կոնկրետ դեպք գնահատել առանձին, այլ ոչ թե լինեն կոշտ և, անկախ

հանգամանքներից, բոլոր դեպքերի համար համընդհանուր լուծում նախատեսող մոտեցումներ սահմանեն:

Մեր կարծիքով՝ արտակարգ դրության ժամանակ մի շարք սահմանափակումների արդյունքում մարդկանց և իրավաբանական անձանց վրա նոր, լրացուցիչ պարտավորությունները, որոնք հանգեցնում են նաև ֆինանսական ծախսերի, ենթակա են փոխհատուցման:

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անհատական պաշտպանության միջոցների ապահովումն իրականացնում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները: Մեր կարծիքով՝ այդ պարագայում ակնհայտ է, որ արտակարգ իրավիճակում ֆիզիկական անձանց վրա չպետք է լիներ այդ անհատական պաշտպանության միջոցը ձեռք բերելու պարտականությունը (դիմակ, ձեռնոցներ): Այստեղ ուրիշ խնդիր ունենք, որը վերաբերում է քաղաքացիներին տուգանելուն: Սահմանադրությամբ ունենք վստահ հատուցման իրավունք, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքում նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Այստեղ մեր կարծիքով գոյություն ունի իրավաչափության խնդիր, քանի որ արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքը նախկինում նախատեսել էր պարետի ինստիտուտ, սակայն պարետի ինստիտուտի համար արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքում փոփոխություններ կատարվեցին միայն 2020 թվականի ապրիլի 29-ին, որի ժամանակ էլ նախատեսվեց պարետի կողմից որոշում ընդունելու հնարավորությունը: Սակայն մարտ ամսից մեր երկրում արտակարգ դրություն էր հայտարարված, պարետի կողմից մի շարք որոշումներ էին ընդունվել, սակայն միայն մայիսի 7-ին ապրիլի 29-ին ընդունված օրենքի փոփոխություններն ուժի մեջ մտան (ՀՀ Կառավարություն, *N61 որոշում*): Այսինքն՝ որպես օրենք իրավական հիմքը բացակայում է: Խնդիրը, սակայն, ավելի լուրջ է, որովհետև անգամ իրավական հիմքի բացակայության պարագայում, երբ օրենքում փոփոխություններ կատարվեցին և պարետին նորմատիվ ակտ ընդունելու հնարավորություն տրվեց, այս պարագայում նույնպես խնդիրներ են առաջացել: Միայն Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել՝ ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Պատահական չէ, որ նախկինում արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքը, նախատեսելով պարետի ինստիտուտը, չէր նախատեսել նրա կողմից որոշումներ ընդունելու հնարավորությունը:

Վարչարարության տեսանկյունից, մեր համոզմամբ, պարետի բոլոր որոշումները ենթակա են վիճարկման և այս համատեքստում յուրաքանչյուր ոք հատուցման իրավունք ունի: Հետևաբար քաղաքացիները, ըստ մեզ, կարող են պարետի կողմից կայացված ցանկացած որոշում բողոքարկել Վարչական դատարան, որը մեծամասամբ և իրականացվում է: Այսպիսով՝ ստացվում է, որ կառավարության որոշմամբ հայտարարվել է արտակարգ դրություն, այնուհետև այս ամբողջ ընթացքում դրանից բխող հարցերը կարգավորվել են պարետի որոշումներով, որոնք մինչև մայիսի 7-ը ընդհանրապես իրավական հիմք չեն ունեցել:

Այսպիսով՝ գալիս ենք այն համոզման, որ քաղաքացիները ոչ միայն կարող են բողոքարկել վարչական մարմինների կայացրած վարչական ակտերը, որի իրավական հիմքը հենց պարետի որոշումն է, այլ նաև կարող են բողոքարկել պարետի որոշումը, որը հիմք է հանդիսացել իրենց պարտադրելու X քանակի զումար ծախսել այս ամբողջ ժամանակահատվածի համար և դիմակ ձեռք բերել: Այստեղ մեր կարծիքով՝ իրավիճակը երկու մասի է բաժանվում, այսինքն՝ այն անձանց շրջանակը, որոնք արդեն իսկ

տուգանվել են և բողոքարկում են հատուցում ստանալու նպատակով և երկրորդ հատվածն էլ նորմատիվ ակտի գոյության փաստն է, որի հիման վրա անձանց պարտադրում են կոնկրետ գործողություններ իրականացնել:

Գործերի մեծ մասով վարչական մարմնի կողմից չի իրականացվել վարչական վարույթ, մասնավորապես 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածում, որպես պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր, ամրագրված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտ ընդունելը լսել նրան: Վարչական վարույթի մասնակիցների՝ ընդունվելիք վարչական ակտի հասցեատիրոջ և երրորդ անձանց լսված լինելու իրավունքի իրացման միջոցով վերջինները հնարավորություն են ստանում արդյունավետ կերպով պաշտպանելու և իրականացնելու իրենց այն իրավունքներն ու շահերը, որոնց վերաբերում է տվյալ վարչական վարույթը: Այդ իրավունքի պատշաճ կենսագործման շնորհիվ վարչական վարույթի մասնակիցներն իրազեկվում են իրենց իրավական ու փաստական վիճակի վրա ազդող վարչական վարույթի հարուցման և դրա արդյունքում արձակվելիք վարչական ակտի հիմքում դրվող փաստական ու իրավական հանգամանքների վերաբերյալ՝ հնարավորություն ունենալով վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողություններ կատարելու միջոցով ազդելու վարչական մարմնի վերջնական որոշման վրա, իսկ այդ հնարավոր է միայն այն դեպքում, երբ վարչական մարմինը լսի, ի գիտություն ընդունի և գնահատի վարույթի մասնակիցների դիրքորոշումները: Վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցների ներկայությունն ապահովելու վարչական մարմնի պարտականությունը կարևոր երաշխիք է հանդիսանում վարույթի մասնակցի՝ իրեն ընձեռնված իրավունքներն իրացնելու և պաշտպանության միջոցներից օգտվելու համար: Ընդ որում, այդ իրավունքի իրացմանը խոչընդոտելը, այդ իրավունքի իրացման համար լիարժեք հնարավորություն չապահովելը կամ անհիմն՝ ոչ ողջամիտ սահմանափակումներ ստեղծելն ակթոյապարտելի է:

Այսպիսով՝ իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների՝ լսված լինելու իրավունքը գործնականում իրացնելը (ՀՀ Վճռաբեկ դատարան, ԿՂ/5539/05/11):

Այդ նպատակին հասնելու համար օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում սահմանել է վարչական վարույթի մասնակիցների՝ լսված լինելու իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր ու ընթացակարգեր:

Այսպես՝ նախևառաջ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասում ամրագրել է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին լսելու՝ վարչական մարմնի պարտականությունը, որի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է վերջիններին հնարավորություն տալ արտահայտվելու տվյալ վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Մեր կարծիքով՝ վարչական վարույթի մասնակիցների՝ լսված լինելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում են կիրառման ենթակա իրավական ակտերը: Այդ փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելուն ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա

հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումն ու գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը:

Բացի այդ, վարույթի ընթացիկ փուլում լուսմները պետք է իրականացվեն այն հաշվառմամբ, որ վարույթի մասնակիցները դեռ հնարավորություն ունենան իրենց դիրքորոշմամբ ազդելու վարչական մարմնի որոշման վրա: Բազմաթիվ դեպքերով վարչական մարմինը առանց ապացույցներ ներկայացնելու քաղաքացիներին տուգանում է դիմակ չկրելու համար և այդ պարագայում հարկ չէր համարում իրականացնել պատշաճ վարչական վարույթ, քանի որ վարույթի ընթացքում շատ դեպքերում կպարզվի իր կայացրած որոշումների ոչ իրավաչափ բնույթը և դա է պատճառը, որ շատ դեպքերում միանգամից եզրափակիչ փուլով կայացնում է որոշում վարչական տույժ նշանակելու մասին:

Վարչական վարույթի մասին ծանուցելու («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, *հոդված 35*) նախատեսված կառուցակարգն անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում վարչական վարույթի ընթացքում մարդու՝ լաված լինելու իրավունքի կենսագործման համար, քանի որ առանց վարչական վարույթի մասնակիցներին վարույթի հարուցման կամ վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների (օրինակ՝ լուսմների) անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին ծանուցելու հնարավոր չէ ապահովել վարչական վարույթի մասնակիցների՝ լաված լինելու իրավունքի գործնական իրացումը: Թեև վարչական վարույթի մասնակիցներին վարույթի մասին ծանուցելը և վարույթի մասնակիցներին քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու հնարավորություն տալը՝ լսելը, կատարվում են վարչական վարույթի երկու տարբեր փուլերում և նախատեսված է վարչական վարույթի հարուցման և ընթացիկ փուլերը կարգավորող իրավական նորմերով, սակայն նշված ընթացակարգային գործողությունները հետապնդում են մեկ միասնական նպատակ, որը հանգում է մարդու՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքների իրացման երաշխավորմանը:

Այդ է պատճառը, որ դատարանում գտնվող գործերով հաղթող է ճանաչվում քաղաքացին, քանի որ դատարանի համար ակնհայտ է վարչական մարմնի կողմից ոչ իրավաչափ գործողությունների արդյունքով քաղաքացու իրավունքների խախտումը: Բազմաթիվ գործերով, մասնավորապես՝ ՎԴ/6520/05/20, ՎԴ/7880/05/20, ՎԴ/7324/05/20 ՀՀ վարչական դատարանը մատնանշել է, որ վարչական վարույթի մասնակիցների՝ լաված լինելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում է կիրառման ենթակա իրավական ակտերը (ՎԴ/6520/05/20; ՎԴ/7880/05/20; ՎԴ/7324/05/20): Այդ փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելուն ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումն ու գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Բացի այդ, վարույթի ընթացիկ փուլում լուսմները պետք է իրականացվեն այն հաշվառմամբ, որ վարույթի մասնակիցները դեռ հնարավորություն ունենան իրենց դիրքորոշմամբ ազդելու վարչական մարմնի որոշման վրա:

Ուսումնասիրելով վարչական գործերում առկա փաստաթղթերը՝ Դատարանը վերևում նշված գործերով փաստել է, որ վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած վարչական վարույթի նյութերում բացակայում է որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց առ այն, որ հայցվորը սահմանված կարգով

ծանուցվել (իրազեկվել) Է պատասխանողի որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ինչպես հարուցման, այնպես էլ գործի քննության տեղի, օրվա և ժամի մասին, որից ելնելով՝ արձանագրում է, որ տվյալ դեպքում հայցվորի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմինը չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վարչական վարույթին վարչական պարտավորություններ ստանձնող անձի մասնակցությունն ապահովելու, քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու և վերջինիս կողմից իր իրավունքները լիարժեքորեն իրացնելու իրական հնարավորություն ընձեռելու ուղղությամբ, ինչի արդյունքում չի ապահովվել վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունը՝ վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքը:

Նաև շատ հետաքրքիր է այն փաստը, որ վարչական դատարանի կողմից կայացված վճիռները վարչական մարմինների կողմից չէին բողոքարկվում վերաքննության կարգով, որը մեր կարծիքով վկայում է այն մասին, որ վարչական մարմինն էլ էր հասկանում իր կայացրած ակտերի ոչ իրավաչափության աստիճանը:

Միաժամանակ գտնում ենք, որ վարչական վարույթն իրականացնող մարմինը իր ակտերում պետք է կոնկրետ մատնանշի, թե հայցվորը կոնկրետ որ իրավական ակտի որ դրույթն է խախտել:

Մեր համոզմամբ՝ վիճարկվող որոշումների մեջ որպես խախտված իրավանքում նշված ՀՀ պարետի 2020թ. մայիսի 3-ի թիվ 63 որոշման 14-րդ հավելվածը, որը չափազանց անորոշ ձևակերպում է, չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, և քաղաքացիները, ստանալով վարչական ակտերը, չէին կարող հասկանալ, թե կոնկրետ որ կանոնների խախտման համար են ենթարկվել վարչական պատասխանատվության:

Նույնաման դիրքորոշում է հայտնել նաև Վճռաբեկ դատարանն իր մի շարք նախադեպային որոշումներով անդրադառնալով վարչական ակտի հիմնավորվածության պարտադիր լինելու հանգամանքին (ՀՀ Վճռաբեկ դատարան, ՎՂ/2127/05/11):

Սույն պարագայում գտնում ենք, որ քաղաքացիների նկատմամբ կայացված վարչական ակտերը մեծամասամբ չէին պարունակում անհրաժեշտ և բավարար նշումներ գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքի և տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտերի մասին:

Հարկ է նշել, որ պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտի նշում ասելով պետք է հասկանալ այն ակտերի և դրանց համապատասխան նորմերի ամբողջությունը, որոնք կապահովեն իրավախախտման բնորոշումը և դրա համար սահմանված պատասխանատվությունը, այլպես կարելի է ենթադրել, որ վարչական մարմինն օրենքի մակարդակով հնարավորություն է տրվում չհիմնավորված որոշումներ կայացնելու:

Եզրակացություն

Հաշվի առնելով վերևում բերված փաստերը՝ առաջարկում ենք կատարել հետևյալ փոփոխությունները՝

- «Վրտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անհատական պաշտպանության միջոցների ապահովումն իրականացնում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները: Մեր կարծիքով՝ այդ պարագայում ակնհայտ է, որ արտակարգ իրավիճակում ֆիզիկական անձանց վրա չպետք է լիներ այդ անհատական պաշտպանության միջոցները ձեռք բերելու պարտականությունը (պաշտպանիչ դիմակ, ձեռնոցներ, պաշտպանիչ գլխարկներ):

• Գործերի մեծ մասով վարչական մարմնի կողմից չի իրականացվել վարչական վարույթ, մասնավորապես 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածում որպես պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր ամրագրված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտ ընդունելը լսել նրան: Այսպիսով՝ իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների՝ լսված լինելու իրավունքը գործնականում իրացնելը, որը պետք է տվյալ դեպքում պարտադիր կիրառվեր: Մեր կարծիքով՝ վարչական վարույթի մասնակիցների՝ լսված լինելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում է կիրառման ենթակա իրավական ակտերը: Այդ փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելուն ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումն ու գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ թևարկումը:

• Հաջորդ կարևոր առաջարկությունն այն է, որ քաղաքացիների նկատմամբ կայացված վարչական ակտերը մեծամասամբ չէին պարունակում անհրաժեշտ և բավարար նշումներ գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքի և տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտերի մասին, որը քաղաքացիների համար իրենց իրավունքների իրացման հարցում լրջագույն խոչընդոտներ էր առաջացնում:

• Մեր կարծիքով՝ նաև անհրաժեշտ է տվյալ դեպքում օգտագործել արտասահմանյան փորձը, քանի որ սա նոր իրավիճակ է մեզ համար և պարտադիր է այլ երկրների հետ համագործակցության միջոցով իրականացնել միջոցառումներ, որոնք այս կամ այն չափով սահմանափակում են Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները, սակայն զերծ են պահում հիմնական իրավունքների խախտումներից:

• Մեկուսացման կանոնների կարգավորումների հետ կապված մեկ այլ խնդիր է նաև վերանայումների և բողոքարկման մեխանիզմի հարցը, այդ թվում՝ կապված դատական պաշտպանության իրավունքի հետ: Օրինակ՝ եթե անձը գտնում է մեկուսացման մեջ և իրեն ներկայացված պահանջն ապօրինի է, ինչպես է բողոքարկելու այն: Արդյոք կարողանալու՞ է դիմել վարչական մարմնին, թե՞ պետք է հարցը լուծվի դատական կարգով: Եթե անձը ենթարկվում է մեկուսանալու պահանջին, նշանակում է, որ մեկուսացման պետք է ենթակա լինեն նաև իր հետ նույն բնակարանում ապրող մարդիկ, և եթե վերջիններից որևէ մեկը համաձայն չէ մեկուսացման ենթարկվելուն, ապա արդյոք կարո՞ղ է բողոքարկել այդ պահանջը: Այս մասին կարգավորում առկա չէ և ո՛չ մի օրենքում, հետևաբար նման կարգավորումները ևս անհրաժեշտություն են: Նշված բոլոր դեպքերում պետք է լինեն հատուկ կարգավորումներ՝ հաշվի առնելով իրատարրությունը:

• Նաև փաստում ենք, որ օրենսդրորեն կանոնակարգված չեն արտակարգ իրավիճակի վերաբերյալ մի շարք հիմնական գործընթացներ: Մասնավորապես օրենսդրությամբ սահմանված չեն այն դեպքերը, երբ որոշակի իրադրության պատճառով առաջացած հետևանքների ծանրության աստիճանը կամ հանրապետությունում և դրա առանձին հատվածներում առկա այն իրավիճակը, որոնց պարագայում կարող է կամ պետք է սահմանվի արտակարգ իրավիճակի ռեժիմ: Ավելին՝ բաց է այն հարցը, թե պետական որ մարմինը և ինչ ժամկետներում ու կարգով է իրավասու հայտարարել արտակարգ իրավիճակ: Այլ կերպ ասած՝ արտակարգ իրավիճակ հայտարարելու որևէ իրավական հիմք և չափանիշներ համապատասխան օրենքներով սահմանված չեն:

• Խնդրահարույց է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի» 182.4 հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվությունը՝ կապված կարանտինի ընթացքում անձանց ազատ տեղաշարժելու իրավունքի կամ տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելու, ինչպես նաև դրանց զննման իրականացմանը խոչընդոտելու համար, իսկ նույն հոդվածի 7-րդ մասով վարչական պատասխանատվություն է նախատեսվել կարանտինի ընթացքում տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելու, ինչպես նաև դրանց զննման իրականացմանը խոչընդոտելու համար:

Ակնհայտ է, որ 182.4-րդ հոդվածի թե 2-րդ, և թե 7-րդ մասերով պատասխանատվություն է նախատեսվում բացառապես նույն արարքի համար, իսկ այդ պայմաններում արարքի որակման խնդիր է առաջանալու: Այսինքն՝ նման կարգավորման պայմաններում տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելու կամ դրանց զննման իրականացմանը խոչընդոտելու դեպքերում հարց է առաջանալու, թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.4-րդ հոդվածի ո՞ր մասով է անձը ենթակա լինելու պատասխանատվության՝ նկատի ունենալով նաև, որ որպես վարչական պատասխանատվություն նախատեսված տուգանքի չափերը տարբեր են (համապատասխանաբար 10.000 ՀՀ դրամ և 50.000 ՀՀ դրամ):

Օգտագործված գաղանկություն

1. Այվազյան Վարդան. *Մարդու իրավունքներ*. Ուսումնական ձեռնարկ. Երևան, 2014. <http://ysu.am/science/hy/Vardan-Ayvazyan>:
2. ՀՀ Ազգային ժողով *«Խոտանառոտության հոսանքային ռեժիմի մասին» ՀՀ օրենք*. 21.03.2012. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=7535>:
3. ---. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք. 18.02.2004. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=144936>:
4. ՀՀ Կառավարություն. *N1161-Ն որոշում*. 13.07.2020. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=144373>
5. ---. *N298-Ն որոշում*. 16.03.2020. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=144373>
6. ---. *N61 որոշում*. 29.04.2020. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141952>
7. ՀՀ *Սահմանադրություն*. 06.12.2015. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723>
8. ՀՀ վարչական դատարան. *Դատական Գործ N: ՎԴ/6520/05/20*. [26.11.2020](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809949253). http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809949253:
9. ---. *Դատական Գործ N: ՎԴ/7324/05/20*. [19.02.2021](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950078). http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950078:
10. ---. *Դատական Գործ N: ՎԴ/7880/05/20*. [23.12.2020](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950769). http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950769:
11. ՀՀ վճռաբեկ դատարան. *Դատական Գործ N: ՎԴ/2127/05/11*. [18.07.2014](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809514051). http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809514051:
12. ---. *Դատական Գործ N: ՎԴ/5539/05/11*. [28.11.2014](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809532385). http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809532385:
13. Պողոսյան, Վարդան և Սարգսյան, Նորա. *ՀՀ Սահմանադրության համառոտ պարզաբանումներ*. Երևան, 2016:

Works Cited

1. Ayvazyan Vardan. Mardu iravunqner. Usumnakan d'er'nark. [Human rights. Textbook: Yerevan, 2014.] Erevan, 2014. <http://ysu.am/science/hy/Vardan-Ayvazyan>
2. HH Azgayin jhoghov. «Artakarg drut'yan iravakan r'ejhimi masin» HH o'renq. 21.03.2012. [National Assembly of Armenia, the RA law "On legal regime of state of emergency"] <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=7535>.
3. «Varchararut'yan himunqneri & varchakan varuyt'i masin» HH o'renq. 18.02.2004. the RA law "On the Basics of Administration and Administrative Proceedings" 18.02.2004. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=144936>.
4. HH Kar'avarut'yun. N1161-N voroshum. 13.07.2020. [Resolution of the Government of the Republic of Armenia N1161-N of 13.07.2020.] <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=144373>
5. ---N298-N voroshum [Decision N298-h of 16.03.2020] 16.03.2020. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=144373>
6. ---N61 voroshum. [Decision N61 29.04.2020] 29.04.2020. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141952>
7. HH Sahmanadrut'yun. [The Constitution of the Republic of Armenia 06.12.2015.] 06.12.2015. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723>
8. HH varchakan dataran. Datakan Gorc' N: VD/6520/05/20. [RA Administrative Court: court case N: VD/6520/05/20 26.11.2020.] 26.11.2020. http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809949253
9. Datakan Gorc' N: VD/7324/05/20. [Court case N: VD/7324/05/20, 19.02.2021.] 19.02.2021. http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950078
10. Datakan Gorc' N: VD7880/05/20. [Court case N: VD7880/05/20, 23.12.2020.] 23.12.2020. http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950769
11. HH Vtwr'abek dataran. Datakan Gorc' N: VD/2127/05/11. [RA Court of Cassation: court case N: VD/2127/05/11] 18.07.2014, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809514051
12. Datakan Gorc' N: VD/5539/05/11. [Court case N: VD/5539/05/11] 28.11.2014. http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809532385
13. Poghosyan, Vardan & Sargsyan, Nora. HH Sahmanadrut'yan hamar'ot parzabanumner. Erevan, [Brief explanations on the RA Constitution: Yerevan] 2016.

**ANALYSIS OF THE LEGAL BASIS FOR APPEALING AN
ADMINISTRATIVE ACT AND THE TASKS OF
IMPROVING THEM IN A STATE OF EMERGENCY**

HAYK GHAZARYAN
*European University of RA,
Department of Jurisprudence, Applicant,
Yerevan, Republic of Armenia*

In the Constitution of every legal and democratic state, the primary problem is the guarantee and protection of fundamental human rights and freedoms.

The spread of the new coronavirus disease poses a major challenge to human rights protection. Taking into account the spread of infectious disease cases, from March 16, 2020, an emergency was declared throughout the territory of the Republic of Armenia, which was prolonged for a long time.

In this period, not only the rights of citizens were repeatedly limited, but also these restrictions were uneven in practice and did not serve their purpose, that is, the prevention of the disease, but only contributed to the appointment of fines, which in many cases were illegal.

From our side, this article examines the main problems of the regularity of an administrative act in a state of emergency, their appeal, identifies problems in the current legal norms and, based on the practice, proposes solutions to further prevent such phenomena, also applying judicial practice.

Keywords: *emergency, administrative act, extrajudicial act, judicial order, administrative justice, administrative offense, restriction.*

АНАЛИЗ ПРАВОВЫХ ОСНОВ ОБЖАЛОВАНИЯ АДМИНИСТРАТИВНОГО АКТА И ПРОБЛЕМЫ ИХ ОБЖАЛОВАНИЯ В УСЛОВИЯХ ЧРЕЗВЫЧАЙНОЙ СИТУАЦИИ

ԱԿ ԿԱԶԱՐՅԱՆ

*Сотрудник кафедры юриспруденции Европейского университета РА,
г. Ереван, Республика Армения*

Основным положением Конституции каждого правового и демократического государства является гарантия и защита основных прав и свобод человека.

Распространение нового коронавирусного заболевания представляет собой серьезный вызов защите прав человека. Учитывая случаи распространения инфекционного заболевания, с 16-го марта 2020 года на всей территории РА была объявлена чрезвычайная ситуация, которая последовательно продлевалась.

В этот период права граждан претерпели множество ограничений; данные ограничения имели на самом деле незаконный характер и не могли привести к достижению их цели, то есть профилактики заболевания, они лишь способствовали назначению штрафов, что во многих случаях было неправомерным.

В данной статье мы рассматриваем основные вопросы о законности реализации административного акта в условиях чрезвычайной ситуации и его обжалования, а также выявляем пробелы в действующих правовых нормах и на основании имеющейся практики предлагаем решения для дальнейшего предотвращения подобных явлений, используя при этом также и судебную практику.

Ключевые слова: *чрезвычайная ситуация, административный акт, внесудебный акт, судебный порядок, административное правосудие, административное правонарушение, ограничение.*

«ԱՊԱՏԱՆ ԶԱՅՅՈՂՆԵՐ», «ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՅԱՆՎԱԾ ԱՆՁԻՆԸ», «ԶԱՐԿԱԴԻՐ ՎԵՐԱԲՆԱԿՎԱԾ/ՏԵՂԱՅԱՆՎԱԾ ԱՆՁԻՆԸ» ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ, ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐԸ. ԴՐԱՆՑ ԻՄՊԼԵՄԵՆՏԱՑԻԱՅԻ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ*

ՀՏԴ 341.2, 349

DOI: 10.52063/25792652-2021.2-127

ԷԼԻՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության միգրացիայի, հայրենադարձների և փախստականների հարցերի բաժնի պետ, Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, ք.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն (ԼՂՀ) mkhitarvan.elina.m@gmail.com

Չողվածի նպատակն է լուսաբանել «ապաստան հայցողներ», «ներքին տեղահանված անձինք», «հարկադիր վերաբնակված/տեղահանված անձինք» եկրոյթները, ուսումնասիրել դրանց համապատասխանող իրավական կարգավիճակներն ամրագրող միջազգային-իրավական փաստաթղթերը, ինչպես նաև համադրել Արցախում գործող օրենսդրության հետ և մեկնաբանել այդ կարգավիճակները դե յուրե չստացած, բայց դե ֆակտո կրողների իրական և իրավական վիճակը: Իրավամբ արդիական է 2020 թվականի սեպտեմբերի 27-ի ադրբեջանական ազրեսիայի հետևանքով իրենց մշտական բնակության վայրից տեղահանված ավելի քան 36 000 անձանց, այդ թվում՝ 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած փախստականների, 1991-1994 թվականների Արցախյան առաջին պատերազմի պատճառով ներքին տեղահանված անձանց ներկա վիճակի իրավական ամրագրման հարցը:

Մեր խնդիրն է պարզաբանել հիշյալ իրավական կարգավիճակների յուրահատկությունները, ներկայացնել վերոնշյալ կարգավիճակների հետ կապված ներպետական իրավական հիմնախնդիրները, որոշների դեպքում՝ իրավական դաշտում դրանց բացակայության հետևանքով առաջացրած խնդիրները, առաջարկել իրավասու շրջանակների, պատկան մարմինների քննարկմանը ներկայացնել վերոհիշյալ հասկացությունների ընդլայնման, զուլցե և նոր կարգավիճակի, ըստ այդմ, դրանց իրավականացման անհրաժեշտությունը այն կրող անձանց իրավունքների իրացման համար:

Չողվածի շրջանակներում առաջադրված խնդիրների ուսումնասիրության ընթացքում կիրառվել են ընդհանուր գիտական՝ դիալեկտիկական, տրամաբանական, պատմական, ինչպես նաև մասնավոր կամ հատուկ մեթոդներ, որպիսիք են՝ իրավահամեմատական, վերլուծական, վիճակագրական, համակարգակառուցված-բային մեթոդները:

Չետապոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ անհրաժեշտ է օրենսդրական դաշտում անհապաղ արտացոլել հետպատերազմյան իրողությունները՝ կապված տեղահանված անձանց կարգավիճակի սահմանման, դրա սոցիալ-տնտեսական երաշխիքների ամրագրման հետ:

* Չողվածը ներկայացվել է 31.05.2021թ., գրախոսվել՝ 11.06.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:

Հիմնաբառեր՝ ապաստան հայցող, ներքին տեղահանված անձինք, հարկադիր վերաբնակված/տեղահանված անձինք, ելրույթ, իրավական կարգավիճակ, իմպլիսենտացիա:

Ներածություն

Մարդկության պատմությունը պատերազմի ու հակամարտությունների մի երկար շղթա է՝ կարճատև խաղաղության ընդմիջումներով, այդ իսկ պատճառով մարդկության պատմությունը զուգահեռ գարգանում էր հարկադիր տեղահանությունների, ապաստան փնտրելու պատմությունը: Դեռ համայնքների, ապա և առաջին պետությունների առաջացման ժամանակներից մարդիկ հաճախ էին ստիպված թողել իրենց տները, հարկադրաբար հեռացել հիմնական բնակության վայրերից՝ խուսափելով հետապնդումներից, զինված հակամարտություններից կամ էլ բնական աղետների հետևանքներից: Այդ ժամանակ էլ առաջին անգամ առաջացավ ապաստանի ինստիտուտի անհրաժեշտությունը, որն ի սկզբանե ավելի շատ ավանդական էություն ուներ և դեռ շատ հեռու էր իրավականությունից: Մարդկության պատմությունը լի է փախստականներին առնչվող ողբերգական իրադարձություններով: Ապաստանը, ապաստան հայցելը մի շարք ժողովուրդների մոտ հայտնի էր դեռ Ք.ա. 20-18-րդ դարերից (Авдиев 215): Հին կրոնական տեքստերում բազմիցս հիշատակվում է ապաստան հասկացությունը: Հայոց պատմության մեջ ևս մինչև մեր թվարկությունը մի շարք դրվագներ կան քաղաքական ապաստանի հայցման վաղ դրսևորումներից. Արտաշեսյան դինաստիայի հիմնադիր Արտաշես Ա-ի մոտ «ապաստան է հայցում» կարթագենցի գորավար Յաննիբալը (Կորաբլյով 387), կամ օրինակ՝ Տիգրան Բ Մեծի մոտ Յոմի հետապնդումներից փախչելով՝ ապաստան է գտնում Պոնտոսի արքա Սիրիդատ 2 Եվպատորը: Մեր թվարկության սկզբում 300 000 գոթեր, փախչելով քոչվոր հոների ասպատակություններից, հասնում են մինչև հռոմեական տարածքներ: Առաջին խաչակրաց արշավանքն առաջացրեց «սուրբ վայրերից» մուսուլմանների մասայական արտագաղթ: Բայց միայն ռազմական բախումները, զինված հակամարտությունները չեն, որ փախստականների «ալիքներ» էին բարձրացնում. հազարավոր մարդիկ Եվրոպայում և Ասիայում փախչում էին հաճախակի համաճարակներից, ինչպիսին էր, օրինակ, ժանտախտը (Пискун 56-57):

Փաստենք, որ մինչև 2020 թվականն Արցախի Հանրապետությունում (այսուհետ՝ ԱՀ) հարկադիր տեղահանվածների գերակշիռ մասը 1988-1992թթ.-ին Ադրբեջանի Հանրապետության ցեղասպանական գործողությունների հետևանքով իրենց մշտական բնակության վայրերից բռնագաղթած անձինք էին, ինչպես նաև արաբական գարնան հետևանքով Սիրիայի Արաբական Հանրապետությունից, Լիբանանի Հանրապետությունից հայրենադարձության ծրագրով Արցախում հաստատվածներ, «Դոնբասյան» հակամարտության հետևանքով տեղահանված Ուկրաինայի Հանրապետության՝ ազգությամբ հայ քաղաքացիներ, ապաստան հայցողներ Իրաքից: Իսկ 44-օրյա պատերազմի և 2020 թվականի նոյեմբերի 9-ի համաձայնագրի պատճառով իրենց մշտական բնակության վայրերից հարկադիր տեղահանվեցին Արցախի երեք շրջանների բնակչությունն ամբողջությամբ, ինչպես նաև մյուս շրջանների մի շարք բնակավայրերի բնակիչներ՝ առանց հայրենի բնակավայրեր վերադարձի հնարավորության:

Ադրբեջանական զինված ագրեսիայի հետևանքով տեղահանված արցախահայության կարգավիճակի անորոշությունն առաջ է բերում ինչպես իրավական ու սոցիալ-տնտեսական, այնպես էլ արտաքին-քաղաքական խնդիրների մի գորոյան հանգույց:

«Ապաստան հայցող» հասկացությունը և դրա իմպլեմենտացիան ԱՀ իրավական դաշտում

Միջազգային իրավունքում չկա պետության համար պարտադիր, առանձին միջազգային իրավական ակտ, որն ամրագրում է ապաստան հայցողի իրավական կարգավիճակի և ապաստանի տրամադրման կարգը (Трунов 5): «Ապաստան հայցող» եզրույթը լուսաբանելուն զուգահեռ՝ անհրաժեշտ է անդրադառնալ «ապաստան» հասկացությանը: Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտում (1966թ.) նույնպես որևէ հիշատակություն չկա այս ինստիտուտի և իրավական կարգավիճակի մասին: Ընդհանրապես, Միջազգային իրավունքի տեսության մեջ գոյություն ունի «ապաստան» հասկացության բնորոշման երկու մոտեցում: Գիտնականների մի խումբ այս եզրույթն ընդունում է որպես պետության՝ ապաստան տրամադրելու իրավունք, իսկ գիտնականների մյուս խումբը՝ որպես անձի՝ ապաստան ստանալու իրավունք: Գոյություն ունի նաև «ապաստան» հասկացության բավականին հիմնավորված այլ սահմանում, որում համադրված են երկու տեսակետներն էլ. ապաստանի ինստիտուտը սահմանվում է որպես իր ինքնիշխան, սուվերեն իրավունքների իրականացման համար քաղաքական *ապաստան տրամադրելու պետության անբակտեյի իրավունքի* և այլ երկրներում *ապաստան փնտրելու անձի իրավունքի միասնություն* (Батычко 72): Սակայն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948թ.) 14-րդ հոդվածը բովանդակում է ընդհանրական դրույթ առ այն, որ «յուրաքանչյուր մարդ իրավունք ունի հետապնդումից ապաստան փնտրել այլ երկրներում և օգտվել այդ ապաստանից» (UN): Անհրաժեշտ է նշել, որ այս հոդվածի նախագծի քննարկման ժամանակ առաջարկվում էր «օգտվել ապաստանից» (անգլ. to enjoy asylum) արտահայտության փոխարեն կիրառել «տրամադրել ապաստան» (to be granted asylum) բառակապակցությունը, սակայն այդ առաջարկն անհրաժեշտ օժանդակություն չգտավ. պետությունները չէին ցանկանում իրենց վրա նման պատասխանատվություն վերցնել: Նմանօրինակ մոտեցում արտացոլվում է Տարածքային ապաստանի մասին հռչակագրում, որն ընդունվել է ՄԱԿ-ի ԳԱ կողմից 1967թ.-ի դեկտեմբերի 14-ին՝ խորհրդատվական կարգով:

Այսպիսով՝ ապաստանի ինստիտուտը միջուրտային է. նրա նորմերն ամրագրված են և՛ դիվանագիտական իրավունքում, և՛ միջազգային իրավունքում (Бирюков 141): Նշենք նաև, որ տարբերակում են տարածքային ապաստան ու դիվանագիտական ապաստան, ընդ որում, եթե տարածքային ապաստանը հետապնդվող անձին ապաստանի տրամադրումն է պետության տարածքում, ապա դիվանագիտականը ապաստանի տրամադրումն է օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչության տարածքում: Վերջինիս տրամադրումը լայնորեն տարածված էր XVI-XVIII դարերում, սակայն դրա շահարկումները քրեական հանցագործներ թաքցնելու համար արդեն XIX դարում հանգեցրին պետության ներքին գործերին խառնվելու, դիվանագիտական իմունիտետը չարաշահելու հետ կապված խնդիրներին (Галенская 96): Ապաստան հայցողներին դիվանագիտական ապաստանի տրամադրումը պահպանվում է Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում և կարգավորում է կոնկրետ տարածաշրջանում, տարածքում ապաստան հայցողների հետ կապված հիմնախնդիրները. օրինակ 1928թ. Յավայան կոնվենցիան ապաստանի ինստիտուտը տարածում է դիվանագիտական ներկայացուցչությունների, ռազմասավերի, ռազմական ճամբարների ու ինքնաթիռների վրա (UNHCR):

Ակնհայտ է, որ ապաստան հայցողն առաջին հերթին պետք է օժտված լինի հետապնդումից պաշտպանվելու հնարավորությամբ: Ապաստան փնտրելու և դրանից օգտվելու իրավունքը ճանաչվել է յուրաքանչյուր մարդու հիմնարար իրավունքներից մեկը (Зинченко 249): Վերոհիշյալն ամփոփելով՝ նշենք, որ *ապաստան հայցողը* քաղաքական, ազգային, ռասայական, էթնիկ կամ իրեն ու իր ընտանիքին սպառնացող այլ դրդապատճառներով իր բնակության երկիրը լքող անձ է, հարկադիր միգրանտ, որ

դիմում է ապաստանի տրամադրման համար օտարերկրյա պետության կամ օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչության տարածքում:

Գաղտնիք չէ, որ ԱՅ-ում հիմնականում իմպլեմենտացվում, երբեմն անգամ կրկնօրինակվում են այս կամ այն խնդրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության (այսուհետև՝ ՀՀ) օրենսդրական լուծումները: Այսպես՝ եթե ՀՀ-ում 2001 թվականից գործում է «Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է ՀՀ-ում քաղաքական ապաստանի իրավունք ստանալու հիմքերը, կարգը, այդպիսի իրավունք ստանալու դիմումը մերժելու, տրված իրավունքը դադարեցնելու պայմանները, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ հարաբերություններ (ՀՀ ԱԺ ՀՕ-299), ապա օտարերկրյա քաղաքացու՝ Արցախի մուտք գործելու, բնակվելու, տեղաշարժվելու, տարանցիկ ուղևորություններ կատարելու, ելքի, կացության կարգավիճակ ստանալու, ինչպես նաև վարչական վտարման ու արտաքսման կարգը սահմանվում է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» ԱՅ օրենքով, ինչպես նաև ԱՅ կառավարության 2000 թվականի մարտի 6-ի «Օտարերկրյա քաղաքացիներին՝ ԼՂՀ-ում կացության կարգավիճակի տրամադրման ու այդ հարցերի համակարգման միասնական կարգի մասին» N 28 որոշմամբ, որոնց համաձայն՝ «քաղաքական անկայուն իրավիճակի պատճառով ապաստան փնտրող անձանց» կարող է տրվել կացության ժամանակավոր կարգավիճակ՝ մեկ տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել՝ ամեն անգամ ոչ ավելի, քան մեկ տարով: Նշենք նաև, որ, որ ԱՅ-ում որպես լիազորված պետական մարմիններ վերոհիշյալ իրավական ակտերով ամրագրված են ԱՅ արտաքին գործերի նախարարությունը և ԱՅ ոստիկանությունը՝ ի տարբերություն ՀՀ-ի, որտեղ իրավասուն միգրացիայի հարցերով ՀՀ կառավարության լիազորված մարմինն է («Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 5), չնայած քաղաքական ապաստանի հետ կապված կարգավորումները միանշանակ չեն նաև ՀՀ-ում:

Ապաստան հայցող անձանց իրավական կարգավիճակը սահմանող օրենսդրությունը կատարելագործելու և վերջնականապես միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար 2008 թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Փախստականների և ապաստանի մասին» նոր օրենք, որն ուժի մեջ մտավ 2009 թվականի հունվարի 24-ին: Այս երկու օրենքներում հիմնականում արտացոլված են միջազգային իրավական սկզբունքները, և ապաստան հայցող է համարվում այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որը ՀՀ-ում ապաստան ստանալու նպատակով սահմանված մարմիններին ներկայացնում է ՀՀ-ում ապաստանի հայց՝ խնդրանք կամ դիմում: Միաժամանակ ՀՀ օրենսդրությամբ ապաստան հայցող է համարվում նաև Կոնվենցիան ստորագրած որևէ պետության կողմից փախստական ճանաչված անձը, որը ՀՀ-ում ապաստանի հայց է ներկայացրել (ՀՀ ԱԺ ՀՕ-211-Ն): Արցախում շարունակում է գործել ոլորտը կարգավորող ՀՀ-ում նախկինում ընդունված օրենքի ինտերպրիտացիան 2003 թվականի նոյեմբերի 26-ին ընդունված «Փախստականների մասին» ԼՂՀ օրենքը (ԱՅ ԱԺ ՀՕ-80), որով անդրադարձ է կատարվում «ժամանակավոր ապաստան» հասկացությանը և չի սահմանվում «ապաստան հայցող» եզրույթը: Սակայն սույն օրենքի տարբեր հոդվածների (Հոդվածներ 1, 22, 23) դրույթների համադրությունից «ժամանակավոր ապաստան հայցողը» օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն է, ով դիմել է լիազորված մարմինն՝ ստանալու ժամանակավոր ապաստան՝ ԱՅ կառավարության սահմանած կարգով, եթե նրա տվյալները համապատասխանում են փախստական ճանաչվելու համար նախատեսված պահանջներին, կամ նրա տվյալները չեն համապատասխանում փախստական ճանաչվելու համար սույն օրենքով նախատեսված պահանջներին, սակայն նա չի կարող կամ չի կամենում վերադառնալ իր քաղաքացիական պատկանելության կամ հիմնական բնակության վայրի պետություն՝ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող այլ

վերաբերմունքի ենթարկվելու վտանգի պատճառով, կամ եթե այդ պետությունում իր կյանքին կամ ազատությանը վտանգ է սպառնում զինված հակամարտությունների հետևանքով:

Չնայած ոլորտի իրավական կարգավորումների թերացումներին՝ Արցախում, այնուամենայնիվ, ապաստան հայցողի իրավական կարգավիճակի սահմանման, տրամադրման գործընթացն օրենսդրորեն հստակեցված կարելի է համարել: Սակայն Արցախի անկախության հռչակումից հետո իրավասու և գործընթացին առնչվող գերատեսչությունները, խուսափելով «իրավա-քաղաքական հետևանքների» համար պատասխանատվություն ստանձնելուց, երկմտել են ապաստանի տրամադրման իրավունքի իրացումից: Այնինչ եթե միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող պետությունների պարագայում ապաստան հայցողի «քաղաքացիության երկրի» հետ միջպետական հարաբերությունների վատթարացումը խնդիր է ապաստան տրամադրելու համար, ապա չճանաչված պետության դեպքում կարևոր քայլ է ճանաչման գործընթացում, քանի որ «որևէ պետության կողմից ապաստանի տրամադրումը իր պետական սուվերենիտետի իրացման, իրականացման հատկանիշներից է» (Каламкарян и Мигачев 364):

«Ներքին տեղահանված անձինք», «հարկադիր վերաբնակված/տեղահանված անձինք» եզրույթները և իրավական կարգավիճակները

Ներքին տեղահանված անձինք - ՆՏԱ

Ներքին տեղահանված անձինք (Internal Displaced Person – IDP, այսուհետև՝ ՆՏԱ) և փախստականներ եզրույթները հաճախ են առնչվում իրար. ընդհանրական իմաստն այն է, որ նրանք մարդիկ են, որոնք ստիպված էին անհատապես կամ խմբերով լքել իրենց տները: Չնայած փախստականները և ՆՏԱ-ն իրականում բախվում են Նույնօրինակ խնդիրների՝ նրանց միջև առկա են ակնհայտ տարբերություններ: «Փախստական» եզրույթին և իրավական կարգավիճակին մենք մանրակրկիտ անդրադարձել ենք մեկ այլ հոդվածում (Մխիթարյան 98-105), այդ իսկ պատճառով հպանցիկ նշենք, որ փախստականները հատում են միջազգային, միջպետական սահմաններ և ունեն ՄԱԿ-ի և նրա հատուկ կառույցների՝ իրավական ամրագրված պաշտպանության երաշխիքներ, իսկ ՆՏԱ-ի տեղաշարժը երկրի սահմանների ներսում է, և չնայած միջազգային իրավունքն ընդհանուր առմամբ օժանդակում է այս խմբին ևս, բայց գոյություն չունեն ՆՏԱ-ի հետ աշխատանքի միջազգային համապարտադիր կանոններ (El-Bushra and Fish 1-2): Նշենք սակայն, որ 1998 թվականի փետրվարի 11-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից ընդունվել է «Երկրի ներսում տեղահանված անձանց հարցերով ղեկավարվող սկզբունքներ» փաստաթուղթը, որը չնայած պարտադիր իրավական ուժ չունի, սակայն հանդիսանում է հիմնական փաստաթուղթը, որով կարգավորվում են ներքին տեղահանված անձանց վերաբերող հարցերը: Վերոհիշյալ փաստաթուղթը կազմված է 30 սկզբունքներից և սահմանում է, որ «*ներքին տեղահանված անձինք* են համարվում անձինք կամ անձանց խումբը, որոնց ստիպել կամ հարկադրել են թողնել կամ լքել իրենց տները կամ սովորական բնակության վայրերը, մասնավորապես ռազմական հակամարտության հետևանքով կամ դրանցից խուսափելու պատճառով, բռնության համատարած դրսևորումների, մարդու իրավունքների խախտումների, տարերային կամ մարդու գործունեության հետևանքով առաջացած աղետների հետևանքով, և որոնք չեն հատել միջազգայնորեն ճանաչված պետական սահմանները» (OSHA 2): Ազգային իշխանությունների վրա է դրվում ՆՏԱ պաշտպանության և հումանիտար օգնության պարտավորությունն ու պատասխանատվությունը:

ԱՅ-ում, ինչպես և ՀՀ-ում բացակայում է ՆՏԱ իրավական կարգավիճակը հստակեցնող և նրանց հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությունը: Հետաքրքիր և ուշագրավ է, որ 2020 թվականի փետրվար-մարտ

ամիսներին ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվում որոշման նախագիծ՝ «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2021-2031 թվականների ռազմավարությունը», որը պիտի հաստատվեր 2020 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակում (դեռ «չկանխատեսվող» 44-օրյա պատերազմի ավարտին): Վերոհիշյալ ռազմավարությամբ ինտեգրման և վերինտեգրման թիրախային խմբերի մեջ նշվում են նաև ներքին տեղահանված անձինք, ընդ որում՝ ՆՏԱ-ի սահմանումը տրվում է ՄՄԿ «Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան»-ից վերցված «non-professional» թարգմանությամբ, իսկ ՀՀ-ում ՆՏԱ թիվը ՀՀ-ում ներկայացվում է 192 000 անձ, որոնցից 100 000-ը՝ 1988 թվականի երկրաշարժի հետևանքով, 20 000-ը՝ տեխնոգեն և էկոլոգիական այլ աղետների արդյունքում տեղահանված անձինք, իսկ 72 000-ը՝ սահմանային գոտում Ադրբեջանի կողմից իրականացված զինված գործողությունների հետևանքով տեղահանված անձինք (ՀՀ կառավարության 2298. Նախագիծ 14): Հատկանշական է այն, որ նշյալ իրավական ակտի նախագծում 2016 թվականի ապրիլին Ադրբեջանի Հանրապետության քառօրյա ագրեսիայի հետևանքով ռազմական գործողությունների թիրախում հայտնված շրջաններից տեղահանված և ՀՀ տեղափոխված շուրջ 2250 անձանց կոչում են «ներքին տեղահանված անձանց նման (կամ փախստականի նման իրավիճակում հայտնված անձանց նման) իրավիճակում» հայտնվածներ, որն իրավական կարգավիճակ չէ, չի առաջացնում որևէ պատասխանատվություն այդ անձանց նկատմամբ:

Ավելի վատթար է վիճակը Արցախում: Դեռ 1991-1994 թվականների պատերազմից հետո միայն ԱՀ-ում ՆՏԱ թիվը հասնում էր 30 000-ի՝ նախկին ԼՂԻՄ Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի, Հադրութի, Շուշիի շրջանների մի շարք բնակավայրերից: Սակայն այդ անձանց որևէ կարգավիճակ չտրվեց, մասամբ լուծվեցին սոցիալ-կենցաղային հարցեր, և նման դիրքորոշումը վերագրվեց պատերազմական վիճակին ու հետպատերազմական ճգնաժամին: Իսկ ի հեճուկս հայերի՝ ադրբեջանական կողմը միայն ՆՏԱ թիվը ներկայացնում է 250 000, ավելին՝ այդ թիվը Հարկադիր վերաբնակված/տեղահանված անձանց հետ միասին հասցնելով 600 000-ի՝ ՆՏԱ-ի տակ հաջողացրել է ամրագրել ՄԱԿ-ի Փախստականների Հարցերով Գերագույն Հանձնակատարի Գրասենյակի (ՄԱՓԳՀ/UNHCR) Ադրբեջանի մասով հատուկ զեկույցում (AzIDPs):

Հարկադիր վերաբնակված/տեղահանված անձինք - ՀՎԱ/ՀՏԱ

«Հարկադիր վերաբնակված անձինք» եզրույթը առավել հանդիպում է հետխորհրդային երկրների և հատկապես ռուսական իրավական դաշտում, իսկ արտասահմանյան տերմինաբանության մեջ այն համարելի է «Հարկադիր տեղահանվածներ» հասկացության հետ, ընդ որում, եվրոպական և ամերիկյան իրավագիտական գրականության մեջ «հարկադիր վերաբնակվածներ» (forced resettlements) կամ «հարկադիր տեղահանված անձինք» (forced displacement persons) անվանումը կրում են բոլոր այն մարդիկ, որոնք հարկադրաբար լքել կամ թողել են իրենց մշտական բնակության վայրերը, այդ թվում՝ ապաստան հայցողներ, փախստականներ, ներքին տեղահանված անձինք, թրաֆիկինգի զոհեր, բնական աղետների հետևանքով տեղահանված անձինք, տվյալ տարածաշրջանի զարգացման պատճառով հիմնական բնակավայրերից դուրս մղված մարդիկ (Betts 25-26):

Հիմք ընդունելով տեղահանված, վերաբնակվող և փախստական անձանց ծայրաստիճան լարված իրավիճակը՝ 1993 թվականի սեպտեմբերի 24-ին Ադրբեջանի, Հայաստանի, Բելոռուսիայի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Տաջիկստանի, Թուրքմենիայի, Ուզբեկստանի նախագահները ստորագրել են «Փախստականներին և հարկադիր վերաբնակվածներին օգնության մասին համաձայնագիր», որի 2-րդ հոդվածը սահմանում է, որ «հարկադիր վերաբնակված է ճանաչվում այն անձը, ով հանդիսանում է

ապաստան տրամադրող Կողմի քաղաքացի, ստիպված է եղել լքել այլ Կողմի տարածքում գտնվող իր մշտական բնակության վայրը, իր կամ իր ընտանիքի անդամների հանդեպ բռնության կամ հետապնդման այլ ձևերի պատճառով կամ ռասսայական կամ ազգային պատկանելության, կրոնի, լեզվի, քաղաքական համոզմունքների, ինչպես նաև որոշակի սոցիալական խմբի պատկանելու համար հետապնդման իրական վտանգի պատճառով՝ զինված և ազգամիջյան բախումների հետևանքով» (Соглашение): Մեկնման կամ ելքի պետությունները պարտավորվում են իրականացնել բնակչության տարահանում զինված ու ազգամիջյան հակամարտությունների գոտիներից՝ հնարավորություն ընձեռելով նրանց անխոչընդոտ կամավոր հեռանալու Համաձայնագրի կողմերից մեկի տարածք, ինչպես նաև ապահովել տարահանվածների անձնական ու գույքային անվտանգությունը, լուծել տարահանվածների ֆինանսական, նյութատեխնիկական, մեկնողի, բժշկական ու տրանսպորտային աջակցության խնդիրները: Ելքի պետության վրա է դրվում նաև հարկադիր վերաբնակվածների կորցրած անշարժ և այլ գույքի փոխհատուցումը, ինչպես նաև առողջությանը պատճառված վնասի և ունեցվածքի/վաստակի կորստի փոխհատուցումը: Նյութական փոխհատուցման չափը որոշվում է ելքի պետության դրույքաչափերով: Ժամանակավոր կեցավայր կամ ապաստան տրամադրած պետությունը ստանձնում է հետևյալ պարտավորությունները՝ ապահովել հարկադիր վերաբնակված անձանց ժամանակավոր տեղակայման վայրերում, ցուցաբերել անհրաժեշտ սոցիալ-կենցաղային պայմաններով, օժանդակել անհրաժեշտ փաստաթղթերի (անձնագիր, ծննդյան վկայական, ամուսնության վկայական, աշխատանքային գրքույկ և այլն) ձեռքբերման հարցում (Бирюков 142-143):

ԱՅ-ում, ինչպես և ՀՀ-ում «հարկադիր վերաբնակված անձ» իրավական կարգավիճակ դե յուրե չկա. «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2021-2031 թվականների ռազմավարությունը» նախագծային փաստաթղթում թիրախային խմբերի թվում հիշատակվում են նաև «*հարկադիր տեղահանվածների իրավիճակում գտնվող անձինք*» (ՀՀ կառավարության 2298.Նախագիծ 18)՝ այդպիսիք համարելով սիրիահայերին՝ Սիրիայի Արաբական Հանրապետությունից հարկադիր միգրանտներին, որոնք ունեն հայկական ծագում և ՀՀ քաղաքացիություն: Ընդ որում, սիրիահայերի մի մասը երկքաղաքացիություն (Սիրիայի Արաբական Հանրապետության և ՀՀ-ի) ուներ մինչև Սիրիայի Արաբական Հանրապետությունում զինված բախումները, իսկ մեծամասնությունը՝ շուրջ 19 500 անձ (ՀՀ կառավարության 679.Նախագիծ), ՀՀ քաղաքացիություն է ստացել ավելի ուշ՝ օգտվելով հեշտացված կարգով ՀՀ քաղաքացիություն ստանալու հնարավորությունից: Ըստ ամենայնի նախատեսվում էր այդպիսի պաշտպանել այդ անձանց, այնինչ այդ գործողությունների արդյունքում ՀՀ քաղաքացիություն ունենալու պատճառով փաստացի փախստականի իրավիճակում գտնվող շուրջ 20 000 սիրիահայեր չեն կարող ստանալ փախստականի կարգավիճակ և այդ կարգավիճակից բխող աջակցություն ու պաշտպանություն:

Արցախում ՀՎԱ/ՀՏԱ կարգավիճակին համապատասխանում են 1991-1994 թվականների Արցախյան առաջին պատերազմից հետո Ադրբեջանի կողմից բռնազավթված՝ նախկին ԼՂԻՄ Մարտակետի շրջանի Այգեստան, Կարմիրավան, Հայկաջուր, Ղազանչի, Մարաղա, Սեյտլան և Լենինական գյուղերի բնակիչները, որոնք անցած 30 տարիների ընթացքում որևէ իրավական կարգավիճակ չեն ստացել: Հարկադիր վերաբնակվածներից ոմանք հայրենադարձության ծրագրի շրջանակներում հաստատվեցին Արցախի նոր հիմնադրված այլ բնակավայրերում, որոնք, սակայն, 2020 թվականին նոյեմբերի 9-ի համաձայնագրով հանձնվեցին Ադրբեջանին՝ այդ անձանց կրկին անգամ հարկադրելով լքել իրենց մշտական, հիմնական բնակության վայրերը:

Եզրակացություն

Չնայած 2020 թվականի պատկերը դեռ ամբողջական չէ, բայց ՄԱԿ-ի ՓԳՅ-ն՝ փախստականների հարցերով իրավասու գործակալությունը, արձանագրում է, որ հարկադրված տեղաշարժերը հատել են 80.0 մլն-ի սահմանը. այդ թվում՝ 46.0 մլն ներքին տեղահանված անձինք, 26.0 մլն փախստականներ, 4.2 մլն ապաստան հայցողներ և այլ հարկադիր տեղահանվածներ (FDP): Այդ թվի մեջ են մտնում Ադրբեջանի կողմից բռնազավթված Արցախի 121 համայնքների բնակիչները, որոնք մինչ օրս ոչ ԱՅ, ոչ ՀՀ, ոչ միջազգային որևէ կառույցի կողմից իրավական կարգավիճակի չեն «արժանացել»: Հայկական կողմն օգտագործում է «2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախում գտնվող Արցախի քաղաքացիներին» արտահայտությունը կամ պարզապես «տեղահանվածներ» հասկացությունը: Բազմաթիվ միջազգային կազմակերպություններ տարբեր զեկույցներում սկսել են հաճախակի կիրառել «տարերայնորեն տեղահանված մարդիկ» (spontaneously displaced people) եզրույթը, որը շատ բացասական երևույթ է, քանի որ այս եզրույթում որևէ կերպ չի արտացոլվում իրենց հիմնական, մշտական բնակության վայրերից այդ անձանց տեղահանվելու հարկադիր բնույթը՝ նրանց կյանքին և առողջությանը սպառնացող իրական վտանգի պատճառով: ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի տարածած «Արձագանք ԼՂ ճգնաժամին» հաղորդագրության մեջ կիրառվում է «փախստականի նման կարգավիճակում բնակվող անձինք» (UNA) ձևաչափը: ՄԱԿ-ի ՓԳՅ կողմից դեռ պլեյի վաղ շրջանառության դրված «մտահոգության առարկա հանդիսացող անձինք» կամ «անձինք, որոնք հայտնվել են փախստականներին նման իրավիճակներում» հասկացությունները միտված են պատերազմների զոհերին որոշակի աջակցություն տրամադրելու հիմքերի ապահովմանը, բայց իրականում դրանք պետության համար պարտավորություն, իրավական պատասխանատվություն չեն առաջացնում: Այս ընդհանրական հասկացությունը պատասխանատվությունից խուսափելու քաղաքականության հետևանք է. այսօր արդեն անհրաժեշտություն է հատուկ խմբերի և դրանց իրավա-սոցիալական երաշխիքներն ամրագրող նոր եզրույթ(ներ)ի ստեղծումը:

Որպես խնդրի ներպետական լուծում առաջարկվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի պատճառով և 2020 թվականի նոյեմբերի 9-ի Համաձայնագրի հետևանքով տեղահանված և փաստացի ԱՅ-ում բնակվողներին տրամադրել ներքին տեղահանված անձանց՝ ՆՏԱ կարգավիճակ, իսկ ՀՀ-ում բնակվողներին՝ հարկադիր վերաբնակված/տեղահանված անձանց՝ ՀՎԱ/ ՀՏԱ կարգավիճակ՝ օրենսդրորեն սահմանելով այդ խմբերի իրավական կարգավիճակը և սոցիալ-տնտեսական, իրավական երաշխիքները՝ ակտիվորեն ներկայացնելով ու պաշտպանելով այդ անձանց շահերն արտաքին-քաղաքական հարթակներում:

Օգտագործված գրականություն

1. Կորաբյով, Իյա. *Հանկիրալ: [Հռոմեացի կորավար Հանկիրալի և Կարթագենի կործանման մասին]*. Ռուս. թարգմանված Վ. Մ. Վարդանյանի կողմից. Երևան, «Հայաստան», 1984.
2. Մխիթարյան, Էլինա. «Փախստականների իրավական կարգավիճակը Արցախի Հանրապետությունում». *Գիտական Արցախ*, հ.8, N 1, Ապրիլ 2021, էջ 98-105, doi:10.52063/25792652-2021.1-98.
3. ԱՅ ԱԺ. ԳՕ-80. «Փախստականների մասին» ԱՅ օրենք, 26.11.2003. *ԱՅ Իրավական Տեղեկատվական Համակարգ*, <http://arlexis.am/>.
4. ՀՀ ԱԺ. ԳՕ-299. «Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենք, 26.09.2001. *Հայաստանի Իրավական Տեղեկատվական Համակարգ* <https://www.arlis.am/documentview.aspx?docID=66488>

5. ՀՀ ԱԺ. ՀՕ-211-Ն. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, 27.11.2008. *Իրավական տեղեկատվական կենտրոն*, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150050>.
6. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2021-2031 թվականների ռազմավարություն» որոշման նախագծի (2298) հավելված. *Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք*, <https://www.e-draft.am/projects/2298/about>.
7. ՀՀ կառավարության «Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018-2021 ռազմավարություն» որոշման նախագիծ (679). *Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք*, <https://www.e-draft.am/projects/679/about#>, Тос 484420213.
8. «Соглашение о помощи беженцам и вынужденным переселенцам: Протокол к Соглашению о помощи беженцам и вынужденным переселенцам от 24 сентября 1993 года». *Единый реестр правовых актов и других документов Содружества Независимых Государств*. <http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=254>.
9. Авдиев, Всеволод. *История Древнего Востока*. 2-е изд., Москва: Высшая партийная школа при ЦК КПСС, 1953.
10. Батычко, Виктор. *Международное право*. Таганрог: ТТИ ЮФУ, 2011.
11. Бирюков, Павел. *Международное право*. Москва: ЮРАЙТ, 1998.
12. Галенская, Людмила. *Право убежища: международно-правовые вопросы*. Москва: Международные отношения, 1968.
13. Зинченко, Нина. *Международное миграционное право: основы теории и практики*. Москва: Научная книга, 2011.
14. Каламкарян, Рубен, и Мигачев, Юрий. *Международное право*. Москва: ЭКСМО, 2004.
15. Пискун, Олесь. *Основы миграционного права*. Киев: Леся ЛТД, 1998.
16. Тиунов, Олег. *Международное гуманитарное право*. 3-е изд., Москва: Норма, 1999.
17. “AzIDPs: Azerbaijan: Analysis of Gaps in the Protection of Internally Displaced Persons (IDPs)”. *The UN Refugee Agency*, October 2009, <https://www.unhcr.org/protection/convention/4bd7edbd9/azerbaijan-analysis-gaps-protection-internally-displaced-persons-idps.html>.
18. “FDP: Forced displacement passes 80 million by mid-2020 as COVID-19 tests refugee protection globally”. *Digital Services Section of OCHA's Information Management Branch*, <https://reliefweb.int/report/world/forced-displacement-passes-80-million-mid-2020-covid-19testsrefugeeprotection#:~:text=While%20a%20full%20picture%20for,displacement%20released%20today%20in%20Geneva>.
19. Betts, Alexander. *Forced Migration and Global Politics*. New York: Wiley-Blackwell, 2009.
20. El-Bushra, Judy, and Kelly Fish. "Refugees and Internally Displaced Persons". *International Alert and Women Waging Peace, Inclusive Security, Sustainable Peace: A Toolkit for Advocacy and Action*. Section 5, 2004, pp. 1-17, <http://www.womenwagingpeace.net/content/-toolkit/chapters/Refugees.pdf>
21. OCHA. “Guidelines on the displacement of persons”, *United Nations Office for the Coordination of Humanitarian Affairs*, <https://www.unocha.org/themes/internal-displacement/resources>.

22. UN. "Universal Declaration of Human Rights". *United Nations*, <https://www.un.org/sites/un2.un.org/files/udhr.pdf>.
23. UNA. "NK Crisis Response". *United Nations Armenia*, 2021, <https://www.un.am/hy/p/nk-crisis-response>.
24. UNHCR. "Question of Diplomatic Asylum: Report of the Secretary-General", *The UN Refugee Agency*, <http://www.unhcr.org/refworld/type,LEGHIST,,,3ae68bf10,0.html>.

Works Cited

1. Korablyov, Ilya. Hannibal. Hr'omeaci zoravar Hannibali & Kart'ageni korc'anman masin [About the destruction of the Roman commander Hannibal and Carthage]. R'us. t'argmanvac' V. M. Vardanyani koghmic. Erevan, «Hayastan» [Russian translation by V. Vardanyan Yerevan, "Armenia"] 1984 .
2. Mxit'aryan, E'lina. «P'axstakanneri iravakan kargavitwaky' Arcaxi anrapetut'yunum» [The Legal Status of Refugees in the Republic of Artsakh]. *Gitakan Arcax*, h.8, N 1, April 2021, e'j 98-105 [Scientific Artsakh N.8, N 1, April 2021, pp. 98-105], doi:10.52063/25792652-2021.1-98.
3. AH AJh. HO'-80. «P'axstakanneri masin» AH o'renq, 26.11.2003. AH Iravakan Teghekatvakan Hamakarg, <http://arlexis.am/>. [AR NS. ZR-80. The Law of the Republic of Artsakh "On Refugees", 26.11.2003. The Legal information system of the Republic of Armenia, <http://arlexis.am/>.]
4. HH AJh. HO'-299. «Qaghaqakan apastani masin» HH o'renq, 26.09.2001. Hayastani Iravakan Teghekatvakan Hamakarg <https://www.arlis.am/documentview.aspx?docID=66488> [RA NS ZR-299. RA Law" On Political Asylum", 26.09.2001. Legal information system of Armenia <https://www.arlis.am/documentview.aspx?docID=66488>]
5. HH AJh. HO'-211-N. «P'axstakanneri ev apastani masin» HH o'renq, 27.11.2008. Iravakan teghekatvakan kentron, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150050>. [RA NS ZR-211-N RA Law "On Refugees and Asylum", 27.11.2008. Legal Information Center, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150050>.]
6. HH kar'avarut'yan «Hayastani Hanrapetut'yan migracion qaghaqakanut'yan` integrman & veraintegrman xndirneri kargavorman 2021-2031 t'vakanneri r'azmavarut'yun» voroshman naxagc'i (2298) havelvac'. Iravakan akteri naxagc'eri hraparakman miasnakan kayq, <https://www.e-draft.am/projects/2298/about>. [Appendix to the draft decision of the Government of the Republic of Armenia "Strategy for regulating the issues of migration policy of the Republic of Armenia on integration and reintegration for 2021-2031 " (2298). Unified website for publishing draft legal acts, <https://www.e-draft.am/projects/2298/about>.]
7. HH kar'avarut'yan «Siriakan hakamartut'yan hetevanqov harkadir teghahanvac' & Hayastanum pashtpanut'yown haycogh and'anc integrman 2018-2021 r'azmavarut'yun» voroshman naxagic' (679). Iravakan akteri naxagc'eri hraparakman miasnakan kayq, https://www.e-draft.am/projects/679/about#_Toc484420213. [Draft decision of the Government of the Republic of Armenia" Strategy for the integration of persons forcibly displaced as a result of the Syrian conflict and requesting protection in Armenia " (679). Unified website for the publication of legal acts of projects; https://www.e-draft.am/projects/679/about#_Toc484420213.]
8. «Soglashenie o pomoshhi bezhencam i vynuuzhdennym pereselencam: Protokol k Soglasheniju o pomoshhi bezhencam i vynuuzhdennym pereselencam ot 24 sentjabrja 1993 goda». Edinyj reestr pravovyh aktov i drugih dokumentov Sodruzhestva Nezavisimyh Gosudarstv, <http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=254>. ["Agreement on

- Assistance to Refugees and Internally Displaced Persons: Protocol to the Agreement on Assistance to Refugees and Internally Displaced Persons of September 24, 1993". The Unified Register of Legal Acts and Other Documents of the Commonwealth of Independent States, <http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=254>.]
9. Avdiev Vsevolod. *Istorija Drevnego Vostoka*. 2-e izd., Moskva: Vyshaja artijnaja shkola pri CK KPSS, 1953. [The History of the Ancient East. 2nd ed., Moscow: Vyshaya Party School under the Central Committee of the CPSU, 1953.]
 10. Batychko, Victor. *Mezhdunarodnoe pravo*. Taganrog: TTI JuFU, 2011. [International law. Taganrog: TTI SFU, 2011.]
 11. Biryukov, Pavel. *Mezhdunarodnoe pravo*. Moskva: JuRAJT, 1998. [International law. Moscow: YURAYT, 1998.]
 12. Galenskaya, Lyudmila. *Pravo ubezshisha: mezhdunarodno-pravovye voprosy*. Moskva: Mezhdunarodnye otnosheniya, 1968. [The Right of Asylum: International Legal Issues. Moscow: International Relations, 1968.]
 13. Zinchenko, Nina. *Mezhdunarodnoe migracionnoe pravo: osnovy teorii i praktiki*. Moskva: Nauchnaja kniga, 2011. [International Migration Law: Fundamentals of Theory And Practice. Moscow: Nauchnaya kniga, 2011.]
 14. Ruben Kalamkarian, and Yuri Migachev. *Mezhdunarodnoe pravo*. Moskva: JeKSMO, 2004. [International Law. Moscow: EKSMO, 2004.]
 15. Piskun, Oles. *Osnovy migracionnogo prava*. Kiev: Lesja LTD, 1998. [Fundamentals of Migration law. Kiev: Lesya LTD, 1998.]
 16. Tiunov, Oleg. *Mezhdunarodnoe gumanitarnoe pravo*. 3-e izd., Moskva: Norma, 1999. [International humanitarian law. 3rd ed., Moscow: Norma, 1999.]
 17. "AzIDPs: [Azerbaijan: Analysis of Gaps in the Protection of Internally Displaced Persons \(IDPs\)](https://www.unhcr.org/protection/convention/4bd7edbd9/azerbajian-analysis-gaps-protection-internally-displaced-persons-idps.html)". *The UN Refugee Agency*, October 2009, <https://www.unhcr.org/protection/convention/4bd7edbd9/azerbajian-analysis-gaps-protection-internally-displaced-persons-idps.html>.
 18. "FDP: Forced displacement passes 80 million by mid-2020 as COVID-19 tests refugee protection globally". *Digital Services Section of OCHA's Information Management Branch*, <https://reliefweb.int/report/world/forced-displacement-passes-80-million-mid-2020-covid-19testsrefugeeprotection#:~:text=While%20a%20full%20picture%20for,displacement%20released%20today%20in%20Geneva>.
 19. Betts, Alexander. *Forced Migration and Global Politics*. New York: Wiley-Blackwell, 2009.
 20. El-Bushra, Judy, and Kelly Fish. *Refugees and Internally Displaced Persons. "International Alert and Women Waging Peace, Inclusive Security, Sustainable Peace: A Toolkit for Advocacy and Action"*. Section 5, 2004, pp. 1-17, <http://www.womenwagingpeace.net/content/-toolkit/chapters/Refugees.pdf>
 21. OCHA. "Guidelines on the displacement of persons", *United Nations Office for the Coordination of Humanitarian Affairs*, <https://www.unocha.org/themes/internal-displacement/resources>.
 22. UN. "Universal Declaration of Human Rights". *United Nations*, <https://www.un.org/sites/un2.un.org/files/udhr.pdf>.
 23. UNA. "NK Crisis Response". *United Nations Armenia*, 2021, <https://www.un.am/hy/p/nk-crisis-response>.
 24. UNHCR. "Question of Diplomatic Asylum: Report of the Secretary-General", *The UN Refugee Agency*, <http://www.unhcr.org/refworld/type,LEGHIST,,3ae68bf10,0.html>.

**THE TERMS AND STATUS "ASYLUM SEEKERS",
"INTERNALLY DISPAECED PERSONS", "FORCED
RESETTLEMENT/DISPLACED PERSONS":
THEIR IMPLEMENTATION IN THE LIGAL SPHERE OF ARTSAXH**

ELINA MKHITARYAN

*Ministry of Labour, Social Affairs and Housing of Artsakh Republic,
Department of Migration, Refugees and Repatriation, Head,
Artsakh State University, Lecturer,
Stepanakert, Republic of Artsakh (NKR)*

The objective of the article is to raise the terms "asylum seekers", "internally displaced persons", "forced resettlement/displaced persons", consider the legal statuses corresponding to these terms, study international law and legal documents and compare them with national legislation.

Study of the problems posed within the article, were used individual (personal) or special methods - legal-comparative, analytical, statistical, systemic, as well as general scientific, such as dialectical, logical, historical methods.

Our task is clarify the features of these legal statuses, to present notional /domestic/ legal problems associated with the above statuses.

The result of the research is the conclusion that it is necessary to immediatly reflect in the legislation the post-war realities that are associated with the determination of the legal status of displaced persons due to the 44-day aggression of Azerbaijan.

The purpose of the article is to highlight the terms "asylum seekers", "internally displaced persons", "internally resettled/displaced persons", to study international legal documents that fix the legal provisions corresponding to them, as well as to compare them with the legislation in force in Artsakh and comment on the real and legal situation of those who have not received these status de jure but de facto are the carriers. The issue of legal consolidation of more than 36,000 persons deported from their place of permanent residence as a result of the Azerbaijani aggression on September 27, 2020, including refugees deported from Azerbaijan in 1988-1992, as well as the issue of legal consolidation of the current situation of internally displaced persons due to the first Artsakh war of 1991-1994, is rightly relevant.

Our task is to explain the features of the above-mentioned legal status, to present domestic legal problems related to the above-mentioned statuses, in some cases-problems that have arisen due to their absence in the legal field, to invite the competent circles, the competent authorities to submit for discussion an extension of the above-mentioned concepts, possibly a new status, respectively, the need for their succession for the realization of the rights of persons bearing them.

In the course of studying the tasks set in the framework of the article, general scientific, dialectical, logical, historical, as well as private or special methods were used, which are: legal, analytical, statistical, structural methods.

As a result of the study, we came to the conclusion that it is necessary to immediately reflect the post-war realities associated with determining the status of displaced persons and consolidating its socio-economic guarantees in the legislative field.

Keywords: *asylum seekers, internally displaced persons, forced resettlements/
displacement, term, legal status, implementation.*

ТЕРМИНЫ «ЛИЦА, ИЩУЩИЕ УБЕЖИЩА», «ВНУТРЕННЕ ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА», «ВЫНУЖДЕННЫЕ ПЕРЕСЕЛЕННЫЕ/ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА», СТАТУС: ИХ ИМПЛИМЕНТАЦИЯ В ПРАВОВОЙ СФЕРЕ АРЦАХА

ЭЛИНА МХИТАРЯН

*начальник отдела миграции, беженцев и
репатриации Министерства труда, социальных и
жилищных вопросов Республики Арцах,
преподаватель Арцахского государственного университета
г. Степанакерт, Республика Арцах (НКР)*

Целью этой статьи является разъяснить термины «лица, ищущие убежища», «внутренне перемещенные лица», «вынужденные переселенные/перемещенные лица», рассмотреть правовые статусы, соответствующие этим терминам, изучить международно-правовые документы и сопоставить их с внутринациональным законодательством.

В рамках темы при изучении поставленных проблем использовались индивидуальные (частные) или специальные методы: сравнительно-правовые, аналитические, а также статистические и системные общенаучные методы, такие, как диалектический, логический, исторический.

Наша задача – пояснить особенности этих правовых статусов, представить внутригосударственные правовые проблемы, связанные с данными статусами.

В результате исследования мы пришли к выводу о том, что необходимо незамедлительно отразить в законодательстве послевоенные реалии, которые связаны с определением правового статуса перемещенных лиц в результате 44-х дневной агрессии Азербайджана.

Ключевые слова: *лица, ищущие убежища, внутренне перемещенные лица, вынужденные переселенцы, термин, правовой статус, имплементация.*

**ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՓՈԽՅԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ***

ՀՏԴ 347.12:347.2/3

DOI: 10.52063/25792652-2021.2-140

ԱՆՆԱ ՍԿՐՏՉՅԱԼ

*ՀՀ Ալլադային ժողովի պատգամավոր,
Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
anmkrtyan94@gmail.com*

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ու վերլուծել սեփականության իրավունքների պաշտպանության և իրավունքների ինքնապաշտպանության հարաբերակցությունը:

Քաղաքացիական իրավունքների բնականոն ընթացքը պայմանավորված է նաև տվյալ իրավունքի՝ իրավատիրոջ տիրապետության, հսկողականության ու կանխատեսելիության տիրույթում գտնվելու հանգամանքով: Սեփականության իրավունքի պաշտպանական համակարգում ինքնապաշտպանության իրավական հնարավորությունը կիրառելի է ոչ միայն հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսդրության ընդհանուր դրույթներում Վետեղված իրավունքների ինքնապաշտպանության հանգամանքը, այլև հատուկ նորմերով: Ըստ Էուլոյան «Սեփականության և այլ գույքային իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ գլխում նախատեսված են իրավունքների ինքնապաշտպանության առնվազն երկու միջոցներ, որոնք ամրագրված են Քաղաքացիական օրենսգրքի 274-րդ և 277-րդ հոդվածներում: Անհրաժեշտ է հստակ սահմանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ինքնապաշտպանության միջոցները, դրանց կիրառման շրջանակները, հակառակ դեպքում իրավունքների ինքնապաշտպանության գործնական կիրառության հետ առաջանում են խնդիրներ: Չկան օրենսդրական հստակ տարանջատիչներ իրավունքների պաշտպանական համակարգի վերաբերյալ: Առանձին իրավունքի ինստիտուտների պաշտպանական երաշխիքներն արդյոք մասնավոր իրավունքի պաշտպանական համակարգի մասն են: Արդյոք առանձին պաշտպանական համակարգ ունեցող մասնավոր իրավունքի ինստիտուտներով պահպանվող իրավունքի իրավատերերը կարող են օգտվել իրավունքի պաշտպանության ընդհանրական ձևերից, օրինակ՝ իրավունքների ինքնապաշտպանությունից:

Հետազոտության ընթացքում կիրառվել է իրավափաստաբանական մեթոդը:

Հանգել ենք այն եզրակացության, որ սեփականության իրավունքի պաշտպանության իրականացումն առնվազն իրավական երկու հիմքերով կարող է իրականացվել իրավունքների ինքնապաշտպանության միջոցով լինելով ամրագրված ինչպես օրենսդրական ընդհանուր, այնպես էլ հատուկ մասերում:

Հիմնաբառեր՝ սեփականության իրավունք, պաշտպանության միջոցներ, իրավունքների պաշտպանություն, ինքնապաշտպանությունը լայն իմաստով, պահանջի իրավունք, վինդիկացիոն հայց, նեգատոր հայց:

* Հոդվածը ներկայացվել է 06.05.2021թ., գրախոսվել՝ 24.06.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:

Ներածություն

Քաղաքացիական իրավունքների բնականոն ընթացքը պայմանավորված է նաև տվյալ իրավունքի՝ իրավատիրոջ տիրապետության, հսկողականության ու կանխատեսելիության տիրույթում գտնվելու հանգամանքով: Այսինքն՝ իրավունքի իրավատիրոջ մոտ օբյեկտիվ իրավական հնարավորության առկայությունը՝ իրացնելու իրավունքներն օրենքի շրջանակներում և իր հայեցողությամբ: Այդ իրավական հնարավորությունը կարող է ամրագրված լինել ինչպես օրենքով, այնպես էլ պայմանագրով (Белова 14-19):

Օրենսդրական ամրագրումները երաշխիքներ են, սակայն չեն բացառում իրավիճակները, երբ իրավատիրոջ կողմից քաղաքացիական իրավունքների իրականացման շրջանակը «նեղանում» է և հնարավոր չի լինում իր հայեցողությամբ իրավունքների իրացումը: Որպես կանոն, իրավատիրոջ իրավունքների իրացման խոչընդոտները զուգորդվում են իրավունքների խախտումներով, քանի որ դրանք առաջանում են իրավունքի իրավատիրոջ կամքից անկախ հանգամանքներում և վերջինիս իրավունքներն ու օրինական շահերը հաշվի չառնելով (Белова 14-19):

Վերը նշած իրավիճակներում իրավունքի ամրագրումը բնավ բավարար չէ և քաղաքացիաիրավական ինստիտուտների կիրառմամբ պետք է երաշխավորվի իրավատիրոջ սուբյեկտիվ իրավունքների իրացման լայն շրջանակը:

Որպես առավել տարածված ու համալիր ինստիտուտ բնարկման առարկա կդարձնենք սեփականության իրավունքը: Սեփականության իրավունքի իրավական երաշխիքներից են հանդիսանում օրենսդրությամբ ամրագրված՝ ուրիշի ապօրինի տիրապետումից իրավատիրոջ գույքը հետ պահանջելու և սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը տիրապետումից զրկելու հետ չկապված խախտումների իրավական հնարավորությունների ամրագրումը:

Մասնավորապես օրենսդրի կողմից ամրագրված է, որ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջելու ուրիշի ապօրինի տիրապետումից (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 274-րդ հոդված) և սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 277-րդ հոդված):

Օրենսդրական այս ձևակերպումները քաղաքացիաիրավական տեսության շրջանակներում հաճախ անվանում են վիճակագիտ (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 274-րդ հոդված) և նեգատոր պահանջներ (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 277-րդ հոդված): Դրանք քաղաքացիական իրավունքի ամենատարածված ինստիտուտներից սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների պաշտպանության իրավական երաշխիքներ են: Ըստ էության, վիճակագիտն պահանջներն ուղղված են օրինական տիրապետող չհանդիսացող քաղաքացիաիրավական մասնակցի դեմ:

Ընդունված է համարել, որ իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտը սահմանափակված չէ միայն իրավունքների որոշակի շրջանակների պաշտպանությամբ: Հետևաբար գույքային իրավունքների պաշտպանությունը բացառություն չի դիտարկվում: Սակայն քաղաքացիական օրենսդրությունը ամրագրում է սեփականության իրավունքի պաշտպանության քաղաքացիաիրավական ինքնուրույն միջոցներ (Բարսեղյան): Օրենսդրությունը սեփականության պաշտպանության միջոց է դիտարկում իրային, պարտավորաիրավական հայցերը, որոնցով ապահովում է խախտված իրավունքների վերականգնումը, իրավունքը խախտող գործողությունների վերացումը, սեփականատիրոջ իրավունքների ճանաչումը:

Հարց է առաջանում՝ արդյոք օրենսդրության ամրագրված պաշտպանության եղանակները դիտվում են ինքնապաշտպանության շրջանակներում, թե՞ դրանք «առավել բարձր» իրավական երաշխիքներ են:

Այսպես՝ վիճակագիտն ու նեգատոր հայցերի շրջանակներում իրավունքների ինքնապաշտպանությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է իրավունքների

ինքնապաշտպանությունը դիտարկել լայն իմաստով: Իրավական երևույթների (վինդիկացիոն ու նեգատոր հայցեր) անվանումն իսկ հուշում է պետական ատյաններին դիմելու հանգամանքը՝ դատական ատյան հայց ներկայացնելու միջոցով:

Իրավագետներ Ռյասենցովը և Կռասավչիկովը իրավունքների ինքնապաշտպանության հետ զուգահեռ ուսումնասիրել են նաև հայցային տեսակերը իրավունքների և գտել են իրավունքների ինքնապաշտպանության հետ համընկնման ակնհայտ հանգամանքներ, որոնք և հիմք են ծառայել տեսաբանների համար պնդելու, որ հայցերի՝ վերը թվարկված տեսակները ինքնապաշտպանության միջոցներ են (Красавчиков 395-408):

Սեփականության իրավունքի պաշտպանության ձևերը և իրավունքների ինքնապաշտպանությունը

Քաղաքացիական իրավունքում գերակշռում է մոտեցումը, որ սեփականության իրավունքի պաշտպանության եղանակները քաղաքացիաիրավական Նորմերի համալիր ամբողջությունն են, որոնք ապահովում են սեփականության իրավունքի անխոչընդոտ իրացումը՝ ի նպաստ սեփականատիրոջ ու հանրության (Серегина 13-15): Առաջնորդվելով ընդունված մոտեցմամբ՝ կարող ենք առաձևացնել քաղաքացիական իրավանորմեր, որոնք ուղղված են ապահովելու սեփականության իրավունքի պաշտպանությունը: Ըստ այդմ էլ դրանք կարող ենք համարել սեփականության իրավունքի պաշտպանության եղանակներ:

- Իրավանորմեր (պաշտպանության միջոցներ), որոնք ուղղված են սեփականության իրավունքի ճանաչմանը:
- Իրավանորմեր (պաշտպանության միջոցներ), որոնք ուղղված են դադարեցնելու ուրիշի ապօրինի տիրապետությունը կամ ներգործությունը:
- Իրավանորմեր (պաշտպանության միջոցներ), որոնք ուղղված են վերականգնելու սեփականատիրոջը պատճառված վնասը:

Դասակարգված պաշտպանության բոլոր միջոցներն ունեն միևնույն նպատակը՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը, սակայն իրականացվում են իրավական տարբեր ձևերով: Ընտրված ցանկացած միջոց պետք է լինի համահունչ իրավունքների ինքնապաշտպանության իրավական եռայանը, այն է՝ իրականացվի իրավասու սուբյեկտի կողմից, առանց պետական մարմինների միջամտության: Այսինքն՝ իրավունքների ինքնապաշտպանության եռայան տարրալուծումը բացառելու համար այն անհրաժեշտ է դիտարկել դրա նեղ իմաստով:

Հայաստանի Հանրապետության Նախադեպային պրակտիկան վկայում է, որ սեփականության իրավունքի պաշտպանության առավել տարածված եղանակները վինդիկացիոն ու նեգատոր հայցերն են: Վճռաբեկ դատարանն իր Նախադեպային որոշման շրջանակներում նշել է, որ ապօրինի տիրապետում առկա է ցանկացած պարագայում, երբ տիրապետումը հիմնված չէ օրենքի կամ պայմանագրի վրա (ՀՀ վճռաբեկ դատարան, ԵԿԴ/0274/02/14) (վինդիկացիոն հայցապահանջ): Մեկ այլ գործով դատարանն արձանագրել է, որ սեփականատերն օժտված է իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքներով և իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, որը կապված է այդ իրավունքների իրականացման հետ (ՀՀ վճռաբեկ դատարան, ՇԴ/1609/02/11) (նեգատոր հայցապահանջ):

Սակայն այս հանգամանքը բացառում է իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի կիրառումը դասական իմաստով, քանի որ պաշտպանության ապահովումը դրվում է պետական մարմինների՝ հայցի դեպքում դատական իշխանության վրա: Այս հանգամանքը վերահաստատում է նաև վճռաբեկ դատարանը: Նախադեպային մեկ այլ որոշմամբ անդրադառնալով հայցի ինստիտուտին՝ որպես նյութական ու

դատավարական ինստիտուտի, դատարանն արձանագրել է, որ հայցի իրավունքի դատավարական կողմը ենթադրում է դատարան դիմելու իրավունքը, իսկ նյութափրավական կողմը՝ օրինական ու հիմնավորված հայցապահանջների բավարարում ստանալու իրավունքը (ՀՀ վճռաբեկ դատարան, *ԼԴ1/0030/02/10*):

Մասնավորապես ուրիշի ապօրինի տիրապետումից իր գույքը հետ պահանջելու մասին վճռաբեկ դատարանի որոշումներում հստակ խոսվում է նաև ապացուցողական բեռի բաշխման վերաբերյալ: Այսինքն՝ նմանատիպ գործերի քննության ժամանակ հայցվորը պետք է ապացուցի, որ վեճի առարկա գույքը գտնվում է պատասխանողի տիրապետման տակ (ՀՀ վճռաբեկ դատարան, *ԿԴ1/0811/02/02/2010*): Վճռաբեկ դատարանը նաև անդրադարձել է ապօրինի տիրապետման հասկացությանը՝ մատնանշելով, որ ապօրինի է այն տիրապետումը, որն իրականացվում է առանց որևէ օրինական հիմքի (ՀՀ վճռաբեկ դատարան, *ՇԴ0613/02/10*):

Շատ հաճախ սեփականության հետ կապված պահանջների դեպքում հայցը ներկայացվում է երկու հիմնական պահանջների վերաբերյալ՝ նեգատոր/վինդիկացիոն պահանջ և վնասի հատուցում: Այս հանգամանքով պայմանավորված՝ վճռաբեկ դատարանի որոշումներից մեկում արտահայտած դիրքորոշման համաձայն՝ *Նեգատոր հայցը գույքի սեփականատիրոջ կողմից արտապայմանագրային հարաբերություններից բխող սեփականության իրավունքի պաշտպանության միջոց է, որն ուղղված է սեփականատիրոջ կողմից գույքի օգտագործման կամ տիրապետման իրավունքների իրացման խոչընդոտների վերացմանը* (ՀՀ վճռաբեկ դատարան, *ԵԿԴ/0502/02/13*):

Հետագայում վճռաբեկ դատարանը, հաստատելով իր դիրքորոշումը, արձանագրել է, որ նեգատոր հայցը սեփականության իրավունքի պաշտպանության միջոց է՝ ուղղված սեփականատիրոջ կողմից գույքի օգտագործման և/կամ փաստացի տիրապետման իրավունքների իրացման խոչընդոտների վերացմանը: Նեգատոր հայցի ներկայացման հնարավորությունն առաջանում է այն դեպքում, երբ գույքի սեփականատերը և երրորդ անձը վիճելի գույքի առնչությամբ չեն գտնվում պարտավորական հարաբերությունների մեջ, և երբ թույլ տրված իրավախախտումը չի հանգեցրել գույքի նկատմամբ սեփականության սուբյեկտիվ իրավունքի դադարման (ՀՀ վճռաբեկ դատարան, *ԿԴ3/0450/02/13*):

Ըստ էության, ներպետական դատական պրակտիկան հստակ ամրագրում է, որ հայցի, մասնավորապես նեգատոր ու վինդիկացիոն հայցերի ներկայացումը դատարան հանդիսանում է իրավունքի պաշտպանության միջոց:

Սակայն հարկ է նշել, որ վինդիկացիոն ու նեգատոր պահանջի իրավական հնարավորությունը, ամրագրված լինելով նյութափրավական նորմերի դաշտում, ուղղակիորեն չի ամրագրում այդ պահանջի ներկայացումը միայն դատական ատյաններին: Դրա մասին են վկայում Քաղաքացիական օրենսգրքի 16-րդ գլխում տեղ գտած դրույթները:

Անհերքելի է այն հանգամանքը, որ իրավունքի կրողը վինդիկացիոն ու նեգատոր հայցերի միջոցով պաշտպանում է իր տիրապետման, տնօրինման և/կամ օգտագործման իրավունքները: Հայցերի կիրառման դեպքում հետևությունները շատ ակնհայտ են: Անձն իր իրավունքների և օրինական շահերի խախտումը հայտնաբերելու դեպքում դիմում է իրավասու մարմիններին՝ իրավունքի խախտումը վերացնելու և իրավունքները վերականգնելու պահանջով: Ըստ էության, անձը միջնորդում է երրորդ անձանց՝ տվյալ դեպքում պետական իրավասու մարմիններին՝ իրավունքի պաշտպանության խնդրանքով: Վեր է կասկածից այն հանգամանքը, որ վինդիկացիոն ու նեգատոր հայցերը պաշտպանության միջոցներ են, սակայն դրանց ինքնապաշտպանության միջոց լինելու հանգամանքը իրավական գրականության մեջ վեճերի տեղիք է տալիս:

Իրավագետների շրջանում կարծիք կա, որ իրավունքների ինքնապաշտպանության դրսևորում պետք է իրավասու մարմինն դիմում ներկայացնելու արդյունքում առաջացած իրավական հետևանքը (Соколов 10-12): Մեր կողմից

իրականացված ուսումնասիրությունները հանգում են նրան, որ իրավունքների ինքնապաշտպանության քաղաքացիաիրավական ընկալման և ինստիտուտի օրենսդրական ամրագրման և գործնական կիրառության ապահովման համար այն անհրաժեշտ է դիտարկել նեղ իմաստով: Այլապես իրավունքների պաշտպանության դատական ու վարչական ձևերը կփաձուլվեն իրավունքների ինքնապաշտպանության հետ: Այդ ընկալումների շրջանակներում դատական ատյանին դիմելու հանգամանքը, մասնավորապես հայցի ներկայացումը չի կարող համարվել քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության միջոց:

Քաղաքացիաիրավական գրականության մեջ օգտագործվող վիճակագրություն ու նեգատոր պահանջներ հասկացությունները հիմնականում դիտարկվում են իրավունքների պաշտպանության դատական ձևի շրջանակներում: Սակայն իրավատիրոջ կողմից մինչև դատական պաշտպանության ձևի ընտրությունը հնարավոր է միակողմանի գործողությունների իրականացում, որոնք ուղղված են խախտման վերացմանը: Ենթադրյալ իրավախախտին ներկայացված պահանջը իրավական տիրույթում դիտարկելու համար առաջանում է անհրաժեշտություն իրավական բնութագրիչ տալ այդ փաստացի ու միակողմանի կատարվող գործողությանը:

Իրավասու անձը դատական պաշտպանության դիմում է միայն այն բանից հետո, երբ սպառված կամ անարդյունավետ է համարվում փաստացի ձեռնարկված գործողությունները, այն է՝ ինքնապաշտպանության միջոցով իրավական բարենպաստ արդյունքի համնելու հանգամանքը (Метревила 5-9): Այնուամենայնիվ, ուրիշի ապօրինի տիրապետումից իրավատիրոջ գույքը հետ պահանջելու և սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը տիրապետումից զրկելու հետ չկապված խախտումների դեպքում իրավասու անձի պահանջ ներկայացնելու իրավական հնարավորությունն է հանդիսանում իրավական երաշխիքը: Օրենսդիրը չի սահմանափակում իրավատիրոջը՝ դիմելու դատարան: Այն ամրագրում է իրավատիրոջ օրենսդրորեն թույլատրելի հնարավորությունը պահանջ ձևակերպելու:

Քաղաքացիաիրավական գրականության մեջ պահանջի ներկայացումը սուբյեկտային տեսանկյունից սահմանափակված չէ: Այդ պահանջի ներկայացումը կարող է իրականացվել ինչպես միջնորդավորված (պետական իրավասու մարմիններին դիմելով, այդ թվում՝ դատական ատյաններ), այնպես էլ ուղղակի (իրավատիրոջ կողմից իրականացվող միակողմանի ու փաստացի գործողություններով): Եթե օրենսդրորեն ամրագրված հնարավորությունները նյութաիրավական դաշտում հնարավորություն են տալիս հանդես գալու որպես հայցվոր, ապա դատավարական գործընթացների արդյունքում է իրավահարաբերությունը տեղափոխվում դատական ատյանների տիրույթ (Демидюк 9-11): Այլ կերպ ասած՝ հայցվոր կամ իրավունքի պահանջատեր լինելու և պահանջի ներկայացման համար փաստացի գործողությունների ձեռնարկումը ևս իրավական հնարավորություն է, որը կարող է իրացվել իրավասու անձի հայեցողությամբ:

Հետևաբար հանգում ենք այն եզրակացության, որ իրավագոր անձի կողմից ապօրինի տիրապետումից իրավատիրոջ գույքը հետ պահանջելու և սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը տիրապետումից զրկելու հետ չկապված խախտումների վերացման պահանջ կարող է ներկայացվել նաև իրավախախտին: Այդ պահանջի ներկայացումը դրսևորվում է միակողմանի գործողություններով, որոնք կարող են արտահայտվել փաստացի ձեռնարկվող գործողություններով:

Սեփականության իրավունքի պաշտպանական համակարգում ինքնապաշտպանության իրավական հնարավորությունը կիրառելի է ոչ միայն հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսդրության ընդհանուր դրույթներում զետեղված իրավունքների ինքնապաշտպանության հանգամանքը, այլև հատուկ նորմերով: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր օրինական տիրապետման ներքո գտնվող հողամասը, շենքը, շինությունը և այլ

անշարժ գույքի տարածք այլոց մուտք գործելուց զերծ պահելու իրավունք: Այսինքն՝ Քաղաքացիական օրենսգիրքն ուղղակի իրավական հնարավորություն է սահմանում իրավասու սուբյեկտին (հողամասի, շենքի, շինության և այլ անշարժ գույքի օրինական տիրապետող) դիմելու իրավունքների ինքնապաշտպանության ենթադրյալ իրավախախտի նկատմամբ (երրորդ անձ, ով ցանկանում է մուտք գործել հողամասի, շենքի, շինության և այլ անշարժ գույքի տարածք): Ըստ Եուլթյան, օրենսդիրը, ոչ իրավաչափ համարելով ներխուժումը, դրա դեմ տալիս է նաև ինքնապաշտպանության հնարավորություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդրական դրույթներում հստակեցում չկա իրավունքների ինքնապաշտպանության միջոցների ու հնարքների, այն է՝ թույլատրելի գործողությունների բնույթի վերաբերյալ, նշանակում է՝ դրանք կարող են լինել նաև փաստացի իրականացվող գործողություններ, որոնք զերծ կլինեն իրավական հետևանքից (օրինակ՝ վնասի պատճառում, իրավունքի ոտնահարում): Ստացվում է, որ սեփականության իրավունքի պաշտպանության համակարգում ինքնապաշտպանության կիրառումը ունի երկու հիմք:

1. Փաստացի կատարվող գործողություններ, որոնք ունեն իրավական սահմաններ՝ հաշվի առնելով իրավունքների ինքնապաշտպանության ընդհանուր կարգավորումները:

2. Իրավական ինստիտուտների շրջանակներում ամրագրված իրավական հնարավորություններ, որոնք հանդիսանում են իրավունքների ինքնապաշտպանության տեղայնացված դրսևորումներ (օրինակ՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդված):

Ավելին՝ ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով օրինական տիրապետողն իրավունք ունի խելամիտ պաշտպանության միջոցներ ձեռնարկելու, այդ թվում՝ ներխուժման հետևանքին համարժեք ուժ գործադրելու: Օրինական տիրապետողն իրավունք ունի հեռացնելու իր հողամասում, շենքում, շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշ շարժական գույքը:

Եզրակացություն

Ըստ Եուլթյան, փաստացի ձեռնարկվող գործողությունների նկատմամբ կտարածվի իրավունքների ինքնապաշտպանության համաչափության ու իրավաչափության սահմանները: Ո՛չ քաղաքացիաիրավական տեսությունը, ո՛չ օրենսդիրը չեն բացառում իրավական հնարավորությունը, որ գույքային իրավունքների, այդ թվում՝ սեփականության իրավունքի պաշտպանության ընթացքում կարող են տեղի ունենալ միակողմանի փաստացի գործողություններ, որոնք ուղղված կլինեն իրավունքի խախտումը վերացնելուն (Закошанский 15-20): Դրանք իրենց հատկանիշներով ու նպատակներով ամբողջությամբ համահունչ են քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտին և դրա միջոցներին (Кондратенко и Полушен 25-27):

Սեփականության իրավունքի պաշտպանության իրականացումն առնվազն իրավական երկու հիմքերով կարող է իրականացվել իրավունքների ինքնապաշտպանության միջոցով՝ լինելով ամրագրված ինչպես օրենսդրական ընդհանուր, այնպես էլ հատուկ մասերում: Ըստ Եուլթյան, «Սեփականության և այլ գույքային իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ գլխում նախատեսված են իրավունքների ինքնապաշտպանության առնվազն երկու միջոցներ, որոնք ամրագրված են Քաղաքացիական օրենսգրքի 274-րդ և 277-րդ հոդվածներում: Օրենսդիրը չի առաջնորդվել իրավունքների պաշտպանության համար նախընտրելի հնարավոր երկու մոտեցումներից որևիցե մեկով՝ պաշտպանական համակարգի օրենսդրությունը երաշխավորելով ինչպես օրենսդրության ընդհանուր, այնպես էլ հատուկ դրույթներով: Չմանրամասնելով պաշտպանական կոնկրետ միջոցների նկատմամբ տարածվող սահմանափակումների մասին՝ օրենսդիրը իրավական

հնարավորություն է ընձեռել իրավագործ անձին կամարտահայտությամբ օրինական վարքագիծ ընտրելու: Կարելի է եզրակացնել, որ թույլատրելի միջոցների կիրառության իրավաչափության ու համաչափության գնահատումն իրականացվում է ձեռնարկված միջոցի բնույթով պայմանավորված, որը շատ հաճախ հեղիեղուկ կարգավորումների ու օրենսդրական բացերի հետևանքով չի արժանանում իրավական գնահատականի: Հետևաբար ձեռնարկված գործողության էության ու կարգավիճակի ամրագրումը օրենսդրական մակարդակում հնարավորություն կընձեռնի իրավունքի ինստիտուտի գործնական կիրառության և իրավունքների՝ օրենսդրությամբ ամրագրված երաշխիքների կենսագործունեության համար:

Օգտագործված գրականություն

1. Բարսեղյան, Տարիել. *Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք*. Դասագիրք, առաջին մաս. Երևան, 2009:
2. ՀՀ վճռաբեկ դատարան. *ԵԿԴ/0274/02/14 քաղաքացիական գործով որոշում*. 2015:
3. ---. *ԵԿԴ/0502/02/13 քաղաքացիական գործով որոշում*. 2014:
4. ---. *ԼԴ1/0030/02/10 քաղաքացիական գործով որոշում*. 2014:
5. ---. *ԿԴ1/0811/02/02/2010 քաղաքացիական գործով որոշում*. 2011:
6. ---. *ԿԴ3/0450/02/13 քաղաքացիական գործով որոշում*. 2014:
7. ---. *ՇԴ/1609/02/11 քաղաքացիական գործով որոշում*. 2014:
8. ---. *ՇԴ/0613/02/10 քաղաքացիական գործով որոշում*. 2011:
9. ՀՀ Ազգային ժողով. *ՀՀ քաղաքացիական օրենսգիրք*. 05.05.1998:
10. Белова, Дина. «Проблемы истребования имущества из чужого незаконного владения». *Московская государственная юридическая академия*. Серия «Право» N 2 (8), Москва, 2010.
11. Демидюк, Виктор. *Правовая природа в индикационных и негаторных исков в деятельности федеральных государственных бюджетных образовательных учреждений высшего профессионального образования*. 2015. <https://cyberleninka.ru/article/n/pravovaya-priroda-vindikatsionnyh-i-negatornyh-iskov-v-deyatelnosti-federalnyh-gosudarstvennyh-byudzhethnyh-obrazovatelnyh/viewer>. Доступно: 18.06.2021.
12. Закошанский, Михаил. «Эволюция виндикационного спора». *Право*. Журнал Высшей школы экономики, 3, 2015.
13. Кондратенко, Зарина и Полушен, Дмитрий. «Негаторный иск в Российском гражданском праве». *Вестник Марийского государственного университета*. Серия «Исторические науки. Юридические науки». 2019. <https://cyberleninka.ru/article/n/negatornyu-isk-v-rossijskom-grazhdanskom-prave/viewer>. Доступно: 18.06.2021.
14. Красавчиков, Октябрь. *Советское гражданское право*. 2-ой том, 1985.
15. Метревели, Милена. «Вещи, определенные родовым признаком, как предмет виндикационного иска: теория и практика». *Отечественная юриспруденция*, 10 (12), 2016.
16. Серегина, Ольга. *Понятие защиты права собственности в общей системе способов защиты права*. <https://cyberleninka.ru/article/n/ponyatie-zaschity-prava-sobstvennosti-v-obschey-sisteme-sposobov-zaschity-prava>. Доступно: 18.06.2021.
17. Соколов Евгений. *Самозащита и ее способы в системе защиты гражданских прав*. 2020. <https://moluch.ru/archive/127/35404/>. Доступно: 18.06.2021.

Works Cited

1. Barseghyan, Taniel. Hayastani Hanrapetut'yan qaghaqaciakan iravunq. Dasagirq, ar'ajin mas. [Civil Law of the Republic of Armenia: textbook, first part] Yerevan [Yerevan], 2009:
2. HH vtwr'abek dataran. EKD/0274/02/14 qaghaqaciakan gorc'ov voroshum. 2015 [The Court of Cassation of the Republic of Armenia./0274/02/14 civil case decision: 2015].
3. EKD/0502/02/13 qaghaqaciakan gorc'ov voroshum [Civil case decision]. 2014:
4. ---. LD1/0030/02/10 qaghaqaciakan gorc'ov voroshum [Civil Case Decision]. 2014:
5. ---. KD1/0811/02/02/2010 qaghaqaciakan gorc'ov voroshum [Civil Case Decision]. 2011:
6. ---. KD3/0450/02/13 qaghaqaciakan gorc'ov voroshum [Civil Case Decision]. 2014:
7. ---. ShD/1609/02/11 qaghaqaciakan gorc'ov voroshum [Civil Case Decision]. 2014:
8. ---. ShD/0613/02/10 qaghaqaciakan gorc'ov voroshum [Civil Case Decision]. 2011:
9. HH Azgayin Jhoghov. HH qaghaqaciakan o'rensgirq. [The National Assembly of the Republic of Armenia. The Civil Code of the Republic of Armenia] 05.05.1998:
10. Belova Dina. Problemy istrebovaniya imushhestva iz chuzhogo nezakonnogo vladenija [Problems of Reclaiming Property from Someone Else's Illegal Possession]. Moskovskaja gosudarstvennaja juridicheskaja akademija. Serija «Pravo» N 2 (8) [Moscow State Law Academy. Pravo Series No. 2 (8)], Moskva, 2010 [Moscow, 2010].
11. Demidjuk, Viktor. Pravovaja priroda v indikacionnyh i negatornyh iskov v dejatel'nosti federal'nyh gosudarstvennyh bjudzhetnyh obrazovatel'nyh uchrezhdenij vysshego professional'nogo obrazovanija [The Legal Nature of Indicative and Negatory Claims in The Activities of Federal State Budgetary Educational Institutions of Higher Professional Education]. 2015. <https://cyberleninka.ru/article/n/pravovaya-priroda-vindikatsionnyh-i-negatornyh-iskov-v-deyatelnosti-federalnyh-gosudarstvennyh-byudzhetnyh-obrazovatelnyh/viewer>. Retrieved on 18.06.2021.
12. Zakoshanskiĭ, Mihail. "Jevoljucija vindikacionnogo spora." ["The evolution of the vindication dispute"] Pravo. Zhurnal Vysshej shkoly jekonomiki, 3 [Right. Journal of the Higher School of Economics, 3]. 2015.
13. Kondratenko, Zarina i Polushen, Dmitrij. Negatornyj isk v rossijskom grazhdanskom prave [Negatory claim in Russian civil law]. Vestnik Marijskogo gosudarstvennogo universiteta. Serija «Istoricheskie nauki. Juridicheskie nauki» [The series " Historical Sciences. Legal sciences"]. 2019. <https://cyberleninka.ru/article/n/negatornyy-isk-v-rossijskom-grazhdanskom-prave/viewer>. Retrieved on 18.06.2021.
14. Krasavchikov, Oktjabr'. Sovetskoe grazhdanskoe pravo. 2-oj tom [Soviet civil law. 2nd volume], 1985.
15. Metreveli, Milena. "Veshhi, opredelennye rodovym priznakom, kak predmet vindikacionnogo iska: teorija i praktika." ["Things defined by a generic sign as the subject of a vindication claim: theory and practice"] Otechestvennaja jurisprudencija [Domestic Jurisprudence], 10 (12). 2016.
16. Seregina, Ol'ga. Ponjatie zashhity prava sobstvennosti v obshhej sisteme sposobov zashhity prava [The concept of protection of property rights in the general system of methods of protection of rights]. <https://cyberleninka.ru/article/n/ponyatje-zaschity-prava-sobstvennosti-v-obschey-sisteme-sposobov-zaschity-prava>. Retrieved on 18.06.2021.
17. Sokolov Evgenij. Samozashhita i ee sposoby v sisteme zashhity grazhdanskih prav [Self-defense and its methods in the system of civil rights protection.]. <https://moluch.ru/archive/127/35404/>. Retrieved on 18.06.2021.

THE CORRELATION OF THE PROTECTION OF PROPERTY RIGHTS AND SELF-PROTECTION OF RIGHTS

ANNA MKRTCHYAN

*National Assembly of the Republic of Armenia, Deputy;
Yerevan State University, Law Faculty,
Chair of Civil Law, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

Main aim of the article is to analyze the correlation of the institutes of protection of property rights and self-protection of rights.

The natural course of civil rights is also due to the fact that this right lies in the sphere of ownership, control and predictability of the rightholder. The legal possibility of self-defense in the system of property rights protection is applicable not only on the basis of the circumstances of self-defense of the rights enshrined in the general provisions of civil legislation, but also in accordance with special norms. The chapter entitled "Protection of property and other property rights" essentially provides for at least two measures of self-defense of the rights enshrined in articles 274 and 277 of the Civil Code. It is necessary to clearly coordinate self-defense measures and the scope of their application in the RA Civil Code, otherwise there are problems with the practical application of self-defense rights. There are no clear legislative delimiters regarding the system of protection of rights. Are the defense guarantees of individual legal institutions part of the system of protection of private law? Can the right holders of rights protected by private law institutions that have a separate system of protection use general forms of legal protection, for example, self-defense of rights?

In the course of the study, a comparative legal method was applied.

We have come to the conclusion that the protection of property rights on at least two legal grounds can be carried out through self-defense of rights, being enshrined in both general legislative and special parts.

Key words: *property right, means of protection, protection of rights, self-defense in the broad sense, the right of claim, vindication claim, negatory claim.*

ВЗАИМОСВЯЗЬ МЕЖДУ ЗАЩИТОЙ ПРАВ СОБСТВЕННОСТИ И САМОЗАЩИТОЙ ПРАВА

АННА МКРТЧЯН

*депутат Национального собрания Республики Армения,
аспирант кафедры гражданского права
юридического факультета ЕГУ,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является изучение и анализ соотношения прав защиты собственности и прав самозащиты. Осуществление гражданских прав обуславливается сферами надзора и предсказуемости данного права. В системе права защиты собственности применяются не только общие нормы гражданского кодекса, но также особые нормы. Примером общих норм является самозащита права. Особые нормы закреплены в 274-ой и 277-ой статьях ГК.

Принято считать, что способы защиты собственности – это совокупность гражданско-правовых норм, которые обеспечивают реализацию прав собственности. Но вопросы об общей системе защиты прав, самозащиты прав и способы защиты собственности остаются предметом размышлений. В статье изучены правовые аспекты различных способов защиты права, в том числе самозащита права и способы защиты собственности. Считаем, что самозащита в широком смысле содержит и иски по защите прав собственности. Надо отметить, что в Гражданском кодексе РА говорится о праве требования, а не об иске. Мы пришли к выводу о том, что осуществление права защиты собственности может происходить, как минимум, двумя правовыми способами: посредством самозащиты путем закрепления как в общей части закона, так и в особой.

Ключевые слова: *способы защиты собственности, общая система защиты прав, самозащита в широком смысле, права требования, способы защиты права, гражданский кодекс РА.*

**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES,
ВОСТОКОВЕДЕНИЕ**



**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԿԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ***

ՅՏԴ 327 (536.4)

DOI: 10.52063/25792652-2021.2-149

ՔՆԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱՎ Արևելագիտության ինստիտուտի հայցորդ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
kn.sargsyan.yvu@gmail.com

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Կատարի արտաքին քաղաքականության իսլամական ուղղությունը և դրա գործիքակազմը: Ուսումնասիրության խնդիրն է՝ վեր հանել իսլամական կրոնաքաղաքական ուժերի, մասնավորապես «Մուսուլման եղբայրներ» շարժման հետ Կատարի համագործակցության փոխակերպումները, հիմնական շարժառիթները, միտումներն ու հեռանկարը «արաբական գարնանը» նախորդած և հաջորդած ժամանակահատվածում:

Հոդվածի աղբյուրագիտական հիմքում ընկած է պաշտոնական փաստաթղթերի, պաշտոնական հայտարարությունների, միջազգային առաջատար գիտահետազոտական ու տեղեկատվական կենտրոնների ու միջազգային լրահոսի ուսումնասիրությունը:

Հոդվածում կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանում առաջնորդության ձգտող Կատարի համար «Մուսուլման եղբայրները» դարձան ակդեցության լրջագույն գործիք՝ ծառայելով նաև թուրք-կատարական տանդեմի օրակարգին:

Հիմնաբառեր՝ Կատար, Թուրքիա, «Մուսուլման եղբայրներ», «արաբական գարուն», աշխարհաքաղաքականություն, Մերձավոր Արևելք, իսլամիզմ, փափուկ ուժ, դերակատար, անվտանգություն:

Ներածություն

1980-ական թվականների սահմանագծին իսլամը ենթարկվեց հախուռն ու լայնածավալ քաղաքականացման՝ այդուհետ որոշիչ դեր խաղալով մուսուլմանական երկրների հասարակական-քաղաքական կյանքում, ինչպես նաև միջազգային հարաբերություններում: Այն սկսեց լայնորեն օգտագործվել որպես ազդու լծակ իսլամական պետությունների դիվանագիտական ու արտաքին քաղաքականության բնագավառում (Բայբուրդյան 14):

Նմանօրինակ երկրների շարքում առանձնանում է Կատարը, որը, օգտագործելով «քաղաքական իսլամը» որպես իր արտաքին քաղաքականության ռազմավարության ու «փափուկ ուժի» գործիք, կարողացավ դառնալ ազդեցիկ դերակատար արաբական աշխարհում ու միջազգային հարթակում:

* Հոդվածը ներկայացվել է 11.06.2021թ., գրախոսվել՝ 18.06.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:

Արտաքին վտանգների չեզոքացմանն ուղղված ջանքերին զուգահեռ՝ Կատարը մշտապես փորձում էր տարածաշրջանում առաջատար դիրքեր զբաղեցնելուն ուղղված ջանքերը: Այդ նպատակին լավագույնս ծառայեցին «Մուսուլման եղբայրներ» շարժումն ու դրան հարող իսլամիստական ուժերը, օգտագործվեցին հնարավոր բոլոր խողովակներն ու միջոցները նման ուժերի ներգրավման ու օգտագործման համար: Կատարի դաշինքը իսլամիզմի հետ շոշափելի դեր խաղաց մերձավորարևելյան տարածաշրջանում հակասությունների ու հակամարտությունների օջախների ձևավորման ու դրանց հետագա ընթացքի վրա: Դոհան կարողացավ շահավետ օգտագործել իսլամիստների հետ ունեցած կապերը իր իսկ պետության օգտին:

Կատարը հարաբերություններ հաստատեց տարածաշրջանում տարբեր ուժային կենտրոնների հետ՝ պայմանավորված քաղաքական ու տնտեսական շահերով: Նախ Կատարը ձգտում էր նվազեցնել կախվածությունը Սաուդյան Արաբիայից և վարել հնարավորինս անկախ արտաքին քաղաքականություն, ինչպես նաև տարածաշրջանային շփումների ու կապերի միջոցով պետության համար ստեղծել առաջադեմ ու ազդեցիկ դերակատարի նոր կերպար (Roberts 2): Մասնագիտական առանձին տեսակետների համաձայն՝ Կատարի շփումները իսլամիստների հետ նպատակ ունեին հակազդելու Կատարում կրոնական ծայրահեղականության ու ահաբեկչության տարածմանը, որի վտանգը կար: Հատկանշական է, որ վերջին շրջանում Կատարը զգալի ջանքեր է գործադրել Արևմուտքում ևս իսլամի քաղաքականացման տարբեր դրսևորումների ի հայտ գալու ուղղությամբ ("Qatar exports"): Կատարի նախկին վարչապետ Համադ բեն Ջասսեմ բեն Ջաբր Ալ Թանին «Financial Times»-ին տված հարցազրույցներից մեկում նշել է, որ Արևմուտքը պետք է ընդունի իսլամական վերածնունդի փաստը ("West should"):

Հարկ է նկատել, որ միջազգային հարաբերությունների արդի համակարգում Կատարի արտաքին քաղաքականության ուսումնասիրությունը շատ հետաքրքիր ու կարևոր է ՀՀ ազգային հետաքրքրությունների տեսանկյունից: Վերջին տասնամյակներից Կատարը դարձել է աշխարհատնտեսական ու աշխարհաքաղաքական հզոր խաղացող, որի հետ ՀՀ-ն նույնպես պետք է ձգտի ձևավորել սերտ համագործակցություն: Մյուս կողմից՝ Կատարի ռազմավարական համագործակցությունը Թուրքիայի հետ կերպափոխել է մերձավորարևելյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրողությունները: Իր հերթին Կատարի հարաճուն ու բազմակողմ համագործակցությունն Ադրբեջանի հետ, թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից հովանավորվող կատարական առանձին վերլուծական կենտրոնների ներգրավվածությունը հակահայկական ուղղվածությամբ ուսումնասիրություններում ձևավորում են որոշակի հրամայական՝ ուշադրության թիրախում պահելու Կատարը:

«Մուսուլման եղբայրները»՝ կատարական «փափուկի ուժի» գործիք

Կատարը Սաուդյան Արաբիայից հետո երկրորդ վահաբական կողմնորոշում ունեցող պետությունն է, սակայն երկրում վահաբական կրոնական ընտրանու դերը հասարակական-քաղաքական կյանքում չունի այնպիսի նշանակություն, ինչպես Սաուդյան Արաբիայում, ինչի մասին է վկայում, օրինակ, Կատարում Մեծ Մուֆթիի¹

¹ Մուֆթին կրոնաիրավական հարցերով եզրահանգում (ֆաթվա) տվող անձ է. իսկ Մեծ Մուֆթին պետության մուսուլման կրոնագետ-իրավաբանների ղեկավարն է, ով ունի մեծ ուժ և ազդեցություն երկրում: Մեծ Մուֆթիի ինստիտուտն առաջին անգամ ներդրվել է Օսմանյան կայսրությունում 16-րդ դարի վերջին, կայսրությունում Մեծ Մուֆթին հանդիսանում էր սուլթանի կրոնաիրավական հարցերով խորհրդականը, նա ապահովում էր կառավարման օրինականությունը կրոնական տեսանկյունից, ինչպես նաև նշանակում էր դատավորներ:

ինստիտուտի բացակայությունը: Կատարական վահաբականությունը աչքի չի ընկնում այնպիսի արմատական կեցվածքով, ինչպես Սաուդյան Արաբիայում է: Ի տարբերություն Սաուդյան Արաբիայի՝ Կատարի պետությունը չի ունեցել կրոնական ոստիկանություն, որը կարող է պարտադրել որոշակի կանոններ հասարակությանը: Պետություն-կրոն հարաբերություններում առկա խիստ տարբերությունները կապված են նաև երկու երկրների զարգացման ու կայացման պատմական ընթացքի հետ: Պետական համակարգի տեսանկյունից Կատարը սահմանադրական միապետություն է, որտեղ օրենսդրական մարմնի նշանակություն ունեցող Շուրայի խորհրդում էմիրի կողմից նշանակվում են նաև հոգևոր դասի ներկայացուցիչներ: Վահաբական ուլաման լիազորված է իրականացնել միայն կրոնա-ծիսական գործառույթներ և հեռու է ներթափառական հարցերին ու արտաքին քաղաքականությանը միջամտելուց: Կատարում հատկանշական էր ուլամայի շրջանում ազգային դասի բացակայությունը: Կատարի ամենաազդեցիկ կրոնագետ-իրավագետներից են Աբդալլահ բին Չեյդ բին Մահմուդը, Աբդալլահ ալ-Անսարին և Յուսուֆ ալ-Կարադաուլին, որոնցից և ոչ մեկը ծագումով Կատարից չեն, առաջին երկուսը Սաուդյան Արաբիայից են, իսկ ալ-Կարադաուլին՝ Եգիպտոսից (Baskan and Wright 2-16): Ալ-Կարադաուլին 1961 թ.-ին հաստատվեց Կատարում՝ Նասերի կառավարման օրոք իր ազատագրված երկրորդ ժամանակահատվածից հետո որպես տարագիր: 1969 թ.-ին ալ-Կարադաուլին ընդունեց Կատարի քաղաքացիություն Ահմադ բեն Ալի Ալ Թանիի կողմից: Կատարի թագավորական ընտանիքն առանցքային դեր ունեցավ ալ-Կարադաուլիի հեղինակության բարձրացման գործում, 1977 թ.-ին նրան վստահվեց Կատարի համալսարանի Շարիաթի ֆակուլտետի դեկանի պաշտոնը (Warren 10): Հատկանշական է, որ այստեղ դասախոսական կազմի բոլոր անդամներն օտարերկրացիներ էին, այդ թվում՝ Եգիպտական «Մուսուլման եղբայրներից» (Baskan and Wright 5):

Չնայած «Մուսուլման եղբայրները» 1960-ականներին դեռևս Կատարի համար գործիք չէին արտաքին քաղաքականության մեջ, և Կատարի արտաքին քաղաքականության հավակնոտ օրակարգերն էլ դեռ չէին բյուրեղացել, այնուամենայնիվ սկսած 1960-ականներից Կատարի իշխող ընտանիքը որոշեց աջակցել շարժմանը: Եգիպտոսում նախագահ Գամալ Աբդել Նասերի օրոք «Մուսուլման եղբայրների» դեմ իրականացված ճնշումներից ու արտաթուլմներից հետո կազմակերպության շատուշատ առաջնորդներ, ինչպես նաև անդամներ հաստատվեցին Կատարում: Այստեղ հանգրվանելու առաջին տարիներին կազմակերպության անդամները հետևում էին իշխող ընտանիքի ուղղորդումներին և որևէ կերպ չէին միջամտում երկրի գործերին: Չնայած այն հանգամանքին, որ այդ ժամանակ իսլամիստները դեռևս լուրջ ազդեցություն չունեին արաբական աշխարհում, քանի որ առավել ժողովրդականություն էին վայելում նասերիզմի, արաբական ազգայնականության և առնչվող տարբեր գաղափարախոսությունները, «Մուսուլման եղբայրները» սկսել էին ընդլայնվել ոչ միայն արաբական իսլամական միջավայրում, այլև դրա սահմաններից դուրս: Կատարում հայտնված եղբայրների մեջ կային նաև իրենց գործին գիտակ ոլորտային մասնագետներ: Կատարում նրանց ռեսուրսները շատ դեպքերում լավագույնս օգտագործվեցին տարբեր ոլորտներում, ինչպես օրինակ՝ շարիաթական ու կրոնական կրթության, իսլամի ու կրոնական թեմաներով դասագրքերի, մեթոդական ձեռնարկների պատրաստման ոլորտում և այլն (Roberts 84-85)¹:

Օսմանյան կայսրության փլուզումից հետո իսլամական աշխարհի մի շարք երկրներում ընդունվեց Մեծ Մուֆթիի ինստիտուտը՝ որպես կրոնական աջակցություն պետական քաղաքականությանը:

¹ Կատարն ունի աշխարհիկ կրթական համակարգ, սակայն մինչև ժամանակակից կրթական համակարգի ներդրումը երկրում գործում էին փոքր մադրասաներ, որտեղ ուսուցիչների շրջանում գերակշռող էր Եգիպտական տարրը: Նրանց թվում էին նաև «Մուսուլման եղբայրների» ներկայացուցիչներ, ովքեր մեծապես նպաստել են Կատարում կրթական համակարգի կայացմանը:

«Մուսուլման եղբայրների» ու Կատարի միջև հարաբերությունները ինստիտուցիոնալ հիմքերի վրա դրվեցին եգիպտացի իմամ Յուսուֆ ալ-Կարադաուլիի շնորհիվ, որ համարվում էր «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության ոչ պաշտոնական խոսնակը: Կատարի թագավորական ընտանիքն առանցքային դեր ունեցավ այդ հարցում: 2004 թ.-ին Դոհայում ստեղծվեց մուսուլման կրոնազետ-իրավագետների միջազգային միությունը, որի նախագահ դարձավ հենց ալ-Կարադաուլին: Իսլամական իրավաբանական դպրոցների և ուղղությունների հեղինակավոր գործիչների միաձայն համաձայնությամբ (իջմա) ընդունված այս որոշումը մատնանշեց ալ-Կարադաուլիի գերակայության ճանաչումը: Ալ-Կարադաուլիի տեսակետները, այդ թվում՝ ֆաթվաները¹ առանձնահատուկ ու անբեկանելի նշանակություն ունեին ուղղափառ իսլամական առանձին համայնքների համար (Սարգսյան 308-309):

Կատարը դարձավ «Մուսուլման եղբայրների» համար արաբական աշխարհի և այլ երկրներ ներթափանցելու հարթակ, որի համար առաջին հերթին օգտագործվեց «ալ-Ջազիրա» հեռուստաընկերությունը: «Ալ-Ջազիրայի» միջոցով «Մուսուլման եղբայրները» քարոզչության հնարավորություն ստացան: Նրանք սկսեցին թափանցել ամենուր, բացի Կատարից (Dorsey 12) :

Կատարի իսլամիստական օրակարգը «արաբական գարնան» ընթացքում

«Արաբական գարնան» իրադարձությունների ժամանակ Կատարն ավելի աչքի ընկավ իր կրոնաթաղաթական օրակարգով: Դոհան մեծապես ներգրավված էր «արաբական գարնան» ապստամբությունների ու հեղափոխությունների հրահրման և դրանց տեղեկատվական հնչեղություն հաղորդելու հարցում (Սարգսյան 295): Դժվար է պատկերացնել, թե ինչպիսին կլիներ «արաբական գարնան» դեպքերի ընթացքը, եթե չլիներ «ալ-Ջազիրան»: «Արաբական գարնան» նախօրեին հեռուստակայանը, ինչպես և Կատարը ավելի քան պատրաստ էին: Թունիսում բողոքի ցույցերի բռնկումից և այնուհետև Եգիպտոսում տարածվելուց օրեր անց կայանը, չեղարկելով կանոնավոր հաղորդումները, լիովին տարվեց դեպքերի հեռարձակմամբ, որոնք աշխարհին փոխանցում էին «արաբական փողոցի» պահանջը՝ «Ժողովուրդը ցանկանում է վարչակարգի տապալումը»: Արաբական աշխարհում «ալ-Ջազիրայի» ազդեցության շնորհիվ Կատարը կարողացավ դառնալ զրոքալ քաղաքականության դերակատար (Hroub):

Եգիպտոսում Կատարն ամեն կերպ նպաստեց «Մուսուլման եղբայրների» հաղթանակին, ինչի մասին են վկայում բազմաթիվ հետազոտություններ: Դոհան ջանասիրաբար աջակցում էր Մուհամմադ Մուրսիի վարչակարգին, այդ թվում՝ ֆինանսապես ("Qatar Doubles"): Այդ շրջանում Դոհան միլիարդավոր ներդրումներ ու նվիրատվություններ կատարեց Եգիպտոսում²:

Սակայն Դոհայի աջակցությունը չէր սահմանափակվում միայն ֆինանսական օժանդակությամբ: Եգիպտական հեղափոխության դեպքերի ընթացքին մեծապես նպաստել է «ալ-Ջազիրան», քանի որ տեղեկատվական քարոզչությունը բացառիկ դեր

¹ Ֆաթվան կրոնական կամ քաղաքացիական տարբեր իրողությունների հետ կապված իսլամական տեսակետը ներկայացնող եզրահանգում է, որն ունի խորհրդակցական բնույթ և կատարման համար պարտադիր չէ (Տոնիկյան 16):

² 2011-2012 թթ. ընթացքում Կատարը եգիպտական կառավարությանը նվիրաբերեց ընդհանուր առմամբ 500 մլն դոլար դրամաշնորհների տեսքով, իսկ 2012 թ. ամռանը, երբ «Մուսուլման եղբայրների» կողմից առաջարկված Մուհամեդ Մուրսիի հաղթեց նախագահական ընտրություններում, Դոհան Եգիպտոսին տրամադրեց 5 մլրդ դոլար և խոստացավ լրացուցիչ ներդրումներ կատարել՝ հասցնելով դրանք 18 մլրդ դոլարի:

ունեցավ թե՛ Եգիպտոսի իրադարձությունների գլոբալ լուսաբանման, թե՛ հետագա դեպքերի առումով (Pintak):

Եգիպտոսում հեղափոխության շրջանում ալ-Կարադաուին սկսեց ակտիվ գործել՝ իսլամական իրավունքի տեսանկյունից բողոքի գործողությունները հիմնավորելու համար: Նա հակադարձեց Ազհարի այլմտերի ֆաթվաներին, որոնք կոչ էին անում ապստամբներին մնալ տներում: Մուսուլման կրոնագետ-իրավագետների միջազգային միության իր աջակիցների հետ միասին ալ-Կարադաուին փորձեց հայեցակարգել իսլամական իրավունքի բոլորովին նոր ուղղություն, որն անվանեց «հեղափոխության իրավագիտություն» (Warren 9):

«Արաբական գարունը» հնարավորություն տվեց իսլամիստներին ներգրավվել քաղաքական գործընթացներին ու ընտրապայքարին, այդ թվում՝ Եգիպտոսում: Իշխանության գալուց ի վեր նրանք ձևավորեցին կառավարման մենաշնորհ՝ առաջ տանելով իսլամական օրակարգեր, ինչը փաստորեն անարդյունավետ էր և ձախողվեց (Abu Hanieh 29):

Կատարի լիբիական օրակարգը. իսլամիզմի դեմարշը Լիբիայում

Կատարը դարձավ Լիբիայում իշխանափոխության ամենակտիվ աջակիցներից մեկը: Դոհայի ֆինանսական ու ռազմական օգնության մեծ մասն ուղղված էր «Մուսուլման եղբայրներին»: Կատարի ոչ պաշտոնական կապերը «Մուսուլման եղբայրների» անդամների հետ որոշիչ դեր ունեցան Լիբիայում իրադարձությունների շրջադարձային զարգացման համար: Իսլամիստների շարքում պետք է առանձնացնել Ալի ալ-Սալաբիին, որ դարձավ ֆինանսական ու ռազմական օգնության առանձնահատուկ խողովակ Բենգազիի իսլամիստների համար: Ալի ալ-Սալաբիին ֆինանսական միջոցներն ուղարկում էր եղբոր՝ Իսմայիլ ալ-Սալաբիի և ջիհադական գործիչ Աբդել Յաքին Բելիաջի խողովակով (Roberts 3): Ալ-Սալաբի եղբայրների և Բելիաջի օրինակները ցույց են տալիս Կատարի կայուն, վստահելի ու փոխշահավետ հարաբերություններն իսլամիստների հետ: Կատարն առաջին արաբական երկիրն էր, որը 2011 թ.-ի մարտի 28-ին պաշտոնապես ճանաչեց Լիբիայի Անցումային խորհուրդը՝ որպես Լիբիայի ժողովրդի օրինական ներկայացուցիչ (Coker):

2011 թ.-ի սեպտեմբերին Կատարի Եմիրը հայտարարեց. «Ես հավատում եմ արմատական իսլամիստներին, որոնց հայացքներն ու տեսակետները ձևավորվել են բռնակալ կառավարությունների ժամանակ, նրանք կարող են մասնացել երկրի քաղաքական կյանքին, եթե արաբական ապստամբությունների ընթացքում ժողովրդավարության և արդարության մասին տրված խոստումներն ի կատար ածվեն: Այդ դեպքում մենք կտեսնենք, թե ինչպես ծայրահեղականությունը կվերածվի քաղաքացիական կյանքի» (Khatib 424): Դիվանագիտական առումով Կատարը նպաստեց Արաբական պետությունների լիգայում Մ. Զադաֆիի դեմ առանցքի ձևավորմանը: Յամադ բեն Չասեմի դիվանագիտական ջանքերի շնորհիվ 2011 թ.-ի մարտին Լիբիան հայտարարվեց ոչ թռիչքային գոտի: Լրատվական հարթակում Լիբիայի ապստամբները ստանում էին «ալ-Չագիրայի» աջակցությունը: Ավելին՝ Կատարն օգնեց գործարկել արբանյակային այլք, որն ապստամբներին տվեց հնարավորություն ամբողջ աշխարհի առաջ բարձրաձայնելու իրենց խնդիրները և հակազդելու Զադաֆիի վարչակարգի քարոզչությանը: Պարզ էր, որ Լիբիան դառնալու էր Դոհայի թիրախներից մեկը: Կատարը մտադիր էր շարունակել զենք մատակարարել Լիբիա անգամ իշխանափոխությունից հետո՝ երկրում իր ազդեցությունն ամրապնդելու նպատակով (Սարգսյան 300-301): 2014 թ.-ի սեպտեմբերին Լիբիայի նախկին վարչապետ Աբդալլահ ալ-Թիննիև ԱՄԷ-ում տեղակայված «Sky News» արաբական հեռուստաալիքին տված հարցազրույցում հայտարարեց, որ այդ օրերին Կատարը զենքով բռնկված երեք

ռազմական ինքնաթիռ է ուղարկել Տրիպոլիի օդանավակայան, ինչպես նաև մեղադրեց Դոհային Լիբիայի ներքին գործերին միջամտելու համար ("Libyan PM accuses"): 2011 թ.-ի օգոստոսին՝ Տրիպոլիի գրավման ժամանակ, Զադաֆիի նստավայր Բաբ ալ-Ազհիգիայում Ազատ Լիբիայի դրոշի կողքին ծածանվում էր նաև Կատարի դրոշը, ինչը վկայում էր ապստամբներին Կատարի անվերապահ աջակցության մասին (Toumi):

Սիրիայում թուրք-կատարական ծրագրերը ճգնաժամի ձևավորման ընթացքում

Կատարն ակտիվորեն ներգրավվեց Սիրիայում սկիզբ առած հակամարտությանը՝ բազմակողմանի աջակցություն ցուցաբերելով Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի հակառակորդներին՝ չնայած այն հանգամանքին, որ մինչև սիրիական դեպքերի զարգացումը Դոհան բարեկամական ու ջերմ հարաբերություններ ուներ Դամասկոսի հետ: Կատարի Էմիրը նախագահ Բաշար ալ-Ասադի մտերիմ ընկերն էր և դեռևս ոչ վաղ անցյալում Ասադը և նրա կինը՝ Աման, ժամանակ առ ժամանակ լինում էին Դոհայում՝ որպես Էմիրի հատուկ հյուրեր: Սիրիայի նկատմամբ Կատարի շրջադարձը զարմացրեց Ասադին (Harran 6): Երբ 2011 թ.-ի մարտին Սիրիայում բարձրացավ ապստամբությունների այիթը, Դոհան զգուշորեն արձագանքեց Սիրիայից եկող ազդանշաններին: «Կուլիսների հետևում» թե՛ Էմիր Յամադը, թե՛ թագաժառանգ Շեյխ Թամիմը խորհուրդ տվեցին Ասադին հրաժարվել խնդրի զինված լուծումներից: Սակայն բողոքի ցույցերի բռնկումից մեկ ամիս անց վարչապետ Յամադ բեն Ջասեմի՝ Դամասկոս կատարած այցից հետո Կատարի արտաքին քաղաքականության սիրիական ուղղության մեջ արմատական փոփոխություններ տեղի ունեցան (Khalaf):

Սիրիական իրադարձությունների ծավալման սկզբնական փուլում «ալ-Ջազիրան» ցուցաբերեց զգուշավորություն դեպքերի լուսաբանման հարցում և սպասեց մինչև Կատարի կառավարությունը վերջնականապես հրաժարվի Բաշար ալ-Ասադին աջակցելուց: Երբ Կատարի կառավարությունը պաշտոնապես հանդես եկավ Ասադի վարչակարգի դեմ, «ալ-Ջազիրան» սկսեց սիրիական վարչակարգի դեմ բողոքի ցույցերի հրահրման գործընթաց՝ ներկայացնելով Սիրիայում զարգացումների բոլորովին աղավաղված պատկեր (Harran 6):

Տարածաշրջանում առաջնորդության համար պայքարող Կատարի հավակնությունները դարձան ավելի իրատեսական, երբ Դոհան խորացրեց համագործակցությունը Թուրքիայի հետ: Թուրք-կատարական հարաբերությունների զարգացմանը նպաստեցին երկու կողմերի սերտ համագործակցությունը Եգիպտոսում գործող «Մուսուլման եղբայրների» հետ: Դեռևս 1980-ականներին Սիրիայի նախագահ Յաֆեզ ալ-Ասադի օրոք Սիրիայում արգելվել էր «Մուսուլման եղբայրների» գործունեությունը: «Մուսուլման եղբայրները» սկսեցին ընդհատակյա գործունեություն ծավալել Սիրիայում սկսած 2003 թ.-ից (Al-Haj 95):

Տարածաշրջանում իշխող դիրք ունենալով՝ Թուրքիայի և Կատարի ցանկությունները դրսևորվեցին «արաբական գարնան» ընթացքում, երբ 2011-2012 թթ.-ին այս երկրներին հաջողվեց հասնել լուրջ հաջողությունների: Եգիպտոսում «Մուսուլման եղբայրների» հաջողություններով պայմանավորված՝ ստեղծվեց Կատար-Թուրքիա-«Մուսուլման եղբայրներ» քաղաքական առանցքը, որում վերջիններս ստացան ահռելի ֆինանսական ու դիվանագիտական աջակցություն երկու երկրներից:

Սիրիական ճգնաժամի ընթացքում դաշինքն ակտիվորեն առաջ էր մղում Դոհայի ու Անկարայի շահերը՝ տեղի «Մուսուլման եղբայրներին» անվերապահ աջակցություն ցուցաբերելով: 2011 թ.-ի օգոստոսին Ստամբուլում Կատարի աջակցությամբ ստեղծվեց «Սիրիական ազգային անցումային խորհուրդը», որը պետք է փաստացի ստանձներ Սիրիական կառավարության դերը աքսորում ("Syria opposition"): Սակայն շուտով կառույցին, որին այդպես էլ չհաջողվեց դառնալ հեղինակավոր, փաստացի փոխարինեց 2012 թ.-ի նոյեմբերին Դոհայում հիմնադրված «Սիրիայի հեղափոխականների և

ընդդիմադիր ուժերի ազգային դաշինքը» ("Syria crisis"), որով Կատարը դարձավ սիրիական ընդդիմության երկրորդ հյուրընկալողը: Ընդհանուր առմամբ, «Սիրիայի հեղափոխականների և ընդդիմադիր ուժերի ազգային կոալիցիայում» գերակշռող էր «Մուսուլման եղբայրների» գաղափարախոսությունը, և դաշինքի ղեկավարության մեծամասնությունը հետևում էր Թուրքիայի ու Կատարի արտաքին քաղաքական կուրսին:

Թուրքիան ու Կատարն ակտիվ մասնակցություն ունեցան զինված խմբավորումների գործողությունների համակարգման հարցում: Այդ նպատակով Թուրքիայի հարավում հիմնվեց «Համատեղ գործողությունների կենտրոնը» (Al Achi):

2013 թ.-ի մարտին սիրիական ընդդիմության ղեկավար Ահմեդ Մոազ ալ-Խատիբը և Կատարի արտաքին գործերի նախարար Խալեդ ալ-Աթիան Դոհայում դեսպանություն բացեցին սիրիական ընդդիմության համար՝ փակ պահելով Սիրիայի նախկին դեսպանատունը ("Syria opposition"):

Մինչև 2013 թ.-ը Կատարը Սիրիայի ապստամբներին աջակցելու համար ծախսել է մոտ 3 մլրդ դոլար, որը գերազանցում է մյուս բոլոր կառավարությունների ցուցաբերած աջակցությունները: Սիրիայի ապստամբներին սպառազինելու համար Կատարը Լիբիայից և Արևելյան Եվրոպայից ձեռք էր բերում զենք, տեղափոխում Թուրքիա, որտեղից դրանք հասնում էին սահման թուրք հետախույզների միջոցով (Սարգսյան 304):

Ժամանակի ընթացքում առաջացան լուրջ հակասություններ թուրք-կատարական դաշինքի և ԱՄՆ-ի միջև: Լարվածությունը սրվեց, երբ 2014 թ.-ի հունիսին «Իսլամական պետության» զինյալները, գրավելով Մոսուլը, ակտիվ գործողություններ սկսեցին վարել Իրաքում ու Սիրիայում: ԱՄՆ-ը օդային արշավ սկսեց ԻՊ-ի դեմ ("US confirms")՝ սիրիական տարածքում ցամաքային ուժերի համակարգումը վստահելով Սիրիայի քրդական «ժողովրդական ինքնապաշտպանության ուժերին» (Barfi 2), ինչը մեծ հարված էր Թուրքիայի համար:

Բացի ամերիկյան կողմից, թուրք-կատարական դաշինքի թուլացմանը նպաստեց նաև Սաուդյան Արաբիան: 2013 թ.-ից սկսած պարզ դարձավ, որ Սիրիայի քրդական «ժողովրդական ինքնապաշտպանության ուժերին» չհաջողվեց միջազգային հարթակում հանդես գալ որպես բանակցությունների լիարժեք կողմ: Արդյունքում ԱՄՆ-ի միջնորդությամբ Սաուդյան Արաբիային վստահվեց միավորված և արդյունավետ ընդդիմադիր պատվիրակություն ստեղծելու առաքելությունը: Հետագայում 2015 թ.-ի դեկտեմբերին, Սաուդյան Արաբիայի հովանու ներքո ստեղծվեց «Բանակցությունների բարձրագույն կոմիտեն», որը միավորեց Բաշար ալ-Ասադի զինված ու քաղաքական ընդդիմությանը ("Head of Syrian opposition"): Այնտեղից Սաուդյան Արաբիան հետագայում դուրս մղեց թուրք-կատարական ուժերին, որոնք առաջնորդվում էին «Մուսուլման եղբայրների» գաղափարախոսությամբ (El Deeb): Դեռևս 2013 թ.-ի նոյեմբերի 23-ին Պարսից ծոցի համագործակցության խորհրդում ընդունված եզրափակիչ հռչակագրում Կատարին կոչ էր արվում չսատարել այն ուժերին, որոնք պայթյունավտանգ գործունեություն են վարում արաբական աշխարհում՝ վկայակոչելով Կատարի աջակցությունը «Մուսուլման եղբայրներ» շարժմանը (Pashayan 81): The Associated Press լրատվական գործակալությանը տված հարցազրույցում Կատարի արտգործնախարար Շեյխ Մոհամեդ բեն Աբդ ալ-Ռահման Ալ Թանին քանիցս հերքել է ահաբեկչությանն աջակցելու մասին մեղադրանքները, մասնավորապես այն, որ իր երկիրը ֆինանսավորում է ծայրահեղականներին (Harb):

Չնայած Կատարին չհաջողվեց իրականացնել իր նպատակները Սիրիայում և ունենալ այնպիսի որոշիչ դեր, ինչպիսին Լիբիայում էր, այնուամենայնիվ Կատարը չիրաժարվեց Սիրիա «վերադառնալու» մտքից: Այդ մասին են վկայում 2021 թ.-ի մարտի 9-ին Դոհայում կազմակերպված եռակողմ բանակցությունները Թուրքիայի, Կատարի և ՌԴ արտգործնախարարների միջև: Հանդիպումից հետո Կատարի արտգործնախարար

Ալ Թանին հայտարարեց, որ իրենք բննարկել են նաև Սիրիայի ողջ տարածքում մարդասիրական օգնություն հասցնելու մեխանիզմները՝ ավելացնելով, որ «առկա է սիրիացիների տառապանքը մեղմելու կարևոր անհրաժեշտություն» ("Political resolution in Syria"):

Եզրակացություն

Իսլամական գործունը վաղուց ի վեր դարձել է Կատարի արտաքին քաղաքականության «փափուկ ուժի» հիմնական գործիքներից մեկը: Այդ մասին են վկայում Կատարի պետության վերնախավի կապերը իսլամիստների հետ և իսլամիզմի կերպափոխման կատարական գաղափարների դինամիկան: Նշված իրողությունները մեծ ազդեցություն են ունեցել ոչ միայն իսլամիստական ուժերի հետ երկկողմ հարաբերությունների, այլև մերձավորարևելյան և աֆրիկյան տարածաշրջանում հակամարտությունների զարգացման վրա: Դոհան կարողացավ շահավետ օգտագործել իսլամիստների հետ ունեցած կապերը սեփական շահերի համար: Մյուս կողմից իսլամիստների հետ հարաբերություններն արտաքին քաղաքական նպատակներին աջակցող գործիք են Կատարի համար՝ երկրում կայունության պահպանման և տարածաշրջանում ազդեցիկ դեր զբաղեցնելու համար:

Այս շփումների մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում «Մուսուլման եղբայրների» հետ Կատարի հարաբերությունները: Կատարը դարձավ «Մուսուլման եղբայրների» միջոցով արաբական աշխարհի այլ երկրներ ներթափանցելու հարթակ, որի տեղեկատվական խողովակը դարձավ «ալ-Ջազիրա» հեռուստաընկերությունը: «Ալ-Ջազիրայի» միջոցով «Մուսուլման եղբայրները» ևս քարոզչության հնարավորություն ստացան: Նրանք սկսեցին թափանցել և գործել ավելի լայն աշխարհագրությամբ՝ առանց վնաս հասցնելու Կատարի իշխանություններին:

«Արաբական գարնան» իրադարձությունների ժամանակ Դոհան մեծապես ներգրավված էր «արաբական գարնան» ապստամբությունների ու հեղափոխությունների հրահրման և դրանց միջազգային հնչեղություն հաղորդելու հարցում: Այս իրողությունը պայմանավորված էր այդ գաճաճ պետության հավակնոտ ցանկությունների հետ, որոնց մեջ մտնում էին վերահսկողությունը արաբական աշխարհի նկատմամբ ու տարածաշրջանի ռեսուրսների կառավարումը: Այդ իմաստով քաղաքական իսլամի կատարական ծրագիրը Դոհայի աշխարհաքաղաքական ու աշխարհատեսական ռազմավարության կարևորագույն գործիքակազմն էր:

Տարածաշրջանում առաջնորդության համար պայքարող Կատարի հավակնությունները դարձան ավելի իրատեսական, երբ Դոհան սկսեց համագործակցել Թուրքիայի հետ: Թուրք-կատարական հարաբերությունների զարգացմանը նպաստեցին երկու կողմերի սերտ հարաբերությունները Եգիպտոսում գործող «Մուսուլման եղբայրների» հետ: «Մուսուլման եղբայրների» գաղափարախոսությունը երկու երկրների կառավարությունների արտաքին քաղաքական ընդհանուր գծի սպասարկման հիմք դարձավ: 2011-2012 թթ.-ին թուրք-կատարական դաշինքին հաջողվեց հասնել լուրջ հաջողությունների՝ տարածաշրջանում առաջատար դեր զբաղեցնելու հարցում: Եգիպտոսում «Մուսուլման եղբայրների» հաջողություններով պայմանավորված՝ ստեղծվեց Կատար-Թուրքիա-«Մուսուլման եղբայրներ» քաղաքական առանցքը, որում վերջիններս ստացան ահռելի ֆինանսական ու դիվանագիտական աջակցություն երկու երկրներից: Սակայն ինչպես պարզվեց հետագայում, Եգիպտոսում «Մուսուլման եղբայրների» օրոք ժողովրդավարությունը միայն դրսևորվեց քվեատուների ձևով: Իշխանության գալուց հետո Նրանք իշխանությունը դարձրին մենաշնորհ՝ բացառելով այլոց մասնակցությունը երկրի կառավարման գործընթացում, առաջ մղվեց իսլամական օրակարգը, որը ցույց տվեց իսլամիստական վարչակարգի անարդյունավետությունը:

Կատարը դարձավ Լիբիայում իշխանափոխության ամենակատիվ աջակիցներից մեկը: Դոհայի ֆինանսական ու ռազմական օգնության մեծ մասն ուղղված էր

«Մուսուլման եղբայրներին»: Այս կազմակերպության անդամների հետ Կատարի կապերը որոշիչ դեր ունեցան Լիբիայում իրադարձությունների զարգացման համար: Կատարն ակտիվորեն ներգրավվեց Սիրիայում սկիզբ առած հակամարտությանը՝ բազմակողմանի աջակցություն ցուցաբերելով Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի հակառակորդներին: Սիրիական ճգնաժամի ընթացքում թուրք-կատարական դաշինքն ակտիվորեն առաջ էր մղում Դոհայի և Անկարայի շահերը՝ տեղի «Մուսուլման եղբայրներին» և նրա հետ կապեր ունեցող ռազմաքաղաքական խմբավորումներին՝ ցուցաբերելով անվերապահ աջակցություն: Ժամանակի ընթացքում առաջացան լուրջ հակասություններ թուրք-կատարական դաշինքի և ԱՄՆ-ի միջև: Բացի ամերիկյան կողմից, այդ դաշինքի թուլացմանը նպաստեց նաև Սաուդյան Արաբիան, ինչի արդյունքում Կատարը սիրիական գործի պատասխանատվությունը ոչ պաշտոնապես հանձնեց Սաուդյան Արաբիային: Կատարին, այնուամենայնիվ, չհաջողվեց իրականացնել իր նպատակները Սիրիայում: Չնայած որոշակի ձախողումներին ու արտաքին ճշումներին՝ թե՛ Կատարը, թե՛ Թուրքիան շարունակում են «Մուսուլման եղբայրները» դիտարկել որպես «փափուկ ուժի» կարևոր գործիքակազմ: Արաբական մի շարք երկրների համար Կատարի և «Մուսուլման եղբայրների» կապը ցավոտ հարց է, և այդ հարցի շուրջ լարվածությունն իր գագաթնակետին հասավ 2017 թ.-ի հունիսի 5-ին սկսված Կատարի դիվանագիտական ճգնաժամի ժամանակ, երբ Բահրեյնը, Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը, Եմենը, Արաբական Միացյալ Եմիրությունները, Լիբիան և Մալդիվները Դոհայից պահանջեցին դադարեցնել աջակցությունը արմատական խմբավորումներին և առաջին հերթին «Մուսուլման եղբայրներին»: Առաջիկայում ևս Դոհան կօգտագործի «փափուկ ուժի» իր գործիքակազմը, որի կարևոր դերակատարներից մեկը «Մուսուլման եղբայրներն» են:

Օգտագործված գրականություն

1. Բայբուրդյան, Վահան. «Իսլամական գործունը» արդի միջազգային հարաբերություններում. *Բանբեր Երևանի համալսարանի*. 1(106), 2002. http://ysu.am/files/02V_Bayburdyan.pdf . Հասանելի էր՝ 09.04.2021:
2. Սարգսյան, Զևարիկ. Կատարի արտաքին քաղաքականությունն ու «Արաբական գարունը». *Մերձավոր Արևելք (XIV), Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Հողմածների ժողովածու*, 2019.
3. Տոնիկյան, Սոնա. «Ֆաթվան որպես իսլամական իրավունքի ադապտացիոն մեխանիզմ». *Արևելագիտության հարցեր VII*, Երևան, ԵՊՀ, 2012:
4. "Head of Syrian opposition's HNC resigns: statement". *Reuters*, 20.11.2017. <https://www.reuters.com/article/us-mideast-crisis-syria-hnc-idUSKBN1DK26N>. Accessed: 16.04.2021.
5. "Libyan PM accuses Qatar of sending planes with weapons to Tripoli". *Reuters*, 15.09.2014. <https://www.reuters.com/article/us-libya-security-qatar-idUSKBN0H90W220140914>. Accessed: 11.04.2021.
6. "Qatar Doubles Aid to Egypt", by Associated Press. *The New York Times*, 08.01.2013. <https://www.nytimes.com/2013/01/09/world/middleeast/qatar-doubles-aid-to-egypt.html>. Accessed: 27.05.2021.
7. "Qatar exports political Islam to West: The Times". *Qatari Leaks*, 05.08.2019. <https://qatarileaks.com/en/leak/qatar-exports-political-islam-to-west-the-times>. Accessed: 02.04.2021.
8. "Syria crisis: Arab League welcomes new opposition bloc". *BBC News*, 13.11.2012. <https://www.bbc.com/news/world-middle-east-20307668>. Accessed: 14.04.2021.
9. "Syria opposition launches national council to overthrow Assad". *The National News*, 03.10.2011. <https://www.thenationalnews.com/world/mena/syria-opposition-launches-national-council-to-overthrow-assad-1.468218>. Accessed: 14.04.2021

10. "Syria opposition opens embassy in Qatar". *Al Jazeera*, 28.03.2013. <https://www.aljazeera.com/news/2013/3/28/syria-opposition-opens-embassy-in-qatar>. Accessed: 25.05.2021.
11. "Turkey, Russia, Qatar to push for political resolution in Syria". *Reuters*, 11.03.2021. <https://www.reuters.com/article/us-syria-crisis-qatar-aid-idUSKBN2B31QH>. Accessed: 17.04.2021.
12. "US confirms 14 air strikes against ISIS in Syria". *The Guardian*, 23.09.2014. <https://www.theguardian.com/world/2014/sep/23/uslaunches-air-strikes-against-isis-targets-in-syria>. Accessed: 15.04.2021.
13. "West should not fear Islamist movements". *Financial Times*, 30.11.2011. <https://www.ft.com/content/c2178ab8-1b71-11e1-8b11-00144feabd0>. Accessed: 02.04.2021.
14. Abu Hanieh, Hassan. Political Islam and ISIS: Methodological Approaches. *The Prospects of Political Islam in a Troubled Region, Islamists and Post-Arab Spring Challenges*, 2018, pp. 29-48, <https://library.fes.de/pdf-files/bueros/amman/14224.pdf>. Accessed: 18.03.2021.
15. Al Achi, Assaad. "How Syrian Civil Society Lost its Independence in a War of Conflicting Agendas". *Carnegie Middle East Center*, 15 May. 2020. <https://carnegie-mec.org/2020/05/15/how-syrian-civil-society-lost-its-independence-in-war-of-conflicting-agendas-pub-81802>. Accessed: 15.04.2021.
16. Al-Haj, Abdulrahman. Transformations of Political Islam and "Salafist Jihadism" in Syria "2011-2017". *The Prospects of Political Islam in a Troubled Region, Islamists and Post-Arab Spring Challenges*, 2018, pp.93-100. <https://library.fes.de/pdf-files/bueros/amman/14224.pdf>. Accessed: 11.04.2021.
17. Barfi, Barak. "Ascent of the PYD and the SDF". *The Washington Institute for Near East Policy*, No.32, April, 2016. <https://www.washingtoninstitute.org/media/2152>. Accessed: 15.04.2021.
18. Baskan, Birol and Wright, Steven. "Seeds Of Change: Comparing State-Religion Relations In Qatar and Saudi Arabia". *Arab Studies Quarterly*, Vol. 33, No. 2, 2011, pp. 96-111. <https://www.jstor.org/stable/pdf/41858653.pdf?refreqid=excelsior%3A75d6ca0f34aa12e66015b51240b3fd76>. Accessed: 28.05.2021.
19. Coker, Margaret. "Qatar Recognizes Libyan Rebel Council". *The Wall Street Journal*, 28 Mar. 2021. <https://www.wsj.com/articles/SB10001424052748704559904576228341860730126>. Accessed: 26.05.2021.
20. Dorsey, James. Wahhabism vs. Wahhabism: Qatar Challenges Saudi Arabia. *RSIS Working Paper series*, No. 262, 2013. <https://www.rsis.edu.sg/wp-content/uploads/rsis-pubs/WP262.pdf>. Accessed: 21.03.2021.
21. El Deeb, Sarah and Philip Issa. Syria's opposition, divided and varied, to get a new face. *The Times of Israel*, 27 Nov. 2017, <https://www.timesofisrael.com/syrias-opposition-divided-and-varied-to-get-a-new-face/>. Accessed: 16.04.2021.
22. Harb Malak and Jon Gambrell. Qatar rejects 'blockade', denies terror allegations. *Associated Press News*, 8 Jun. 2017, https://apnews.com/article/blockades-ap-top-news-qatar-international-news-al-jazeera-1dff382303d24ad7b66c85b707c0454c?fbclid=IwAR2afMLuzt4ilqyrbVIVfCj_i3tWK8Kqh7Ble-7SDL1eXVqdsSLmTD4QEJc. Accessed: 14.07.2021
23. Harran, V.P. Shri. Roots of the Syrian Crisis, *Institute of Peace and Conflict Studies*, Mar. 2016. http://www.ipcs.org/issue_briefs/issue_brief_pdf/RootsoftheSyrianCrisis_VPHaran.pdf. Accessed: 24.05.2021.

24. Hroub, Khalid. "Qatar and the Arab Spring". *Henrich Böll Stiftung*, 03 Mar. 2014. <https://lb.boell.org/en/2014/03/03/qatar-and-arab-spring-conflict-intl-politics>. Accessed: 27.05.2021.
25. Khalaf, Roula and Abigail Fielding-Smith. How Qatar seized control of the Syrian revolution. *Financial Times*, 17 May. 2013. <https://www.ft.com/content/f2d9bbc8-bdbc-11e2-890a-00144feab7de>. Accessed: 24.05.2021.
26. Khatib, Lina. Qatar's foreign policy: The limits of pragmatism. *The Royal Institute of International Affairs*, 2013, pp.417-431. https://fsi-live.s3.us-west-1.amazonaws.com/s3fs-public/INTA89_2_10_Khatib.pdf. Accessed: 10.04.2021.
27. Pashayan, Araks. Saudi Arabia-Qatar. From cooperation to confrontation. The Arab world in transition. *Contemporary Eurasia*, Volume VII(1,2), 2018, p.81. <http://test.journals.sci.am/index.php/nas-eurasia/article/view/605/476>. Accessed: 18.05.2021
28. Pintak, Lawrence. "The Al Jazeera revolution". *Foreign Policy*, 02 Feb.2011. http://www.foreignpolicy.com/articles/2011/02/02/the_al_jazeera_revolution. Accessed: 18.04.2021.
29. Roberts, David. Reflecting on Qatar's "Islamist" Soft Power. *Brookings Institution*, Apr. 2019, https://www.brookings.edu/wp-content/uploads/2019/04/FP_20190408_qatar_roberts.pdf . Accessed: 10.04.2021.
30. Toumi, Habib. "Raising of Qatar's flag in Libya was an eerie moment". *Gulf News*, 12 May 2017. <https://gulfnews.com/world/gulf/qatar/raising-of-qatars-flag-in-libya-was-an-erie-moment-1.2042345>. Accessed: 26.05.2021.
31. Warren, David. The 'Ulamā' and the Arab Uprisings 2011-13: Considering Yusuf al-Qaradawi, the 'GlobalMufti,' between the Muslim Brotherhood, the Islamic Legal Tradition, and Qatari Foreign Policy. *British Society for Middle Eastern Studies*, 18 Mar. 2014. <https://journals.le.ac.uk/ojs1/index.php/nmes/article/view/2649/2472> Accessed: 28.05.2021.

Works Cited

1. Bayburdyan, Vahan. «Islamakan gorc'onuy» ardi mijazgayin haraberut'yunnerum. Banber Erevani hamalsarani. 1(106), 2002. http://ysu.am/files/02V_Bayburdyan.pdf . Hasaneli e'r 09.04.2021 ("The Islamic factor" in modern international relations. 1(106), 2002. http://ysu.am/files/02V_Bayburdyan.pdf . Available on 09.04.2021)
2. Sargsyan, Qnarik. Katari artaqin qaghaqakanut'yunn u «Arabakan aruny». Merd'avor Arelvelq (XIV), Patmut'yun, qaghaqakanut'yun, mshakuyt', Hodvac'neri jhoghovac'u, 2019 (Qatar's Foreign policy and the "Arab Spring": The Middle East (XIV), history, politics, culture, collection of articles, 2019).
3. Tonikyan, Sona. «Fat'van orpes islamakan iravunqi adaptacion mexanizm». Arelvelagitut'yan harcer VII, Erevan, EPH, 2012 (Fatwa as an adaptation mechanism of Islamic law": Questions of Oriental Studies VII, Yerevan, YSU, 2012).
4. "Head of Syrian opposition's HNC resigns: statement". *Reuters*, 20.11.2017. <https://www.reuters.com/article/us-mideast-crisis-syria-hnc-idUSKBN1DK26N>. Accessed: 16.04.2021.
5. "Libyan PM accuses Qatar of sending planes with weapons to Tripoli". *Reuters*, 15.09.2014. <https://www.reuters.com/article/us-libya-security-qatar-idUSKBN0H90W220140914>. Accessed: 11.04.2021.
6. "Qatar Doubles Aid to Egypt", by Associated Press. *The New York Times*, 08.01.2013. <https://www.nytimes.com/2013/01/09/world/middleeast/qatar-doubles-aid-to-egypt.html>. Accessed: 27.05.2021.

7. "Qatar exports political Islam to West: The Times". *Qatari Leaks*, 05.08.2019. <https://qatarileaks.com/en/leak/qatar-exports-political-islam-to-west-the-times>. Accessed: 02.04.2021.
8. "Syria crisis: Arab League welcomes new opposition bloc". *BBC News*, 13.11.2012. <https://www.bbc.com/news/world-middle-east-20307668>. Accessed: 14.04.2021.
9. "Syria opposition launches national council to overthrow Assad". *The National News*, 03.10.2011. <https://www.thenationalnews.com/world/mena/syria-opposition-launches-national-council-to-overthrow-assad-1.468218>. Accessed: 14.04.2021
10. "Syria opposition opens embassy in Qatar". *Al Jazeera*, 28.03.2013. <https://www.aljazeera.com/news/2013/3/28/syria-opposition-opens-embassy-in-qatar>. Accessed: 25.05.2021.
11. "Turkey, Russia, Qatar to push for political resolution in Syria". *Reuters*, 11.03.2021. <https://www.reuters.com/article/us-syria-crisis-qatar-aid-idUSKBN2B31QH>. Accessed: 17.04.2021.
12. "US confirms 14 air strikes against ISIS in Syria". *The Guardian*, 23.09.2014. <https://www.theguardian.com/world/2014/sep/23/uslaunches-air-strikes-against-isis-targets-in-syria>. Accessed: 15.04.2021.
13. "West should not fear Islamist movements". *Financial Times*, 30.11.2011. <https://www.ft.com/content/c2178ab8-1b71-11e1-8b11-00144feabd0>. Accessed: 02.04.2021.
14. Abu Hanieh, Hassan. Political Islam and ISIS: Methodological Approaches. *The Prospects of Political Islam in a Troubled Region, Islamists and Post-Arab Spring Challenges*, 2018, pp. 29-48, <https://library.fes.de/pdf-files/bueros/amman/14224.pdf>. Accessed: 18.03.2021.
15. Al Achi, Assaad. "How Syrian Civil Society Lost its Independence in a War of Conflicting Agendas". *Carnegie Middle East Center*, 15 May. 2020. <https://carnegie-mec.org/2020/05/15/how-syrian-civil-society-lost-its-independence-in-war-of-conflicting-agendas-pub-81802>. Accessed: 15.04.2021.
16. Al-Haj, Abdulrahman. Transformations of Political Islam and "Salafist Jihadism" in Syria "2011-2017". *The Prospects of Political Islam in a Troubled Region, Islamists and Post-Arab Spring Challenges*, 2018, pp.93-100. <https://library.fes.de/pdf-files/bueros/amman/14224.pdf>. Accessed: 11.04.2021.
17. Barfi, Barak. "Ascent of the PYD and the SDF". *The Washington Institute for Near East Policy*, No.32, April, 2016. <https://www.washingtoninstitute.org/media/2152>. Accessed: 15.04.2021.
18. Baskan, Birol and Wright, Steven. "Seeds Of Change: Comparing State-Religion Relations In Qatar and Saudi Arabia". *Arab Studies Quarterly*, Vol. 33, No. 2, 2011, pp. 96-111. <https://www.jstor.org/stable/pdf/41858653.pdf?refreqid=excelsior%3A75d6ca0f34aa12e66015b51240b3fd76>. Accessed: 28.05.2021.
19. Coker, Margaret. "Qatar Recognizes Libyan Rebel Council". *The Wall Street Journal*, 28 Mar. 2021. <https://www.wsj.com/articles/SB10001424052748704559904576228341860730126>. Accessed: 26.05.2021.
20. Dorsey, James. Wahhabism vs. Wahhabism: Qatar Challenges Saudi Arabia. *RSIS Working Paper series*, No. 262, 2013. <https://www.rsis.edu.sg/wp-content/uploads/rsis-pubs/WP262.pdf>. Accessed: 21.03.2021.
21. El Deeb, Sarah and Philip Issa. Syria's opposition, divided and varied, to get a new face. *The Times of Israel*, 27 Nov. 2017, <https://www.timesofisrael.com/syrias-opposition-divided-and-varied-to-get-a-new-face/>. Accessed: 16.04.2021.

22. Harb Malak and Jon Gambrell. Qatar rejects 'blockade', denies terror allegations. *Associated Press News*, 8 Jun. 2017, https://apnews.com/article/blockades-ap-top-news-qatar-international-news-al-jazeera-1dff382303d24ad7b66c85b707c0454c?fbclid=IwAR2afMLuzt4ilqyrbVIVfCj_i3tWK8Kqh7Ble-7SDL1eXVqdsSLmTD4QEJc. Accessed: 14.07.2021
23. Harran, V.P. Shri. Roots of the Syrian Crisis, *Institute of Peace and Conflict Studies*, Mar. 2016. http://www.ipcs.org/issue_briefs/issue_brief_pdf/RootsoftheSyrianCrisis_VPHaran.pdf. Accessed: 24.05.2021.
24. Hroub, Khalid. "Qatar and the Arab Spring". *Henrich Böll Stiftung*, 03 Mar. 2014. <https://fb.boell.org/en/2014/03/03/qatar-and-arab-spring-conflict-intl-politics>. Accessed: 27.05.2021.
25. Khalaf, Roula and Abigail Fielding-Smith. How Qatar seized control of the Syrian revolution. *Financial Times*, 17 May. 2013. <https://www.ft.com/content/f2d9bbc8-bdbc-11e2-890a-00144feab7de>. Accessed: 24.05.2021.
26. Khatib, Lina. Qatar's foreign policy: The limits of pragmatism. *The Royal Institute of International Affairs*, 2013, pp.417-431. https://fsi-live.s3.us-west-1.amazonaws.com/s3fs-public/INTA89_2_10_Khatib.pdf. Accessed: 10.04.2021.
27. Pashayan, Araks. Saudi Arabia-Qatar. From cooperation to confrontation. The Arab world in transition. *Contemporary Eurasia*, Volume VII(1,2), 2018, p.81. <http://test.journals.sci.am/index.php/nas-eurasia/article/view/605/476>. Accessed: 18.05.2021
28. Pintak, Lawrence. "The Al Jazeera revolution". *Foreign Policy*, 02 Feb.2011. http://www.foreignpolicy.com/articles/2011/02/02/the_al_jazeera_revolution. Accessed: 18.04.2021.
29. Roberts, David. Reflecting on Qatar's "Islamist" Soft Power. *Brookings Institution*, Apr. 2019, https://www.brookings.edu/wp-content/uploads/2019/04/FP_20190408_qatar_roberts.pdf. Accessed: 10.04.2021.
30. Toumi, Habib. "Raising of Qatar's flag in Libya was an eerie moment". *Gulf News*, 12May.2017. <https://gulfnews.com/world/gulf/qatar/raising-of-qatars-flag-in-libya-was-an-eerie-moment-1.2042345>. Accessed: 26.05.2021.
31. Warren, David. The 'Ulamā' and the Arab Uprisings 2011-13: Considering Yusuf al-Qaradawi, the 'GlobalMufti,' between the Muslim Brotherhood, the Islamic Legal Tradition, and Qatari Foreign Policy. *British Society for Middle Eastern Studies*, 18 Mar. 2014. <https://journals.le.ac.uk/ojs1/index.php/nmes/article/view/2649/2472>. Accessed: 28.05.2021.

THE ISLAMIC FACTOR IN QATAR'S FOREIGN POLICY

KNARIK SARGSYAN

*NAS RA, Institute of Oriental Studies, Ph.D. Student
Yerevan, Republic of Armenia*

The aim of this article is to examine the Islamic direction of Qatar's foreign policy and its toolkit. One of the objectives of the study is to identify the transformations, the main motivations, tendencies, and prospects of Qatar's cooperation with the Islamic religious-political forces, in particular with the "Muslim Brotherhood" movement in the period before and after the "Arab Spring".

The article is based on the study of official documents, official announcements, leading international research and information centers, and international news.

The analysis carried out in the article shows that for Qatar, which seeks leadership in the region, the "Muslim Brotherhood" has become a serious toolkit of influence serving also the agenda of the Turkish-Qatari tandem.

Keywords: *Qatar, Turkey, Muslim Brotherhood, Arab Spring, geopolitics, Middle East, Islam, soft power, actor, security.*

ИСЛАМСКИЙ ФАКТОР ВО ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ КАТАРА

КНАРИК САРКИСЯН

соискатель Института Востоковедения НАН РА

г. Ереван, Республика Армения

Целью статьи является изучение исламского направления внешней политики Катара и ее инструментарий. Одна из задач исследования – выявить трансформации, основные мотивы, тенденции и перспективы сотрудничества Катара с исламскими религиозно-политическими силами, в частности, с движением «Братья-мусульмане» в период до и после «арабской весны».

Статья основана на изучении официальных документов и заявлений ведущих международных исследовательских, информационных центров и международных новостей.

Анализ, проведенный в статье, показывает, что для Катара, стремящегося к лидерству в регионе, «Братья-мусульмане» стали серьезным инструментом влияния, служащим также повестке дня турецко-катарского тандема.

Ключевые слова: *Катар, Турция, «Братья-мусульмане», «арабская весна», геополитика, Ближний Восток, ислам, мягкая сила, актер, безопасность.*

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА**ՆԵՐԱԿԱՅՈՒՄԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ
ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ***

ՀՏԴ 811.19'366

DOI: 10.52063/25792652-2021.2-163

ՍԻՐԱՆՈՒԾ ԿԵՍՈՅԱՆ

ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ,
 ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
kesoyan1996@mail.ru

Հոդվածի նպատակն է պարզաբանել այն, որ լեզվի ձևաբանական մակարդակի լիարժեք ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի ներակայորեն արտահայտված կարգերի ուսումնասիրությունը: Մեր խնդիրն է վեր հանել և ներկայացնել ներակայման դրսևորումները արդի հայերենի ձևաբանական մակարդակում:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են վերլուծական ու համեմատական մեթոդները:

Յուրաքանչյուր ձևաբանական միավոր ունի իրեն հատուկ նշանակություն, սակայն առանձին դեպքերում իրացվելով խոսքում՝ կարող է արտահայտել նաև այլ նշանակություններ: Այլ կերպ ասած՝ մի ձևաբանական միավորը գործածվում է մեկ այլ միավորի նշանակությամբ, որը տվյալ դեպքում դիտվում է որպես ներակա: Ըստ այդմ, ձևաբանական մակարդակում կարելի է առանձնացնել ներակայման հետևյալ դրսևորումները՝ 1. ժամանակային իմաստի ներակայում, 2. եղանակային իմաստի ներակայում, 3. անդեմ ձևի կիրառությունն դիմավոր ձևի նշանակությամբ, 4. դիմային իմաստի ներակայում, 5. թվային իմաստի ներակայում, 6. հոլովական իմաստի ներակայում:

Առանձին դեպքերում հիմնական նշանակությունից բացի կարող են արտահայտվել նաև լրացուցիչ նշանակություններ (օրինակ՝ հետևանքի հարատևության նշանակությունը վաղակատար ժամանակաձևի դեպքում):

Հիմնաբառեր՝ ներակայում, «թաքնված» քերականություն, ժամանակային, եղանակային, դիմային, թվային, հոլովական իմաստների ներակայում, պատմական ներկա, բացարձակ անորոշ, կրո կամ բացասական ձև:

Լեզվի և մասնավորապես նրա քերականական մակարդակի ամբողջական քննությունը ենթադրում է անդրադարձ ինչպես արտակայորեն, այնպես էլ ներակայորեն արտահայտված միավորներին, քանի որ «որքան էլ սպառիչ և լիարժեք թվա որևէ լեզվի քերականական նկարագրությունը, այն, ըստ Էոլթյան, չի կարող ամբողջական լինել, քանի դեռ նրանում իրենց արտացոլումը չեն գտել լեզվի ոչ բացահայտ կարգերը և թաքնված քերականության մյուս տարրերը» (Кацнельсон 82): Յուրաքանչյուր քերականական, մասնավորապես ձևաբանական միավոր ունի իրեն հատուկ

* Հոդվածը ներկայացվել է 05.04.2021թ., գրախոսվել՝ 27.04.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:

Նշանակություն, սակայն առանձին դեպքերում պայմանավորված գործառույթամբ, այսինքն՝ խոսքում իրացվելով՝ կարող է ձեռք բերել բոլորովին այլ նշանակություններ: Դրանք, ինչպես ընդգծում է Ա. Բոնդարկոն, ոչ հասկացակարգային (կատեգորիական) նշանակություններ են, քանի որ բացի «իր սեփական» հասկացակարգային իմաստաբանական գործառույթներից ձևաբանական կարգը իր վրա է վերցնում լրացուցիչ իմաստաբանական ծանրաբեռնվածություն՝ կատարելով այնպիսի գործառույթներ, որոնք հատուկ են այլ կատեգորիաների (Бондарко 144: Հմմտ. «Եթե հաշվի առնվի, որ յուրաքանչյուր քերականությամբ ունի իր սեփական մշտական նշանակությունը, ապա յուրաքանչյուր նոր, դրան ոչ բնորոշ նշանակություն կհամարվի ներակա» (Барышева 39)): Այսինքն՝ տվյալ ձևաբանական միավորը կարող է ներակայել այլ ձևաբանական միավորներին հատուկ նշանակություններ: Դրանք կազմում են «թաթնված» քերականությունը, որը ներկայացնում է այնպիսի քերականական ազդանշաններ, որոնք ներակայորեն պարունակվում են շարահյուսական կապակցություններում և բառերի իմաստաբանության մեջ (Кацнельсон 78):

Հայերենում ներիմաստների արտահայտման բազմազանությամբ աչքի է ընկնում հատկապես բայական համակարգը: Ընդհանուր առմամբ հայերենի ձևաբանական մակարդակում կարելի է առանձնացնել իմաստային ներակայումների հետևյալ դեպքերը:

1. Ժամանակային իմաստի ներակայում: Բայական ամեն մի ժամանակաձև ունի իր ուրույն նշանակությունը: Այսպես՝ սահմանական եղանակի անկատար ներկան արտահայտում է խոսելու պահին կատարվող, ընթացքի մեջ եղող գործողություն: Սա այն տարբերակիչ հատկանիշն է, որով սահմանական ներկան հակադրվում է մյուս ժամանակաձևերին: Սակայն սահմանական ներկայով կարող են արտահայտվել նաև կատարված ու կատարվելիք գործողություններ, որոնք դուրս են սահմանական ներկայի հասկացակարգային նշանակության սահմաններից: Առաջինը հայտնի է որպես պատմական ներկա, որը ներակայորեն արտահայտում է անցյալում կատարված գործողության նշանակություն, օրինակ՝ «Բայց ահա՛ **գալիս է** ամառը, և նա թագուհուն **ուղարկում է** Սյունյաց ամառանոցները, իսկ ինքը **գնում** Ուտիք, շաբաթներով **նստում** զբոսավայրում...» (Մ 82), «Ավարայրի ճակատամարտը **տեղի է ունենում** 451 թվականին Տղմուտ գետի ափին»: Նշված բայաձևերն ունեն ներկա ժամանակին հատուկ կազմություն, սակայն ցույց են տալիս անցյալում կատարված գործողություն: Անցյալ ժամանակի նշանակության ներակա արտահայտման այս միջոցը կիրառվում է հատկապես կատարված գործողությունները կենդանի ձևով ներկայացնելու, առանձին դեպքերում ամենակարևոր գործողությունները ավելի շեշտելու նպատակով: Այսպես, օրինակ, Սահակ Սևադա իշխանը Գևորգ Մարգաբետունուն անցյալի դեպքերի մասին պատմելիս խոսում էր անցյալով՝ գործածելով անցյալ կատարյալի ձևերը, բայց իր համար ամենացավալի կետերն ընդգծելու համար նա անցյալը ներկայացնում է ներկայով՝ գործածելով անկատար ներկայի ձևերը. «Մինչ այս, մինչ այն, Աբաս արքաեղբոր և նրա աներոջ դավադրությունը երևան *եկավ*, որից ստիպված, ինչպես գիտես, թագավորը *քաշվեցավ* Ուտիք: Եվ, ահա՛, մի դժբախտ օր նամակ **եմ ստանում** իմ դստեր դայակից, թե թագուհին մերձիմահ հիվանդ է Տավուշ բերդում և կամենում է ինձ տեսնել: Իսկույն ևեթ **չտապում եմ** Տավուշ: **Տեսնում եմ** աղջիկս հոգեկան ծանր տագնապի մեջ: **Հարցնում եմ** հիվանդության պատճառը, և նա տանջվելով դառնապես արտասվելով **պատմում է** ինձ յուր դժբախտությունը...» (Մ 83):

Սահմանական անկատար ներկայով հաճախ արտահայտվում են ապագայում հաստատ կատարվելիք գործողությունները, ինչպես՝ «Պատրաստե՛լ տուր նժույզները, ճանապարհի պաշար և համհարգը. վաղը չէ մյուս օրը **ճանապարհվում ենք** Պարսկաստան» (ԴԴ 361), «Դո՛ւրս կորի իսկույն և պատրաստվի՛ր, վաղը **գնում ենք** Պարսկաստան» (ԴԴ 361): Նշված նշանակությունները դիտվում են որպես լրացուցիչ նշանակություններ և հանդես են գալիս ներակայորեն, քանի որ չունեն իրենց հատուկ,

անմիջական ձևային արտահայտությունը: Բայց մյուս կողմից, ինչպես նշում է Ա. Բոնդարկոն, ամենալայն ընդգրկմամբ ներակա արտահայտությունը ևս կարելի է ընդունել որպես ձևական արտահայտություն, քանի որ ներակայորեն արտահայտված նշանակությունը բխում է նրանից, ինչն արտահայտված է արտակայորեն, և այդ պատճառով էլ պարփակում է ձևական արտահայտության լայն հասկացություն (Бондарко 152): Բերված օրինակներում սահմանական ներկան հանդես է գալիս որպես անցյալում կատարված և ապագայում կատարվելիք գործողությունների ներակա արտահայտման ձևաբանական-շարահյուսական միջոց, քանի որ լինելով ձևաբանական միավոր՝ սահմանական ներկան այդ նշանակությունները ձեռք է բերում շարահյուսական կիրառության մեջ:

Պետք է նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ մի քերականությամբ հանդես է գալիս մյուսի նշանակությամբ, չի կարելի ասել, թե նրա համար ծագում է նոր նշանակություն, քանի որ պետք է պահպանվի քերականական կարգերի իմաստային հակադրության սկզբունքը, իսկ ասել, թե օրինակ՝ ներկա ժամանակի նշանակություններից մեկը համընկնում է անցյալ ժամանակի, իսկ մյուսը՝ ապագա ժամանակի հիմնական նշանակության հետ, քանդում է ամբողջ համակարգը («Имплицитность в языке и речи» 23):

Այս առնչությամբ ռուս լեզվաբան Օ. Լարինան անցյալում կատարված և ապագայում կատարվելիք գործողությունների արտահայտման ներակա միջոցները բաժանում է 3 խմբի՝

1. **ձևաբանական-շարահյուսական.** այս խմբում ներառված կառույցների ժամանակային բնույթը կարելի է որոշել՝ հաշվի առնելով բայական կերպաժամանակային ձևերի ձևաբանական առանձնահատկությունները,

2. **շարահյուսական-իմաստային.** ժամանակի անուղղակի նշումը իրացվում է նախադասության մեջ մտնող առանձին միավորների՝ գործողության տեղի, գործողությունը կատարողի դեմքի, տարբեր հանգամանքների, դիպվածային նշանակությամբ կառույցների և սեղմված կառույցների միջոցով,

3. **համատեքստային.** համընթաց գործողություններ, կրկնաբանական անտիցենդենտ (анафорический антецендент), լայն կոնտեքստ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր դրսևորումները (Ларина 214-220):

Իսկ Ա. Ռակուշինան, ընդգծելով, որ միայն քերականությունը ի վիճակի չէ հաղորդելու ժամանակային հարաբերությունների ողջ գամման, առանձնացնում է անցյալի ժամանակային իմաստի դրսևորման միջոցներ գեղարվեստական-գրքային բառապաշարում՝ հնաբառեր, պատմաբառեր, բանաստեղծական բառեր, օտարաբանություններ, նորաբանություններ, տերմիններ ու գրքային բառեր (Ракушина 71-82):

2. Եղանակային իմաստի ներակայում: Հայտնի է, որ եղանակի քերականական կարգի հիմքում ընկած է խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ, ըստ այդմ գործողությունը կարող է ներկայացվել որպես իրական, ստույգ կատարվող, ցանկալի, հրաման և այլն, որոնց հիման վրա էլ առանձնացվում են բայի եղանակները: Բազմազան են հրամանի արտահայտման ձևերը: Հրամանի արտահայտումը հրամայական եղանակի գլխավոր գործառնություն է, սակայն հրաման կարող է արտահայտվել նաև եղանակային այլ ձևերի միջոցով, օրինակ՝ սահմանական եղանակի անկատար ներկայի 2-րդ դեմքով. «Բոլոր տվյալները **հավաքում ես** (= **հավաքի՛ր**) և **փոխանցում** (= **փոխանցի՛ր**) համապատասխան բաժիններ», կամ ենթադրական ապառնիի 2-րդ դեմքով. «Առավոտը ողջ ավանը **կհավաքես** (= **հավաքի՛ր**) ամրոցի հրապարակ, դատաստան պիտի տեսնել փախստական ռամիկի հետ» (Սև 38) (հրամանի արտահայտման այլ ձևերի մասին ավելի մանրամասն տե՛ս Ավետիսյան և ուրիշներ 248-249):

Ի տարբերություն հրամայական եղանակի, որի դեպքում հրամանը կտրուկ է արտահայտվում, անկատար ներկայով ու ենթադրական եղանակով հրամանն ավելի մեղմ է ներկայացվում, այսինքն՝ վերջին դեպքում բացի նրանից, որ ամկա է եղանակային իմաստի ներակայում, արտահայտվում է նաև լրացուցիչ՝ մեղմության նշանակություն:

Կամ սահմանական եղանակի անկատար ներկային և անցյալին ներհատուկ նշանակություններից է իբրև կարգ, սովորույթ կրկնվող գործողություններ արտահայտելը: Երբեմն այդ իմաստը կարող է արտահայտվել ենթադրական անցյալի ձևերով, որը տվյալ եղանակի հասկացակարգային նշանակությունը չէ, օրինակ՝ «Իր սեղանի վրա ամեն օր **կվայելեր** (= **վայելում էր**) սիրած բուրայից կերակուրները, անհրաժեշտաբար **կպարպեր** (= **պարպում էր**) իր հայրենի Կո կանտոնի գինին, **կըմպեր** (= **ընպում էր**) մի բաժակ սուրճ, **կմանրեր** (= **մանրում էր**) մի քանի բիսկվիտ ու **կզնար** (= **զնում էր**) լճափի զարեջրատունը, **կնստեր** (= **նստում էր**) նրա դռան կիսավրանի տակ, **կվառեր** (= **վառում էր**) մի սիգար...» (ԴԴ^Ե 29):

3. Անդեմ ձևերի կիրառությունը դիմավոր ձևերի նշանակությամբ: Խոսեցինք հրամայական եղանակի նշանակությունը ներակայորեն արտահայտող դիմավոր ձևերի մասին, սակայն առանձին դեպքերում գործողության կատարման հրամանը կարող է արտահայտվել նաև անորոշ դերբայով (բայական անդեմ՝ Նախադասություններում): Այսինքն՝ անդեմ բայածևը հանդես է գալիս դիմավոր բայի նշանակությամբ՝ արտահայտելով եզակի կամ հոգնակի 2-րդ դեմք. հմմտ. «Լռե՛լ» և «Լռի՛ր // լռե՛ք», «Կատարե՛լ հրամանը» և «Կատարի՛ր // կատարե՛ք հրամանը» և այլն:

4. Դիմային իմաստի ներակայում: Ըստ հասկացակարգային նշանակության՝ 1-ին դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է խոսողը (խոսողները), 2-րդ դեմքը՝ խոսակիցը (խոսակիցները), 3-րդ դեմքը՝ որևէ երրորդ անձ (անձեր): Սակայն կան դեպքեր, երբ այս կամ այն դեմքը արտահայտում է իրեն ոչ հատուկ իմաստներ: Սրա տիպիկ օրինակը հարգական հոգնակին է՝ **Դուք**-ը, երբ հոգնակի թվով արտահայտվում է եզակի թվի նշանակություն: Դիմային իմաստի ներակայումն օգտագործվում է որպես յուրօրինակ ոճական հնարք: Այն դրսևորվում է բոլոր գործառական ոճերում, բայց ոչ հավասարապես: Այսպես՝ գիտական, պաշտոնական ոճերում պայմանավորված դրանց ճշգրտության, միանշանակության պահանջով՝ այս հնարքը սահմանափակ դրսևորում ունի. մեծ մասամբ դրսևորվում է հեղինակային **մենք**-ը, երբ հոգնակի 1-ին դեմքը կիրառվում է եզակի 1-ին դեմքի նշանակությամբ, օրինակ՝ «Մեր նպատակն է ուսումնասիրել ներակայման առանձնահատկություններն ու դրսևորումները լեզվի բոլոր մակարդակներում», «Պահանջում ենք հաստատել ծրագիրը» և այլն:

Դիմային ներակայման դրսևորումները բազմազան են առօրյա-խոսակցական ու գեղարվեստական ոճերում: Գեղարվեստական խոսքում դա պայմանավորված է գեղարվեստական ստեղծագործության այն առանձնահատկությամբ, որ միասնաբար հանդես են գալիս հեղինակային խոսքն ու կերպարների ուղղակի խոսքը, և հեղինակը տիպականացման, միջավայրի պատկերը ստեղծելու համար իր կերպարներին խոսեցնում է իրենց շրջանակին հատուկ, առօրյա-խոսակցական լեզվով: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել դիմային փոխարինումների հետևյալ դեպքերը.

ա) Եզակի 3-րդ դեմքը 1-ին դեմքի նշանակությամբ. սա այն դեպքերում է, երբ խոսողն իր մասին խոսում է 3-րդ դեմքով, օրինակ՝ «Օ՛, թու՛յլ տուր, որ միայն ես ծառայեմ քեզ, իմ քացր, իմ անման թագուհի. մի՞թե **Սեդան պառավել է** այնքան, որ այլևս ոչ մի բանի պիտանի լինել չի կարող» (Մ 9. խոսողը Սեդան է), «Սևադան թող ներե, նրա որդիքը թող ներեն, բոլոր աշխարհը ներե, **Ամրամ սեպուհը չի ներիլ**» (Մ 110. Ցիլկ Ամրամն ինքն է խոսում իր մասին):

բ) Եզակի 3-րդ դեմքը եզակի 2-րդ դեմքի նշանակությամբ, օրինակ՝ «- Եկա հիշեցնելու, որ ցուրտ է, և **թագուհին կարող է մրսել**»:

- Այդ ես ինքս կարող էի իմանալ,- նկատեց թագուհին» (Մ 7):

Սեդան իրենց գրույցի ժամանակ ուղղակիորեն թագուհուն **դու**-ով դիմելու փոխարեն (դու կարող ես մրսել) նրան դիմում է **3-րդ** դեմքով:

գ) *Եզակի 2-րդ դեմքը ընդհանրական նշանակությամբ*. Եզակի 2-րդ դեմքով կարող են արտահայտվել այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են ոչ միայն դիմացինին, խոսակցին, այլև ընդհանրապես բոլոր մարդկանց: Այս դեպքում առկա է միաժամանակ երկու քերականական կարգերի (թվի և դեմքի) հասկացակարգային նշանակությունների ներակայում, քանի որ մի կողմից՝ Եզակի թվով արտահայտվում է հոգնակի թվի իմաստ, մյուս կողմից՝ 2-րդ դեմքով՝ առհասարակ բոլոր 3 դեմքերին վերաբերող նշանակություններ, օրինակ՝ «Կան իրավիճակներ, երբ **մտածում ես, մտածում** ու ելք **չես գտնում»** կամ «Բայց ինչպե՞ս **չվրդովվես**, երբ **տեսնում ես**, թե նա այդ բոլոր ոճիրները գործելուց հետո դեռ ապագա սերունդը խաբելու համար էլ հիշատակարաններ է կառուցում» (Մ 28): Պատահական չէ, որ նման կառույց ունեցող նախադասությունները կոչվում են **ընդհանրական դիմավոր** (Պապոյան, Բաղդկյան 85): Կարծես նախադասության անվանումն իսկ խոսում է նրանում առկա դիմային իմաստի ներակայման մասին: Այս երևույթը մեծ մասամբ դրսևորվում է առածներում, որոնք խրատական բնույթ ունեն, և խրատներն ուղղված են բոլորին, ինչպես՝ «Հազար **չափի՛ր**, մեկ **կտորի՛ր**», «**Կե՛ր** փորձած թանը, **մի՛ կեր** անփորձ մածունը» և այլն: Նույնպիսի ներիմաստ կարող է արտահայտվել նաև 3-րդ դեմքով, օրինակ՝ «Մի ձեռքով երկու ձմերուկ **չեն բռնի**»:

դ) *Հոգնակի 1-ին դեմքը 2-րդ դեմքի նշանակությամբ*. այս կիրառությունը պայմանավորված է հիմնականում հաղորդակցության շրջանակով և շփումն անմիջական դարձնելու ձգտումով: Այսպես, օրինակ, ուսուցիչը հաճախ աշակերտներին դիմում է այսպես. «Սովորե՛լ ենք դասը», այսինքն՝ հարցը ձևակերպում է 1-ին դեմքով, բայց իրականում այն ուղղված է միայն աշակերտներին, հմմտ.՝ «Սովորե՛լ եք դասը»: Կամ բժիշկը հիվանդին այցելելիս հարցնում է. «Ինչպե՞ս ենք մեզ զգում», սակայն այս արտաքին ձևակերպման տակ թաքնված է միայն հիվանդին ուղղված հարց, հմմտ.՝ «Ինչպե՞ս եք Ձեզ զգում» և այլն:

Վերևում խոսեցինք հեղինակային **մենք**-ի մասին: Հավելենք, որ հոգնակի 1-ին դեմքի կիրառությունը Եզակի 1-ին դեմքով նաև բարբառային երևույթ է և լայն տարածում ունի առանձին բարբառներում:

5. Թվային իմաստի ներակայում: Թվի քերականական կարգը ներկայանում է Եզակի ու հոգնակի թվերի հակադրությամբ: Եզակի թիվը ցույց է տալիս մեկ, Եզակի առարկա, հոգնակի թիվը՝ միևնույն տեսակի մեկից ավելի առարկաներ: Առանձին դեպքերում, սակայն, այս սահմանազատումը խախտվում է. մեկը հանդես է գալիս մյուսի նշանակությամբ: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ Եզակի թվով դրված գոյականն արտահայտում է ընհանրական նշանակություն, օրինակ՝ «**Սկյուռը** կյանքի մեծ մասն անցկացնում է ծառերի վրա, սնվում է փշատերև բույսերի սերմերով, ընկույզներով», «Գոյականը ցույց է տալիս առարկա». խոսքը ոչ թե *մեկ սկյուռի, գոյականի* մասին է, այլ *սկյուռների, գոյականների* մասին ընդհանրապես: Իհարկե, այս երևույթը դրսևորվում է բոլոր գործառական ոճերում, բայց և այնպես այն առավել տիպական է գիտական ոճին: Եվ դա այն պատճառով, որ գիտական ոճում գոյականները սովորաբար հանդես են գալիս ընդհանրական նշանակությամբ՝ ցույց տալով ոչ թե կոնկրետ առարկա, այլ տվյալ տեսակի առարկան ընդհանրապես (Ավետիսյան և ուրիշներ 297):

Որոշակի կառույցներում շաղկապական արժեքով գործածվելիս հանդես գալով Եզակի թվով՝ հոգնակի թվի իմաստ է արտահայտում **որ** հարաբերական դերանունը, օրինակ՝ «Երբ մտան առաջին պատահած փողոցը՝ Արշակը նկատեց դիակներ, **որ** (= **որոնք**) ընկած էին գետնին՝ փոշիների մեջ, տների առաջ, պատերի տակ» (ՍՉ 389):

6. Հոլովական իմաստի ներակայում: Սա հիմնականում հանդիպում է առօրյա-խոսակցական լեզվում պայմանավորված խոսողի՝ արագ, հնարավորինս սեղմ տեղեկատվությունը հաղորդելու ձգտումով:

Այսպես՝ հաճախ «Որտե՞ղ ես» հարցին պատասխանում ենք՝ «**Քաղաք** եմ», «**Տուն** եմ», որոնք նշանակում են՝ «**Քաղաքում** եմ», «**Տան** եմ», կամ բերենք օրինակներ գեղարվեստական գրականությունից. «- Իսկ հոգևոր տերը ժամանե՞լ է,- հարցրեց նա հանգիստ:

- **Էջմիածին** (= **Էջմիածնում**) է, հոգևոր ժողովում,- ասաց բերդապետը...» (ԴԴ 83), «Թագավորը յուր իշխաններից թողված, ապստամբներից հալածված՝ նստած է **Կաթավաքար** (= **Կաթավաքարում**)» (Մ 161), այսինքն՝ 1-ին, 3-րդ և 4-րդ դեպքերում ներակայված է ներգոյական հոլովի, 2-րդ դեպքում սեռական-տրական հոլովի իմաստը: Հոլովական իմաստի ներակայումը չհասկանալու դեպքում բերված նախադասությունները պարզապես անհեթեթություն կլինեին:

Կամ հոլովական իմաստի ներակայման վառ դրսևորում է **բացարձակ անորոշը** կամ **բացարձակ աներևոյթը**, երբ անորոշ դերբայի ուղղական հոլովածը կիրառվում է սեռական-տրականի և բացառականի փոխարեն՝ փաստորեն ներակայելով վերջիններիս իմաստները, օրինակ՝ «Խուսափում էր հանդիպել», «Դադարել է գոյություն ունենալ», «Պատրաստվում է գնալ»՝ փոխանակ «Խուսափում էր հանդիպելուց», «Դադարել է գոյություն ունենալուց», «Պատրաստվում է գնալու»: Սա առաջին հերթին խոսակցական լեզվին բնորոշ երևույթ է, բայց և այնպես բացարձակ աներևոյթն աստիճանաբար տարածվում և լայն կիրառություն է գտնում նաև գրական լեզվում:

Բացի այն դեպքերից, երբ ձևաբանական մի կարգը հանդես է գալիս մեկ այլ կարգի նշանակությամբ, լեզվաբանության մեջ առանձնացվում են ձևաբանական մակարդակում ներակա տեղեկատվության արտահայտման ևս երկու դեպք՝ որևէ քերականական կարգ արտահայտվում է գրոյական ձևով և տվյալ քերականական կարգի միջոցով արտահայտվում են լրացուցիչ նրբերանգներ («Имплицитность в языке и речи» 15): Քերականական իմաստները կարող են արտահայտվել հատուկ մասնիկներով կամ առանց մասնիկների՝ այսպես կոչված **զրո** կամ **բացասական ձևով**: Այսպես, օրինակ, եզակի թվի իմաստն արտահայտվում է առանց որևէ մասնիկի (տուն, այգի), իսկ հոգևակի թվի իմաստը՝ սովորաբար **եր** և **ներ** մասնիկներով (տներ, այգիներ): Կամ որոշյալ առումն արտահայտվում է **ը** և **ն** հոդերով (տունը, այգին), իսկ անորոշ առումը՝ առանց հոդերի (տուն, այգի): Այսինքն՝ նման դեպքերում մասնիկի բացակայությունը ևս արտահայտության մի յուրահատուկ ձև է և հակադրվում է մասնիկներով արտահայտվող ձևերին (Ասատրյան 12): Հետևաբար նման դեպքերում գրոյական ձևը ներակա հաղորդման դեպքերի շարքին չի դասվում: Ռուսերենում գրոյական ձևը ներիմաստի արտահայտման դեպքերին դասելու համար հիմք են ընդունում ստորոգման արտահայտման հատուկ ձևի բացակայությունը (օրինակ՝ он красивый, он дурак) («Имплицитность в языке и речи» 16):

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ պարունակվող նշանակությունից բացի ծագում են լրացուցիչ նշանակություններ, առավել հստակ կարելի է ներկայացնել անցյալ կատարյալի ու վաղակատարի հակադրությամբ: Երկուսն էլ արտահայտում են կատարված, ավարտված գործողություն այն տարբերությամբ, որ վաղակատարի դեպքում արտահայտվում է հետևանքի հարատևության լրացուցիչ նշանակություն:

Կամ կարելի է նշել պայմանականության ներակա իմաստի արտահայտումը բայի ենթադրական, հարկադրական եղանակների անցյալի ու սահմանական եղանակի ապակատար անցյալ ժամանակաձևերում (Կզնայինք արշավի // Պիտի գնայինք // Գնալու էինք արշավի, *եթե անձրև չգար*) (Աբրահամյան 9: Մասնավորապես պայմանական ասույթներում ներակայման մանրամասն քննությունը տե՛ս Բրուտյան):

Այսպիսով՝ լեզվի ձևաբանական մակարդակի սպառիչ ուսումնասիրության համար կարևոր է և՛ արտակայորեն, և՛ ներակայորեն արտահայտված կարգերի

ուսումնասիրությունը, քանի որ յուրաքանչյուր ձևաբանական միավոր ունի իրեն հատուկ նշանակություն, սակայն առանձին դեպքերում իրացվելով խոսքում կարող է արտահայտել նաև այլ նշանակություններ:

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան, Սերգեյ. «Ներակայումը և հայոց լեզվի զարգացման մի քանի հարցեր»։ «Լրաբեր» հաս. գիտ., № 1, Եր., 2002:
2. Ասատրյան, Մանվել. *Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն*, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2004:
3. Ավետիսյան, Յուրի և ուրիշներ. *Հայոց լեզու և խոսքի մշակույթ*, Եր., ԵՊՀ հրատ., 2016:
4. Բրուտյան, Լիլիթ. *Ներակայման տեսության հիմունքները*, Եր., «Հայաստան» հրատ., 2002:
5. Պապոյան, Արտաշես և Բադիկյան, Խաչիկ. *Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն*, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2003:
6. «Имплицитность в языке и речи». отв. ред. Е. Г. Борисева, Ю. С. Мартемьянов, М.: Языки русской культуры, 1999.
7. Барышева, Алёна. «Имплицитность как свойства языковых единиц и категории». *Филологические науки. Вопросы теории и практики*, № 4 (34), 2014, с. 38-40, https://www.gramota.net/articles/issn_1997-2911_2014_4-2_08.pdf.
8. Бондарко, Александр. *Грамматическое значение и смысл*. Л.: Наука, 1978.
9. Кацнельсон, Соломон. *Типология языка и речевое мышление*. Л.: Наука, 1972.
10. Ларина, Ольга. «Средства имплицитной темпоральной локализации будущего действия: возможная классификация». *Вестник Волгу, Серия 2, Языкознание*, т. 15, № 4, 2016, с. 214-220, <https://cyberleninka.ru/article/n/sredstva-implitsitnoy-temporalnoy-lokalizatsii-buduschego-deystviya-vozmozhnaya-klassifikatsiya/viewer>.
11. Ракушина, Альфия. *Литературно – книжная лексика как средство имплицитной передачи темпоральной локализации в прошлом в произведениях художественной литературы* / Ракушина А., Ивушкина Т., Научный диалог, № 9 (57), 2016, с. 71-82, <https://cyberleninka.ru/article/n/literaturno-knizhnaya-leksika-kak-sredstvo-implitsitnoy-peredachi-temporalnoy-lokalizatsii-v-proshlom-v-proizvedeniyah/viewer>.

Համառոտագրություններ

ԴԴ – Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Եր., «Լույս» հրատ., 1987:

ԴԴ^Ե – Դ. Դեմիրճյան, Երկեր երկու գրքով, Գիրք առաջին: Պատմվածքներ, Եր., «Սովետական գրող» հրատ., 1977:

Մ – Մուրացյան, Գևորգ Մարզպետունի, Եր., «Լույս» հրատ., 1988:

Ս2 – Սո. Չորյան, Հայոց բերդը, Եր., Հայպետհրատ, 1959:

ՍԽ – Ս. Խանզադյան, Միսիթար Սպարապետ, Եր., «Սովետական գրող» հրատ., 1988:

Works Cited

1. Abrahamyan Sergey, Nerakayumy' ev hayoc lezvi zargacman mi qani harcer, «Lraber» has. git., № 1, Er., [Implicitness and Several Issues of the Development of the Armenian language, "Lraber", social sciences, N1, Yerevan] 2002.
2. Asatryan Manvel, Jhamanakacic hayoc lezu. D'evabanut'yun, Er., Erevani hamalsarani hrat., [Modern Armenian. Morphology, Yerevan Publishing House] 2004.

3. Avetisyan Yuri ev urishner, Hayoc lezu ev xosqi mshakuyt', Er., EPH hrat., [Armenian Language and Word Culture, Yerevan, YSU publishing] 2016.
4. Brutyan Lilit', Nerakayman tesut'yan himunqner'y', Er., «Hayastan» hrat., [Fundamentals of Implicitness Theory, Yerevan, Hayastan Publishing House] 2002.
5. Papoyan Artashes, Badikyan Xachik, Jhamanakacic hayoc lezvi sharahyusut'yun, Er., Erevani hamalsarani hrat., [Syntax of the modern Armenian language, Yerevan, YSU publishing] 2003.
6. «Implicitnost' v jazyke i rechi», otv. red. E. G. Boriseva, Ju. S. Martem'janov, M.: Jazyki russkoj kul'tury, ["Implicitness in language and Speech", ed. by E. G. Boriseva, Yu. S. Martemyanov, M.: Languages of Russian culture] 1999.
7. Barysheva Aljona. Implicitnost' kak svojstva jazykovykh edinic i kategorii. Filologicheskie nauki. Voprosy teorii i praktiki, № 4 (34), 2014, s. 38-40, [Implicitness as Properties of Language Units and Categories. Philological sciences. Questions of Theory and Practice, No. 4 (34), 2014, pp. 38-40] https://www.gramota.net/articles/issn_1997-2911_2014_4_2_08.pdf.
8. Bondarko Aleksandr. Grammaticheskoe znachenie i smysl. L.: Nauka, [Grammatical Meaning and Sense. L.: Nauka] 1978.
9. Kacnel'son Solomon. Tipologija jazyka i rechevoe myshlenie. L.: Nauka, [Typology of Language and Speech Thinking. L.: Nauka] 1972.
10. Larina Ol'ga. Sredstva implicitnoj temporal'noj lokalizacii budushhego destvija: vozmozhnaja klassifikacija. Vestnik Volgu, Serija 2, Jazykoznanie, t. 15, № 4, 2016, s. 214-220, [Means of Implicit Temporal Localization of the Future Action: A Possible Classification. Bulletin of the Volga State University, Series 2, Linguistics, vol. 15, No. 4, 2016, pp. 214-220] <https://cyberleninka.ru/article/n/sredstva-implitsitnoy-temporalnoy-lokalizatsii-buduschego-deystviya-vozmozhnaya-klassifikatsiya/viewer>.
11. Rakushina Al'fija. Literaturno – knizhnaja leksika kak sredstvo implicitnoj peredachi temporal'noj lokalizacii v proshlom v proizvedenijah hudozhestvennoj literatury / Rakushina A., Ivushkina T., Nauchnyj dialog, № 9 (57), 2016, s. 71-82, [Literary And Book Vocabulary as a Means of Implicit Transmission of Temporal Localization in the Past in Works of Fiction / Rakushina A., Ivushkina T., Scientific Dialogue, No. 9 (57), 2016, pp. 71-82] <https://cyberleninka.ru/article/n/literaturno-knizhnaya-leksika-kak-sredstvo-implitsitnoy-peredachi-temporalnoy-lokalizatsii-v-proshlom-v-proizvedeniyah/viewer>.

IMPLICITNESS AT THE MORPHOLOGICAL LEVEL OF MODERN ARMENIAN

MIRANUSH KESOYAN

Yerevan State University,

Chair of the Armenian Language, Ph.D. Student,

Yerevan, Republic of Armenia

The purpose of the article is to make sure that the study of implicated grammatical categories has a great importance for the complete study of the morphological level of a language. Our task is to reveal and to introduce the manifestations of the implicitness at the morphological level of Modern Armenian.

In the course of the study analytical and comparative methods have been applied.

Every single morphological unit has its particular meaning. However, when applied in speech, it can carry other meanings as well. In other words, a particular morphological unit is being used with the meaning of another one, which is considered to be implicated in this case. So, the following forms of implicitness on morphological level can be enumerated – 1) implicitness of time meaning, 2) implicitness of mood meaning, 3) use of impersonal form with a meaning of personal, 4) implicitness of personal meaning, 5) implicitness of number meaning, 6) implicitness of case meaning.

In some cases, alongside with the main meaning, additional meanings can also be expressed (e. g. meaning of consequence eternity in case of past perfect tense).

Keywords: *implicitness, “hidden” grammar, implicitness of meanings of time, mood, person, number, case, historical present, perfect indefinite, zero or negative forms.*

ИМПЛИЦИТНОСТЬ НА МОРФОЛОГИЧЕСКОМ УРОВНЕ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

МИРАНУՍ ԿԵՏՅԱՆ

*аспирант кафедры армянского языка ЕГУ
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – обосновать, что для полноценного изучения морфологического уровня языка важное значение имеет рассмотрение имплицитно выраженных категорий. Наша задача – выявить и представить проявления имплицитного на морфологическом уровне современного армянского языка.

В процессе исследования были применены аналитические и сравнительные методы.

Каждая морфологическая единица имеет свое собственное значение, но в отдельных случаях, выражаясь в речи, она может приобретать и другие значения. Иначе говоря, одна морфологическая единица используется в значении другой, которая в данном случае рассматривается как имплицитно выраженная. Таким образом, на морфологическом уровне можно разделить следующие проявления имплицитности: 1) имплицитность временного значения, 2) имплицитность наклонения, 3) использование безличной формы в значении личной, 4) имплицитность личного значения, 5) имплицитность значения числа, 6) имплицитность значения падежа.

В отдельных случаях, кроме основного, могут выражаться также дополнительные значения (например значение долговечности последствия в давно прошедшем времени).

Ключевые слова: *имплицитность, «скрытая» грамматика, имплицитность значений времени, наклонения, лица, числа, падежа, исторический настоящий, абсолютная неопределённая, нулевая или отрицательная форма.*

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ



ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՐԱԶԻ ՄԻՋՈՎ. ԷԼՊԻՍ ԿԵՍԱՐԱԳՅԱՆԻ «ՈՂԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ» (ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹԻՈՒՆ) ԷՍՍԵՆ*

ՉՏԴ 82

DOI: 10.52063/25792652-2021.2-172

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Ալբերդյանի անվան գրականության ինստիտուտի
ավագ գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
թ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
nairahambardzumyan@yahoo.com

Ուսումնասիրության նպատակը արևմտահայ կին հեղինակ Էլպիս Կեսարացյանի՝ 1861-1863 թվականներին Կ. Պոլսում հիմնադրած ու հրատարակած «Կիթառ» հանդեսում (աշխարհում առաջին հայալեզու հանդեսը «կանանց մասին և կանանց համար»՝ «Հրավեր հայկազն օրհորդաց» նշանաբանով) տպագրած «Ոգին Հայրենասիրութեան» (Երևակայութիւն) (1862) էսսեի մեկնությունն է:

Մեր խնդիրը էսսեի համատեքստում 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականության մեջ կանանց հիմնախնդիրների ու պատմական ժամանակաշրջանի՝ որպես պատմահասարակական, բարոյահոգեբանական ու գաղափարագեղագիտական ամբողջության դիտարկումն է:

Կիրառել ենք ֆենոմենոլոգիական (իմաստաբանական ու տիպաբանական ընթացակարգը, առանձնահատկությունները, դերը, նշանակությունը և ակդեցության ոլորտները սոցիալ-հասարակական ու քաղաքական կյանքում, հասկացման մեթոդաբանությունը) և պատմահամեմատական (ավանդական արժեքների ու կողմնորոշումների վերանայումը, գրական պարզացումների հետագիծը) մեթոդները:

Էլպիս Կեսարացյանի «Ոգին Հայրենասիրութեան» (Երևակայութիւն) էսսեն ամփոփում է հեղինակի ազգային ինքնության գիտակցությունը և գեղագիտական հղումները, որոնք նա փոխկապակցում է պատմահասարակական, բարոյահոգեբանական ու իրավաբանական հիմնահարցերին:

Ուսումնասիրությունը կարևոր է և արդիական ոչ միայն Էլպիս Կեսարացյանի ստեղծագործության համակարգման, այլև հայագիտության մեջ կանանց հիմնահարցերի քննության տեսանկյունից:

Հիմնաբառեր՝ Էլպիս Կեսարացյան, այլաբանություն, արևմտահայ գրականություն, 19-րդ դարի երկրորդ կես, էսսե, պատմություն, ֆենոմենոլոգիա, աշխարհաքաղաքական փոփոխություններ:

* Հոդվածը ներկայացվել է 09.06.2021թ., գրախոսվել՝ 20.06.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:

Նախաբան

Հայոց ազգային ինքնության ներքին տիրույթները մշտապես դիտարկելի են գոյության իմաստի և ճակատագրի էքզիստենցիալության, ազգապահպանման ու ազգակերտման մեծ նախագծի ու հարցերի, դրանց պատասխանները որոնելու և գտնելու մեջ, որոնք լրջորեն դրսևորվեցին ինչպես 18-19-րդ դարավերջին, այնպես էլ 20-րդ դարասկզբին ու այսօր: Սույն երևույթը իր արտահայտությունն է գտնում հատկապես, երբ հայոց ազգը հայտնվում է ազգային ինքնությանն ու գոյությանը սպառնացող իրավիճակներում, երբ նրա ճակատագիրը վերացականությունից թանձրանում է գոյաբանական խնդիրների և լինել-չլինելու հարցերի տիրույթում:

19-րդ դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում հայ մտավորականությունը դժգոհ էր օսմանյան բռնապետության ռեժիմից ու քաղաքականությունից, թեպետ նկատվում էին սոցիալ-հասարակական, քաղաքական, կրթական, մշակութային էական տեղաշարժեր: Եվրոպական համալսարաններում կրթություն ստացած, լուսավորության ու հասարակական առաջընթացի գաղափարներով ոգևորված ու տարված հայ մտավորականությունը (կին, թե տղամարդ) կարևոր գործունեություն էր ծավալում գրականության, մամուլի, կրթության, ինչպես նաև սոցիալ-հասարակական տարբեր ոլորտներում: Սակայն դեռևս 1850-60-ական թվականներից մամուլի, կրթության և այլ բնագավառներում ձևավորվել էր կայսերական գրաքննությունը, որն իր ողջ թափով սահմանափակում էր Օսմանյան Թուրքիայում ապրող հպատակ ժողովուրդների (ազգային փոքրամասնությունների) ազատարար գաղափարները՝ զրկելով նրանց ստեղծագործ մտածողությունից, բռնանալով կամքին՝ «Կողմնակի վերահսկողության ենթարկվելով գրատպության օրենքի (1857 թ.) շրջանակներում, Թուրքիայում թերթերն ու ամսագրերը իրավական կանոնարկման առանձին բնագավառ դարձան այն ժամանակից, երբ հրապարակվեց մամուլի մասին օրենքը (1864 թ.): <...> Գրաքննությունը որակական փոփոխություններ ապրեց 1860-1870-ական թթ., երբ էլ ավելի սրվեցին հակասությունները մի կողմից հպատակ ժողովուրդների և բռնակալության, մյուս կողմից՝ վերջինիս և կայսրությանը սպառնացող տերությունների միջև» (Խառատյան 5-6)¹: Ուստի երբ բռնապետությանն ընդդիմացող ազգային ինքնագիտակցությունը, ազգային-ազատագրական ու գաղափարաբանական տրամադրությունները իրենց արտահայտությունն էին գտնում թուրքական մամուլում, գրաքննությունն առավել կատաղի դրսևորումներ էր ունենում և ուղղվում հատկապես մտավորականության դեմ (Խառատյան): Չնայած այս ամենին՝ որքան էլ զարմանալի է, Օսմանյան Թուրքիայում, հատկապես Կ. Պոլսում ակտիվ էր նաև ազգային փոքրամասնությունների (այստեղ՝ հայերի) կին մտավորականների հասարակական գործունեությունը: Կանայք հետևողականորեն նպաստում էին կրթության ու դաստիարակության, ազգային ինքնության գիտակցման, իրավունքի ու ազատարար այլ գաղափարների տարածմանը: Արևմտահայ մամուլի հասարակական-քաղաքական ու մշակութային արժեքանական համակարգերում կարևորվում էին սոցիալ-տնտեսական, իրավական, ազգային և քաղաքական գիտակցությունն ու դրանց դրսևորումները, որոնք խորապես ազդում էին օսմանյան կայսրության վարած ներքին ու արտաքին քաղաքականությունների վրա:

¹ 1864 թ. Դեկտեմբերի 31-ին հրապարակված մամուլի օսմանյան օրենքը, որը բավականաչափ լիբերալ կողմեր ուներ, արդեն 1867 թ. Փետրվարին փոխարինվեց անհամեմատ անհանդուրժող և խիստ՝ Ալլիի որոշմամբ: Որոշումը փաստորեն սառեցնում էր ընդունված օրենքը, ուղղվում Թուրքիայում մամուլի ամեն մի ազատության դեմ և իրավական նորմերը փոխարինում ոստիկանական կամայականություններով (Խառատյան 5-6):

Էլպիս Կեսարացյանը և «Կիթառ» հանդեսը

1861 թվականին գրող, լրագրող, հրապարակախոս և առաջին հայ կին խմբագիր Էլպիս Կեսարացյանը¹ հիմնում ու խմբագրում է «Կիթառ»² ամսօրյա հանդեսը, որի առաջին համարը տպագրվում է 1862 թվականի օգոստոսի մեկին Կ. Պոլսում: Երևույթը մեծ ու լուրջ հեղափոխություն էր ոչ միայն օսմանյան բռնապետության մեջ ապրող մտավորական հայ տղամարդկանց ու կանանց, այլև սուլթանական գրաքննության համար: «Կիթառը» պոլսահայ և ընդհանրապես աշխարհում առաջին հայալեզու հանդեսն էր՝ «կանանց մասին և կանանց համար»՝ «Հրավեր հայկազն օրհորդաց» նշանաբանով: Հանդեսի խմբագրուհին իր հոդվածները ստորագրել է «Էլպիս Կեսարացեան Ե. Կ. Տ. Հայկուհի»: Առաջին համարի հրապարակումից հետո «Կիթառը» լույս է տեսնում ընդամենը յոթ ամիս: Տպագրվում է միայն վեց համար: Ինչո՞ւ «Կիթառ»³ և ո՞րն է հանդեսի նպատակը հարցերին բազմաթիվ այլ ուղեկցող տեսակետների հետ Կեսարացյանը պատասխանում է «Յառաջաբանում», որում, որպես առաջնորդող երկխոսություն, դիտարկում է ազգասիրության, ազգօգուտ գործերին, հայ տիկնանց ու աղջիկների դաստիարակությանը, էթիկական ու բարոյական չափանիշներին, գեղագիտությանն առնչվող հարցեր՝ կարևորելով կրթությունը, որն այս պարագայում նաև եվրոպական քաղաքակիրթ մոտեցումների ու ճաշակի ձևավորման ենթատեքստ ունի: Հանդեսի առաջնորդողում Կեսարացյանը հայ տիկնանց և օրհորդներին ուղղորդում է դեպի ազգասիրության ու հայրենասիրության կարևորագույն գաղափարները, տեղեկացնում «ազգը յուզող խնդիրներու» և «բացուած բանավէճերուն» շուրջ կանանց տեսակետներն ու մտքերը հրապարակայնորեն արտահայտելու քաջության և իրավունքի մասին. «Այսու դիտմամբ յանձն առած եմ այս Կիթառն անուն ամսաթերթին հրատարակման գործադիր լինի, որով ոչ թե մեր փանաքի գրիչը ՚ի հրապարակ հանել կը ցանկամք, այլ մեր սիրելի ընկերակցաց սրտից քաջալերութիւն և խրախոյս տալ որ զօրանան ուսման և կրթութեան մէջ: Հանդիսիս նիւթերը պիտի լլլան Օրհորդաց դաստիարակութիւն, բարոյական և բանասիրական յօդուածներ, Հայրենասիրութեան յորդորանք, Ազգային երգեր, պատմութիւն, ոտանաւորներ և առակներ: Սոյն անուամբ պատշաճ սեպած եմ կոչել, որ «Կիթառը» իւր մեղմ եղանակաւ պիտի հնչէ ուսումնասէր Տիկնանց և Օրհորդաց փափուկ զգացմանց Ազգասիրութեան և ուսման սերը, կրթութիւն, քաղաքավարութիւն, և համարձակութիւն հանդերձ պարկեշտութեամբ, արթնութիւն շահավոր գործերու մէջ, և ժրութեամբ փոյթ ունենալ օրհորդաց անշուք վիճակը կրթութեան գեղեցիկ ձիթերով բարեգարդելու: Եւ թե՛ Կիթառիս լարերը քաջ ներդաշնակութիւն չունենան այլ հայրենի և Ազգուն սեր հնչելու համար գուցէ ախորժելի ընծայի ընկերակցացս» («Ընկերութեան օգտակարութիւնը» 1: 1-2):

Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին Կեսարացյանը արտահայտում էր մտքեր ու գաղափարներ, որոնք շրջադարձային էին իր և հայոց մտավորականության կյանքում: Կեսարացյանը ստեղծագործում էր գրական տարբեր ժանրերում՝ էսսեներ, բանաստեղծություններ, աֆորիզմների նշանակություն ունեցող իմաստուն մտքեր և

¹ Կեսարացյան (Տողրամաճյան) Էլպիս - ծնվել է 1830 թվականին Կ. Պոլսում: Նա առաջին կին լրագրողն էր և առաջին խմբագիրը, իսկ «Կիթառը»՝ «կանանց մասին և կանանց համար» առաջին հայերեն հանդեսը Կ. Պոլսում: Կրթությունը ստացել է Օրթագյուղի և Պեշկոթաշի հայկական դպրոցներում: 1879թ. հրատարակել է «Նամականի առ ընթերցասէր հայուհիս» ժողովածուն: 1872 թվականից որպես ուսուցչուհի աշխատել է Մաքրուիյաց վարժարանում: Աշխատակցել է պոլսահայ մամուլին:

² «Կիթառ»: Հանդես ամսօրեայ: 1862-1863, Կ. Պոլիս: Հրավեր Հայկազն օրհորդաց: Խմբ.- տնօրեն՝ Ե. Կ. Տ. Հայկուհի (Էլիպս մայրապետ Տողրամաճյան-Կեսարացեան): Տպ. Ռ. Յ. Զիւրթեան:

³ Ենթադրելի է, որ կիթառը նմանեցրել են կնոջ մարմնին, իսկ նրա մեղմ հնչյունները՝ կնոջ ձայնին:

գաղափարներ: Ե. Կ. Ս. Էլախի Տողրամաճյան-Կեսարացյանը «Կիթառ» հանդեսի բոլոր վեց համարներում տպագրել է իր «Ոգին հայրենասիրութեան» (Երեւակայութիւն), «Ընկերութեան օգտակարութիւնը», «Իրաւունքը ի գործ դնելը յանդգնութիւն չէ», «Դաստիարակութիւն օրիորդաց» էսսեները, որոնցում նա սոցիալ-հասարակական ու քաղաքական անհավասար մրցակցության դրսևորումների և դրանց պատճառների դիտարկմանը զուգահեռ անդրադառնում ու քննում է կին - տղամարդ իրավահավասարության հնարավոր չափանիշները և արժեհամակարգային իրացումները, կատարում է կնոջ կրթության, դաստիարակության և իրավունքների հիմնահարցերը բարձրաձայնող ներքին իմաստաբանական հղումներ («Ոգին հայրենասիրութեան» (Երեւակայութիւն), «Ընկերութեան օգտակարութիւնը», «Իրաւունքը ի գործ դնելը յանդգնութիւն չէ», «Դաստիարակութիւն օրիորդաց»): Կեսարացյանը անդրադառնում է նաև կնոջ՝ կրթության ու դաստիարակության միջոցով զարգանալու ուղիների, սոցիումում նրա դերակատարման, նշանակության, սոցիալ-հասարակական կյանքում սեռերի ազատության ու հավասարության գաղափարներին՝ արժևորելով դրանք ազգային առանձնահատկությունների տիրույթում: Կեսարացյանը հիմնավորում է նաև հայ կնոջ ինքնության, իրավունքի, կին-տղամարդ իրավահավասարության և երկու սեռերի գրական լեզվատիրութիւնը՝ բացահայտելով կրթության ու գիտելիքի, ինչպէս նաև ժառանգականության իրավունքի պահպանման ու փոխանցման անհրաժեշտութիւնը: Կեսարացյանի՝ որպէս հայ կնոջ ինքնադրսևորման, ինքնիրացման, անձնական փորձառության հնարավոր տարաբնու հատկանիշների բացահայտմանը զուգահեռ՝ հստակվում է գաղափարը, թէ պատմութիւնում ուսումնասիրելը օգտակար է բոլորին:

Կիթառի այլաբանական պատկերումով Էլախի Կեսարացյանը բացահայտում է հայոց դարավոր պատմության ազատաբեր կամքը՝ անցյալի սերունդների փորձով մարդուն գիտելիքով զինելու գաղափարը, որը հնարավոր է միայն ներքին կենսական ուժի՝ Ոգու միջոցով, որը, ըստ հեղինակի, աննյութեղէն արժեքների, մարդկային իդէալների ու նպատակների իրագործման ոլորտն է ու նաև պայմանավորում է զգայականութիւնը, մտածողութիւնը, գիտակցութիւնն ու կամքը՝ դառնալով մարդու կենսականութիւնը ապահովող սկիզբը, որը միաժամանակ դիտարկելի է փիլիսոփայության ու լեզվահոգեբանության տիրույթներում:

Կեսարացյանը մտքով վերանում է ամօրեականութիւնից և գիտակցում բարձրագույն արժեքները, թեպէտ փիլիսոփայական մարդաբանութիւնը մարդու մասին տեսութիւնը դիտարկում է ոգու, հոգու և մարմնի փոխգործակցության ու միասնականության տիրույթներում: Ըստ Ֆրոյդի՝ մարդկային հոգու բոլոր վեց դրսևորումների հիմքում անգիտակցական մղումներն ու հակումներն են, քանզի մարդու կյանքը ոչ այլ ինչ է, քան մշտական պայքար գիտակցական ու անգիտակցական աշխարհների միջև: Եվ մարդը հաճախ անգիտակցաբար իր հակումներն ուղղում է հոգեկանի ամենախորքերը՝ արգելափակելով դրանք (Փրեյդ 126-148), որոնք, սակայն, չեն անհետանում և որոշ ժամանակ անց վերածվում են հոգևոր էներգիայի աղբյուրի, որտեղ միտքը գերազանցում է երևակայութեանը և որտեղ կյանքը լի է հակասութիւններով: Ոգին կյանքի անտեսանելի ուժն է և կենդանութիւն է հաղորդում, կյանք է տալիս մարմնին, մարմնին առանց ոգու, առանց կյանքի ուժի մեռնում է ու վերադառնում է հողին:

Էլախի Կեսարացյանի «Ոգին Հայրենասիրութեան» (Երևակայութիւն) էսսեի ներքին տիրույթում գործում են «Ոգին Հայրենասիրութեան», «Անմահութեան Ոգին», «Ոսկետունկ արմատը», «Հայրենեաց անմահ Ոգի՛ն» թաքնագրված մետաֆորները, որոնց միջոցով էլ հեղինակը ստեղծում է անձնավորված պատկերներ: Իրերը, երևույթները, նույնիսկ մարդու ֆենոմենը ձեռք են բերում այլաբանությամբ վերացարկվող գաղտնագրված իմաստներ, և տեքստի գաղափարաբանական

հայեցակարգը ամբողջանում է այն պատկերների միջոցով, որոնք տեքստում սնվում են առասպելաբանական աղբյուրից:

Ճամփորդություն երազի միջով

Էլպիս Կեսարացյանի «Ոգին հայրենասիրութեան» էսսեի փիլիսոփայական հղումները Ոգու կենսական ուժը ստանալու, հետագայում այն պահպանելու և հաղորդելու տիրույթում են, քանզի հեղինակը ձգտում է կայուն և անփոփոխ արժեքների: Էսսեի ներքին իմաստաբանական տիրույթը Էլպիս Կեսարացյանը ստեղծում է առասպելադիցաբանական տարրերի՝ տեսիլքի ու երազի այլաբանական հղումներով, ըստ որոնց՝ երազի և իրականության միջուրտում առանձնանում է հոգեբանական ներտիրույթը և հիմնավորվում իմացաբանական հատկանիշների ուսումնասիրությամբ: Ըստ Կեսարացյանի՝ աստվածաորոնման ու մարդաորոնման ճանապարհներն անքննելի են, քանի դեռ Աստված է գտնում մարդուն և ոչ թե մարդը Աստծուն, և քանի դեռ կա Արարիչը, որ էսսեում հայտնվում է աստվածային շնորհը՝ ՆՈՒԿԳԱՐԱՆԸ, հեղինակին նվիրող ծերունու կերպարով՝ «Մեկ մ'ալյանկարծ տեսայ վեհ և պատկառելի կերպարանք մը. սպիտակափայլ զգեստով. կերպարանքը մարդոյ էր, և ուսոց վրայ օդածեմ՝ բազուկներ ուներ. դեմքը քաղցր և միանգամայն պատկառելի, մեկ ձեռքը ՏՈՒՄԱՐ մը առած և միւսը ՆՈՒԿԳԱՐԱՆ մը կրելով դէպ 'ի ինձ կը մօտենար. բայց մեկեն 'ի մեկ ուզեցի հեռանալ. իսկ նա ազդու ձայնով մը գոչեց ինձ, ո՛վ ես դու, պատասխանեցի, դողալով, դուստր մի եմ Յայկազեան. ժամանակէ մը 'ի վեր անօգնական կը թափառիմ հոս. հառաչանքներս զուր տեղ ամայի ձորերուն մէջ կը հնչեն. երբէք մեկը չկայ իմ ձայնիս լսող. հայրենի տունս առատ բարութեամբ լի է. և ես աստ տվամահ կըլլամ. ըսի, և հառաչանքներս հեղձուցին ձայնս» («Ոգին հայրենասիրութեան» 1:3): Մարդու՝ որպէս գաղտնիքի որոնման ճանապարհին փոխվում է հեղինակի վերաբերմունքը գաղափարության գոյաբանական օբյեկտի՝ նույն մարդու հանդեպ՝ ներքին գաղափարաբանական ու իմաստաբանական բացահայտումների արդյունքում ձևավորելով նրա ինքնագիտակցության, ինքնաճանաչման և տեքստի ներքին տիրույթում հոգևոր միջուկի ընդլայնման կոլիզիան:

«Ոգին հայրենասիրութեան» էսսեի ներքին տիրույթում ամփոփվում է հեղինակի հռետորաբանությունը, այլաբանական պատկերներն ուղեկցվում են այլասացությամբ և ուղղակիորեն միտվում տեքստի գաղափարաբանական միջուկին գաղտնագրված ենթատեքստ հաղորդելուն: Աշխարհն ընկալվում է որպէս տեքստ, և տեքստը ընթերցվում է առաջադրվող նշանների ու աստվածաշնչյան մետաֆորների (և ոչ միայն) մեկնությամբ՝ Օծը, Աղավնին, Կիթառը, Կույսը, Ծերունին, Ոգին Յայրենասիրության, Անմահության Ոգին, Ոսկետունկ արմատը, Յայրենյաց անմահ ՈԳԻՆ, որոնք մշտապես այլասացության տիրույթում են: Աղավնու և Օծի մետաֆորները ունեն հատուկ պաշտամունքային-ծիսակարգային գործառույթներ և սակրալության տիրույթում են: Աղավնին խորհրդանշում է խոնարհություն, մաքրություն ու հավատարմություն և բազմիցս (ինչպես և օծը) հիշատակվում է Աստվածաշնչում: Յղիականի ըմբռնումները պայմանականորեն ձևավորվում ու առնչվում են աստվածաշնչյան ու առասպելաբանական այլաբանություններին՝ իմաստաբանական անսպասելի լուծումներ հաղորդելով տեքստին: Այս համատեքստում նշնք, որ ստոիկները Յոմերոսին անվանում էին այլաբանության հիմնադիր, իսկ քրիստոնյա աստվածաբանները այդպիսին դիտարկում էին Աստվածաշունչը, թեպետ հին ժամանակներում այլաբանության ավանդույթն ամրապնդվում էր հունական արվեստում՝ արևելյան գաղափարների զգալի ազդեցությամբ:

«Ոգին Յայրենասիրութեան» (Երեւակայութիւն) էսսեում այլաբանությունն ու այլասացությունը առնչվում են նաև դիցաբանական ու աստվածաշնչյան իրողություններին, որոնցում հեքիաթն ու առեղծվածը զուգորդվում են չար-բարի, աղավնի-օծ, թշնամի-բարեկամ բինար բևեռներով՝ «Երբ Աղանեսակս շքեղ դալարեաց

վրա ճախրելով իւր բերկրական ծայները կը հնչէր, բազմադարեան թշնամի Օծը յանկարծ թմրութեն սթափվելով՝ սկսաւ աւելի նախանձով ուռիլ և փթանալ, և խորհեցաւ եղեռնագործութեան փորձ մը ալ կատարելու. Թիւթեց բազմաց աչքերը և լսելիքները, որք մէկէն 'ի մէկ թշնամի կարծելով զայն, սկսան խեթիւ նայիլ, և արհամարհել, և օծին թելադրական ծայնով շարժեցան մահաձիգ նետեր արձակել վրան» («Ոգին հայրենասիրութեան» 6:42):

Այլաբանական պատկերներով Է Կեսարացանը ստեղծում նաև ԿԻԹԱՌԻ (մշակութաբանական) խորհրդանիշը, որը էսսեում դիտարկելի է որպէս կնոջ գոյաբանության և իգական սկզբի, իմաստության ու գործնականության խորհրդանիշ (տեքստ՝ տեքստի ներսում)՝ «Այն ատեն ձեռքի ԿԻԹԱՌԻԸ ինձ յանձնեց, ու զնա ըսավ զայս հնչելով զանոնք արթնցուր, այդ արուեստը նուրբ է ըսի, մատուլքս յարմարութիւն չունին ներդաշնակելու. ուստի կասկածելի է ինձ այդ պաշտօնը. ապա զիս խրախուսելով ըսաւ. ա՛ռ այս, մի՛ վիատիր, ես քեզ պաշտպան կըլլամ այսուհետև. կազդեմ սիրալիր ծայնս ականջիդ, և քո մատուլքդ կը վարժեցնեմ նորա եղանակներուն. դու ե՛լ և փութա՛ պաշտօնդ կատարել: Ապա գոհութեամբ նուէրը ընդունեցի. սիրտս զօրացաւ անձս կազդուրեցաւ, և ուրախութեամբ ըսի իրեն, բարերարդ իմ, ո՛վ ես դու, որ զթշուառս կը մխիթարես, պատասխանեց. Ոգին Յայրենասիրութեան եմ, որ իմ սեպիական գաւառներուս մէջ կը շրջիմ միշտ փառքերս խնդրելու: Երբոր այս ծայնը լսեցի նորա սիրոյն սիրտս յափշտակուեցաւ, և նոր ոգով վառուած փութացի գրկախառնիլ իւր հետ. բայց Նա իւր օղածեմ բազուկները շարժեց դէպ 'ի Մասեաց գագաթը սաւառնելով ամպերուն մէջ ծածկեցաւ» («Ոգին հայրենասիրութեան» 1:3-4):

Էսսեում կնոջն անչվող գոյաբանական և Եութաբանական տարաբնույթ հարցերը տեղափոխվում են բովանդակային տարբեր հարթություններ: Կիթառը Բանի (խոսքի) փոխակերպություն-մետաֆորն է, կիթառը փոխակերպված Բանն է, որի հեղինակը գիտակցում է՝ «Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն: ...Եւ Բանն մարմին եղեւ և բնակեցաւ 'ի մեզ»¹ (*Աւետարան ըստ Յովհաննէսի, Գլ. Ա: 1-5*): Ուստի դրույթը, թէ մարդը գաղտնիք է, ամրապնդվում է, քանի որ տեքստը ներքին տիրույթում թաքցնում է կնոջ գենետիկական գաղտնայնութիւնը: Հետևաբար պատահական չէ բնության ու բնական գենետիկով տրվող մարդ-բնություն փոխհարաբերությունների ներքին ու անտեսանելի շղթան, որ ձևավորվում է ժառանգականությամբ և առնչվում իրականությանը:

«Ոգին հայրենասիրութեան» էսսեում Կեսարացանը իրերն ու երևույթները ուղղում է դէպի *Նշանաբանության* տիրույթ (տեքստի ամեն միավոր նշանի տիրույթում է), քանի որ գործառնվող մետաֆորները կազմում են *տեքստ-հեղինակ-ընթերցող* տեսանելի առնչությունների ամբողջական համակարգը, գաղտնագրում են սեփական սահմանները և որոշակի իրավիճակներում ենթադրում են իմաստաբանական տարբեր նշանակություններ, որոնք ստեղծվում են հեղինակի գիտակցության ներքին տիրույթում և ըմբռնվում ընթերցողի հոգևոր ընկալումներում:

Կեսարացանը ընդգծում է նաև *հոգեկանի* միջակայքային կարևորությունը՝ որպէս ուղեղի և նյարդային համակարգի արդյունք, քանզի մշտապես իրականության վերարտադրության և ընթացքի տիրույթում է և պատասխանատու է կնոջ հոգեֆիզիոլոգիական ներդաշնակության ու առողջության համար, իսկ դրանից բխող իմացությունը՝ զգայականի ու տրամաբանականի փոխներգործության: Ուստի հնարավոր է հեղինակի՝ որպէս գոյաբանական սուբյեկտի մարդաբանական ու փիլիսոփայական ըմբռնումներում որոնել երևակայությամբ տրվող իրականությունը, որն ուղղորդում է դէպի ներտեքստաբանական փոխանցումների միջոցով ստեղծվող ու

¹ Ճան.-Յոնն. Լաւ բն. №№ 3-4-ի տակ ունեն. Ամենայն ինչ նրանով եղաւ. Եւ առանց նրան չեղաւ ոչինչ: Ինչ որ եղել է, կենսք էր նրանում:

գաղտնագրվող աշխարհ-տեքստը, որով պայմանավորում է մշակութաբանական հնարավոր ազատագրումն ու զարգացումը՝ «Եդեմական բուրմունքներով երկրին բոյսերը կը պարարեին. անդաստանը դարմանող մշակներն էին առույգ պատանիներ, որոնց հզոր գործիքները ուսոց վրայ բարձած ճակատին յոդ կաթիլներով զբաղած էին երկիրը բարեգարդելու. ոմանք հասկերուն բարիքները շտեմարանները հաւաքելու կը պարապէին. ոմանք դեռահաս տունկերը մշակել, և ոմանք դեռ անմշակ երկիրները պարարտացնելու. մէկ կողմը կար պատկառաղէմ ծերունեաց պառակ մը՝ որք իրենց պաշտօնէն դադրած երիտասարդ մշակները 'ի գործ կը խրախուսէին» («Ոգին հայրենասիրութեան» 1:3): Պարզվում է՝ հնարավոր է, ինչպես մարդու մեջ մարդկայնության գաղափարի որոնումը, որ մարդաբանական փիլիսոփայության տիրույթում է, ինչպես ներքին հոգևոր էույթը, որ մարդու ներսում է, քանզի ամեն ոք անկրկնելի է յուրովի: Եվ եթե ելնեք դրույթից, թե բոլոր մարդիկ *Էություն են և անծ* (Гурджиев), ուրեմն *մարդու էութունը նրա բնավորությունն է* (հոգեբանական արձագանքների հանրագումարը), որը ձևավորվում է վերջինիս կենսագոյության ընթացքում և չի փոփոխվում այնքան ժամանակ, քանի դեռ անծը հասարակության բարոյական սկզբունքների արտաքին պատյանն է՝ գիտելիքներ, հմտություններ, կենսականոններ, թեպետ հին հույները (Ясперс 199-218) մարդուն դիտարկում էին որպես տիեզերքի մանրակերտ, իսկ անտիկ աշխարհում մարդն ըմբռնելի էր որպես փոքր տիեզերք մեծ տիեզերքում (տիեզերք՝ տիեզերքում), որում գործում են բնության բոլոր օրինաչափությունները, և որ մարդը, որպես տիեզերքի կամ բնության մանրակերտ, նույնպես հավակնում է օրինաչափություններին:

19-րդ դարի երկրորդ կեսին հայ սոցիումը (վեր)պայրում էր սոցիալական և հասարակական-քաղաքական բարդագույն ճգնաժամ և ըստ Կեսարացյանի՝ տվյալ ժամանակաշրջանի առավել ահագնացող ու անհանգստացող կողմերը հնարավոր է ըմբռնել որպես սոցիալական սուբյեկտ՝ «Անտառին բոլորտիքը շրջելու ատենս կաղնիի հովանիին տակ տեսայ օրիորդաց խումբ մը. Որք թփոց տերևներուն վրայ յեցեալ խոր քնոյ մեջ կննջէին: Յայնժամ ըսաւ ինծ. Ահագնա կաղնիին տակ ննջող ընկերներդ կոչէ, ձայն տուր անոնց, քեզ օգնական թող ըլլան, և միատեղ՝ ձեր պաշարները պատրաստեցէք» («Ոգին հայրենասիրութեան» 1:3):

Կեսարացյանի *գեղագիտական ըմբռումները* որպես համակարգ տեսանելի են *հոգեվիճակային այլասացությունների* ու բարոյականության բացարձակությունն ու քաղաքական, սոցիալ-հասարակական իդեալները պատկերող *այլաբանությունների* տիրույթներում. ունեն գաղտնագրված քաղաքական ենթատեքստ: Կեսարացյանը դժվարությամբ է ընդունում հայոց ճակատագրին առնչվող ողբերգական իրադարձություններն ու իրողությունները, այդ պատճառով իր *մարդաբանական - փիլիսոփայական* հայացքները և *սպգային ճակատագիրը* նա հստակեցնում է *բարի գործերի համակարգում*: Սույն գաղափարը դիտարկելի է նաև *ինքնաճանաչման* տիրույթում, քանզի *գրականությունը գրողի աշխարհընկալման մեղիումն է, նրա լեզվի չգրված սահմանը, այլակողմ լուսանցքը*: Ուստի այն, ինչ շրջանակում է գրականությունը, թույլատրում է տեսնելու հեղինակի մեկ այլ գաղտնագիրը՝ երկխոսությունը՝ «Հեծեց երկիրը դարձեալ բազում ժամանակ մառախլապատ ամպերուն տակ գազանաց կոխ, և թշնամեաց պատսպարան ըլլալով, որոյն մեջ Անմահութեան Ոգին չէր դադրեր եթերական եղանակներով արթնութեան ձայնը հնչել երկրին բնակիչներուն, որոց շատերը տարագիր էին իրենց սեպիական վայրագ, և ոմանք օձին թովչական ձայնին տեսչավոր՝ անգոր էին ժառանգաւոր երկրին փառքը խնդրելու» («Ոգին հայրենասիրութեան» 1:3): Սույնով բացահայտվում է հեղինակի աշխարհայացքը, մտածողությունը, երևակայությունը, արժեհամակարգը. հայոց աշխարհին ու ազգին առնչվող խոհափիլիսոփայական ու այլաբանական պատկերներում ընդհանրացվում են նրա ըմբռումներն ու պատկերացումները:

«Ոգին հայրենասիրութեան» էսսեն գրված է Եպիստոլյար ժանրով: Հեղինակի հիշողությունների ու երազի շղթայական անցումներով իրականանում է լեզվի, հաղորդակցության, գաղափարների փոխներթափանցման բարդ գործընթացը, որը ձևավորվում ու փոխանցվում է հեղինակի գիտելիքների, փորձի, լեզվական հնարքների, տեխնիկայի միջոցով և ընթերցողի ուշադրությունը ուղղորդում է դեպի տեքստի գաղափարաբանական շարքերը: Սույն երևույթները պայմանավորված են մշակութաբանական մարտահրավերներով, որոնց առանցքը լեզուն է, քանի որ տեքստի ինքնուրույնությունը պակաս կարևոր չէ, քան հեղինակի մտադրությունը՝ *մարդկայնության բացահայտման և աշխարհաբաղաբանական փոփոխությունների համակողմանի ուսումնասիրության տիրույթներում*, և տեքստի՝ որպես *մշակութաբանական պահեստարանի ու գաղափարախոսության*, ընկալումը, քանի որ *մարդու ինքնության հարցերն ինքնին գոյություն ունենալ չեն կարող* կամ *օտարված չեն երևւէ*, և մարդը, որպես սուբյեկտ, կրում է արարչի ու արարչականի հնարավոր ազդեցությունը: Սույնը հեղինակի *մեթոդաբանությունն* է նաև:

Կեսարացյանը գաղտնագրում է լինելությունը և մարդու մեջ մարդու որոնման ընթացքում հայտնագործում է սոցիալական ու քաղաքական հակադրությունների ամբողջությունը, որ դիտարկելի է շահերի բախման (պարադոքսալ կոլիզիայի) տիրույթում, քանզի մարդն առանձնանում է անցյալի հիշողությունը կրելու և պահպանելու շնորհով, իսկ հիշողությունն ունիվերսալ է՝ որպես նրան բնութագրող հիմնական հատկանիշ: Էլպիս Կեսարացյանի «Ոգին հայրենասիրութեան» էսսեն իրադարձությունների ու դրանց հուզականության (հեղինակային ընկալումների) համատեքստում միտում է նաև պատմագրության տիրույթ, որի ներքին օղակներում հայոց պատմությունն է՝ որպես գաղափարաբանական ու տրամաբանական զարգացումների շղթա՝ «Նոյն պարարտ երկրին վայելչութիւնը սիրտս յափշտակեց և ձայն ուղղեցի ո՛վ էք դուք և ո՛ր երկիրները կը դարմանեք, պատասխան տուի՛ն. Հայկազեան որդիներն ենք, և ասուք մեր հայրենի երկիրները են՝ որ բազում ժամանակաւ թափուր դաշտից նման բուրբուկին իրենց պայծառութենէն զուրկ անշքու մեջ կը հեծէին. ահա այժմ մեր հայրենեաց անմահ ՈԳԻՆ կը կոչէ զմեզ ծաղկեցնել մեր առատ բարութիւնները վայելել: Եւ ես գոչեցի. ո՛հ հաճելի ինձ այդ երկիրը. առէ՛ք անօգնականս ձեր հետ. և ձեր բարեաց բաժին մ՛ալ տուէք ինձ գոնէ փրկուի՛մ սովամահէ: Ձայն տուի՛ն ինձ՝ անտառակ մը ցոյց տալով. ահա զնա՛, քու բաժինդ հոն է, ա՛ն ընկերներդ և քեզ օգնական թո՛ղ ըլլա՛ն: Ըսի ոտքերս սովէն տկարացած են. ձայնս նուազած և զօրութիւն չունիմ այդ պաշտոնը կատարել: Եւ խօսքիս մէկ մ՛ալ պատասխան չառնելով՝ ելայ դողդողալով անտառին մօտ գացի...» («Ոգին հայրենասիրութեան» 1:3):

Պատմությունը սոցիոմների և սոցիալական ինստիտուտների ստեղծման ու զարգացման գործընթաց է, պատմությունը անցյալն ինքնին-ը չէ կամ կորուսյալ անցյալը, այլ հասարակությունների ձևավորման այն համակարգը, որում հատուկ բարքերով, ավանդույթներով ու հիերարխիաներով ապրում և առանձնանում է նրա մեկ օղակը՝ մարդը: Ուստի բարոյական, հասարակական ու քաղաքական ելակետերը, ըստ որոնց այլաբանորեն ձևավորվում է Կեսարացյանի աշխարհըմբռնումը, ընկալելի են որպես պետությանը, հասարակությանը և իրավունքին առնչվող հիմնարար գաղափարներ, որոնք բնորոշ էին տվյալ դարաշրջանի՝ 19-րդ դարի երկրորդ կեսի հասարակական-քաղաքական ու իրավական մտքին՝ «Այ թշնամին առաւել զօրացաւ անդրէն տիրել երկրին աներկիրդ, և իւր չարութեան յագուրդը լեցուցած մատնեց երկիրը յաւիտեան լեռնային գագանաց ձեռք: Ահա աստանօր կարի դառն էր աչքերու բարեշուք երկրին աւերման աղետայի տեսարանը՝ ուր լուսաւոր Արեւը վերջին հրաժարականը տալով իւր դէմքը թխպագին ամպօց քօղով կը ծածկէր: Դադարեցան այգեաց հովասուն խորշերէն թռչնոց գեղգեղածայն եղանակները, այլ աղետաբեր գուժից ձայնը դրախտավայր երկրին մեջ տարածեցաւ, լռեցին Մուսայից Օրինութեան ձայներ, այլ աղետից և ողբոց կոծեր հնչեցին: Հրեշից ժանտաբոյր լեզուաց կը ժայթքէր հուր նեխ, և ծծումբ, որով երկիրը

10. Marco común europeo de referencia para las lenguas: aprendizaje, enseñanza, evaluación (MCER). Madrid: Ministerio de Educación, Cultura y Deporte, 2002.
11. Mellado Blanco, Carmen. "Parámetros específicos de equivalencia en las unidades fraseológicas (con ejemplos del español y el alemán)." *Revista de filología*, 33, 2015, pp. 153-174.
12. Sardelli, Maria Antonella. "Los refranes en la clase de ELE." *Didáctica. Lengua y Literatura*, vol. 22, 2010, pp. 325-350.
13. Sevilla Muñoz, Julia. "El valor etnográfico del refrán." *Cuadernos de etnología de Guadalajara*, 36, 2004, pp. 307-320.
14. Sevilla Muñoz, Julia y Cantera Ortiz de Urbina, Jesús. *Pocas palabras bastan: vida e interculturalidad del refrán*. Segunda Edición. Salamanca: Diputación de Salamanca, Centro de cultura tradicional Ángel Carril, 2008.
15. Sevilla Muñoz, Julia y Quevedo Aparicio, Teresa. "Didáctica de la traducción al español de paremias francesas." *Didáctica: Lengua y Literatura*, 7, 1995, pp. 133-148.
16. Sevilla Muñoz, Julia y Sevilla Muñoz, Manuel. "Técnicas de la "traducción paremiológica" (francés-español)." *Proverbium*, 17, 2000, pp. 369-386.
17. Zurdo Ruiz-Ayúcar, María Teresa y Sevilla Muñoz, Julia. *El Mínimo paremiológico: aspectos teóricos y metodológicos*. Instituto Cervantes (Centro Virtual Cervantes. Biblioteca fraseológica y paremiológica, serie «Mínimo paremiológico», n.º 1). Madrid, 2016.

Works Cited

1. Vereshchagin, Yevgeniy i Kostomarov, Vitaliy. *Yazyk i kul'tura: lingvostranovedeniye v prepodavanii ruskogo yazyka kak inostrannogo*. Moskva: Russkiy yazyk, [Language and culture: linguistic and cultural studies in the teaching of Russian as a foreign language. Russian Language] 1976.
2. Nazaryan, Armand. *Frazeologiya sovremennogo frantsuzskogo yazyka*. Moskva: Vysshaya shkola, [Phraseology of the modern French language. Moscow: Higher School] 1987.
3. Permyakov, Grigoriy. *Osnovy strukturnoy paremiologii*. Moskva: Nauka, [Fundamentals of structural paremiology. Publishing house "Science"] 1988.
4. Barbadillo de la Fuente, María Teresa. "Presupuestos didácticos para la enseñanza de los refranes a través de El Quijote." *Paremia*, 15, 2006, pp. 141-150.
5. ---. "Modelo de contribución al mínimo paremiológico de la lengua española con refranes contenidos en el Quijote." *J. Sevilla Muñoz; M.ª T. Zurdo; C. Crida (eds.). Estudios paremiológicos. I. La investigación paremiológica en España. II. El Quijote y los refranes*. Madrid: Ta kalos kéimena, 2008, pp. 29-38.
6. Cantera Ortiz de Urbina, Jesús; Sevilla Muñoz, Julia; Sevilla Muñoz, Manuel. *Refranes, otras paremias y fraseologismos en Don Quijote de la Mancha*. Editado por Wolfgang Mieder. Burlington: The University of Vermont, 2005, pp. 29-36. En línea: *Biblioteca*

fraseológica y *paremiológica* (Documentos):
https://cvc.cervantes.es/lengua/biblioteca_fraseologica/documentos.htm

7. Cervantes, Miguel de. *El ingenioso hidalgo don Quijote de la Mancha*. Tomo I. La Habana: Editorial de Arte y Literatura, 1974.
8. ---. *El ingenioso hidalgo don Quijote de la Mancha*. Tomo II. La Habana: Editorial de Arte y Literatura, 1974.
9. ---. *Rinconete e Cortadillo, con testo originale a fronte* (traduzione di Marta Icolari). Milano: Leone Editore, 2014.
10. Marco común europeo de referencia para las lenguas: aprendizaje, enseñanza, evaluación (MCER). Madrid: Ministerio de Educación, Cultura y Deporte, 2002.
11. Mellado Blanco, Carmen. "Parámetros específicos de equivalencia en las unidades fraseológicas (con ejemplos del español y el alemán)." *Revista de filología*, 33, 2015, pp. 153-174.
12. Sardelli, Maria Antonella. "Los refranes en la clase de ELE." *Didáctica. Lengua y Literatura*, vol. 22, 2010, pp. 325-350.
13. Sevilla Muñoz, Julia. "[El valor etnográfico del refrán](#)." *Cuadernos de etnología de Guadalajara*, 36, 2004, pp. 307-320.
14. Sevilla Muñoz, Julia y Cantera Ortiz de Urbina, Jesús. *Pocas palabras bastan: vida e interculturalidad del refrán*. Segunda Edición. Salamanca: Diputación de Salamanca, Centro de cultura tradicional Ángel Carril, 2008.
15. Sevilla Muñoz, Julia y Quevedo Aparicio, Teresa. "Didáctica de la traducción al español de paremias francesas." *Didáctica: Lengua y Literatura*, 7, 1995, pp. 133-148.
16. Sevilla Muñoz, Julia y Sevilla Muñoz, Manuel. "Técnicas de la "traducción paremiológica" (francés-español)." *Proverbium*, 17, 2000, pp. 369-386.
17. Zurdo Ruiz-Ayúcar, María Teresa; Sevilla Muñoz, Julia. *El Mínimo paremiológico: aspectos teóricos y metodológicos*. Instituto Cervantes (Centro Virtual Cervantes. Biblioteca fraseológica y paremiológica, serie «Mínimo paremiológico», n.º 1). Madrid, 2016.

PROVERBS AND SAYINGS IN THE TEACHING PROCESS OF SPANISH AS A FOREIGN LANGUAGE

HASMIK BAGHDASARYAN

*Yerevan State University, Faculty of European Languages and
Communication, Chair of Romance Philology, Head,
Doctor of Philology, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

The present article aims to study the role of proverbs and sayings in the teaching process of Spanish as a foreign language. The "Don Quixote" novel of Cervantes plays an important role in the Spanish paremiology didactics and can be viewed as a literary collection of proverbs and sayings. Based on proverbs and sayings of this novel, the article suggests several didactic activities that can be implemented in the teaching process of Spanish. The role of the context is also given importance in this regard, as the pragmatic potential of the proverbs and sayings as situational clichés is most evident in the communication processes.

The study was carried out on the basis of both universal scientific methods of cognition and various principles of scientific-pedagogical research which derive from the peculiarities of the investigated material.

A brief study of the issue leads to the conclusion that the inclusion of the proverbs and sayings from “Don Quixote” in the teaching process of Spanish as a foreign language can play an important role in the development of the linguistic and sociocultural competences as well as in the formation and development of translation skills and abilities of the students.

Keywords: *proverbs and sayings, Spanish language, teaching process, didactics, activities, linguistic competence, sociocultural competence, translation skills.*

ПОСЛОВИЦЫ И ПОГОВОРКИ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ ИСПАНСКОМУ ЯЗЫКУ КАК ИНОСТРАННОМУ

АСМИК БАГДАСАРЯН

*заведующая кафедрой романской филологии
Ереванского государственного университета,
доктор филологических наук, доцент
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является изучение роли пословиц и поговорок в процессе обучения испанскому как иностранному языку. Роман Сервантеса «Дон Кихот» играет важную роль в дидактике испанской паремиологии и может рассматриваться как литературный сборник пословиц и поговорок. В статье предлагается ряд дидактических заданий, которые основаны на пословичных изречениях этого романа и которые могут быть использованы в преподавании испанского языка. В этом плане также придается большое значение той роли, которую играет контекст, поскольку прагматический потенциал пословиц и поговорок как ситуативных клише наиболее очевиден в коммуникативных процессах.

Исследование проводилось как на основе общенаучных методов познания, так и различных принципов научно-педагогических исследований, которые исходят из специфики исследуемого материала.

Краткое изучение проблемы позволяет сделать вывод о том, что включение пословиц и поговорок из романа «Дон Кихот» в процесс обучения испанскому как иностранному языку может сыграть важную роль в развитии лингвистических и социокультурных компетенций, а также в формировании и развитии переводческих навыков и способностей студентов.

Ключевые слова: *пословицы и поговорки, испанский язык, учебный процесс, дидактика, задания, лингвистическая компетенция, социокультурная компетенция, переводческие навыки.*

ԱՐՎԵՍ, ИСКУССТВО, ART**ԵՐԿԱՆԴ ԵՐԿԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՅՅ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ*¹**

ՅՏԴ 7.071.1

DOI: 10.52063/25792652-2021.2-252

ԼԻԼԻԹ ԱՐՏԵՄՅԱՆ

ՅՅ ԳԱՎ Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի
ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու,
բ. Երևան, Յայաստանի Յանրապետություն
L.Artemyan@mail.ru

Յողվածի նպատակն է ներկայացնել հայ կոմպոզիտորական արվեստի արդի ներկայացուցիչներից մեկի՝ կոմպոզիտոր, ջութակահար, երաժշտական-հասարակական գործիչ, ՅՅ Պետական մրցանակի դափնեկիր, ՅՅ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Երվանդ Վահանի Երկանյանի գործունեությունը ՅՅ անկախության շրջանում: Յետապոստության խնդիրներն են՝ համակողմանի ուսումնասիրել և վեր հանել Ե. Երկանյանի բազմակողմանի գործունեության հիմնական ուղղությունները, ի մի բերել կոմպոզիտորի՝ այս շրջանում գրած ստեղծագործությունները և նրա գործունեության հետ կապված փաստական նյութը:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են նկարագրական և վերլուծական մեթոդները:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Երվանդ Երկանյանի գործունեությունը ՅՅ անկախության շրջանում ընթացել է հետևյալ հիմնական ուղղություններով՝ ստեղծագործական, կազմակերպական ու մանկավարժական: Ակտիվ ու բեղմնավոր ստեղծագործական գործունեության արդյունքում հայ երաժշտության գանձարանի որմնախորշը համալրվել է նոր ու արժեքավոր նմուշներով, իսկ Յայաստանում և արտերկրում ծավալած հայրենանվեր կազմակերպական գործունեությունը, անկասկած, նպաստել է հայ երաժշտության պահպանմանն ու հանրահռչակմանը:

Յիմնաբառեր՝ Երվանդ Երկանյան, օպերա, օրատորիա, կանտատ, սիմֆոնիկ երաժշտություն, կամերային երաժշտություն, խմբերգային երաժշտություն:

Ներածություն

Թեև հայ երաժշտագիտությունը պարբերաբար անդրադարձել է կոմպոզիտոր, ջութակահար, երաժշտական-հասարակական գործիչ, ՅՅ Պետական մրցանակի դափնեկիր, ՅՅ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Երվանդ Վահանի Երկանյանի առանձին ստեղծագործությունների ուսումնասիրությանը, և հրատարակվել են երաժշտագետներ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Սվետլանա Սարգսյանի,

* Յողվածը ներկայացվել է 15.05.2021թ., գրախոսվել՝ 07.06.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:

¹ Յետագոտությունն իրականացվել է ՅՅ ԿԳՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 19YR-6E058 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուխկյանի և արվեստագիտության դոկտոր պրոֆեսոր Աննա Արևշատյանի գիտական հոդվածները (Sarkisian 126-129; Рухкян, «Ерванд Еркянян-араратский человек»; Рухкян, «Нужен профессиональный анализ»; Рухкян *Портреты армянских композиторов* 150-153; Արևշատյան, «*Երվանդ Երկանյանի «Ավագ շաբաթ» օրատորիայի ոճական առանձնահատկությունները*»; Արևշատյան, «*Մեծ Եղեռնի թեման*»), սակայն մինչև օրս առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել ՀՀ անկախության շրջանում երաժշտի ծավալած գործունեությունը:

Մեր նպատակն է ներկայացնել Երվանդ Երկանյանի¹ գործունեությունը ՀՀ անկախության շրջանում, որն ընթացել է հետևյալ հիմնական ուղղություններով՝ ստեղծագործական, կազմակերպական ու մանկավարժական:

Ստեղծագործական գործունեությունը

Ինչպես նախընթաց տարիներին, այս շրջանում ևս կոմպոզիտորը ծավալել է ակտիվ ու բազմաժանր գործունեություն: Կոմպոզիտորը ստեղծագործել է գրեթե բոլոր ժանրերում. երաժշտական-թատերական ժանրին է պատկանում «Կայսր» օպերան 3 գործողությամբ՝ ըստ Լևոն Շանթի համանուն պիեսի (լիբրետոն՝ հեղինակի, 2008):

Կանտատ-օրատորիալ ժանրը ներկայացնում են «Ավագ շաբաթ» օրատորիան՝ մենակատարների, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար (1995), «Յայտնություն ըստ Յովհաննու» օրատորիան՝ մենակատարների, 3 երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի փողային գործիքների, հարվածայինների, երգեհոնի և թավջութակների կոնտրաբասների համար (2011), «Առանձաջյալի երգեր» վոկալ-սիմֆոնիկ շարքը՝ ձայնի և փոքր սիմֆոնիկ նվագախմբի համար՝ Գեորգ Թրակլիի խոսքերով (2010), «Յարույան կանտատը»՝ մենակատարների և սիմֆոնիկ նվագախմբի համար (2011), «Եռանայն պատարագ» օրատորիան՝ ասմունքողի, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար (2013), «Օգոստինոսի խոստովանությունը» կանտատը՝ երգչախմբի և փոքր սիմֆոնիկ նվագախմբի համար (2008):

Սիմֆոնիկ երաժշտության ժանրը ներառում է հինգերորդ՝ «Խաչված երազներ» (2011), վեցերորդ (2013) և յոթերորդ (2016) սիմֆոնիաները, «Շուշի» սիմֆոնիկ տրիպտիխը (2012), «Նահատակաց հրապարակը Բեյրութում» (2006), «Բաալբեկի ավերակները» (2007), «Միստերիա» (2012) սիմֆոնիկ պոեմները, «Հերոսական ռապսոդիա» սիմֆոնիկ սյուիտը (2011), “Lux aeterna” սիմֆոնիկ պատկերը (թարգմ. «Հավերժ լույս», 2014), «Էպիտաֆիան» գալարափողի և սիմֆոնիկ նվագախմբի լարային կազմի համար (2011), «Տեսիլք» (2003), «Սալոմե» (2012) և “Capriccio elevato” (2011) ստեղծագործությունները մենանվագ ջութակի և սիմֆոնիկ նվագախմբի համար, “Pieta”-ն մենանվագ գալարափողի և սիմֆոնիկ նվագախմբի համար (2010) և Կոնցերտը՝ մենանվագ ֆագոտի և սիմֆոնիկ նվագախմբի համար (2010):

Կամերային ստեղծագործություններին են պատկանում «Քրոնիկոն» սյուիտը լարային նվագախմբի համար (2006), «Սիմֆոնիան» (Պատանեկան) լարային նվագախմբի համար (երկրորդ խմբագրություն), «Մանկական ամանորյա երազը» կոնցերտը՝ երկու ֆլեյտայի, երգեհոնի, կլավեսինի, հարվածայինների և լարային նվագախմբի համար (2011)², «Խաչելություն» կոմպոզիցիան³ մենանվագ ալտի և լարային նվագախմբի համար (2011), թիվ 3 Լարային կվարտետը, առաջին և երկրորդ «Բալլադները»՝ Համո Սահյանի խոսքերով՝ ձայնի և գործիքային անսամբլի համար⁴,

¹ Երվանդ Երկանյանի մասին տեղեկություններ քաղել ենք Մ. Ռուխկյանի «Հայ կոմպոզիտորների դիմանկարներ» մենագրությունից (Рухкян, *Портреты армянских композиторов* 107-153):

² Գոյություն ունի այս կոնցերտի՝ երկու քանոնի համար տարբերակը ևս:

³ Բնորոշումը՝ կոմպոզիտորի:

⁴ Գոյություն ունի նաև ձայնի և դաշնամուրի համար տարբերակը:

«Էլեգիան»՝ մենանվագ հորոյի (սաքսոֆոնի) և լարային նվագախմբի համար, ARUS ֆանտազիան, առաջին երրորդ և վեցերորդ սոնատիսների վերախմբագրումները և «Ունձացում» պիեսը դաշնամուրի համար, «Քմայքների գերի», «Հայելի», «Առասպել», «Խճճված հանգույցեր», «Լույսն ու թիրեռնիկի մահը», Fuga in G (թարգմ. Ֆուգա սոլ մաժորում), Սոնատ-ֆանտազիան մենանվագ ջութակի համար, «Հեռացում» պիեսը մենանվագ ալտի համար, «Աղոթք»-ը երգեհոնի համար¹, «Պրեյլուդ և սկերցոն» քանոնի համար, «Հույսեր և իղձեր» վոկալ շարքը՝ Միսաք Մեծարենցի խոսքերով՝ ձայնի և դաշնամուրի համար, «Երեք քառյակներ»-ը ձայնի քանոնի, քյամանչայի և թառի համար, Կոնցերտը՝ երկու քանոնի և դաշնամուրի համար, «Էլեգիա»-ն մենանվագ հորոյի (սաքսաֆոն) և երգեհոնի համար:

Խմբերգային ժանրին են պատկանում երկսեռ (խառը) երգչախմբի համար գրված «Մերձիմահ երգեր»՝ Եղիշե Չարենցի խոսքերով, «Սեզամ բացվիր»՝ Համո Սահյանի խոսքերով, «Հավատամ, գուցե Հարություն առնեմ» (2011)²՝ Ռազմիկ Դավոյանի խոսքերով, «Աշնան ծաղիկներ» (2010)²՝ Միսակ Մեծարենցի խոսքերով, «Հայրենաբաղձ հնչյուններ» N 1 (2012) և N 2՝ Ավետիք Իսահակյանի խոսքերով a capella խմբերգաշարերը, «Յահվեյի վրեժը»՝ Ա. Իսահակյանի խոսքերով, «Հայոց լեզու»՝ Հովիկ Հովեյանի խոսքերով, «Էլեգիա» առանց խոսքի, «Agora» առանց խոսքի, «Թախծող ծովանույշներ» և «Հույս Հայաստանի»՝ Երվանդ Երկանյանի խոսքերով առանձին խմբերգերը, միասեռ (իգական) երգչախմբի համար «Վեց խոհախրատական հայրեններ» a capella խմբերգաշարը՝ Հովհաննես Պյուզի խոսքերով (2012), «Խմբերգեր»-ը՝ իգական երգչախմբի համար (25 հոգևոր երգերի մշակումներ, 12 հայ աշխարհիկ (ժողովրդական) երգերի մշակումներ, 2018) (Երկանյան, *Խմբերգեր*), երկսեռ երգչախմբի համար «Ave Maria» խմբերգը՝ Նվիրված է Հռոմի Պապ Ֆրանցիսկոս I-ին և «Հրաշագան» Սրբադասման Շարականը՝ Չարեհ Արք. Ազնաուրյանի խոսքերով: Վերջինս պատվիրվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության կողմից Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ապրիլի 24-ի կապակցությամբ պաշտոնական ծիսական արարողության պարտադիր կատարման համար՝ ի հիշատակ Հայոց Ցեղասպանության 1,5 միլիոն անմեղ զոհերի: Ե. Երկանյանը հեղինակ է հայ բանաստեղծների խոսքերով մանկական երգչախմբի համար գրված 9 խմբերգերի:

Հայաստանում Զրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակին ընդառաջ Լորիս Ճգնավորյանի կազմակերպած հոգևոր երաժշտության ժամ (1994-2000) համերգաշարի համար կոմպոզիտորը մշակել է հայ հոգևոր և միջնադարյան ավելի քան 60 երգեր՝ շարականներ, տաղեր մենակատարների, երգչախմբի ու նվագախմբի համար:

Ե. Երկանյանի՝ այս շրջանի հարուստ ստեղծագործության մեջ մեր առանձնակի ուշադրությանն են արժանացել 5-րդ, 6-րդ և 7-րդ սիմֆոնիաները: «Խաչված երազներ» խորագիրը կրող 5-րդ սիմֆոնիան² Հայոց ցեղասպանության թեմային նվիրված եռապատումից (երրորդ, չորրորդ և հինգերորդ սիմֆոնիաներ) վերջինն է, որի չորս մասերը կրում են Հ. Նազարյանցի բանաստեղծություններից քաղված խորագրեր՝ «Սովերների արքայությունը», «Խաչված երազներ», «Եփրատի օրորը» և «Աստղահույս պսակներ»: Մոնումենտալ այս կտավում արտացոլվել են կոմպոզիտորի ապրումներն ու մտորումները ցեղասպանության վերաբերյալ՝ զուգորդված դրամատիկ և ողբերգական Էպիգոդներով: Ինչպես նշում է Աննա Արևշատյանը. «Նեոռոմանտիզմի ավանդույթները, հիրավի մալերյան ծավալն ու շունչը ներդաշնակորեն միահյուսվել են սիմֆոնիայում

¹ Ստեղծագործությունը նվիրված է երգեհոնահար, մանկավարժ, ՀՀ ժողովրդական արտիստ Վահագն Ստամբուլյանի հիշատակին: Կոմպոզիտորը երգեհոնի համար կատարել է հայ հոգևոր և միջնադարյան երգերի մշակումներ:

² Ստեղծագործությունը նվիրվել է Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբին և նրա գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանին:

Երկանյանի անհատական ոճին՝ ստեղծելով խորապես առինքնող երաժշտական կտավ» (Արևշատյան, «Մեծ Եղեռնի թեման» 484):

Արդեն կատարողական հարուստ կենսագրություն ունեցող 6-րդ սիմֆոնիան հայոց պատմության համահավաք պատկերի նկարագրությունն է ոչ թե ակնթարթային մարմնավորմամբ, այլ ժամանակի մեջ ծավալվող՝ զուգակցված հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի, լուսավոր վերելքների, հերոսական սիրանքների հետ: Միևնույն ժամանակ կոմպոզիտորն իրեն բնորոշ լեզվամտածողությամբ, քնարախոհական բնույթի շարադրանքով, կերպարայնության իրականացման համար տեխնոլոգիական հնարների լայն կիրառմամբ կարողացել է այս մեծածավալ կտավում նրբորեն «վրձնել» և ունկնդրին փոխանցել դարակազմիկ իրադարձությունների խորհրդանշական պատկերը:

Կոմպոզիտորը 7-րդ սիմֆոնիան գրել է դեռևս 2016-ին՝ ոգեշնչվելով ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից հայ քաջորդիների սիրանքներից: Ստեղծագործության բովանդակության առանցքում հայ ժողովրդի դժվարին, սակայն միևնույն ժամանակ հերոսական, անընդմեջ պայքարն է, որը միտված է սեփական հողի վրա ազատ ապրելու, կառուցելու, արարելու և սերունդներին հայրենիք ժառանգելու իրավունքին: Սիմֆոնիայի համար որպես լեյտմոտիվ ծառայել են հայոց Էպոսի՝ «Սասնա ծռերի» չորս ճյուղերի նախերգերը, որոնք վիպերգի հերոսների հիշատակին հնչող «օղորմիների» շարքեր են: Ստեղծագործության մեջ դրամատուրգիայի ուժն այնքան մեծ է, որ այն կարելի է համարել կոմպոզիտորի կարևոր ձեռքբերումներից մեկը:

Ե. Երկանյանի ստեղծագործությունները պարբերաբար հնչել են ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում, Իսպանիայում, Նիդերլանդներում, Լիբանանում, Շվեդիայում, Բուլղարիայում, Շվեյցարիայում, Հունգարիայում, Լիտվայում, Լատվիայում, Ֆինլանդիայում, Արգենտինայում և այլուր:

Կոմպոզիտորի երկերն ընդգրկվել են հայ կատարողական արվեստի ներկայացուցիչների՝ մեներգչուհի Գոհար Գասպարյանի, թավջութակահար Մեղեա Աբրահամյանի, կլարնետահար Աբգար Մուրադյանի, դաշնակահարներ Արուս Աճեմյանի, Հայկ Մելիքյանի, ջութակահարներ Սուրեն Հախնազարյանի, Վիկտոր Խաչատրյանի, Անուշ Նիկողոսյանի, Ջենմա Աբրահամյանի, դիրիժորներ Մերուժան Սիմոնյանի, Սերգեյ Սմբատյանի, Էդուարդ Թոփչյանի, Վահան Մարտիրոսյանի, խմբավարներ Հարություն Թոփիկյանի, Ռոբերտ Սլեյանի, Տիգրան Հեքեքյանի, Սոնա Հովհաննիսյանի ևն, առաջատար կատարողական կոլեկտիվների՝ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ, Հայաստանի պետական սիմֆոնիկ, Երևանի պետական կամերային նվագախմբերի, Հայաստանի պետական կամերային, «Հովեր» պետական կամերային, Երևանի պետական կամերային, «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբերի, «Գեղարդ» երգեցիկ խմբի ևն կատարողական երկացանկում:

Այս շրջանում գրված երկերը հնչել են Հայ կոմպոզիտորական արվեստի և միջազգային երաժշտական փառատոների համերգների ընթացքում:

Այսպես՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի նախաձեռնությամբ 2010 թվականից անցկացվող ամենամյա Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի՝ 2011 թվականի գարնանային համերգաշարի ընթացքում՝ մայիսի 17-ին, հնչեց «Աշնան ծաղիկներ» խմբերգաշարը՝ Միսաք Մեծարենցի խոսքերով, Հայաստանի պետական կամերային երգչախմբի կատարմամբ, դիրիժոր Ռոբերտ Սլեյանի ղեկավարությամբ: 2020 թվականի «Հարությունյան ֆեստ» փառատոնի փետրվարի 25-ի փակման համերգին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ ներկայացրեց «Բաալբեկի ավերակները» սիմֆոնիկ պոեմը: Իսկ 2021 թվականի 12-րդ փառատոնի մայիսի 17-ի համերգին առաջին անգամ հնչեց կոմպոզիտորի 7-րդ սիմֆոնիան՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի

յուրօրինակ մեկնաբանությամբ, դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ և արժանացավ երաժշտասեր լայն հասարակության համակրանքին և բարձր գնահատականին: Կատարումը նվիրված էր 2020 թվականի արցախյան 44-օրյա պատերազմի հերոսներին:

Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ նվագախմբի նախաձեռնությամբ և ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ 2011 թվականի սեպտեմբերի 9-ից հոկտեմբերի 12-ը անցկացվող ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված Երևանյան 5-րդ միջազգային փառատոնի բացման համերգին առաջին անգամ հնչեց կոմպոզիտորի ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված Հերոսական ռապսոդիան (2011)՝ Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ նվագախմբի կատարմամբ, դիրիժոր Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ:

Սերգեյ Սմբատյանի նախաձեռնությամբ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը ՀՀ մշակույթի նախարարության և Մշակույթի աջակցության եվրոպական հիմնադրամի աջակցությամբ 2018 թվականի հուլիսի 2-ից 6-ը կազմակերպեց «Արմենիա» միջազգային երաժշտական երկրորդ փառատոնը, որի բացման համերգին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ կատարեց Նրա «Միստերիա» սիմֆոնիկ պոեմը:

«Կոմիտաս» միջազգային գիտաժողով-փառատոնի (2015, 2016, 2018, 2019) տարբեր համերգների ծրագրերում մշտապես ընդգրկվել են կոմպոզիտորի ինչպես կատարողական հարուստ կենսագրությունն ունեցող, այնպես էլ Նոր՝ այս շրջանում գրված ստեղծագործությունները:

Ե. Երկանյանը Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է (1975-ից), իսկ 2013-ից առ այսօր՝ վարչության: Միության նախագահ Արամ Սաթյանի նախաձեռնությամբ և ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ (2015-ից) 2014 թվականից անցկացվող Հայ ժամանակակից երաժշտության փառատոների համերգների ծրագրերում իրենց ուրույն տեղն են զբաղեցրել Ե. Երկանյանի երկերը: 2016 թվականի ապրիլի 25-ին «Պրեմիերա» խորագիրը կրող 3-րդ փառատոնի փակման համերգին հնչեց կոմպոզիտորի “Ave Maria” երկսեռ երգչախմբի համար գրված խմբերգը Երևանի պետական կամերային երգչախմբի կատարմամբ՝ Հարություն Թոփիկյանի ղեկավարությամբ: Ստեղծագործությունը կոմպոզիտորը, «ի նշան երախտագիտության, ձոնել է Վատիկանում Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված պատմական Պատարագը մատուցած Հռոմի Պապ Ֆրանցիսկոս I-ին» (Աստուրյան 85-86): Հայաստանի կոմպոզիտորների միության հիմնադրման 85-ամյակին նվիրված չորրորդ փառատոնի ընթացքում 2017 թվականի հոկտեմբերի 17-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան դահլիճում ՀՀ վաստակավոր արտիստ Արուս Աճեմյանը կատարեց “ARUS” դաշնամուրային պիեսը:

Հայաստանի կոմպոզիտորների միության «Տարվա լավագույն ստեղծագործություն-2018» մրցանակաբաշխության արդյունքների ամփոփման ընթացքում համաձայն ժյուրիի որոշման՝ «Սիմֆոնիկ երաժշտություն» անվանակարգում հաղթող ճանաչվեց կոմպոզիտորի 6-րդ սիմֆոնիան:

Ե. Երկանյանը «Հայկական երաժշտական համաժողով» հասարակական կազմակերպության հիմնադիր-անդամ է (1994-ից առ այսօր): Նրա ստեղծագործությունները պարբերաբար հնչել են Համաժողովի փառատոների, Հայաստանում և արտերկրում կայացած համերգների ընթացքում: Համաժողովի նախագահ Լևոն Չաուչյանի նախաձեռնությամբ և ՀՀ կրթության գիտության և սպորտի նախարարության աջակցությամբ կազմակերպության հիմնադրման 25-ամյա հոբելյանի կապակցությամբ 2020 թվականին լույս ընծայվեց «Հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ» խորագիրը կրող Համաժողովի ներկայիս կոմպոզիտորների անհատական ձայնակավառակները: Երվանդ Երկանյանի ստեղծագործությունների հեղինակային առաջին խտասալիկը պարունակում է

«Խաչված երազներ» թիվ 5 սիմֆոնիան և ջութակի ու սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Տեսիլք» ստեղծագործությունը՝ ջութակահար Անուշ Լիկողոսյանի և Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի կատարմամբ, դիրիժոր Էդուարդ Թովչյանի ղեկավարությամբ:

Կոմպոզիտորի ստեղծագործությունները պարբերաբար լույս են տեսել Համաժողովի տարբեր հրատարակություններում:

Կազմակերպական և մանկավարժական գործունեությունը

Կոմպոզիտորը ստեղծագործական գործունեությանը զուգընթաց ծավալել է նաև ակտիվ կազմակերպական և մանկավարժական գործունեություն: 1987-1994 թվականներին Ե. Երկանյանը «Տաղարան» համույթի գեղարվեստական ղեկավարն էր ու դիրիժորը: Ի սկզբանե Համույթի գլխավոր նպատակը հայ հոգևոր երգարվեստի զանձերի հանրահռչակումն ու տարածումն էր ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Սակայն հմուտ ղեկավարի ուշադրության կենտրոնում հայտնվեց Եվրոպական Վերածննդի, Բարոկկո և դասական ժամանակաշրջանների երաժշտությունը ևս. հայ երաժշտասեր հասարակությունը պարբերաբար հնարավորություն ուներ ունկնդրելու գերմանական, ֆրանսիական հնագույն նմուշների սակավ հայտնի ու անհայտ եջեր, որոնք ներկայացվում էին Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության ղեկավարությունների հետ համագործակցությամբ: Ե. Երկանյանի աշխատանքային գործունեության շրջանում «Տաղարանի» նվագաջանկը համալրվել է կոմպոզիտորի հայ հոգևոր ու աշխարհիկ՝ ժողովրդական, ազգային-հայրենասիրական, գուսանական երգերի 350 նրբաճաշակ մշակումներով, որոնք Համույթի կատարողական երգացանկը համալրեցին հարուստ ընտրանիով: Ի դեպ, այդ շրջանում «Տաղարանը» ընդլայնել է ելույթների աշխարհագրությունը և հյուրախաղերով հանդես եկել Ֆրանսիայում, Ավստրիայում, Նիդերլանդներում, Հարավսլավիայում, Լիբանանում, Արգենտինայում, Բրազիլիայում, Ուրուգվայում: Համույթի գիտական խորհրդատուն էր կոմպոզիտորի տիկինը՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Արևշատյանը:

Հայ հոգևոր երաժշտության կատարման ու տարածման ասպարեզում մատուցած մեծ ներդրման համար 1993թ.-ին Ե. Երկանյանն արժանացել է Մեծի Տանն Կիլիկիո «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանի:

1994 թվականին Համազգային հայ կրթական և մշակութային միության Լիբանանի մասնաճյուղի հրավերով Ե. Երկանյանը աշխատանքային պայմանագրով մեկնել է Բեյրութ՝ ղեկավարելու «Գուսան» երգչախումբը¹: Այնուհետև հիմնադրել է «Հայաստան» կամերային նվագախումբը, ջութակահարների անսամբլը և հնագույն երաժշտության «Մադրիգալ» համույթը: Այդ տարիներին վերոնշյալ խմբերի համար Ե. Երկանյանը կատարել է հայ և օտարազգի կոմպոզիտորների ստեղծագործությունների ավելի քան 300 մշակումներ, գործիքավորումներ ու փոխադրություններ: Կարճ ժամանակահատվածում այդ ստեղծագործական կոլեկտիվները հաջող ելույթներով իրենց ուրույն տեղը զբաղեցրին քաղաքի երաժշտական կյանքում, իսկ 1999-ին մեծ հաջողությամբ Լիբանանը ներկայացրին Բիբլոսի հեղինակավոր փառատոնում արժանանալով բաժր գնահատականի և մամուլի արձագանքների:

2000-ին Համազգայինի Լիբանանի Կենտրոնական վարչության և Լիբանանի մասնաճյուղի համատեղ որոշմամբ Ե. Երկանյանը նշանակվել է Բեյրութի «Քարսեղ Կանաչյան» երաժշտանոցի տնօրեն՝ պաշտոնավարելով մինչև 2007 թվականը: Նույն

¹ Ինչպես հայտնի է «Գուսան» երգչախումբը հիմնադրել է կոմպոզիտոր, խմբավար, հասարակական գործիչ, Կոմիտասի սան Բարսեղ Կանաչյանը, որն էլ իր նորաստեղծ երգախումբն անվանակոչել է 1910թ. Կ.Պոլսում Կոմիտասի ստեղծած «Գուսան» երգչախմբի անունով:

թվականին էլ արժանացել է Համազգային հայ կրթական և մշակութային միության շքանշանի:

2007-ին վերադառնալով Հայաստան՝ Ե. Երկանյանը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Երաժշտության տեսության ամբիոնում շարունակել է վարել «Պոլիֆոնիա» առարկայի դասընթացները:

Մրցանակները և պետական պարգևները

Կոմպոզիտորի ստեղծագործություններն արժանացել են տարբեր մրցանակների. 2009 թվականին լարային նվագախմբի համար գրված «Քրոնիկոն» ստեղծագործությունը արժանացել է ՀՀ Պետական մրցանակի, իսկ 2014-ին «Թեքեյան» մշակութային միության մրցանակաբաշխության «Երաժշտություն» անվանակարգում հաղթող է ճանաչվել «Միստերիա» սիմֆոնիկ պոեմը:

Երվանդ Երկանյանին շնորհվել են մի շարք պետական պարգևներ. ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով 2011-ին նրան շնորհվել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում, 2016-ին արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալի, իսկ 2017-ին՝ Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալի:

Եզրակացություններ

Այսպիսով՝ Երվանդ Երկանյանի գործունեությունը ՀՀ անկախության շրջանում ընթացել է հետևյալ հիմնական ուղղություններով՝ ստեղծագործական, կազմակերպական ու մանկավարժական:

1. Ինչպես նախընթաց տարիներին՝ այս շրջանում ևս կոմպոզիտորը ծավալել է ակտիվ ստեղծագործական գործունեություն, որի արդյունքում ստեղծվել են բազմաժանր՝ սիմֆոնիկ, կանտատ-օրատորիալ, կամերային ու խմբերգային արժեքավոր ստեղծագործություններ: Նրա գործերը հնչել են ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում՝ Ռուսաստանում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում, Իսպանիայում, Նիդերլանդներում, Բուլղարիայում, Լիբանանում, Շվեդիայում, Հունգարիայում, Լիտվայում, Լատվիայում, Ֆինլանդիայում, Արգենտինայում և այլուր: Դրանցից մի քանիսն արժանացել են տարբեր մրցանակների, այդ թվում՝ ՀՀ պետական մրցանակի:
2. Ստեղծագործական գործունեությանը զուգընթաց՝ կոմպոզիտորը ծավալել է նաև կազմակերպական ու մանկավարժական արդյունավետ գործունեություն ինչպես Հայաստանում, այնպես էլ Լիբանանում:

Օգտագործված գրականություն

1. Ասատրյան, Աննա. *Հայաստանի կոմպոզիտորների միություն-85*. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 85-86:
2. Արևշատյան, Աննա. «Երվանդ Երկանյանի «Ավագ շաբաթ» օրատորիայի ոճական առանձնահատկությունները». *Հայ արվեստի հարցեր*, Գիրք 3, Երևան, 2010, էջ 77-84:
3. ---. «Մեծ եղեռնի թեման հայ արդի կոմպոզիտորների երկերում». *Հայոց ցեղասպանություն-100. ճանաչումից հատուցում միջազգային գիտաժողովի պեկուցման ժողովածու*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 478-486:
4. Արտեմյան, Լիլիթ. «Լևոն Չաուշյանի գործունեությունը ՀՀ անկախության շրջանում». *Կանխեղ գիտական հոդվածներ 1 (70)*, Երևան, «Ասողիկ» հրատ., 2017, էջ 200-206:

5. ---. «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գործունեության հիմնական ուղղությունները»։ *Լրաբեր հասարակական գիտությունների 3 (654)*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, էջ 300-309:
6. ---. «Հայկական երաժշտական համաժողով. Անցած ուղին և ձեռքբերումները»։ *Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներկուերորդ նստաշրջանի (նվիրվում է Յովհաննես Ավագյուզյու ծննդյան 200-ամյակին) նյութեր*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, էջ 171-179:
7. ---. «Սերգեյ Սմբատյան. դիմանկարի նրբագծեր»։ *Կանթեղ գիտական հոդվածներ 4 (77)*, Երևան, «Ասողիկ» հրատ., 2018, էջ 198-207:
8. Երկանյան, Երվանդ. «Քրոնիկոն» լարային նվագախմբի համար (2006). պարտիտուր, խմբագիր՝ Վահրամ Բաբայան, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2018, 36 էջ:
9. ---. *Կվարտետ N 3*. պարտիտուր, Երևան, «Կոմիտաս» հրատ., 2003, 51 էջ:
10. ---. *Խմբերգեր իգական երգչախմբի համար*. Հեղինակային հրատարակություն, Երևան, 2018, 88 էջ:
11. Рухкян, Маргарита. «Ерванд Еркянян-араратский человек». *Газета «Новое время»*, 26.06.2008.
12. ---. «Нужен профессиональный анализ. Интервью с композитором Ервандом Еркяняном». *Газета «Голос Армении»*, 03.04.2014.
13. ---. *Портреты армянских композиторов*. Ереван, изд. «Наири», 2009.
14. Sarkisian, Svetlana. *Armenian Music and Composers*. Yerevan, GIND Printing House, 2004.

Works Cited

1. Asatryan, Anna. Hayastani kompozitorneri miut'yun-85. Erevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2017, e'j 85-86 (The Union of Composers of Armenia-85. Yerevan, ed., 2017, pp. 85-86)
2. Arevshatyan, Anna. «Ervand Erkanyani «Avag shabat'» o'ratoriayi otwakan ar'and'nahatkut'yunnery'». Hay arvesti harcer, Girq 3, Erevan, 2010, e'j 77-84 ("The Senior Week of Yervand Yerkanyan "Stylistic Features of the Oratorio": Issues of Armenian art, Book 3, Yerevan, 2010, pp. 77-84)
3. ---. «Mec' egher'ni t'eman hay ardi kompozitorneri erkerum». Hayoc ceghaspanut'yun-100. twanachumic hatucum mijazgayin gitajhoghovi zekucman jhoghovac'u, Erevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2016, e'j 478-486 ("The theme of the Armenian Genocide in the works of modern Armenian composers". The Armenian Genocide is 100. Collection of the report of the international conference, Yerevan, ed., 2016, pp. 478-486).
4. Artemyan, Lilit'. «Levon Chaushyani gorc'uneut'yuny' HH ankaxut'yan shrjanum». Kant'egh gitakan hodvac'ner 1 (70), Erevan, «Asoghik» hrat., 2017, e'j 200-206 ("Levon Chaushyan's activity during the RA independence period": Kantech scientific articles 1 (70), Yerevan, ed., 2017, pp. 200-206).
5. ---. «Hayastani petakan simfonik nvagaxmbi gorc'uneut'yan himnakan ughghut'yunnery'». Lraber hasarakakan gitut'yunneri 3 (654), Erevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2018, e'j 300-309 ("The main activities of the State Symphony Orchestra of Armenia": Bulletin of Social Sciences 3 (654), Yerevan, ed., 2018, pp. 300-309).
6. ---. «Haykakan erajhshtakan hamajhoghov. Ancac' ughin ev d'er'qberunnery'». Eritasard hay arvestabanneri gitakan tasnerkuerord nstashrjani (nvirvum e' Hovhannes Ayzavozsku c'ndnyan 200-amyakin) nyut'er, Erevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2018, e'j 171-179 ("Armenian Music Forum. Materials of the twelfth scientific session of young Armenian

- art critics (dedicated to the 200th anniversary of the birth of Hovhannes Aivazovsky), Yerevan, ed., 2018, pp. 171-179).
7. ---. «Sergey Smbatyan. dimankari nrbagc'er». Kant'egh gitakan hodvac'ner 4 (77), Erevan, «Asoghik» hrat., 2018, e'j 198-207 ("Sergey Smbatyan. Portrait research": Kantech scientific articles 4 (77), Yerevan, ed., 2018, pp. 198-207).
 8. Erkanyan, Ervand. «Qronikon» larayin nvagaxmbi hamar (2006). partitur, xmbagir' Vahram Babayan, Erevan, Heghinakayin hratarakut'yun, 2018, 36 e'j (For the string orchestra "Chronicon" Yervand Yerkanyan (2006). scores, editor: Vahram Babayan, Yerevan, author's edition, 2018, 36 pages).
 9. ---. Kvartet N 3. partitur, Erevan, «Komitas» hrat., 2003, 51 e'j (Quartet N 3. scores, Yerevan, ed. Komitas, 2003, 51 pages).
 10. ---. Xmberger igakan ergchaxmbi hamar. Heghinakayin hratarakut'yun, Erevan, 2018, 88 e'j (Group songs for women's choir: author's edition, Yerevan, 2018, 88 p.).
 11. Ruhkjan, Margarita. "Ervand Erkanjan-araratskij chelovek". Gazeta "Novoe vremja", 26.06.2008. ("Yervand Yerkanyan is an Araratian man." The newspaper "Novoe Vremya", 26.06.2008.)
 12. ---. "Nuzhen professional'nyj analiz. Interv'ju s kompozitorom Ervandom Erkanjanom". Gazeta "Golos Armenii", 03.04.2014. ("We need a professional analysis. Interview with the composer Yervand Yerkanyan". The Voice of Armenia newspaper, 03.04.2014.)
 13. ---. Portrety armjanskikh kompozitorov. Erevan, izd. "Nairi", 2009. (Portraits of Armenian composers. Yerevan, ed. "Nairi", 2009.)
 14. Sarkisian, Svetlana. *Armenian Music and Composers*. Yerevan, GIND Printing House, 2004.

YERVAND YERKANYAN'S CAREER IN THE YEARS OF INDEPENDENCE OF RA

LILIT ARTEMYAN

*NAS RA, Institute of Arts, Senior Researcher Ph.D. in Arts,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to present the activities of one of the contemporary representatives of the Armenian composition art, Professor Yervand Yerkanyan – a composer, violinist, musical and public figure, laureate of State Prize of the Republic of Armenia (RA), Honoured Worker of Art of the Republic of Armenia during the period of its independence.

Our task is to comprehensively study and present the main directions of Yerkanyan's multiprofile activities - to collect the works written by the composer during this period and factual materials related to his activities.

Descriptive and analytical methods were used for the research.

During the period of RA independence Yervand Yerkanyan's activities evolved mainly in such spheres as creative work, organizational and pedagogical directions:

1. As in previous years the composer conducted an active and multi-genre creative activity, which resulted the production of multi-genre works.
2. Along with his creative activity, the composer carried on productive organizational activities.
3. Y. Yerkanyan continued teaching at the Yerevan State Conservatory after Komitas.

The Armenian musical treasury was supplemented with new valuable works as a result of active, fruitful creative and organizational activities. His patriotic activities in Armenia and abroad undoubtedly contributed to the preservation and popularization of Armenian music.

Key words: *Yervand Yerkanian, opera, oratorio, cantata, symphonic music, chamber music, choral music.*

ДЕЯТЕЛЬНОСТЬ ЕРВАНДА ЕРКАНЯНА В ПЕРИОД НЕЗАВИСИМОСТИ РА

ЛИЛИТ АРТЕМЯН

*старший научный сотрудник Института искусств НАН РА,
кандидат искусствоведения,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – отобразить деятельность одного из представителей современного армянского композиторского искусства, – композитора, скрипача, музыкального и общественного деятеля, лауреата Государственной премии РА, заслуженного деятеля искусств РА, профессора Ерванда Вагановича Ерканяна в период независимости РА.

Наша задача – исследовать основные направления многогранной деятельности Ерканяна, обобщить и проанализировать произведения, написанные композитором в этот период, и фактические материалы, связанные с его деятельностью.

В ходе исследования были использованы описательный и аналитический методы.

Деятельность Ерванда Вагановича Ерканяна в период независимости РА развивалась по следующим основным направлениям: творческому, организаторскому, педагогическому. Как и раньше, композитор вел активную и разнообразную творческую деятельность, в результате которой были созданы многожанровые произведения. Наряду с творческой деятельностью композитор вел и плодотворную организаторскую деятельность. Е. Ерканян продолжил преподавать в Ереванской государственной консерватории им. Комитаса.

В результате его активной плодотворной творческой и организационной деятельности армянская музыкальная сокровищница пополнилась новыми ценными произведениями, а его патриотическая деятельность в Армении и за рубежом, несомненно, способствовала сохранению и популяризации армянской музыки.

Ключевые слова: *Ерванд Ерканян, опера, оратория, кантата, симфоническая музыка, камерная музыка, хоровая музыка.*

ԱՎԵՏԱՐԱՆԻՉՆԵՐԻ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԸ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑՈՒ ԱՐՎԵՍՏՈՒՄ*

ՀՏԴ 7.033(479.25)

DOI: 10.52063/25792652-2021.2-262

ՆԱԻՐԱ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
naranazaryan67@gmail.com

Հոդվածը նվիրված է Գլաձորի համալսարանի XIV դ. սկզբի մանրանկարիչ Թորոս Տարոնացու նկարապարզած ավետարանիչների դիմանկարներին: Ավետարանիչների դիմանկարների ուսումնասիրությունը մեր հետազոտության կարևոր մասն է կազմում: Թորոս Տարոնացին միջնադարյան Հայաստանի նշանավոր նկարիչներից էր, սակայն մինչ օրս նրա արվեստը հիմնովին չի ուսումնասիրվել: Այս հանգամանքն էլ հիմք է ծառայել նկարչի արվեստի ուսումնասիրության համար:

Թորոս Տարոնացու ստեղծագործության ուսումնասիրության նպատակն է ցույց տալ նրա ծաղկած ձեռագրերի առանձնահատկությունները, նկարչի հմտությունները մանրանկարչության ոլորտում:

Հոդվածի հիմնական խնդիրն է ավետարանիչների դիմանկարների պատկերների բաղադրիչների՝ կերպարի, հանդերձանքի, մատյանի, գրակալի, աշխատանքային գործիքների, գահավորակի, աթոռակի, ճարտարապետական խորքի վերլուծությունը: Հետազոտության մեջ օգտագործել ենք արվեստաբանական վերլուծության համալիր մեթոդը:

Տարոնացու՝ ավետարանիչների դիմանկարների ուսումնասիրության արդյունքում հանգեցինք այն ելրակացությանը, որ նկարչի արվեստում առկա են հայկական մինչկլիկյան, կլիկյան, ինչպես նաև բյուզանդական տարրերը, դիմանկարները համապատասխանում են քրիստոնյա արվեստում ընդունված նմուշներին:

Հիմնաբառեր՝ Գլաձոր, Թորոս Տարոնացի, մանրանկարչություն, ավետարանիչ, մատյան, գրակալ, ճարտարապետական խորք:

Ներածություն

Մեր ուսումնասիրության առարկան Թորոս Տարոնացու՝ 1307թ.-ին նկարազարդած Եսայի Նչեցու Ավետարանն է և նրա արվեստը: Ձեռագիրը նկարչի հեղինակած առաջին Ավետարանն է և մեծ կարևորություն ունի նրա արվեստի ուսումնասիրության գործում: Քրիստոնյա արվեստում ավետարանիչներին պատկերելու ավանդույթը համապատասխանում է նրանց պատմական դերի՝ կանոնական Ավետարանների հեղինակներ լինելու հանգամանքին:

Ավետարանիչների պատկերումը խոհրդանիշների տեսքով հանդիպում ենք դեռևս IV-V դարերի վաղբրիստոնեական արվեստում (կատակոմբների սարկոֆագներ, խճանկարներ, փղոսկրյա դիպտիրիսներ՝ երկպատկերներ) (Nilgen; Квливидзе): VI դարում նրանց պատկերում են իրենց «մարդկային» տեսքով, ինչպես օրինակ՝ Ռոսանոյի (Friend 121)¹, Ռաբուլայի ձեռագիր Ավետարաններում (Квливидзе): Պատկերամարտության ավարտից հետո (IXդ.) ավետարանիչները ներկայացվում են կանգնած կամ նստած,

* Հոդվածը ներկայացվել է 10.05.2021թ., գրախոսվել՝ 07.06.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:

¹ Ռոսանոյի Ավետարանից պահպանվել է միայն Մարկոսի դիմանկարը:

հատկապես՝ գրիչների տեսքով (Квливидзе): Քրիստոնյա արվեստը յուրաքանչյուր ավետարանչի համար ընդունեց նրանց մեկ չափորոշիչ (ստանդարտ) տիպը (Friend 119): Հայաստանում ավետարանիչների պատկերագրական տիպը կազմավորվել է IX-XI դարերում (Մանուկյան 11): Դիմանկարներում «կենդանագիր պատկերներում» (Գևորգյան և Ղազարյան 5)¹, ավետարանիչները պատկերված են աշխատելիս, համապատասխան ճարտարապետական կամ բնանկարային միջավայրում, շրջապատված են գրչության համար անհրաժեշտ պիտույքներով, ինչը համապատասխանում էր հայկական միջնադարյան մանրանկարչության մեջ ընդունված ձևերին (Ղազարյան, *Ավետարանիչների պատկերագրությունը* 82): Ավետարանիչների դիմանկարները ներկայացված են համապատասխան Ավետարանից առաջ: Այս ավանդույթին առաջին անգամ հանդիպում ենք 966թ.-ի Թարգմանչաց և X-XI դդ. Վեհափառի Ավետարաններում (Казарян и Манукян 47, 50, 53): Ավետարանիչների դիմանկարներն իրենց Ավետարանների տիտղոսաթերթերի հետ միասին կազմում են միասնական էջաբացվածքներ (Friend 120, 124):

1307 թ. Եսայի Նչեցու Ավետարանի ավետարանիչների դիմանկարները

Մատթեոս ավետարանիչը (*1307թ. Եսայի Նչեցու Ավետարան*, 15բ) պատկերված է ըստ «ընդհանուր ֆիզիոգնոմիայի... ճերմակափեր ծերունի է» (Ղազարյան, *Ավետարանիչների պատկերագրությունը* 83,92): Հայացքը ֆիքսված է մի կետի՝ ոգեշնչման աղբյուրին: Մատյանը ձախ ձեռքում է: Մերկ ոտքերի տակի գահավորակը նմանվում է գորգի: Սեղանիկին դրված են գրչության գործիքները: Ճարտարապետական խորքը ներկայացված է տարբեր բարձրության երկու շրջանաձև աշտարակների տեսքով: Ցածր աշտարակը տաղավարածն է՝ ակնարկելով Քրիստոսի գերեզմանի վրա կառուցված Տաճարիկը, իսկ բարձրը՝ զմբեթավոր: Ցածր աշտարակից սանդուղք է տանում դեպի բարձրը: Այն կարող է խորհրդանշել վերելք դեպի «Սուրբ Սիոն՝ Երկնային Երուսաղեմ»: Իսկ միգուցե այն պատկերելով՝ նկարիչը այլաբանել է Քրիստոսին հաչից իջեցնելու աստիճանը: Կամ արդյոք սանդուղքը չէ՞ր ակնարկում Հակոբի էլարանը, որը կապում է երկիրը երկնքի հետ, և որի «ծայրը հասնում էր մինչև երկինք, և Աստծու հրեշտակները ելնում - իջնում էին դրա վրայով» (Ելք. 28. 12): Կարծում ենք, որ սրանով Տարոնացին ներկայացրել է քրիստոնեության խորհրդանիշերից մեկը՝ Քրիստոսի տանջանքների Քաղաք Երուսաղեմը իր Տաճարով: Բարձր աշտարակի վրա պատկերված է սև ուղղանկյուն բացվածք՝ դռնակ՝ մուտք դեպի Տաճար:

Մարկոս ավետարանիչը (*1307թ. Եսայի Նչեցու Ավետարան*, 98բ) պատկերված է կամարի ներքո, որը հենված է կենդանակերպ խոյակներով սյուների վրա: Մարկոսի աթոռակը բավականին բարձր է, ինչի արդյունքում նա կարծես օդում ճախրելիս լինի: Ձախ ձեռքը հանգչում է գրակայի վրա, աջը իջեցրել է ծնկներին դրված մատյանի վրա «...առանց գրելու մտադրության»: Այս տիպը՝ «...գիրքը ավետարանչի ծնկան վրա ամենատարածվածն է՝ սկսած Մդ. ...» (Ղազարյան, *Սյուժետային մանրանկարը* 86): Այսպիսով՝ պատկերված է ավետարանչի գրող ու կեցվածք ընդունող միասնական տիպը (Ղազարյան, *Ավետարանիչների պատկերագրությունը* 83, 84): Նա միջին տարիքի է, մարմինն ու գլուխը ուղիղ դիրքով են (Ղազարյան, *Ավետարանիչների պատկերագրությունը* 85): Նա աջ ոտքը ետ է ծալել՝ ոտնաթաթը հենելով աթոռին: Ճարտարապետական խորքը մանրանկարի կենտրոնական հատվածում՝ Ավետարանչի ետևում է և կազմված է երկու շրջանաձև, աղյուսաշար, աշտարակատիպ կառույցներից:

¹ «Մ. Խորենացին օգտագործում է «կենդանագիր պատկեր» դարձվածքը, որը տառացի թարգմանություն է հունարենից և նշանակում է կենդանու մարդու պատկեր»:

Աշտարակների՝ մուգից դեպի բաց երանգային գունավորումը թողնում է լուսաստվերային մոդելավորման տպավորություն:

Ղուկաս ավետարանչի (1307թ. *Եսայի Լչեցու Ավետարան*, 150բ) մատյանը պատկերված է երկու պրակների տեսքով. Մեկը՝ ծնկներին դրված, մյուսը՝ գրակալի վրա: Ավետարանիչը միջին տարիքի է: Խոպուպիկներով շագանակագույն մազերը կեղծամի տպավորություն են թողնում: Գլխավերևում շրջանաձև կտրվածքը տոնզուրի է նմանվում: Տոնզուրը «... XIII դ. վերջի ձեռագրերում... հատուկ է միայն Ղուկասին» (Ղազարյան, *Սյուժետային մանրանկարը* 82): Մորուսը ճերմակած է: Ինչպես ընդունված է պատկերագրության մեջ, այն կլոր է և ունի երկու ծայր (Ղազարյան, *Ավետարանիչների պատկերագրությունը* 83): Ղուկասը նստած է տերևաթև ոտքերով աթոռակալի վրա՝ պատկերված կողային մասով: Գրակալը գլխիվայր վարդագույն ձկան տեսքով է, բերանով բռնել է սեղանիկը, իսկ պոչի վրա դրված է բաց մատյանը: Ճարտարապետական խորքը բաղկացած է աղյուսաշար աշտարակից և ռոտոնդայից՝ պատկերված կենտրոնական հատվածում՝ Ավետարանչի ետևում:

Յովհաննես ավետարանիչը (1307թ. *Եսայի Լչեցու Ավետարան*, 234բ) իր աշակերտ Պրոքորոնի հետ է (Измайлова 118)¹: Յովհաննեսը կանգնած է աջ կողմում՝ պատվանդանի ետևում, Պրոքորոնը՝ ձախում՝ նստած աթոռակալի վրա՝ «...դասական համատեղ տեսարան... Յայաստանում հանդիպում ենք XI դ. Մոդուս Ավետարանում» (Ղազարյան, *Սյուժետային մանրանկարը* 84): Յովհաննեսը, ըստ 2-րդ դարում Փոքր Ասիայում տարածված Լյուցիուս Խուռնիուսի «Յովհաննես վարք»-ում տրված դիմանկարի նկարագրության, պատկերված է ծերունի՝ ճերմակ մազերով ու մորուսով (Friend 120; Ղազարյան, *Ավետարանիչների պատկերագրությունը* 83, 92): Նրա գլուխը երեք քառորդով է, մարմինը՝ ճակատային դիրքով, ինչը, ի տարբերություն բյուզանդական ավանդույթի, որտեղ ֆիգուրները պատկերված են երեք քառորդով, հայկական ավանդույթ է (Измайлова 118): Ավետարանիչը նայում է աջ անկյունում գտնվող երկնականարից երևացող Աստծո օրհնող աջին: Նա ձախ ձեռքը պարզել է դեպի Աջը, իսկ սեփական Աջը օրհնության դիրքով ուղղել է դեպի իր աշակերտը: Աստծո աջը պարզված ցուցամատով ու միջամատով է, իսկ մնացած երեքը ծաված են: Ավետարանչի աջ ձեռքի մատների դիրքը նույնն է: Այսպիսով ստեղծվում է շարունակական գործողություն՝ ոգեշնչումը Աստծուց Յովհաննես ձեռքով հասնում է Պրոքորոնին: Ճարտարապետական շինությունը Պրոքորոնի ետևում է: Այն ներկայացված է երեք քառորդով պատկերված ուղղանկյուն շինության տեսքով: Յայկական մանրանկարչական ավանդույթում ճարտարապետական շինությունը Պրոքորոնի ետևում ներկայացնելը համապատասխանում է հայ ձեռագրարվեստի վաղ ավադույթին (Ղազարյան, *Ավետարանիչների պատկերագրությունը* 85): Այն երկթեք տանիքով է, որը շինությունը նմանեցնում է բազիլիկի: Բազիլիկատիպ կառույցը Պրոխորոնի ետևում պատկերելը տարբերվում է բյուզանդական ավանդույթից, որտեղ ներկայացվում էր բնապատկերային տեսարան (Измайлова 118):

Ընդհանուր վերլուծություն. հորինվածքը

Տարոնացու երեք ավետարանիչները (Մատթեոս, Մարկոս, Ղուկաս) ներկայացված են ըստ կանոնական պատկերագրության մեջ ընդունված ավետարանիչների «նստած» տիպի՝ գրիչների տեսքով: Յայ արվեստում այս տիպը ներկայացվել է արդեն XI դարի ձեռագրերում. 1053թ. Ավետարան, 1060թ. «Բեգյունցի», Մոդուս Ավետարաններ (Казарян и Манукян 53, 54): Բոլոր չորս ավետարանիչները գտնվում են հորինվածքի կենտրոնում: Բացի Մատթեոսից, մնացած երեքը պատկերված են խոյակներով սյուների

¹ Յովհաննեսին ներկայացնելը Պրոքորոնի հետ անտիկ ծագման է: Պատկերագրության այս տեսակը հայ արվեստում բյուզանդական ավանդույթի ազդեցության արդյունք է:

վրա հենված կամարի ներքո: Ավետարանիչներին կամարի տակ պատկերելը «...մի եղանակ է, որ հատուկ է Բուն Հայաստանի ձեռագրերին» (Դուռնովո առանց էջակալման): Հորինվածքը երկշերտ է, առաջին պլանում պատկերված է ավետարանիչը, երկրորդում պատկերված են շինությունները: Դա մանրանկարին հաղորդում է որոշակի խորություն:

Մոդելավորումը (ձևաստեղծումը)

